Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

1073

1891. № 664.

Лео. Мои воспоминания.
Լէօ

ԻՄ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ

ՍԻՒԼԻՒՒԻՑ ՄԻ ԱՆԿԻՒՆ.—ԹԱՐ-
ԹԱՐ ԵՒ ՄԵԾԱՒ.—ՇԱՒԲՈՒԼԱՂ.—
ՀԻՆԳ ՕՐ:

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



ՇՈՒՇԻ
ՏՊԱՐԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ
1891

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԻՄ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

I

գրադ-կ
2007

ԼԻՕ

ԻՄ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

(ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԵՐ ՍԱՐԵՐԻՑ ՈՒ ՁՈՐԵՐԻՑ)

ՔՈՒՉԻ
Տպարան Հայոց Հոգեւոր Տեսչութեան
1890

1073-ԱԲ

Дозволено Цензурою. 25 Ноября 1889 года, гор. Тифлисъ.



816-2013

Типографія Шушинскаго Армянскаго Духовнаго Вѣдомства.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ.

—Պատրաստուե՞ինն, դէս ու դէն հարկատր չէ։ Ձեռաց գընում ենք, տեսնում, յետ դառնում։ Այս երեկոյ քեզ ժամանակ. մտածիր, էգուց առաւօտ ճանապարհին ենք։

—Այդպէս չի կարելի։ Պաշար, չայ, շաքար չէք առել. ինչ պիտի ուտենք, խմենք։

—Էլի հայուե՞ինդ ես ցոյց տալիս։ Եղբայր, փտեցինք այս քաղաքում, փտեցինք, կորանք։ Այս ինչ է։ Դէ գնանք, տեսնենք, շարժուենք։ Օտարազգիները գալիս են մեր երկիրը, հետաքրքրութեամբ տեսնում են մեր նշանաւոր հնութիւնները. իսկ մենք նըստենք այսքան մօտիկ ու չը տեսնենք... Ամօթ է, չափազանց կորածութեան նշան...

—Գիտես, նշանաւոր հնութիւն է, դեղեցիկ. դիրքը հրանալի. դեղեցիկ բնութիւն, տեսարաններ, հրաշալի ջրեր։ Այստեղ փտեցինք, ինչ ենք լսել...

Այսպիսի խօսակցութիւններով էին պատրաստվում մեր ընկերների մէջ մեր մի քանի փորրիկ ուղեւորութիւնները դէպի մեր երկրի շատ մէկ քիչ հեռաւոր տեղերը։

Ոգեւորուած նշանաւոր հնութիւններով, որ այլազգիները գալիս, տեսնում են, հալածուելով փտելու տխուր ու մաշեցնող մտքից, մենք մի քանի հատ օրեր էինք խլում ժամանակից, մի ճանապարհ էինք որոշում. ամեն տեսակ պատրաստութիւնների փոխարէն հետներս վերցնում էինք նոր տեղեր, կեանք տեսնելու, տպաւորութիւններ ստանալու մեծ փափագը, արագ գնում ու արագ յետ էինք դառնում:

Այդ իսկ ուղեւորութիւնների նկարագիրն եմ այժմ ներկայացնում ընթերցողին: Տեսածս ու լսածս, թէ մէկից եւ թէ միւսից ստացած մտքերս ու տպաւորութիւններս—այդ ամենը աշխատել եմ ամփոփել յիշատակարանիս մէջ: Ես ուշադրութիւն եմ դարձրել հնութիւնների վրայ, որովհետեւ դրանք էին մեր ուղեցոյցները, մեր նպատակը: Ես նկարագրել եմ բնութիւնը, որովհետեւ այդ բնութիւնից է կախուած մեր ժողովրդի կենցաղը: Այդ է իմ կարողութեան չափը: Աւելի լաւը թող անեն եւրոպացի հեղինակների անուններով ապրող ասիացիները, թող անեն, սառած չը մնան այդ անունների վրայ:

Իմ յիշատակարանի առաջին հատորն է այս գիրքը: Երկրորդը կը կազմուի այն ժամանակ, երբ վերջապէս կարողութիւն կունենամ բաղձանքս կատարելու, երբ կը տեսնեմ մեր երկրի ուրիշ կողմերը: Արցախն ու Սիւնիքը դեռ շատ եւ շատ անծանօթ տեղեր ունին, որոնք վաղուց են սպասում հետաքրքիր ուղեւորին:

Լ Է Օ

Շուշի, մայիս, 1889 թ.

ՍԻՒՆԻՔԻՑ ՄԻ ԱՆԿԻՒՆ:

(1888).

ՍԻՒՆԻՔԻՑ ՄԻ ԱՆԿԻՒՆ։

Ա.

Հոկտեմբերի երկուան էր։ Օրը ուրախ, աշնանային. երկինքը պարզ, հրաշալի. արեգակը հետզհետէ հասնում էր կէսօրուայ տեղին, թափում էր մի այնպիսի ախորժելի ջերմութիւն, որ միայն աշնան վերջերում է լինում. մարդն ուզում է ամբողջ օրը ամբողջ մարմնով այդ արեգակի տակ լինել, ջերմութեամբ շրջապատուած ճնալ. ծոյլութիւն է տիրում բոլոր անդամների վրայ. մարդու մէջ չի ծնում մի այնպիսի եռանդ, որ կարողանար դիմադրել այդ քնքոյշ, փայփայող ճառագայթների տակ ճնալու և նրանցից ուրիշ կարելի է շատ ընդունելու ցանկութեան։ Շուաքը, նեղ տեղը անտանելի են դառնում և հէնց այդ պատճառով այդ օրը Շուշին շատ էր իր կիսախնօրեայ հերպարանքը տանալ շտապում էին կէսօրուայ ճաշը վերջացնել, քաղաքից դուրս գալ, բլուրների և ձորերի ափերով զուարթ

Աշնան այս ժամանակը բնութիւնը իր վերջին դերն է կատարում, ցոյց է տալիս որ մեռնելուց առաջ էլ գիտէ, կարող է ժպտալ, սիրա յափշտակել։ Տեղ տեղ երևում են հիանալի քնքոյշ կանաչներ և այնքան գեղեցիկ գոյն են տալիս աշնանային պատգակի քաղցր լռութեան տակ։ Բայց կանաչը այս ժամանակ տարօրինակ է երևում. մեռած դէմքի վրայ ծնացած կարմրութիւն է դա, որ մի կարճ կեանք ունի։ Կարծում ես թէ այդ կանաչները շտապում են, գնում են մի տեղ, շտապում են ցոյց տալ իրանց, կարծես տասում են որ իրանց վերջին բարևն է. շուտով, շատ շուտով, ով գիտէ—գուցէ այսօր կամ վաղը—կը գնան, կանհետանան, այսպիսի մի արեգակ նրանց երկար չի կարող պահել։ Եւ գնում են։ Ահա ծածկուեցան ծմակի եզերում, մեծ ու փոքր ծառերի միւս կողմին. մէկ էլ երևացին, մէկ էլ վայր տուին և էլի չը կան... Այդ ծառերի գեղին ու կարմրախայտ տերևները թափվում են ամեն օր, ամեն ժամ. շատ շատերն արդէն թափուել, կոշտուել են ծառերի տակ և սողում են, թափառում են ծմակի մէջ, օտար տուն, օտար դուռն են գնում, օթևան առնում. շատ շատերը գեռ պահվում են ճիւղերի վրայ, սպասում են մի փոքր քամու, որ իրանց վերջնական պիտի որոշէ, սպասում են դողալով օդի մէջ. բայց դեռ շատ են և կանաչ տերևները, նրանք դեռ ճնում են

ձանապ, օդ ծծել և արեգակի տակ ճնալ։ Ես և իմ երկու ընկերները փոստային սայլակի մէջ յարմար նստած, ուրախ ու զուարթ ամենքի առաջն ընկանք և դուրս գնացինք քաղաքի արևմտեան դռներից։ Գնում ենք Գօլիս, գնում ենք Սիւնեաց երկիրը տեսնելու։

Տատն և հինգ տարուց աւել է, որ Նուշուց մինչև Գօլիս փոստի ճանապարհ է շինած։ Երկրաչափը տարել է այդ ճանապարհը մի լեռնաշղթայի արևմտեան կողով մինչև Թթու-Ջուր անուանուած առաջին իջևանը, տարել է յարմարուելով վայրենի լեռների բնաւորութեանը։ Նատ թէ քիչ ուղիղ լինելու համար այդ ճանապարհը օձի պտոյտներ է գործում անթիւ և անհամար անգամ. և որով հետև տեղի կազմուածքը քարային է, շատ կարծր, ուստի բահն ու բրիչը կարողացել են ճանապարհին այնքան յայնութիւն տալ, որ մի սայլ կամ ֆուրգոն ազատ տեղ է գնում. իսկ եթէ մի ուրիշն էլ տուչևից է գալիս, հանդիպում, իսկոյն տար է ու կրակ։ Բայց զեղեցիկ է այդ ոլորուն ճանապարհը, երբ թեքուում է սայլակը. նրանից տակ փռուած են ձորեր, լանջիվայրեր. աչքի առջև մի մի անցնում են լեռներ ու բարձրութիւններ, վազում են դէպի հակառակ կողմը և վայելիս տեսակ տեսակ տեսարաններ, պատկերներ են ցոյց տալիս։ Մտնում ենք Թթու-Ջրի կիրճը, գնում ենք ծմակի միջով։

և դեռ իրանց շուքն ու գարուը չեն վերացրել որ-
բոզած ծմակից, դեռ մի կերպ ծածկում են նրա
տխրալի մերկութիւնը։ Այսպէս է աշունքը, տերևա-
թափի ժամանակը, տարուայ այն ամենաքաղցր ժա-
մանակը, երբ ամէն բան —ջուր, պատ, միս ու ոսկոր-
ժակ իրանց հոտն ու հոտն են գտնում։ Այսպիսի
աննաքաղցր ժամանակ մենք, երբև հոտաղատ շու-
շեցիներ, չենք դադարում թմոլ-Ջրի կիրճը գով-
լուց և փառաբանելուց։ Սայլակը առաջ է տանում,
անցնում ենք ծառերի միջով, տեսնում ենք տրե-
գակի շողերը, որ մեծ խուրձերով մտնում են ծա-
ռերի տրանքով, և հիանում ենք, և գովում մեր եր-
կիրն ու բնութիւնը։ Նա գիտենք որ անմահական
տեղեր են, գիտենք որ այսպիսի մի տեղ մարդը եր-
կար կապրի և առողջ, գիտենք որ եթէ մեզանից
ամեն մէկը ունենար կարողութիւն, լաւ կարողու-
թիւն, կը հեռանար քաղաքի անմաքրութիւնից, կը
բնակուէր հէնց այստեղ, մի գեղեցիկ կեանք կը վա-
րէր։ Ինչպէս չիմանանք. ամեն մի բան մեզ այդ է
ասում։ Նայենքէք այս ձորակին. ջուրը, բարակ և
պարզ, զարմանալի պարզ ջուրը հազիւ-հազ մի բա-
րակ ձայն հանելով լիզում է նրա յատակը։ Ինչ-
թեան գետերը լաւ տերատած մարդը հասկանում է
թէ ինչումն է գեղեցկութիւնը։ Ձորն այդչէն լեռ է,
դառնալիացել, թռչուն ու միջատ հեռացել, գնացել

են, ձայն չեն հանում. բոյսը չորացել է, թաղելով
իր դոյութեան վկայ մի սաղարթ միայն. Ինչը
աղքատիկ ցնցոտիների մէջ է և դողում է, ահով
սպասում է թէ երբ կը լսէն իրանից իր վերջին
ծածկոյը։ Մնացել է փոքրիկ ուրախ ջուրը միայն,
որ ուրախացնում է այս տեսակ լուռ տխրութեան
մէջ. նա այժմ աւելի քան երբ և իցէ գգայուն է
պատիր իւրաքանչիւր մանր քարի, մի աննշան բան,
կարողանում է նրա շողշողուն մէջքը կտացնել, ծըռ-
մըռել, և որով հետև շատ շատ են այդպիսի քարե-
րը, մեր առուակը հազարաւոր մանր մանր ալիքներ,
խորշ ու փոսիկ է կազմում, որոնց մէջ զարմանալի
կերպով խաղում է արեգակի լոյսը, որ ցոլանալով
ջրի վրայ, մի փայլուն, փոքրիկ շերտ է գցում ջրի
կողքին։ Առուակն այդպէս է, իսկ մենք որքան ու-
րախ ենք նրանով։

Ահա և փոսաի իջևանը։

Թմոլ-Ջրի նեղ կիրճն ընկած է երկու սարերի
մէջ, որոնցից մէկը, արևմտեանը, բացի գեղեցիկ խո-
սիկ և երկու երեք հատ ծառերից ոչինչ չունի իր
վրայ, իսկ միւսը, արևելեանը, բարձր է, կտրծր քա-
րային կողերով և ծածկուած է ծառերով ու թփե-
րով։ Կիրճը թէև բարձր չէ, բայց առհասարակ ցուրտ
կլիմայ ունի. օդի բարեխառնութիւնը այստեղ շատ
ցած է քան թէ Շուշիում, որ այստեղից շատ բարձր

է. ամառը կարճատև է լինում, ղով, ձմեռը երկար և սաստիկ ցուրտ։ Որով հետև կլիման հիւսիսից և հարաւից բաց է։

Իւրաքանչիւր շուշեցի պարծենում է երկու բանով։ Մէկ նրանով, որ եթէ ուզէ, ամեն մի գեղեցիկ օր կարող է հայոց վերին Հանդատարանի մօտից բռնել լաւ ծանօթ ճանապարհը, անցնել մեծ կոլոր Թումբի քամակը և մտնելով մի անտառապատ ձոր, գնալ առաջ։ Ճիշդն այնպիսի մի թովչական յատկութիւն ունի, որ նա անպատճառ բանաստեղծ կը դառնայ, կերդէ մի բան—ձայն ունենայ, չունենայ, երգ իմանայ, չիմանայ, մի և նոյն է, մի ձայն կը հանէ և մի երգ կասէ. կերգէ, մինչև որ երկար կամ չորս վերստ երկարութեամբ ճանապարհը կը վերջանայ Պեխի-ազբիւրի մօտ։ Նրա պարծանքն է այն հիանալի ջուրը, որ ամառ ու ձմեռ առատ թափվում է. բաժակը ջրով կը լցնէ, կը բարձրացնէ, կը նայէ պարզ, բիւրեղանման ջրին, որի մէջ արեգակի ճառագայթը ծիածանի գոյներ է գոյացնում, ձեռքը հպարտօրէն կը պնդէ կողքին և կը բացականչէ. «ուխայ, ուխայ, ուխին է առած այսպիսի ջուր»։ Եւ կը նայէ այդ ազբրի անհատնում շրջակայքի մի որ և է ծառի տակ ու լաւ քէֆ կը սարքէ։ Կարող եմ ասել, Պեխի-ազբիւրը շուշեցու առաջին պարծանքն է. առաջինը այն պատճառով, որ նա իրանից շատ

մօտիկ է. մեծ ու փոքր առանց դժուարութեան կարողանում են հասնել նրան, ջուր խմելը միտակի և ածն օրերը ազբրի մօտ խմբվում են բազմաթիւ մարդիկ և ձորը լցնվում է նրանց աղաղակներով ու երդերով. իսկ հատարակ օրերը, անհնարին է, մի կամ երկու քէֆ անող խմբեր պիտի լինեն այնտեղ։ Ազբիւրը դուրս է գալիս անտառների պատած բարձր տարից. նրա մօտ հասնելու չորմար տեղ չէք գտնիլ, որով հետև ուր որ նայում էք, գտնիւմպրեր էք տեսնում, որոնք չորանում են, մերկանում յուրաքանչիւր տարի. ճիւղ են անտառները և այս հրաշալի ջուրը, որոնց ահագին ու անուան սիրահար են շուշեցիները. դա մի սեռակ նուիրական տեղ է, ուր բնութիւնը անփոյթ ու անվարձ բաշխում է իր հարստութիւնը թէ հարուստին և թէ աղքատին։ Ծանր ու վտանգաւոր դրութեան մէջ գտնուող հիւանդը երբեմն սրտի ուզիլիք Պեխի-ազբրի ջրից մի բաժակ է խընդրում։ Ազբրի մօտ շատ անգամ կարելի է տեսնել նոր առողջացած հիւանդներին, որոնք մաշուած ու դեղնած, դէմ հասատա քայլեր փոխելու չը տոկոլած, ձի են հէծել, եկել և մեծ երջանկութեամբ խմում են պաղ և մաքուր ջուրը։ Օատարականը, հեռու երկրում ոսկոր մաշեցնող օատարականը, երբ մի մի մտքով էլ հայրենիքն է փոխադրվում, հօրից ու մօրից յետոյ յիշում է Պեխի-ազբիւրը, յիշում է, ահա քաշում

Շուշեցին մեկ էլ պարծենում է նրանով, որ ամառը կարող է մեր այսօր եկած ճանապարհն ընկնել, հասնել Թթու-Ջուրը։ Այս մեկ բաւականութիւնը առաջինի պէս հեշտ չէ ձեռք բերվում։ 17 վերստ ճանապարհ է, պատրաստուելիւն, վոդ է հարկաւոր։ Թէև այսպէս, բայց երիտասարդութիւնը գնում է հնար, ուխտում է այդ նեղ և դեղեցիկ կիրճը, օր ապրում է գոնէ մի, երկու օր։ Իսկ ուխտաւորները ընտանիքով են գալիս, շաբաթներով մնում են առողջ ձեալու կամ նոր առողջանալու համար։ Իսկ առողջարար հանգամանքներ շատ ունի այստեղի բնութիւնը։ Ցունիսից մինչև օգոստոսի վերջերը Թթու-Ջրում թագաւորում է մի հալուստ և մեղմաշունչ ամառ. օդը հիանալի, գուարթաթարար, հնանաչ դգեստի մէջ պաճուճած սարերն ու անտառները բիւրաւոր ծաղիկներով զարդարուած, թռչուններն ու նրանց երգերն անպակաս։ Անպակաս և ցուրտ ջրերը։ Դրանց վրայ են հաւաքվում մարդիկ. վրաններ են բացվում այն ձորի ճակատին, որի միջով օր ու գիշեր քչքշում է փոքրիկ առուակը։ Բայց վրաններից մէջ ապրողների «սիրածը, սրտի ուզածը» այդ առուակը չէ, այլ մեծ մեծ ծառերով շրջապատուած աղբիւրը, որը գուրս է թափում իր տակից ձորի վրայ բարձրացած հաստ ու կոպիտ կարմրախայտ ժայռը։ Ինքը Թթու-Ջուրը հէնց այդ աղբիւրն է,

բնական պեղեւրևանը։ Բնութիւնն այնքան էլ շատ չէ հարստացրել այդ ցուրտ թթու-ջուրը. գաղն այնքան շատ չէ, ջուրը դուրս է գալիս երիտ տեղից և ճիշտի հաստութեամբ ծորում է մի փոքրիկ աւազանի մէջ։ Աղքատ աղբիւր է, բայց ինչ կանես, աչքի լոյս է, այնքան մարդ է քաշում, իր մօտ բերում։ Աւանք մենակ սա չէ այդպէս անում. կայ և երկաթաջրի մի նոյնպէս աղքատ աղբիւր, որի մէջ լողանում են ցաւագարները։ Այդ երկուսի համար են շինուած երկու թէ երեք մասնաւոր անկ, կիրճը երկու երեք ամսուայ ընթացքում ասիական բազարի կենդանութիւնն է ստանում։ Պեխի-Աղբիւրն ու Թթու-Ջուրը միատեսակ գործ են կատարում, քէֆ ու ուրախութիւն անել են տալիս և մի և նոյն գաղափարն են տարածում։ Մաքուր ու գեղեցիկ ջրերը բաց են անում սիրտը և մարդս անկեղծօրէն արտայայտում է իր գոյութեան նպատակը, այն իդէան, որին ծառայում է։ «Ունայն է, ունայն ամեն ինչ», ասում են միմեանց թէ Պեխի-Աղբրի ճանապարհը բռնած ուրախ երիտասարդները և թէ Թթու-Ջրի ձորում շիշերի և խորոված-ի շուրջը բոլորած խմբերը.— «փուչ աշխարհ է, մի օր եկել հնք, մի օր էլ պիտի գնանք. ունայն է, ուտենք, խմենք, քէֆ անենք, այս կը մնայ միայն։» Այս սաէօրօտիպ նահապետութիւնն է միշտ կրկնվում։ Ուտել, խմել, քէֆ

անել, ուրանալ աշխարհի, մարդկութեան նշանակութիւնը, մոռանալ մեր կոչումը—այս է ահա իդեալը, որ ոլքան հին է, այնքան էլ անմահ, այնքան էլ խոր արմատ գրած մեր մէջ։

Սեթէ Թթու-Ջրի մասին այսքան խօսեցի, պատճառն այն չէ, որ այստեղ մի արտաքոյ կարգի բնական հարստութիւն է պահվում։ Ո՛չ, այդ տեսակ հանքային ջրեր (և աւելի լաւ) շատ կան մեր երկրի զանազան կողմերում և գրանցից մի քանիսի մասին խօսելու առիթ կունենամ։ Թթու-Ջրի միակ առաւելութիւնը նրանում է, որ քաղաքից մօտիկ է և արդէն մի լայն շրջանի մէջ լաւ անուն է վաստակել։ Ասածներիս վրայ պիտի աւելացնեմ և այն, որ Թթու-Ջուրը արքունական կալուած է, որ վարձով է տրւում խոտահարքի և անասնապահութեան համար. ջրերը ոչ ոքին օգուտ չեն տալիս։ Ամեն այսպէս մի հատ հիւանդոց կամ հասարակ ճաշարան էլ չի լինում. իսկ հազորդակցութիւնը քաղաքի հետ շատ անկանոն է և անյարմար։ Ոչ միայն կառքեր, այլ և հասարակ սայլեր երթևեկութիւն չունին։ Սեթէ մարդ չը ճարուի քաղաք ուղարկելու, օրերով կարելի է քաղցած ճնաչ։ Այս պատճառներով, ինչպէս ասացի, միայն ունևորներն են կարողանում ծախս անել, կալգով, սայլքով բնակուել այստեղ երկար ժամանակ։ Մնացեալները լոկ սիրահարներ են,

որ գալիս են, մի քանի ժամ ման ում, մինչև երկինք բարձրացնում այս տեղերը, միմեանց հաւատացնում որ աշխարհս փուչ է, կեանքը աննպատակ։

Այսքանը բաւական է Թթու-Ջրի մասին։ Հինգշաբթի օրը կարճ է, սրեգան այդպէս թեթեւուկ է սարերի վրայ։ Թթու-Ջրի ազբրի մօտ վերջացնում ենք մեր ճաշը, մի քանի բաժակ էլ դատարկում. սայլակը պատրաստ է, նստում ենք։ Գնում, անցնում ենք Թթու-Ջրի սարը, մտնում ենք մի ուրիշ շատ երկայն կիրճ։ Ճանապարհը դէպի ցած է գնում, նեղ է և իր սովորական քմահաճ պտոյտներն է գործում հազար ու մի տեղ։ Անիւները արագ արագ գլորվում են, սայլակը ոստոստալով օրօրում է մեզ, մի կողմից միւս կողմն է գցում, առնում է մեծ ձորի ծայրերով։ Հոկտեմբերի օրը վերջանալու վրայ զով է, գեղեցիկ։ Բարեյաջող եղանակը հարկադրում է ուղեւորին շարժուն, ուշադիր լինել. ուղեւորը աշխատում է բոլոր տեղերը տեսնել, բոլոր պատկերները մտքի մէջ նկարել։

Թթու-Ջրի սարի վրայ վերջանում է Շուշու գաւառը, սկսվում է Ջանդազօրի գաւառը կամ Սիւնիքը։ Եգուց մենք կը տեսնենք Սիւնեաց աշխարհը, կը տեսնենք սիւնեցի մարդուն, կը լսենք նրա առանձին բարբառը, եթէ դէպք լինի, կը տեսնենք և նրա առանձնայատուկ կենցաղավարութիւնը։ Եւ ոլքան անհամբեր սպասում ենք այդ բոլորին։

Անհամբերութեան պատճառը ինձ պարզ հասկանալի է։ Սիւնիք ասելով հասկանում եմ այն լայնատարած երկիրը, որ ունի մի մեծ փառաւոր պատմութիւն, մի պատմութիւն, որ սկսւում է մեր ազգի պատմութեան հետ և վերջանում է մեզանից ոչ այնքան հեռու ժամանակ։ Քանի՛ քանի նշանաւոր մարդիկ են գալիս եկել այդ երկրից, նշանաւոր իրանց տեսքով և պատկառելի անուններով. Վասակ Սիւնի և Վաւերդ-բէկ Սիւնի. մի երկիր, որ դառն ու քաղցր պտուղ է տուել։ Պատմական ահեղ փոթորիկներ շատ են անցել այդ երկրի գլխովը, ժողովուրդը փարթամութիւնից մի քանի անգամ վերջին սպառման է հասել և էլի գլուխ բարձրացրել, մեծացել։ Խորհրդապահ երկիր, որ իր ծոցի մէջ դեռ ևս պահում է հին հին դարերի յիշատակներ, անթիւ աւերակներ և այդ աւերակների մէջ մի մեծ պատմութիւն։ Դարեր են գնացել, իշխանութիւններ են յաջորդել միմեանց, թագաւորութիւն է հաստատուել, որ ծաղիկ հասակում մարել է, անյայտացել 1400 հայաբնակ գիւղերից բազկացած այդ նահանգը այժմ քանի՛ գիւղ ունի. — մատներով կարելի է համրել։ Սուրն ու գերութիւնը մաշել, կարծել են մի ահագին ժողովրդի մարմինը. և այդ աւերմունքների, թշուառութիւնների ժամանակից Սիւնիքը ծածկած պահում է մի պերճախօս լեզու, որ դեռ

չի խօսում։ Հանդուգնել Բաշինին մի ժամանակ ըղձում էր թէ մեր լրագրներում հարց է պարթել Սիւնիքը մանրամասն ուսումնասիրելու համար. ուզում էին կազմել մի գիտնական արշաւանք, հրատարել համառ մարդիկ։ Լաւ միտք էր, խօսք չը կայ. Սիւնիքը ուսումնասիրելու գործը մի կամ երկու անհատի ոյժից բարձր է, այդ շատ ճշմարիտ է։ Բայց ցաւն այն է, որ հարցը շօշափով մոռացուեցաւ, դարձաւ եղաւ աստպարէզից։ Բանը էլի անհատներին ձգած։ Հետաքրքրութիւնը վառ ձգած. և այսօր այդ հետաքրքրութիւնը իմ մէջ անհամբերութիւն էր ծնացրել հետաքրքրութիւնը միշտ ինձ նախատում էր. այդ ինչպէս բան է, ասել էր միշտ, դու շատ բան գիտես էսկիմոսների և տաճդուանների երկրի մասին, բայց այս պատմական դաշտի մասին խօսելիս և կարգալիս երևակայել ես քեզ մի Սիւնիք, որ դուրգ իրական Սիւնիքին նմանութիւն անպատճառ չունի, որով հետև երևակայութիւնդ կարող էր քեզ սխալեցնել, եթէ աչքիդ առաջ ունենայիր ուրիշների նկարագրութիւնը։ Բայց ո՞վ է նկարագրել, ձի՛ է մի ամիսի պատկեր տուել։ Բախտը վերջապէս յաջողել էր ինձ երևակայածս տեսնել. ահա գնում եմ իրրև մի պարզ ուղեւոր, որ ոչինչ մտանագիտական պատրաստութիւն չունի։

Այս մտքերի մէջ էի. և մեր սայլակը, որ այս

լեռների մէջ լեռնային հարմարաւակութիւն է առա-
ջել, անոգնար կերպով քարշ էր տալիս ինձ իմ մըտ-
քերի հետ լեռնային բարձրութեան մեծ լանջերի
վրայով տարած ճանապարհի կամաննելով. սեւն ու
սպիտակը չորոշելով, կամք ու համաձայնութիւն
չը հարցնելով, վազվզում է, բազմաթիւ պոզայ-
ներ է անում, մի ծայրից դնում է միւս ծայրը, մեկ
էլ յետ գալիս, որպես զի մեզ անվնաս տանէ ցած
ու գտնէ ուղիղ ճանապարհը: Մեր դիմացն է Ղա-
րապշլաղ անունով հայաբնակ գիւղը. նա թաւ է
եղել քարէ սարի գլխին, Ղարաբաղի մի հայ գիւղի
պատկերն է ներկայացնում. այդ սարի երկա-
րաձիգ կողերը ծածկուած են ծմակներով, որոնք
շատ տեղ այնքան թանձրանում են, որ յիշեցնում
են անտառային խաչերը: Ծմակների մէջ կան յայ-
նատարած վարելահողեր, իսկ ձորի այս կողմում,
փոսափ ճանապարհի վրայ, տեղ տեղ պատահում են
անակներ, ուր ապրում են այդ գիւղի մարդկանցից
շատերը. խրճից տաւարի ու ապրանքի հետ: Այդ
տեսակ անտեսական անակներ «բինա» անունն ու-
նեն: Բինաները ցրուած են ամեն տեղ, հետ ու-
մեանցից, ծառերի ու ձորերի մէջ, երբեմն և մի
տեղ են խմբվում, փոքրիկ գիւղ կազմում: Ըստ ե-
րևոյթին վաղ այստեղ մեծ նշանակութիւն չունե-
ցել էր հարսանութիւնը այսպիսի խուլ ան-

կիւնների է քաշում և նրա պահապանն է հան-
տարիմ շունը կամ մի ժանգոտած հրացան ու մի
ծխից դեղնած առյլ: Ես իրաւ, զարապշլաղցիք
յայտնի են իբրև շատ քաջ և ալիսակրա մարդիկ-
տեղը եկաւ, կարս էլ կը սկսեն, կը ծեծեն. անուն
ունեն շրջակայ թուրք ազգաբնակութեան մէջ և
հենց այդ անունին յենած այդպես ցոյց ու ցան անակ-
ներ են շինել և ապրում են: Հանգամանքները, ինչ-
պես յայտնի է, մարդ են պատրաստում, կազմում
այս կամ այն կերպ ապրելու: Զարապշլաղը մի միակ
հայ գիւղ է, որ ամեն կողմից շրջապատուած է
թուրք ազգաբնակութեամբ, իսկ այս ազգաբնակու-
թիւնը, յայտնի է, ունի իր սեփական հասկացողու-
թիւնը սեփականութեան մասին. նա հալածել է
և սովորացրել զարապշլաղցիներին գգոյշ և անվախ
լինել, պարտքը հատուցանել այնպես, ինչպես ստա-
նում են:—Գիւղի մօտ կայ Պանտալեոն բժիշկի մա-
տուռը, մի յայտնի ուխտատեղի, որին ժողովուրդը
«Պարոն Պիժ» է անուանում: Այդ տուրբը տալիս է
զանազան տեսակի շնորհք. գիւղացիների մէջ քիչ
չեն աշուղները, լարախոզացները:

Երեկոյ է, բայց լուսինը ամպերի հետևից աղօտ
կերպով լուսաւորում է շրջակայքը. ապրը թռչում
է ուղիղ ճանապարհով, որ աննկատելի կերպով
հետզհետէ դէպի ցած է տանում: Մենք հասնում

ինք Աբդալար անունով իջևանը, ուր պիտի դիշերենք։ Լուսինը դուրս է գալիս երինքի պարզ տեղը և մենք տեսնում ենք թէ ինչպիսի տեղ ենք կանգնած։ Իջևանից ցած, մեծ թումբի ստորոտում, երևում է մեծ խարույկը. այդտեղ իջևանել էին թափառական թուրքերը, որոնք այժմ էլ սարերից գնում են ցած, իրանց տափարակները։

Դեռ նոր էինք նստել, դեռ մեզ համալ ղրած հիշատակը չէր տաքացել, երբ մեր եկած կողմից մի սարսափելի աղաղակ լսեցինք։ Իջևանի վերակացուն (старосta), սայլավարները և իջևանի հանդիպ բնակուող տեղային ոստիկանութեան ձիաւոր պահապանները դուրս թափուեցան, կարծելով թէ մարդ են կողոպտում։ աղաղակը մի երկու անգամ էլ կրկնուեց, մեր կողմից պատասխանեցին թուրքերէն հայհոյանքներով. յանդիմանում էին ազաղակողին թէ ինչ ես բզաւում, արի տեսնենք ինչ կայ։ Բայց մենք լսեցինք որ այդ ձայնը մեր անունն է կանչում և իսկոյն իմացանք, որ դա մեր երկրորդ ընկերն է, որ Թթու-Ջրից ուրիշ սայլով մեզանից շատ առաջ էր ձանապարհ ընկել։ Մենք էլ դուրս վազեցինք։

Մեր դժբախտ ընկերն այդ րոպէին շնչասպառ, քրտինքի մէջ կորած, սաստիկ շտապ քայլեր անելով, եկաւ, իջևանի տնտէն ընկաւ։

— Ի՞նչ է, ի՞նչ կայ։

— Տնաշէնենք, ինձ կերել էին...

— Ովքե՞ր, ի՞նչ ես ասում։

Նա ստատիկ Թանչոց տալով պատասխանեց.

— Գայլերը...

Մենք չը հաւատացինք։ Երևի, ասացինք, մեզնակ է ճռացել և վախեցել է։ Բայց նա մեզ հաւատացնում է, պատմում է։ Մենք իմացանք որ նա ձանապարհին իջել է սայլից և ճռացել է զարտաղեղ լազերոց բինաներում, իջևանից երեք ու կէս վերստ հեռու, ձանապարհի վրայ։ Երբ տեսել է մեր սայլը, հաւնեերից վազել է որ իմաց տայ թէ ինքն այդտեղ է, բայց անիւնների ձայնը չի թողել որ լսենք. նա հարկադրուած է եղել սայլե հաւից վազել, բայց, իհարկէ, յետ է ճռացել։ Գալիս էի, մէկ էլ ձանապարհի կողքին, ինձանից քիչ ցած, երկու ձրլազի պէս վառ աչքեր տեսայ. իսկոյն իմացայ, որ գայլ է։ Գայլերս արագացրի, շատ չը վախեցայ, սակայն մէկն է, մէկն այնքան վտանգաւոր չէ։ Բայց ինչ... Մի քանի քայլ առաջ եկայ և այժմ տեսայ որ երկուսը նստած են թուփի տակ, իսկ երկուսը վազվզում են, մեծ պոչերը քարշ տալով ինձ են նայում, քիթները վեր քաշում, բերանները ծռում, ատամները բաց անում, որպէս թէ ծաղրում են ինձ։ Էլ չիմացայ ինչ անեմ, գլխարկս վերցրի, գլուխս կոխեցի»։ Սարսափը առհասարակ կատաղում է մար-

810-2013

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

դու ծնկները, կաշկանդում է. կորչում է որոշ միտքը և մարդը ծուռ ու մուռ անող մի թոյլ բան է դառնում, անզգայաբար վտանգի առաջն է գնում, իր անձը նրան տալիս։ Բայց շատ անգամ մարդուն թերչելու թևեր էլ է տալիս. կատաղի յուսահատութեամբ նա ոտնակոխ է անում ամեն արգելք, ազատութեան ձանապարհ է որոնում գետի ու կրակի միջով. մեր ընկերն էլ, բարեբախտաբար, այդպէս է անում, սլանում է առաջ։ «Զը գիտեմ ինչպէս եկայ. երբ տեսայ իջևանի լուսաւորուած պատուհանները, կարծեցի թէ ղրանք էլ գայլի աչքեր են. ասացի տունս քանդուեց, գայլերն արդէն առաջ են անցել և կարել են ձանապարհս»։ Ահա այդ լոպէին է նա այնպիսի յուսահատուլ աղաղակ արձակել։

Մենք սիրտ տուինք նրան ինչպէս կարողացանք. նա փոխեց քրտինքից ջուր կտրած շորերը, թէյ խմեցինք։ Նուռով ընթրիքի էլ նստեցինք. և գեռ մեր պաշարը մեր առջևն էր դրած, երբ իջևանի վերակացուն, որ սենեակի շէմքում կանգնած էլ, ասաց.

—Ա՛յ, նա է եկել քեզ վախեցնողը։

—Ո՞ւր է, ո՞րն է, հարցրինք մենք վեր թռչելով մեր տեղերից։ Կարծում էինք թէ եկել են իջևանի բակը։

—Ոռնում է, պատասխանեց վերակացուն։

Ականջ դրինք, ձայն չէր լսվում։ Կարճատև լռութիւնից յետոյ մօտիկ ձորում մի երկար, առաձգական, ահուր և մի և նոյն ժամանակ սպառնալից ձայն բարձրացաւ. շան ոռնոցի նմանութիւն ունէր, սկզբում բարձր, կոկորդային, իսկ յետոյ աստիճանաբար բարձր և բարակ։ Այդ ձայնին հեռուից պատասխանեց մի ուրիշը. թափառականների շները սկսեցին հաչել, ոռնոցները լռեցին։ Մենք ճաշինք շէմքին կպած, սպասում էինք։ Նախերգանքը լսեցինք, շուտով սկսուեց գայլի նուագահանդէսը։ Մէկը եկել էր, իջևանի հանդէպ, էտապի տան պարսպից քիչ հեռու նստել էր մեր աչքի առաջ և ոռնում էր. իջևանի շունը վազեց գնաց, նրանից քիչ հեռու նստեց և սկսեց ձայնակցել նրան։ Մի մեծ կարմիր գայլ էր մեր տեսածը, սև դունչով։ Երկու երեք անգամ զլեց իր վայրենի թանձր ձայնը, բարձրացրեց ևլևէջնելով և էլի ցածրացրեց. ձորից պատասխանեց մէկը, որի ձայնը իսկոյն կորաւ բազմաթիւ ձայների մէջ. ոռնում էր ամբողջ խումբը, որոշվում էին ջահիլների բարակ ձայները։ Սարսափելին այդ խմբական ոռնոցն է. մարդու մազերը փշաքաղում են, ուզում ես փախչել, պուճախը մտնել։ Ես առաջին անգամն էի գայլի ձայն լսում. այդ վայրենի, ոչ մի բան չը խնայող զիշակերների խուլ, սարսափելի ախուր ոռնոցը եթէ մի կողմից ճնշում էր իմ

սիրտը, միս կողմից մի տեսակ բաւականութիւն էր բերում: Այո, լաւ է զգալ որ պաշտպանուած ես պատերի մէջ, ապահով ես կրակի պէս այրուող աչքերից և մի և նոյն ժամանակ լսում ես նրանց սպառնալից ասեմ թէ ազաչաւոր, բողոքարկու ձայնարկութիւնը:

Իջևանի վերակացուն, մի դիւզացի մարդ, որ իր օրում շատ չար ու բարի է տեսել ու լսել, պատմում է մեզ թէ ինչպէս ինքը շատ անգամ պատահել է գայլերին մենակ, կէս գիշերին: Նրանց առաջին ժանիքներն են սարսափելի, ասում է. միմեանց որ զարկում են, կայծեր են թափվում և այնպիսի ձայն է դուրս գալիս, կարծես մի ծառ կոտրուեց. ժանիքների այդ սարսափելի յատկութիւնն է, որ յաղթում է կենդանիներին, ինչ տարիքի և հասակի տէր լինեն: Կենդանիները սկզբից դեռ պաշտպանում են իրանց՝ բնութեան տուած զէնքերով: Բայց գայլի բոլոր զօրութիւնները ի վերջոյ յաղթում են, որի սիրտը փոքր է ընկնում, լեղին պատռւում և այն ժամանակ նա վերջին օրհասական ազդակներ հանելով կիրակուր է դառնում այդ չար, միշտ ուտող և միշտ քաղցած դազանին: Միայն ոչխարն ու ուրիշ նրա պէս անպաշտպան կենդանիներն են առանց բողոքի, առանց դիմադրութեան տալիս իրանց մարմինը:

Հարկաւոր չէ ասել, որ մենք հրկարացրինք այդ երեկոն. նուագահանդէսը մեզ համար խօսակցութեան ահագին նիւթ դառաւ: Վերակացուն պատմում էր հարիւր ու մի բան, իսկ մենք զարմացած լսում էինք: Գայլը մեր ժողովրդի լաւ ծանօթն է. ժողովուրդը շատ լաւ գիտէ նրա «տակն ու գլուխը», լաւ հասկացել է նրա բնաւորութիւնը: Դա արդէն պէս չէ. անտառային ծանրաշարժ հանաքչին ծիծաղով է յիշվում. իսկ գայլը—ցաւ ու կրակ է: Ժողովուրդը գիտէ, որ երբ գայլը ոռնում է, նշանակում է որ նա երկնքից իր անկուշտ բերանի համար բաժին ու պատառ է հայցում: Երկինքն էլ հասցնում է: Եւ երբ գիւղացին տեսնում է իր պատառ-պատառ արած եղը, այծը, էշը, վիզը ճկում է յուսահատօրէն ինչպէս ամեն մի ճակատագրական անօրինութեան առաջ:

Գայլի մասին խօսք սկսած ժամանակը անխուսափելի է մարդագայլի առասպելը: Իջևանի վերակացուն պատմեց մեզ հետևեալը:

Մի մարդ իր կալում նստած տեսնում է թէ ինչպէս մի քանի գայլեր բերանները դէպի երկինք բարձրացրած՝ ոռնում են. տեսնում է որ երկնքից ինչ-որ բաներ են թափվում, որ իսկոյն ուտում են գայլերը: Մարդը գայթակղվում է, ասում է մէկն էլ ես ուտեմ, տեսնեմ ինչ բան է: Վերցնում է իր մօտ

ընկածը, տեսնում է պոչի պես մի բան է, ուտում է ու... ինքն էլ գայլ է դառնում, վեր կենում խառնվում միւս գայլերի հետ։ Տարիների ընթացքում գայլութիւն է անում, պատառոտում է, ուտում, խեղդուելու չափ շատ ուտում։ Մարդագայլը յետոյ է պատմել իր գլխի անցքը. գայլի արհեստը նա այս օրինակով է բացատրել։ Մի գիշեր, ասել է, Թթու-Ջրի սարերումն էինք. ուտելու բան չը կար, ոռնում էինք. երկնքից նշան եղաւ որ մեր բաժինը Մեղրիի սարումն է. մի մեծ գեր եզն, որի եղջիւրներն ու պոչի ծայրը սպիտակ են. դա է ձեր բաժինը, ուրիշ բան չը կայ, յայտնուել է մեզ. վեր կացանք, ասել է, որ վերցրինք դէպի Մեղրի. երկու երեք օրուայ ճանապարհ է, բայց մենք մի գիշերում գնացինք, առաւօտեայեան հասանք. մեզ ցոյց տուած տեղը ցոյց տուած նշաններով եզը տեսանք, կերանք։—Իսկ մարդագայլը դարձեալ հասարակ մարդ է դառել այսպէս։ Մի օր ծմակում մենակ է ճուում, հանում է մորթին, դնում ծառի ճիւղի վրայ, ինքը նստում հանգստանալու. այդ ժամանակ մի որսորդ է դուրս գալիս, տեսնում է մորթին, իսկոյն հասկանում։ Ճածուկ մօտենում է, մորթին վերցնում, ծառը վեր ելնում։ Մորթու տէրը ջզուում է, կատաղում, ուզում է ինքն իրան սպանէ ու մորթին չհետ ստանայ։ Բայց որսորդը ծառի գլխից ա-

սում է որ եթէ շատ դէս-դէն ընկնի, նա կը սպանէ նրան. մարդագայլը աղաչում է, պաղատում, վերջը վախում է, հնազանդւում. որսորդը տանում է նրան գիւղը, այնքան պահում է, որ նա իր գայլութիւնը մոռանում է, մարդ դառնում։

—Մեղանից մեծերը մեղանից խելօք են, այսպէս են պատմում, ես ինչ իմանամ. այս խօսքերով է վերջացնում վերակացուն իր պատմութիւնը, խորապէս համոզուած, որ իր այդ պատմութիւնը կարող է միանգամայն ճիշդ էլ լինել։

Մարդագայլի առասպելը շատ տարածուած է Հայերի մէջ և բազմատեսակ բովանդակութիւն ունի։ Բայց ժողովրդի հասկացողութեամբ գայլ են դառնում գլխաւորապէս կանայք։ Չը գիտեմ թէ ինչ հիմք ունի այդ առասպելը, բայց Աբգալլար իջևանի այդ բոլոր ձայներն ու զրոյցները իմ մտածութեան նիւթ էին տալիս։ Ցանկարծ իմ յիշողութեան մէջ, տարինների հոսանքը ոտնակոխ արած, կենդանացաւ մարդագայլի այն հէքեաթը, որ պատմել էին երեխայ ժամանակս. ինչպէս մի հարս գայլ էր դառել և միշտ իր սրհեստի հետևից ընկած չէր մոռանում իր երեխաներին. գիշերային պահուն գալիս էր, մորթին հանում, ծիծը դնում երեխաների բերանում։ Բայց նրանից գայլն հոտ էր գալիս։ «Մայրիկ, ինչու՞ քեզանից մրթմրթոց է գալիս», հարցը-

նում էին երեխաները։ Փողովրդի երևակայութիւնը տուել է այդ հէքեաթին այնքան հրաշալի դոյներ, որ ես այժմ անկողնում պառկած յիշում էի նրա բոլոր մանրամասնութիւնները, աշխատում էի կրկնել իմ մտքում ինձ պատմողի ձայնը, խօսքերը անփոփոխ պահելով։

Իմ մտքերը խանդարեցին շնահաչոցն ու մարդկային աղաղակները, որոնք հետզհետէ մօտենում էին իջևանին։ Թափառական թուրքերն էին, շներով գալիս էին գայլերին հալածելու։ Երբեմն շները կատաղի աղաղակներ էին բարձրացնում և այդ ժամանակ շէմքում կանգնած վերակացուն մեզ իմաց էր տալիս թէ գայլերի ու շների մէջ կռիւ է բնկել երկար տևից այդ հալածանքը. ոռնոցները վերջապէս կտրուեցան, շները յետ քաշուեցան, աւրից գիշերային անվրդով խաղաղութիւնը։ Ո՛ւր դնացին անկուշտ գիշատիչները։ Նրանք հօ սոված չէն մնալ, նրանցից բարձր երկինք կայ. որ խելք գիւղացու պահած—պաշտած փարախը պիտի ապականեն, ոմ գիտէ...

Բ.

Աբգալար իջևանը շինուած է Թթու-Ջրի լեռնաշղթայի մի ուսի վրայ. լեռնաշղթան այստեղ դժուարին լանջեր է կազմում, որոնք ցածրանալով հակառակ կողմից եկող մի ուրիշ շղթայի առաջ, Հաքարու գետի լայն ձորի վրայ են վերջանում։ Փոսաի ձանապարհը գժուածի պէս դէս ու դէն է վազում այդ լանջերով, դէպի ցած տանում։

Այսպէս ուրեմն, մենք Մեծ-Սիւնիքն ենք մտել։ Ես ուշադրութեամբ դիտում եմ ինձ շրջապատող բնութիւնը, տեսնում եմ որ նա, այո, խիստ փոխուել է։ Մի թէ այս է, հարցնում եմ ինձ, այն հարուստ և գեղեցիկ երկիրը, որի մասին գովասանք ենք միայն լսել։ Ո՛ւր է բնութեան հարստութիւնը։ Այստեղ իմ տեսածը լոկ մեռած, անկենդան լանջեվայրեր են, մոխրագոյն սարեր. բուսականութիւնն ադքսա, այրուած, տխուր։ Հողը սպիտակ է, կաւարեալ մոխիր. նրա երեսին կպած է կոշտ ու դեղին խոտ։ Կան ծառեր, բայց ոչ թէ մեր երկրի ծառեր, մեր ամեն օր տեսած, մեզ ծանօթ ծառեր. դրանք գիհու (можевельникъ) մշտադալար կարճահասակ թփերն են, որոնք, սակայն, չեն կարողանում իրանց մշտական գալարով ուրախացնել այդ չոր ու ակլոր, քարքարոտ զառիվայրերի տխուր դէմքը։ Ինձ

այնպէս էր թւում, որ այդ խեղճ թփերը մեր երկրին չէն սազում. նման են անօգնական որբերի, որոնց զրկել են հայրենի տնից և հարկադրում են ապրել, կեանք անցկացնել այնպիսի տեղ, այնպիսի շրջանում, ուր նրանց պահում են միայն այն պատճառով, որ ուրիշ ձար չը կայ: Մի երկու տեղ, ուր փոքրիկ ջրեր կան, տեղական բնակիչները անկել են ընկուզենի և կեռասենի: Տեղական բնակիչներ ասելով պէտք է հասկանալ Աբդալլաը անունով գիւղի թուրքերը. սրանցն է այս երկիրը իր բոլոր սպիտակ հողերով, քէչից կազմուած մեծ մեծ լանջևվայրերով և գիհու բազմաթիւ ծառերով: Գիւղը թուրքի է, ուստի և շինուած է մի տափարակ տեղ և շրջապատուած է մեծ մեծ ծառերով, որ գիւղացիներն են անկել, մեծացրել:

Եթէ ուղևորը «այս աշխարհի» ցաւերի ու հոգսերի կամ բազմաթիւ զբաղմունքների մէջ խեղդուող մէկը չէ, այլ ինձ պէս մի ուրիշ միջոց չունի ձանապարհի երկարութիւնը, փոստային սայլակի անողորմ երերանքը մոռանալու համար, բայց միայն իր աչքի առջև դուրս եկող ամեն մի տեսարան տեսնելով ու դիտելով, այդպիսի ուղևորը կարող է երկար չը տատանուելով մի որոշ հասկացողութիւն կազմել Սիւնեաց երկրի բնութեան մասին. նա կասէ, որ այդ երկիրը, այդ հողն ու բնութիւնը, կարծես, մի երկարատև բռնութեան տակ են եղել, զրկուել են ոյժից, կարողութիւնից, կոլցրել են թարմութիւն, կոլցրել են եռանդով գործելու ընդունակութիւնը: Ուղևորի սիրտը ախորժում է, կուչ է գալիս. նա մի աննշան հեռաւորութիւն է թողել այս տեղի և լեռնային Ղարաբաղի մէջ. մի քանի ժամ առաջ տեսել է աշնանային մի գեղեցիկ բնութիւն, անտառներ իրանց հարիւր ու մի տեսակ ծառերով և սրանց վերջին պտուղներով. իսկ այստեղ ամեն ինչ չորացել է, մոխիր դառել: Աշունը տխուր է, մեռած:

Հաքարու կամ Հաքարի գետը շատ լայն տաշտ ունի: Այժմ գետը փոքր է և վշշալով սաստիկ արագութեամբ դէպի ցած է գնում. բայց նրա անունը գարնանն է ստանում փառք ու պատիւ, երբ այժմեան գետը լայնանում է, իր ամբողջ տաշտը ծածկում, մեծանում է, ուռչում: Գետի վրայ փայտի կամուրջ են շինել, որ ասում են թէ ութ աչք ունի. բայց Հաքարուն ինչ կամուրջի նայող է. մի քանի տարի խոնարհուել է, մէջքի վրայ գօտի է ընդունել, բայց յետոյ չէ դիմացել և այժմ կամուրջը մի տխուր և լքեալ աւերակ է ներկայացնում. սիւները թէև գեռ կանգնած են, բայց տախտակապատ գլուխը մի քանի տեղ պատռուած է, քանդուած: Սայլակն անցնում է կամուրջի տակով և ուղևորը տեսնում է թէ ինչպէս զուր է անցել մարդու աշխատութիւնն

ու հեռատեսությունը: Փայտի մի քանի հատ մեծ սիւներ անկած են մի շարքում ու կամուրջի մի ոտն են կազմում. անթիւ, անհամար ձողեր զանազան կողմերից և զանազան ուղղութեամբ կպած են այդ սիւներին, երկաթի ահագին գամերով են կպած որ պինդ պահեն: Սակայն այդ բոլոր հնարագիտությունը այժմ ակարութեան մատին է վկայում. հազարները է կերել այդ շինութիւնը, մի կարճ ծառայութիւն է արել և այժմ իր փայտի մարմինը հազարաւոր կարկատաններով բեռնած հազիւ է ցցուած, անձռռնի ոտները բարձրացրած հին ու անկարող ծերուկ:

Այս տարի գետի տաշտը ծայրէ ի ծայր լցուած է եղել ջրով. մենք տեսանք ջրի կատաղութեան շատ հետքերը. նա քանդել է բոլոր ջրաղացները, քանդել է շատ տներ, խեղդել է շատ մարդ ու անասուն, հեռուից ահագին քարեր, ծառեր է բերել ու տարել իր հետ, մի մասը թողել այստեղ. աւերել է այս կողմի թուրք գիւղացիների հեռատես այգիները, որոնք գետի վրայ են շինուած և այդ աւերմունքի փոխարէն կուտել է իր ափերի մօտ այնքան փայտ, ծառ և աւերած շինութիւնների գերան, որ տեղացիները ամբողջ ամառը հաւաքել են, երանց պատշաշը պատրաստել, աւելորդը ծախել: Լեռնային գետը գեռ այնքան վնասակար չէ, երբ իր երկու ափե-

րից բան չի պոկում: Իսկ երբ այնքան փքվում է, մեծանում որ կարողանում է ահագին քարը, ծառը կամ գերանը տաշտի կտորի պէս խաղացնել, այն ժամանակ արիւնը բերանն է առնում. և վայ այն մարդուն, որի ձանապարհի վրայ է այդ խիկ գետը: Որքան լաւ և ուժեղ լինի ձին, որքան նա և հեծեալը լաւ իմանան լողանալը, սաքսափելի վտանգը քթի ծայրին է նստած. բաւական է որ մի մեծ քար կամ փայտ հասանքի տրադութեամբ գայ, զարնուի ձիուն կամ մարդուն—և փրկութիւն չը կայ: Նրևւայիմ էք արդիօք թէ ինչ է մեր երկրի մարդը, որ տարին մի քանի ամիս շաւտնակ այսպիսի գետերով է անց ու դարձ անում: Նա մօտենում է արնախում գետին, շարերը հանում է, վրան կապում, Աստուած է կանչում և իր ձիու բաշը շոյելով, յոյսը նրա վրայ դրած մտնում է կատաղած կոհակների մէջ: Նրա աչքերը շփոթվում են, շուռ են գալիս, գնում են ջրի հետ, գլուխը շուռ է. գնում է ջրի տակն ու գլուխն ընկնելով, թրջուած, ջուր դառած. երբեմն խրվում է մինչև աչքերի գլուխը, բերանից պղպջակներ է հանում. բայց ձիու բաշից ձեռք չի վերցնում, կպչում է այդ թանկագին կենդանուն, որի ոյժն ու փորձառութիւնը միայն կարող են ազատել կատաղած տարերքի բռնութիւնից: Հոսում է պղտոր ջրի լայն տարածութիւնը, հոսում է, վա-

զում, խօսել մոռչում է, մանր ալիքներ տալով. ոչինչ չի դիմանում նրա առաջ, միայն մարդն է որ շուռ ու մուռ գալով, մահուան դուռը գնալով ու էլի յետ դառնալով, անցնում է նրա միջով, լեղապատառ ազատվում:

Գալնան սովորական պատկերն է այս, որ պատմում է մեր սայլավարը, երբ մենք անցնում ենք դեպի լայն և անհամար քարերով ծածկուած տաշտը: «Այժմ Աստուծու ողորմութիւնն է, սայլակով ենք անցնում», ասում է նա և ցոյց է տալիս թէ իրան որտեղ և քանի անգամ է տարել վարարած գետը և ինչպէս է աղաւոտել:— «Է՛հ, սայլավարի կեանք...», աւելացնում է նա և փափախը աչքերին դցելով բարձրացնում է մտրակը իր ձիանների մէջքի վրայ. նրանք մեզ դուրս են բերում գետից, սկսում են բարձրանալ ասլն ի վեր: Հետզհետէ երևում են ակերը ու տրտում բարձրութիւններ. հողը աւելի և աւելի սպիտականում է, և այժմ գիհու թփերի տեղ նրա խղճութիւնը փոխում են ծածկել փշի թփերը. փոխում են, բայց աւելի ևս ախրացնում են իրանց վատ ու խեղճ տեսքով: Ասել աւելորդ է, որ այսպիսի տեղերը չեն մշակվում. եթէ գալնան սկզբից այս անկենդան հողերի վրայ կեանք է սկսում մի ինչ որ ողորմելի բուսականութիւն, բայց ամառուայ կէսին հազիւ է հասնում, շտապում է դեղնել, մեռնել:

Ինչպէս երևում է, ջուրը մի ժամանակ այստեղ մեծ գործեր է կատարել: Ընդունուած ենթադրութիւն է, որ Հաքարուի շրջակայ լեռնադաշտերը անյիշելի ժամանակներում Սևանի լճի պէս մի լճի տակ են եղել *): Այժմեան ճանապարհը շինելիս ձեղքել են բարձրութիւնների կողերը, որոնք կազմուած են հողի զանազան շերտերից. մի տեղ աւազ է, միւս տեղ հողի մէջ երևում են բազմաթիւ սև ու կոլոր գետաքարեր, որոնք գիտութեան գաղտնիքներին անծանօթ մարդուն էլ կարծել են տալիս, որ այս բարձրութիւնները կազմել է ջուրը՝ քարեր կուտելով և սպիտակ հող ածելով նրանց վրայ: Իսկ մի քանի տեղ անպտուղ և ամայի լանջիվայրերի վրայ ցցուած են մեծ մեծ քարերի խմբեր, որոնք ունեն բազմազան անկանոն ձևեր ու կերպարանքներ. քարերի մարմինները կլծուած են, ծակծկոտ, չէչոտ, թէև ըստ երևոյթին պինդ ու կարծր: Ինչ և իցէ, ջրի հեռքը նկատելի է ամեն տեղ. ջուրն է կերել, ծակոտել այդ բազմաթիւ քարերը, տուել է նրանց այնպիսի տարօրինակ, զարմանալի ձևեր, որ անցորդը չի կարողանում ուշքն ու միտքը հեռացնել նրանցից. կարծում ես թէ առասպելական հսկաներն են բերել այդ անձոռնի ու անկերպարան բեկորները,

*) Տես „Земля и люди“ Э. Реклю հատոր 6.

անկել են այստեղ սատանան գիտէ թէ ինչու. համար։

Քարերի այդ խմբերի մօտով անցնում ենք, մի սեռի *) գլուխն ենք հասնում, որտեղից բացվում է մի ուրիշ մեծ ձորի տեսարանը, որ բոլորովին նման է Հաքարու գետի ձորին. այս էլ Ջաբուղ գետի ձորն է։ Փոստային իջևանը շինուած է գետի վրայ, Ջաբուղ անունով թրքաբնակ գիւղի կողքին։ Մի ժամ հնացինք իջևանում և շատ լաւ հասկացանք թէ ինչ տեղ է այդ Ջաբուղը. դա մի խեղդուած ձոր է, ուր ամառը սարսափելի տաքութիւնն է տիրում. թէև հոկտեմբեր ամիսն է, բայց այժմ էլ արեգակը պլուում է, իսկ անթիւ ու անհամար ճանճերը, ամեն մի փոստային իջևանի այս անխուսափելի զարդն ու զարդարանքը, իրանց յատուկ անելևութեամբ մեզ վրայ են յարձակվում, անխնայ սկսում են չալչարել Տաքից ու ճանճերից ազատուելու համար մենք մտնում ենք մի այգի, նստում ենք ծառերի շուաքում։ Այգին, ինչպէս և ուրիշ շատ այգեվոի այգիները, ընկած է գետի կողքին։ Տաք ձորը բացի կեռասից խաղող էլ է հասցնում, բայց

*) «Սեռ» ժողովրդական լեզուի մէջ նշանակում է ողնաշար, առհասարակ երկար ծայր. շատ գործ է ածվում լեռնային բարձրութիւնների վերաբերմամբ։ Մեր գրաբար գրականութեան մէջ էլ պատահում ենք «սեռ» բառի այս մտքով գործածութեան (Տես Ստեփաննոս Օրբէլեանի պատմութիւնը)։

աւելի յայտնի է այն կարմիր կեռասով, որ ամառը մեծ քանակութեամբ շուշի է տանվում և ծախվում է շատ էժան, որով հետև հասնելուն պէս որդների բոյն է դառնում։

Ջաբուղ գետի ելուխիքը, պէտք է ասել, շատ մեծ է։ Եթէ նա չը լինէր, ոչ մի մարդկային էակ չէր ապրիլ այստեղ, ուր ամեն ինչ բնութեան կատարեալ անանկութեան մասին է վկայում։ Նա է մարդկանց խմելու ջուր տալիս, թէև անառողջ, ջնասակաւ ջուր. նա է ջրում ծառերն ու տունկերը, պտտում է ջրաղացների քարերը, հաքարուի պէս առատ, բայց անհամ ձուկ է տալիս. այսպէս մի կերպ կերակրում է մարդուն։ Իսկ մարդ քիչ չը կայ. Ջաբուղ գիւղը թրքական փոքրիկ, շատ սովորական և շատ փոքրիկ գիւղերից մէկը չէ, թէև գուցէ ամենից ողորմելին է։ Աղքատութիւնն ու կեղտոտութիւնը հանդիսաւոր տեսք ունեին այստեղ։ Քիչ չէ և ներքին, բարոյականութեան վրայ նստած կեղտը։ Ամենքը վկայում են, որ այստեղի կանանց մէջ սաստիկ տարածուած է պոռնկութիւնը. ինձ հաւատացնում էին, որ այդ զզուելի արհեստը բացարձակ է, որ Թրքուհիները հասել են այն աստիճանին, որ օր— կէսօրին օտար մարդ իրանց մօտ կանչելու համարձակութիւն էլ ունին։ Այդ վկայութիւնը ինձ մեծ զարմանք պատճառեց։ Ես միշտ երևակայել եմ մահ-

մեռական կնոջը խիստ կապանքների մէջ կապուած, խիստ հսկողութեան տակ. ամենահասարակ թեթեւ ազատութիւնն էլ, ինչպէս է օտար տղամարդի մօտ երես բաց անելը, պատժվում է սրի և դաշոյնի օգնութեամբ. և այդ բոլոր դառն բռնութիւնները սրբագրուած են օրէնքով և աւանդութիւններով միայն նրա համար, որ կինը հաւատարիմ լինի ընտանիքի պատուասէր օջախին, աշխարհի բոլոր կանանցից էլ հաւատարիմ: Եւ ահա մահմետական կինը, որի ճակատին դարերի ընթացքում միշտ կրկնուել է, որ նա իրաւունք ու ազատութիւն չունի, անբան տարուհի է, մի անկեղծ էգ, որ իր տիրոջ վայելքութեան և վաշխոտ կրքերի համար է միայն ստեղծուած, այդ իսկ կինը պատռել է, ոչնչացրել իր տանձերը, ոտով գլխով խլուել է տարտափելի ցեխի և ապականութեան մէջ: Նա միշտ գազանք, սէր է վայելել միայն իր էգութեան պատճառով. նրա կնութիւնը, նրա կանացի պատկերը իր արտաքին հրապոյրներով երբեք է յօրինել առուի, արտասուք, ցաւ ու վիշտ է զգացել տղամարդի մէջ. բայց այդ տղամարդը բռնակալ է եղել, նա ինքն է հիմնել հարեմը, նա ինքն է սիրել փակել գեղեցիկ թռչնակին ամուր վանդակում և կանգնել նրա մօտ, արտասուել, երգել, մինչև երկինք, մինչև աստղերը բարձրացնել իր ոսկի տակ գլուխ և անզօր թռչնակին:

Ահա այդ տեսակ հասարակական և ընտանեկան դրութիւնն է, որ այս տեսակ ազատութեան ձգտումը անպատկառ է բաց արել, մի ճանապարհ, որ միակ մատչելին է մշտական բանտից և անվերջ աքսորից փախչողի համար: Ես այսպէս էի մտածում և վճռում, երբ բոլոր լսածներից յետոյ տեսնում էի զաբուղղի թրքուհիներին, որոնք այդու մօտով խումբ խումբ դէպի գետն էին գնում ջուր տանելու: Նրանք իմ աչքի առաջ կին էլին, այն փափուկ սեռի անդամները, որ մարդկային գեղեցիկ իդէալներն է պահում, պահպանում: Ամբողջը հրամայում է նրանց ծածկել գլուխ ու դէմք, ոչինչ չը բաց անել հրապարակի աչքի առաջ. և որքա՜ն սխալվում է ամբողջը, որքա՜ն միամիտ է յոյսը մի ինչ որ շորի կտորի, մի ինչ որ դիմակի վրայ դնելով. ծածկուած գլուխը ինչ մրցքեր է տալիս սրտին, սիրտը ինչ տեսակ նշաններ է, թելադրում գլխաշորի տակից գաղտագողի նայող աչքերին...

Ժամի մէկին մենք կարողանում ենք նստել մեր սայլակում, որ մեզ պիտի տանէ, հեռացնէ այս տաք և կեղտոտ, ամեն կողմով կեղտոտ ձորից: Ինչ որ ես ասել եմ Հաքարուի մասին, նոյնը կարելի է և պէտք է կրկնել Զաբուղի մասին խօսելիս. բնութեամբ, մեծութեամբ, գարնան և այժմեան ջրերի քանակութեամբ ու չափով Հաքարուն ու Զաբուղը երկուս

ութահներ են, որոնք այստեղից քիչ ցած, մի սրածայր, երկար և մեխրագոյն բարձրութեան արևելեան ծայրում միմեանց դիրքն են ընկնում, խառնվում։

Սկսվում է Զաբուղի լանջիվերը. երկրաչափները շատ են աշխատել, որ ճանապարհը շատ անհակատելի կերպով բարձրանայ, բայց չի աջողուել. լանջիվերը շատ երկար է, մի քանի տեղ կողմնակի ձորահներ է կազմում և ճանապարհը հարկադրուած է, ինչպես տեղացիք են ասում, «կեռ տալ»։ Բնութիւնը շարունակ ցոյց է տալիս այդ բարձրութեան վրայ ցրած իր կեղտոտ և տխրալի ցնցոտիները. պատահում են վերևում յիշած քարերի բեկորների խմբի պէս խմբեր, նոյնպէս կրծոտած, նոյնպէս դորշ—մոխրագոյն, ծակծկուած, ցցուած զանազան ձևերի և կերպարանքների տակ։—Ձանձրանում է մարդը, յոգնում է, աչք է վերցնում բնութիւնից, նայում է ձիաներին, ուզում է խմանալ թէ շո՞ւտ արդեօք այդ չարքաշ կենդանիները դուրս կը բերեն այդ ձորից։ Նրանք, այո՛, վերջ ի վերջոյ դուրս են բերում լանջիվերի դլուխը, կանդնում են, շունչ քաշում։ Ահա բնութեան փոփոխութիւնը. մենք գտնվում ենք մի լայնատարած լեռնադաշտի ծայրին. ահա փռուած է այդ դաշտը, ահա դէս ու դէն են գնում ձորեր ու թումբեր, որոնք լեռնադաշտի

վրայ բազմաթիւ լանջիվայրեր ու լանջիվ երևներ են կազմում և մեր լեռնային ճանապարհը էլի պտոյտներ է անում, երկարանում։ Նուշուց մինչև Գորիս տարած փոստային ճանապարհը 88 վերստ երկարութիւն ունի, բայց եթէ մի որ և է հրաշքով այդքան երկար ու կարճ շրջաններ, պտոյտներ չանէր, այդ երկարութեան կէսն էլ չէր ունենալ։ Մի որ և է թումբի վրայ ճանապարհորդը չորս-հինգ անգամ պատվում է, մի ծայրից միւսն է գնում և էլի յետ դառնում քիչ բարձրանալու համար ցածանալու համար։ Մենք միշտ դէպի բարձր ենք գնում, դէպի Տէր անունով գիւղը, գնում ենք դանդաղ, կարծես այն պատճառով որ վերջնականապէս յուսահատուինք։ Ամեն կողմից մեզ շրջապատել է մի դաշտաւայր, մի լուռ ու տխուր բնութիւն. միանման անկենդան դաշտ, մաշկուած, պլոկուած թմբեր ու ձորակներ. ջուր աննշմարին չը կայ, մի հատ թուփ, մի փայտի կտոր չի երևում. միանման մոխրագոյն հող է, որ մի կերպ ծածկվում է աղքատ ու նօսր բուսականութեան տակ։ Լեռնային բարձրութիւն է, գպալի ցուրտ է սիրում, բարակ քամի է փչում. ամեն տեղ սիրած է խորին, անապատական լռութիւն, խեղդող անդորրութիւն. և մի արեգակ, աշնանային արեգակ, չը նայած որ լողում է պարզ և կապոյտ կամարի վրայ, տխուր է, անջօր, անկարող

նրա թոյլ ու ծուռ ճառագայթները աւելի ևս տխրութիւն են տալիս զարմանալի աղքատ հողի մերկ մակերևոյթին և ուղևորը, որ առաջին անգամն է տեսնում այս տեղերը, անձկանօք դէս ու դէն է նայում, որտեղ է մի բան, որ կարող լինէր նրա հոգուն զուարթութիւն տալ, որտեղ է այդ տխրութեան սահմանը: Այս տեղերում են զաբօղջ յի թուրքերը վար ու ցանք անում: Նրանց հողերը Տեղ գիւղի հողերին սահմանակից են: Ես կարծում էի թէ գոնէ Տեղի մօտ բնութեան փոփոխութիւն կը տեսնեմ: Բայց զուր էր կարծիքս, որ և իսկ փոփոխութիւն չը տեսայ և այն ժամանակ, երբ մեր սայլակը սկսեց մեզ տանել Տեղ գիւղի հողերով: Այս բոլոր լայն տարածութիւնները միայն երկրագործութեան են պէտք: Ձանապարհի երկու կողմին ձգւում են մեծ մեծ արտերի տեղեր, որոնց վրայ այժմ ծոյլ ու դանդաղ կերպով ակօսներ էին հանւում գիւղացոց զութանի եաևից: Գարնանն ու ամառը այս տեղերում կանգնում են արտերը, իսկ անմշակ թողած դեռևս մնում է նոյնպէս անկենդան, աղքատ, ինչպէս այժմ:

Սպիտակ Ձանապարհը վերջապէս տանում է մեզ Տեղ գիւղի դիմացը, իջնում է սպիտակ քարաշէն կամուրջի վրայ, որ կառավարութիւնը շինել է գիւղից ցած մի բարակ ջրի ձորի վրայ: Այդ ջրի

կողքերին մի մի ծառեր են երևում, որ գիւղացիներն են անկել նրանք փորձել են բանջարանոցներ, պարտէզներ էլ տնկել, բայց աշխատանքը կորել է, այնքան անհիւրասէր է այս կողմերի հողը: Բայց և այնպէս Տեղ գիւղի հողերը յայտնի են ամբողջ Ձանդաղուրի գաւառում իբրև լաւ և պտղատու հողեր. կարող էք ուրեմն երևակայել թէ հողագործութիւնը որպիսի հարստութիւն է Սիւնիքի համար, երբ ամենից լաւ հողերը սրանք են, այս մեր տեսածները: Շատ կարելի է որ այդ լայնատարած լեռնադաշտը կարող է և լաւ ցորեն տալ, բայց այժմ Տեղի ցորենը Դալաբաղի ցորենից շատ ստոր է գնահատւում: Առատ պտղաբերութեան մասին էլ շատ չի կարելի գովել այս տեղերը. լեռնադաշտ է, միշտ ցրտի և քամու ազդեցութեան տակ է գտնւում. և բացի դրանից, նայելով չորս կողմին և լսելով հատկացող մարդկանց խօսքերը, հեշտ կարելի է հասնել այն եզրակացութեան, որ մարդիկ անխղճօրէն հարստահարում են հողը. ամեն տարի վարում են ցանում, ամենահին ժամանակներից քաշում, գուցէ են հանում երկրի բոլոր ոյժերը և այդպիսով առանց այդ էլ նիհար, անջրդի հողը, որ կուշտ է եկած բարձր լեռնադաշտի խիստ երկնքի տակ, տաբէցտարի ուժասպառ է լինում, աղքատանում: Հողը պարարտացնելու գաղափարը այստեղ միանգամայն անյայտ

է. այնպէս են համոզուած աւետքը, որ Աստուած ինքը տուել է Տեզ գիւղին այդ գաշտավայրը, Աստուած էլ նրա հոգսը կը տանէ։ Բայց եթէ այսպէս չը մտածէին, խնամքով և խելքով հերկէին երկիրը, Տեզը կարող էր Զանգազուրի շահմարանը դառնալ։

Ահա և ինքը, Տեզ գիւղը. նա տպաւորուած է մի ձորի լանջիվայրով և շատ մեծն է. տներ, տներ, որքան շատ են. հաւաքուել են մի տեղ, բռնել են մեծ լանջիվայրը, իջել են մինչև ձորը։ Գիւղի տեսքը խիստ տխրալի է։ Ողորմելի, ցածրիկ անասնակ կպած են գետնի երեսին, աւետքը մեխրի կոյտերի են նման. գոլշ մեխրահոտն այնպէս անախորժ, սիրտ ճմլող գոյն է տալիս արեգակի տխուր ճառագայթների տակ, այնպիսի օտարօտի, ծանր տպաւորութիւն է գործում, որ նայողը հէնց առաջին անգամից խղճում է, կարծելով թէ մի ինչ որ թշուառութիւն ճմլել է նրան, գետնից կպցրել և մի ինչ որ թշուառութեան համար նա մոխիր է ածել իր գլխին, բոլորուել է արեգակի առաջ և իր բազմաթիւ մանր աչքերը, իր փոքրիկ, ցածրիկ սև սև սրահները երկնքի լուսատուին ուղղած, ուզում է տաքացնել իր սառած մարմինը և մի և նոյն ժամանակ ուզում է սգալ... և սգում է։—Դոնե մի հատ ծառ, մի փոքրիկ թուփ, մի հատ լայն բակ կամ մի կանաչ բոյս եւևար գիւղի մէջ. այդպիսի բաներ չտրտնէք. մե-

խիր և մեխիր է ամէն տեղ. տներն անկարգ ու անկանոն թափուած են միմեանց վրայ, մէկի կտուրը միւսի բակն է. մարդ զարմանում է թէ ինչպէս են մարդիկ անցուդարձ անում գիւղի մէջ. ոնց են նրանց ձանապարհները, փողոցները։

Տեզը շատ հին գիւղ է։ Սահմանոս Օրբէլեանի պատմութեան մէջ (գլ. ԾԳ) գտնում ենք, որ այս գիւղը փրկչական 998 թուականին նուիրել է Տաթեւի վանքին Սիւնեաց առաջին թագաւոր Սմբատի կինը, Շահանդուխտ թագուհին *). այդտեղ էլ յիշատակում է որ ինքը, Շահանդուխտ թագուհին է այս տեղը շէն արել։ Գիւղի հնութեան մասին վկայում է նաև հին գիւղեցիկ եկեղեցին, որ մինչև օրս էլ կայ։ Յայտնի չէ թէ ինչպէս է եղել առաջ, բայց այժմ Տեզը Սիւնեաց երկրի ամենամեծ հայ գիւղերից մէկն է. նա ունի մինչև 600 տուն ժողովուրդ։ Այսպիսի մի գիւղը, ցաւ է ասել, լաւ անուն չունի Ղարաբաղի և Զանգազուրի կողմերում։ Իհարկէ մարդկանց նայած է կազմուել այն առածը՝ թէ «ջուրը ոլքան մի տեղ ճնայ, կը հոսի»։ Հնութիւնն էլ չի կարողանում գիւղին որ և է պատիւ տալ։ Ինչպէս պատմում են, գիւղի մէջ միշտ անպակաս են

*) Այժմ պատկանում է Թուրք բէկերին. Թէ ինչպէս է գիւղն անցել սրանց ձեռքը, ընթերցողը Թող կարդայ Բաֆֆիի «Խամս. Մէլիք.» —XLII գլուխը (եր. 324—325)։

ամեն տեսակ լրբութիւններ. միմեանց կողոպտում են, միմեանց դէմ թշնամութիւններ, թակարդներ են լարում: «Է՛, ինչեր ասես չեն լինում այստեղ, ինչեր չեն լինում», ասում է ինձ զանգաղուբցի մի ծանօթս, որ Տեղում շատ է եղած. «Հային անարժան բաներ են անում: Ղարաբաղում ասում են թէ տեղբոյին հիւր կընդունի իր տանը և դիշերը վէր կը կենայ, կը կողոպտէ նրան. եթէ այս մկիը բողոքվեն ձիշդ էլ չը լինի, բայց երբ այդպիսի մի վկայութիւն կայ, նշանակում է թէ ամենքին են յայտնի այս գիւղացիների երեսսպեղութիւնն ու խաբեբայութիւնը: Ձեմ յիշում որ թուրին, բայց լաւ դիտեմ, որ տեղացի մի պարոն Թիֆլիսի մի ռուս լրագրում նկարագրել է Տեղ գիւղի կեանքը ամենամռայլ գոյներով: Այս տեսակ մի պլանդակ գիւղ էլ Ղարաբաղի կողմերում կայ, Տիզակ գաւառակի մէջ. նա կոչվում է Հաղրութ: Ինչո՞ւն է այս, որտեղից է այս հրեշաւոր տդեղութիւնը գալիս, մանում մեր գիւղերը. ահա մի հարց, որի ուսումնասիրութիւնը տարիների աշխատանք է պահանջում: Ես այսքանը միայն գիտեմ, որ շատ տեղերում գիւղային մերկանում է իր հին կեղևից, հետզհետէ թօղացնում է կրօնական-բարոյական կրթութեան կապերը, հեռանում է հին աւանդութիւններից, այսպէս լինելուց յետոյ նա կորցնում է տանձը և այսպիսի հրէշ-

շաւոր պլանդակ կերպարանք է ստանում, այլասերվում:

Իմ խօսքը Տեղ գիւղի մասին էր: Իմ տուած աղօա պատկերը լրացնելու համար հարկաւոր է ասել որ գիւղը դպրոց չունի. կանոնաւոր դպրոց, որքան իմանում եմ, ոչ մի ժամանակ չի եղել և ուներալու միաք այժմ չը կայ: Մի այսպիսի մեծ գիւղում, այսքան և այսպիսի մարդկանց մէջ չը կայ բարոյականացնող, աշնուացնող հիմնարկութիւնը. ասենք թէ հին սերունդը այնպէս է կրթուել, մեծացել. պէ՞տք չէ դոնէ նոր սերնդի համար հոգս անել. պէ՞տք չէ նորի և հինի մէջ մի անջրպետ դընել. ո՞ւր կը հասնի վերջը, եթէ միշտ ժողովուրդը ձեայ ազիտութեան մէջ, կատարելագործուի այժմեան վատութիւնների և կեղտերի մէջ: Տաթևի վոսմանորդները, որոնց վիճակուած է այս գիւղը, յաճախ երթևեկում են գիւղի մօտով, տեսնում են ամեն անգամ և ըստ երևոյթին երբէք նեղութիւն չեն կրել մտածելու թէ ինչի է կարօտ մի այսպիսի ժողովուրդը: Անբուժելի անտարբերութիւն:

Փոսաի իջևանը գիւղից բարձր է գտնվում, ուստի մենք գիւղը մտնել չենք կարողանում. մանաւանդ որ մեր ձիանները արդէն պատրաստ են, պէտք է շուտ գնալ որ օրով տեղ հասնենք: Ու ձանապարհվում ենք: Տեղ գիւղի դաշտերը չափում

ենք, գնում ենք սաստիկ արագ։ Երկու թէ երեք վերստից յետոյ հասնում ենք մի մեծ թումբին, որի վերևը ժայռոտ է։ այդտեղ հողը յանկարծ փոխվում է, սևանում։ Զանձրալի միանմանութիւնից յետոյ, որ մարդ է խեղդում, զարմանալի չէ ուղևորի ուշադրութիւնը մի այդ տեսակ չնչին փոփոխութիւնը տեսնելիս։ Սևահողի դաշտերը վարած են, կանաչած. արտերը երկար և նեղ ձողերով բնկած են, բաժանվում են նեղ-նեղ սահմաններով, կամ «զահմաններով», ինչպէս ասում է ժողովուրդը։ Բաւական երկար է ընկած սևահողը, հասնում է Քարաշէն անունով հայաբնակ գիւղի սահմաններին։ Այս գիւղը շատ բարձր է ձանապարհից և մենք տեսնում ենք նրա տափակ կատարները, որոնք թիկն են տուել ժայռոտ բարձրութեանը։ Գիւղից դէպի ցած է գալիս և մեր ճանապարհը կտրում է անցնում մի չոր հեղեղատ, անհամար քարերով լցուած. հեղեղատի կողքին, ճանապարհից քիչ ցած, տեսնում ենք մի ջուր, որ դեռնից գուրս գալով կարծես եփվում է, պղպջակներ է կազմում և մի փոքրիկ լճակի մէջ հաւաքվում։ դա հանքային ջուր է, ես գիտեմ ինչ բաղադրութիւն ունի. գիւղացիք չը գիտեմ ինչ դործ են ածում քոսի դէմ։ Այդ ջրից քիչ հեռու, ճանապարհի վրայ, կայ մի ուրիշ աղբիւր. սայլակը կանգնում է, մենք իջնում ենք, մօտենում աղբիւրին և որով հետև հետները ման չունինք, մի երկու երեք բուռ վերցնում ենք ջրից ու խմում. ցուրտ ջուր է, իստակ զելտերեան, որ համարեա ոչնչով չի զանազանվում Թթու-Ջրի զելտերեանից. զանազանութիւնը դիտաւորապէս նրանում է, որ Թթու-Ջուրը պատրաստում պաշտում է Շուշու պէս մի քաղաքը, իսկ Քարաշէնի ջրերը լուռ ու մունջ, համեստ և ապարդիւն գուրս են գալիս, քիչ կանգ են առնում ու յետոյ գնում են թափվում հեղեղատի ձորը։ Սրանք, երևի, բնութեան խորթ զաւակներն են։

Անցնում ենք Քարաշէնի գետակը, որի վրայ մի քանի բանջարանոցներ կան երկու թէ երեք փոքրիկ ծառերով, որոնք այսքան երկար տարածութիւնների վրայ ամենահաղորդելի տեսք ունին։ Մենք հասնում ենք Տեղի լեռնադաշտի ամենաբարձր տեղը։ Դեռ Տեղի իջևանից գուրս եկած բոպեին երկինքը ծածկվում էր մոխրագոյն ամպերով, նրանք գալիս էին հարաւ—արևմուտքից, խումբ-խումբ պրշաւում էին, կուտակվում. իսկ այժմ երևում է, որ այդ կողմի սարերի վրայ անձրև է գալիս։ Ցուրտը դնալով սաստկանում է, մենք փաթաթվում ենք մեր վերարկուների մէջ, բայց ձեռքերնիս ոչ մի կերպ չենք կարողանում ապացնել։

Ցանկարծ մեր սայլավարը կանգնեց և իր չուխայի վրայով մի ուրիշ չուխայ էլ հագաւ։ Ապա

իր տեղը նստելով նայեց մեզ, մարակը դեպի առաջ ուղղեց, մեզ մի բան էր ցոյց տալիս։ Ցոյց տուածը դեղնագոյն մառախուղի պես մի բան էր, որ կանգնած էր մեզանից հեռու, առջևում, ձանապարհի վրայ։ Եւ տեսնելով որ մենք անփոյթ նստած ենք, նա մէկ էլ յետ դարձաւ, մեզ նայեց, տեղը պնդացրեց և ձիաների սանձերը շարժելով, ասաց.

—Գամի է, աղա։

Անձրևը կաթկաթեց. վրայ հասաւ մի տարաժամ մթութիւն, մառախուղը պղպուձելով, պատուելով դեպի մեզ էր գալիս։ Գամին հասաւ, իր դեռ թոյլ թևերը մեր երեսներին քսեց։ Առաջին շարժողութիւնն այն եղաւ, որ մենք մեր ձեռքերը գլխարկների վրայ դրինք։

—Շարժի՛ր, շարժի՛ր ձիաներդ, հրամայեցինք սայլավարին ու կուչ եկանք։

Ու ձիաները վազեցին. մենք յարձակուեցանք մառախուղի վրայ, խրուեցանք նրա մէջ։ Գամին սկսեց իր շառաչիւնը, սկսեց սուլել։ Մի րոպէում մեր առաջը եկաւ յունուար ամիսը. ցուրտը կորում է անցնում, իսկ անձրևի կաթիլները ծուռ ծուռ խփում են մեր դէմքին ամեն մի կողմից, ծանր են խփում, մի սառն դողդոջ են տարածում մեր մարմնի մէջ։ Գամին սաստկացաւ. վազում է նա աջ ու ձախ, յարձակվում է ոչնչ չը հալոցնելով։ Եւ փչում է, և

խուլ մռնչում, աչք բաց անել չի թողում։ Ճանապարհի թողը բարձրացել է, նա ինքն է այդ մառախուղը. նա աւելի և աւելի թանձրանում է, աւելի և աւելի մեծանում, կատաղի խաղեր է խաղում. կամ բարձրանում է, սիւն դառնում, մի սիւն, որի բոլոր մասնիկները ոլորվում են, պտտվում, հեռանում, մօտենում, և յանկարծ գահավիժվում, վայր ընկնում ճանապարհի կողքին ու գետնին քսուելով թռչում են դէպի հեռուն, ոռնալով, ողբալով կորչում. կամ թէ ճանապարհի ծայրով քուլա-քուլա գալիս է, տակն ու վրայ դառնալով ծրտվում է, քիչ բարձրանում և փրթռալով սայլակի տակն է մտնում։ Կաթգին անձրև է գալիս. մեզ հետ կայ իւրաքանչիւր կով կացու համար այնքան թանկագին հափունջին. վեր ենք առնում, երկու հոգի փաթաթվում ենք նրա մէջ, միմեանց ենք կպչում։ Խակ սայլակը թռչում է ու թռչում. ձիաները իրանք են հասկանում թէ ինչ կայ և մարակի ու ձայնի չը սպասելով վազում են ականջները ցցած, գլուխները դէպի մի կողմ թեքած։ Մեր սայլավարը, տեղըտի հայը, անհանգիստ է երևում, շարունակ դէս ու դէն է նայում, չը գիտեմ ինչ կար։ Բայց քամին զործ չունի նրա մեծ փափախի հետ. մեր Ղազարը այսպիսի բաներից վախեցողը չէ. այս քամին նրա հայրենի բնութիւնն է, նա չի կարող մրսացնել տեղացու ձեռքն ու դէմքը։

Ի՞նչ կը լինի այս փոթորիկը ձմեռ ժամանակ, երբ այս կողմերը ծածկուած կը լինեն խոր ձիւնով։ Ես այժմ եմ հասկանում թէ ինչ բան է Սիւնեաց երկրի հռչակուած բուքը. հասկանում եմ թէ ինչ կը լինի մի ձանապարհորդի դրութիւնը, երբ ձիւնը փոշի դառած օդի մէջ պտտւում է ամպերի նման, սեւացնում է Աստուծու լոյս օրը, ծածկում, անհետացնում է մարդու շինած ճանապարհը, ճաքացընում է մարդու կաշին, ասղի պէս ծակոտում է մարմինը, անտանելի ցաւ պատճառում։

Մեր բախտից քամին երկար չէ բռնութիւն անում։ Բաշլըղի և եափունջու տակից նայեցինք, տեսանք այդ անհիւրընկալ տեղերը, տեսանք որ օրը մթնում է. մառախուղը հեռացել է կորել, անձրևը կաթ կաթ է գալիս։ Բայց սայլակը յանկարծ կանգնեց։ Ահա ուրիշ ցաւ. մեր ճանապարհը երկար տեղ բռնել են թափառականների անթիւ ոչխարները։ Սկսուեցան աղաղակները ու հայհոյանքները։ Եթէ սպասենք մինչև որ ամբողջ հօտը դայ անցնի, շատ կուշանանք. իսկ եթէ առաջ գնանք, անիւները ու ձիանները կոտորած կը տարածեն հօտի մէջ, ինասնեն կը տան խեղճ թուլքերին, որոնք դեռ նոր են գնում իրանց ձմեռոցները։ Հով իւները միշտ վախում են «թաղաւորական փոշուց». մեր հանից գալիս էր Գորխի փոսորը երկու ձիաւորների պահպանու-

թեամբ. ձիաւորները առաջ ընկան, հայհոյանքներով, բարձր աղաղակներով և մտրակների շարժումներով ճանապարհ պահանջեցին։ Մի բաբելական խառնակութիւն էր. հով իւները միմեանց ձայն են տալիս, շտապ-շտապ կարգադրութիւններ են անում, մի և նոյն ժամանակ աղաչում են ձիաւորներին, ասում են թէ չեն իմացել։ Աղմուկն ու ապտակը հանդարտուեց այն ժամանակ, երբ ահագին հօտի մի մասը դուրս բերին ճանապարհից. գնում են ոչխարները վախեցած, միմեանց կպած, միմեանց հրելով. ոչխարային խելքը խառնուել է, մի մասը գալիս է ուղղակի սայլակի տակն է մտնում, մի մասը յիմարաբար կանգնել է, սառել։ Բայց մեր սայլավարը չի սպասում, սայլակը շարժվում է. չը գիտեմ անիւների մօտ խմբուած ոչխարներին ինչպես եղաւ թէ ոչ, միայն ես տեսայ թուլք հովուին, որ այդ վայրկեանին վերին աստիճանի յուսահատական դիրք էր ընդունել սայլակի մօտ. ձեռքերը տարածած, ամբողջ մարմնով տատանուելով նա կուչ եկաւ, կարծես ուզում էր հոգով ու մարմնով մղտնել սայլակի տակը, փրկել իր անխելք ոչխարներին։

Այնուհետև մենք դէպի ցած ենք գնում. մեր առջև բացուել է այն մեծ ու լայն ձորը, որի մէջ տեղաւորուած է Գորխս գիւղը։ Մութն արդէն պատել է ձորը, սարերի անորոշ դծագրութիւնները

խառնուել են միմեանց հետ. հեռուից, ցածրից եւ բարձր են ձրագների բազմաթիւ լոյսերը։ Գիւղը շատ մօտ է, մեր ոտների տակ է փռուած. բայց մօտ է ձիաւորի եւ հեռւակի համար. դրանք կարող են այստեղից ուղղակի իջնել լանջիվայր ճանապարհով, փոյթ չէ եթէ ցլորուեն, վազ վազ անեն, ընկնեն ու վերկենան. բայց շուտ տեղ կը հասնեն։ Խակ փոստային սայլակի համար երկար, երկար ճանապարհ կայ։ Ձիանները դլուխ վերցրած վաղում են, սայլակը թռչում է. լեռնցի սայլավարի համար դա մի սովորական արշաւանք է եւ նա չի հասկանում իր եռւը նստածների վախն ու սարսափը. յանկարծ տաքացած ձիանները վերցնեն մեզ ու փախչեն, չուզենան պտոյտներ անել տեղ տեղ շատ նեղ ճանապարհի վրայ, ու ցած ընկնեն, ձորի մէջ խփեն մեզ էլ իրանց էլ Մենք յայտնում ենք մեր Ղազարին այս միտքը, բայց նա զարմացած մեզ է նայում, ուզում է հասկացնել թէ ոչքան վախկոտներն ենք։—Այդպէս շտապով ագմուկով վազում ենք ճանապարհի երկու կողքին կանգնած մեծ մեծ քարերի միջով։ Զարմանալի են այդ քարերը. առանձին առանձին կանգնած են չոր հողի վրայ, շաքարի վիթխարի գլուխների են նման եւ մարդու զարմանքն են յարուցանում. նրանց հիմքը լայն է, կլորակ. կռնաձեւ մասիկը ոչքան բարձրանում է, այնքան նեղանում է, մինչեւ որ վերջանում է սուր ծայր կազմելով։ Մի կերպ դժուարութեամբ է մարդը հաւատում թէ դրանք հողի մէջ են հաստատուած. սպասում ես թէ ահա մի ժամից յետոյ կընկնեն, եթէ քամին քիչ էլ ոյժ փորձէ։ Ահա մէկը, կարծեմ բոլորից մեծը, հսկայականը. կանգնել է մենակ ձորի բաշին, ունի գլխի վրայ դրած մի մեծ բեկոր. արդեօք այդ հսկայական գլխարկը կպած է գլխին, թէ մի ինչ որ հրաշքով նստել է եւ ճոճում է։ Բոլոր քարերը կարմրագոյն են կամ մոխրագոյն. երբեմն մի գեղեցիկ բացառութիւն մի տեղ կայ սպիտակ քարերի մի խումբ, որոնք ուշեհնալով մի ընդհանուր հիմք, բաժանուած են միմեանցից նեղ նեղ ձեղքերով։

Բնութեան այդ յաղթական սիւները յետ են ճոճում, մենք անդադար իջնում ենք։ «Հասել ենք, հասել ենք», կրկնում է սայլավարը։ Բայց ո՞ւր է։ Մենք առաջ ենք գնում եւ էլի յետ գալիս, երկար ու մեծ պտոյտներ ենք անում դիւղի գլխին, կարծես նրան մօտենալու համար անշուշտ հարկաւոր է մի այսպիսի աւանդական ձեւ կատարել, մի լանջի վրայ երկու երեք անգամ գնալ ու դալ, պտըտուել։ Համբերութեամբ այդ ձեւը կատարելուց յետոյ մենք անցնում ենք մի փոքրիկ դեռից, որ անթիւ քարերի մէջ ընկած բարձրաձայն ադաղակում է։ Քիչ էլ գնում ենք ու յանկարծ, բոլորովին

անապատելի կերպով մտնում ենք մի լայն փողոց, որի երկու կողմին կանգնած են մեծ մեծ քարաշէն, գեղեցիկ տներ։ Իսկ մի տան պատշգամբի վրայ ծփծփում են դրօշակները, վառուած են ճրագներ և երգեհոնը անխնայ ծկլթում է, երբեմն ձայնը կուլ է տալիս և երբեմն արձակ-համարձակ դուրս է հանում բազմատեսակ դալայլիկներ։ Բա՜, մարդավարի քաղաք է եղել այս Գորիսը։

Գ.

Հեռվեռալ օրը վաղ առաւօտեան տեսնում եմ Գորիսը, Զանգազուրի գաւառի այդ կեդրոնը։

Բայց ի՞նչ է դա—գի՞ւղ թէ քաղաք։

Ես զժուարանում եմ պատասխանել։ Եթէ գիւղ անուանեմ, գիւղերում (գոնէ մեր գիւղերում) չեն լինում այսպիսի սերուն, մեծ մեծ շինութիւններ, միայրկանի, երկյարկանի տներ տախտակի կտուրներով տակ, խնամքով պահուող տներ, որոնք ունին մաքուր պսպղուն պատուհաններ, սպիտակացրած պատեր և լայն ու մաքուր բակեր։ Գիւղ անուանես, այո՛, «բեգամաղ» կը լինեն բոլոր հարազատ գորիսեցիները։ Ամեն ինչ կարգին է. կայ մեծ առևտրական հրապարակ, ուր կարելի է ամեն ուզածդ գրանել, կան արհեստաւորներ, կան վարչական և դա-

տաստանական հիմնարկութիւններ։ Լայն և ուղիղ փողոցներում ճեմում են մարդիկ, երբեմն երևում են պճնազարդ և տուբնիւբազարդ տիկիններ։ Կայ, վերջապէս, ծառայողների այն ջահիլ դասակարգը, որ ամեն կերպ աշխատում է կոկուած, զարդարուն երևալ, այն իսկ դասակարգը, որը ռուսներէն անուանում են «գաւառական առիւծներ»։ Մի և նոյն ժամանակ դա է և գաւառական ինտելլիգենցիան։ Այս դէպքում ինտելլիգենցիա ասելով չեմ ուզում վկայել որ այդ դասակարգը բալձրագոյն ուսման տէր է (կան և երեք թէ չորս այդպիսի անձինք). ինտելլիգենտ են անուանվում այն պատճառով, որ տեղեակ են գրին, գիտեն շատ բան. օրինակ, իմանում են Իշակ-խանի ով լինելը, նրա տուած պատերազմների տեղն ու ժամանակը, շատ լաւ գիտեն թէ ով է Բուլանժէին վերաւորել և ինչու, իսկ Բիսմարկը, ինչ ասել կուզի, նրանց հին ծանօթն է։ Բայց այս ամենից իմ յիշած դասակարգը կրում է ամեն մի ինտելլիգենցիային պատիւ բերող յատկութիւնը—տխրութիւնը. և այդ տխրութիւնն այստեղ էլ փաթաթուում է կանաչ սեղանների շուրջը, կաւիճի թողն և թուանշանների կոյտերի մէջ. այստեղ էլ շշերը շրխկում են, գարեջուրը, տեղն ընկած ժամանակ և՝ շամպանեան, թափւում են, երգւում է գեղեցկութիւնը, սիրաւառ դէմքն ու առ-

ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук

հասարակ ամեն մի մարդու սիրտ պղտորող վայելչութիւնը: Եւ այս ամենը տակաւ չէ տեղի ունենում, ոչ թէ «պատկից գատիկ», այլ շատ յաճախ, շուտ շուտ, հաւասարապէս միշտ: Շատ տներ կը մտնէք և շատ զարդարուն դահլիճներ կը տեսնէք. գեղեցիկ պատեհաններ, Վիեննայի աթոռներ, փափուկ բազմոցներ, թանկագին գորգեր, պատուհանների և դռների գեղեցիկ վարագոյրներ: Կը տեսնէք աւանդական հաստատուն վաճառականներին, «խօջանեըին», որոնք ոչնչով չեն զանազանւում քաղաքի հինց այդ տեսակ մարդկանցից, կը տեսնէք նաև ոսկով և արծաթով զարդարուած ջահիլ վաճառականներին: Վերջապէս քանի՛ քաղաքներ ենք ճանաչում Կովկասում, որոնք ունենային այսպիսի լայն և ուղիղ փողոցներ, պակաս են կառքերը միայն, դրանք էլ երևի լոյս կընկնեն: Այս բոլորը, ինչպէս տեսնում էք, շատ բաւական է, որ ամեն մէկը գեղամաղձ լինի, երբ Գորիսը միանգամից դիւղ անուանէք:

Բայց քաղաք էլ է: Շատ փոքր է, շատ պակասութիւն էլ ունի: Ես նկարագրեցի «նոր Գորիսը», այն մասը, ուր ընտրելները ու հարուստները են ապրում: Աչք ածեցէք դէպի հիւսիս, դէպի ասրկ այն լանջը, որից երէկ իջնում էինք, ձեր առաջն է մի գիւղ, Զանգալուրի սովորական գիւղերից մէկը: Նա շատ, շատ մօտիկ է այս հատուստ և նոր մասին. եթէ չը լինէր գետակը, որ երէկ մեր առաջն էր եկել Գորիսից վերև, նորը և հինը խառնուած կը լինէին միմեանց հետ. բայց գետակը մի մեծ ձոր է շինել, այս կողմին, մի հարթ և հաւասար տեղ նոր Գորիսն է վերցրել, իսկ այն միւս, ծախ ափը, որ ոչինչ հարթոց չունի և թեք լանջիվերի պէս ընկած է գետի ձորից մինչև լերան գլուխը, բուն գիւղին է ձգացել Նայեցէք. այդ լանջիվերի վրայ էլի կայտ կայտ են գառել մեծ ու փոքր տները, որ ծեղ գիւղի տների պէս մոխրակոյտերի նմանութիւն ունին: Նոյն տեղ, ձեռքի ափի չափ լայնութիւն ունեցող փողոցները, նոյն հողէ տափակ կտուրները, աղբ ու անմաքրութիւն ամեն տեղ աքաղաղների ու հաւերի կանչկռտուքն, կանանց ու մարդկանց նահապետական տարազի զգեստներ. մի խօսքով— գիւղ: Դա ինքն է Գորիսը, այդ անունը դրա սեփականութիւնն է: Արիստոկրատների մասը, կամ, ուղիղն ասած, թաղը այդ գիւղից կախուած ունի. առաջինը, կրում է նրա անունը, թէ և իր համար, կարծեմ, վաղուց պատրաստ ունի մի անուն, որ պիտի գործ ածէ քաղաք դառնալուց յետոյ. իսկ այժմ կարծես, ամաչում է հրապարակ հանել երկրորդը— չէ՞ք զարմանում—հարուստ մասը սեփական եկեղեցի չունի և հարկաւոր դէպքում իջնում է գետի ձորը, բարձրանում է գիւղամէջը, ուր կայ մի հա-

սարսակ գիւղական եկեղեցի։ Այսպէս, բուն գիւղը ապրում է հարուստ ու փարթամ հատուածից երկու քայլ հեռու, ապրում է այդ հատուածին ամեն օր աչք դրած։ Նա հետզհետէ ընդունում է նոր քաղաքացուի քաղաքային վարքն ու բարքը, նատում, վեր է կենում նոր ձևի, նոր պահանջի համաձայն։ Ու հաւատալիմ ճնալով ամեն տեղ հաստատուած կանոնին, այդ գիւղը, լինելով նոյնածին քաղաքի «սև մասը», ընդունում, պահում է իր մէջ այն բոլոր կեղտերը, որ դուրս է վիժում «քաղաքակրթութեան» ճանապարհին հաստատ ոտք դրած հասարակութիւնը։ Այդտեղ, այդ «սև մասում» են բոյն դրել անտառակ կանայք, այդտեղ են անցնում ամբոխի ինտելլիգենտների բանաստեղծական ժամերը, կատարվում են ամենքին մի հոգով և մի աչքով նայող կանանց ընտրած տեղերից անպակաս բոլոր աղմկաշատ ուրախութիւնները, կռիւները։ Անմաքուր մուկը, որ մի փոքրիկ բան է, մի ահագին կարաս է ապականում, ասում է հասարակաց առածը. անբարոյականութեան թոյնը, որ սկզբում պատուաստուել է գիւղի ծայրերում, հետզհետէ տարածվում է, ապականում նահապետական պարզութիւնը, ողջախոհութիւնը։ Նոր, արիստոկրատիական Գորիսը այն, լուսաւորվում է, լաւ քաղաքակրթվում. բայց դրա համար լաւ պատիժ է կրում

այդ մեծ, բուն գիւղը. նա պիտի ապականուի, այլասկերպուի, որ մեծ մեծ տները բազմանան, տուրնիւրները ուռչին։

Գիւղի գլխին կախ ընկած է մի ջոր, սպիտակ և ախուր լանջիվայր. իսկ լանջիվայրի վրայ կանգնած են էլի մի քանի մեծ մեծ սրածայր քարեր. արևելեան կողմից գիւղին կպած է մի մեծ բարձրութիւն, որ ունի պատի պէս ուղղաձիգ, անմատչելի կողեր։ Այդ բարձրութիւնն էլ գիւղի կողմից սպիտակ մերկ մարմին ունի, որ վերջանում է մեծ մեծ քարերով։ Ինչ կը ճնայ գիւղից, եթէ մի օր այդ ապառաժները թափուեն... Նայելով այդ տեղերին, նայելով հսկայական շաքարի գլուխներին, հողին, մարդն ուզում է հնթադրել, որ ջուրն այստեղ էլ զարմանալի գործեր է կատարել. քերել, տարել է հողը, բաց է արել քարերը, որոնց գլուխը հետզհետէ լափելով, սրել է և այդպիսի տարօրինակ ձև տուել։ Գիւղի մի քանի անելը տեղաւորուած են այդ ժայռերի տակ, խոր ծակերում։ Զանգազուրի հայ գիւղերին յատուկ են այս տեսակ բնակարանները. և դրանց հայրենիքն է Խնծորեսք անունով գիւղը, որ Գորիսից մի քանի ժամ հեռաւորութիւն ունի. այդ գիւղն ամենամեծն է Զանգազուրի հայ գիւղերից, ունի 800 տուն բնակիչ։ Ութ հարիւր տները թափուած են մի նեղ և տարտափելի վայ-

բնեի, ժայռոտ և խոր ձորի մէջ, մտել են ժայռերի ասակ, ծակերը։ Ես չեմ տեսել այդ գիւղը, բայց ինձ այդպէս պատմեցին։ Վկայում է այդ մասին և Աբրահամ կրետացի կաթողիկոսը, Նոպիր-Շահի ժամանակակիցը, որ ներկայ է եղել Շահի թագադրութեանը Մուղանի դաշտում։ Նա թողել է մի պատմութիւն, որի մէջ նկարագրել է իր ճանապարհորդութիւնը Ղարաբաղի և Սիւնիքի մէջ. այցելել է և Խնծորեաք գիւղը, որի մասին պատմում է թէ ջուր կամ փայտ բերելու համար բնակիչները թոկերից կախ էին ընկնում, իջնում իրանց բոյներից և յետոյ էլի թոկերով բարձրանում։ Պէտք է տեսնել սիւնեցու կեանքը այդ տեսակ տեղերում, տեսնել երկար ժամանակ և յետոյ նկարագրել թողնէք, ուրեմն, Խնծորեաքը, դանք մեր Գորիսը։

Գորիսը, ինչպէս ասացի, ձորի մէջ է ընկած. հիւսիսային կողմից ցեղ գիւղի լեռնապաշտն է, հարաւային կողմից Ուչ-Քափալարի լեռնապաշարը. այդ երկու բարձրութիւնները արևմտեան կողմից, այժմեան Գորիսից բաւական հեռու, միանում են լեռնային մի պայտաձև բարձրութեամբ, ուստի Գորիսը երեք կողմից փակուած է. միայն արևելեան կողմից է բաց ճնում մի նեղ կիրճ, որով հոսում է Գորիսի անանուն գետակը։ Այսպիսի մի գիրքն է պատճառը, որ գիւղն այնքան յաջող կլիմայական պայ-

մաններ չունի. ամառն ընդհանրապէս շատ տաք է լինում. քամիներն անպակաս են այստեղից, տաքն ու ցուրտը միմեանց յաջորդում են անակնկալ կերպով. ջուրն էլ առատ չէ, ունի կրային խառնուրդ. չերմուտենդ սակաւ չէ լինում։ Գորիսի ձորը շրջապատող լեռներն ու նրանց լայն լայն լանջերը գրեթէ են ծառերից և գարուն ու ամառ ծածկւում են շքեղ կանաչ խոտով։ Վառելափայտի հեռաւորութիւնն ու թանկութիւնը աթարն է գործածութեան մէջ գրեթէ Բայց աթարի հայրենիքը Սիսիանի գաւառակն է, որ Գորիսից դէպի հարաւ-արևմուտք է գտնվում և այնքան հեռու չէ։ Այդ երկրում ծմակներ ամենևին չը կան, ապրաբնակութիւնը աթարի օգնութեամբն է ապրում։

Ասացի որ Գորիսը Զանգազուրի գաւառական կեսրոնն է։ Այստեղ են խմբուած գաւառական սահմանական վարչութեան գրեթէ, հաշտարար գատաւորները, անատառպետ, քննիչ, հաշտարար միջնորդ, պետական դանձապան։ Նոյնպէս այստեղ է առևտրի կետրոնը, վաճառականութիւնը մի խօսքով—հասարակական բոլոր շարժիչները, որոնք կեանք և կենդանութիւն են տալիս գաւառին, որը, եթէ չէր սեռվում, Զանգակի նահանգի բոլոր գա-

ւառներից մեծն է։ Թողնենք վարչութիւնը, պետական հաստատութիւնները, որոնք գործում են, ինչպէս և ամեն տեղ, օրէնքի որոշած սահմաններում. մեզ պիտի հետաքրքրէ այն հարցը, թէ գաւառը իր կեանքից ինչ է սպանում, որ աստիճան լաւ կամ վատ է վերջինիս պատկերութիւնը։ Այդ հարցին պատասխանած կը լինենք, եթէ մի փոքր ակնարկ ձգենք Գորիսի դրութեան վրայ։

Ամբողջ գաւառը կրթութեան և լուսաւորութեան կողմից ամենատխուր դրութեան մէջ է, որովհետև իր կեդրոնն էլ այդպէս է։ Գորիսը, որ աշխատում է զարմացնել հեռուից նայողին իր գեղեցիկ տներով, եւրոպական կարգ ու կանոնով, որ յոյս ունի գուցէ շուտով իբրև քաղաք հռչակուելու և բոլորովին բաժանուելու գետի միւս կողմին, ջրլանջևայրին կպած գիւղից, այդ Գորիսն ունի մի հատ գիւղական տարրական դպրոց (ալբոմնական), որ բաղկացած է երկու դասարանից և ունի, կարծեմ, 60—70 աշակերտ։ Կրթութիւնը տարրականից բարձր չի գնում. տեղացի հայը կարդալ ու գրել սովորելուց յետոյ կամ վաղում է, որ և է պաշտօնատան մէջ գրագիր դառնում, կամ թէ մնում է խանութի, «քաղաքի քերականութիւն» սովորում։ Ուր որ նայում ես, երկու տեսակ մարդիկ ես տեսնում. պապղուն կոճակներով և կօկարդներով զար-

դարսած չինովնիկ և վաճառական. երկուսից որը վերցնէք, լուսաւորութեան, հանրային կրթութեան մասին մեծ պահանջ չունի. չինովնիկը իր նեղ հայեացքով ամեն տեսակ բարօրութիւն տեսնում է իր թղթերի անսպառ կոյտերի մէջ. իսկ վաճառականին հարկաւոր է «հաշիւ ու դաւթար»։ «Ես»-ը խիստ բռնացած է պատեղ. մանր բամբասանքներ, դատարկ անձնասիրական հաշիւներ, «կասէ-կոսէ»-ներ —ահա ինչի մէջ է թաւալվում պատեղի կեանքը. համերաշխութիւն չը կայ. «ինչ բան ունիմ», ասում է ամեն մէկը, հեռանում, ինքն իր մէջ մտնում. ամեն մի խնդիր, որ կարող էր ընդհանուրին վերաբերուել, անտարբերութեան մէջ է խեղդվում. միմեանց օգնել չը գիտեն, բայց միմեանց ընդդէմ գնալուն շատ վարժ են։ Այս այսպէս լինելուց յետոյ կարող էք երևակայել թէ ինչ կը լինի գաւառի խօսք և ոչ խօսք անկիւնների դրութիւնը։ Սիւնեաց երկրի ուսումնարանների թիւը ծիծաղելի է. կարծեմ չորս թէ հինգ ուսումնարանից աւել չը կայ։ Բայց այնքան շատ են բազմամարդ գիւղերը, որոնք ուսումնարանի և ուսման մասին հասկացողութիւն չունեն։ Մենք վիճակագրական թուանշաններ չունինք, եթէ ունենայինք՝ «հասկացողութիւն չունին» բառերը այնքան փոքր, հասարակ չէին երևալ։ Մի մեծ, մի ահագին աշխարհ, որ վայրենի, անընկճելի բնու-

թիւն ունի, որի աղքատկութիւնը տեղատարուած է խիստ անբարեհամ պայմաններուի մէջ, մի այդ տեսակ աշխարհ խաւար է, ոգեղ, սարսափելի ոգեղ: Այդ ժողովուրդը թէև առանձնացած է լեռներուի ու ձորերուի մէջ, բայց ամեն օր շփվում է մեր ժամանակի ստեղծած դրութիւններուին, պայմաններուին. իհարկէ, իւրացնել լաւը, օգտակարը նա ինքնաբերաբար չի կարող. ուրեմն ինչ տեսակ նեցուկ պիտի ունենայ լաւ կանգնելու, պինդ պահուելու համար. ինչը պիտի բանայ նրա բնութեան գաղտնիքը, առիթ տայ նրան ապրիլ դրութիւնը բարձր պահած, սիրտը հանգիստ:

Ժողովրդական կեանքը այս տեսակ դրութեան նշոյլներն անգամ չի ցոյց տալիս: Երևում են միայն սխալ նշաններ: Եւ այդ նշաններից ամենամեծն այն յարաբերութիւնն է, որ կապում է Գորիսը գաւառի հետ: Այդ յարաբերութիւնը ստեղծել է և պահում է վաճառականական դասակարգը: Այստեղ վաճառականը վաշխառու է, ունի լաւ բռնող ձանկեր, որոնցով դէպի իրան է ձգում գիւղացիներին: Հանդարտ և անձայն է կատարվում գործողութիւնը: Հեռաւոր տեղից գալիս է գիւղացին. տպրանք է գնում մի խանութից, թանկ թէ էժան, այդ Աստուածն է յայտնի: Փողը ծնում է, պարտքը տոկոս է շալակում առանց հաշուի: Գիւղացին հա-

շուի մէջ քաջ չէ. շատերը հաշուում են այսպէս. «երկու քսան, երեք քսան և մի հինդ»: Հաշիւ չիմանալը, ինչպէս ասում են մեզ մօտ, նրա վիրքը կոտրում է. մարդը աշխատում է, մանկտինները բազմաթիւ ծալքերի մէջ է պահում. նա արդեօք թիւն անել չը դիտէ, շահագործութիւններից հեռու է. կիրակի և չորեքշաբթի մի և նոյն գոյնն ունին նրա համար: Բայց արի ու տես, մարդը չը գիտէ թէ ինչպէս եկան մանկտինները ու ծրտեղ գնացին. ձի պիտի առնէր, շատ հարկաւոր է, պատրաստուել էր տանելու, մէջ ընկաւ կովի հարցը: կովը սատկել է, երեխաները անթաց են ճնացել. հարկը պահանջում են, արտը քիչ է տուել, պէտք է հաց առնել. երկու թէ երեք այսպիսի պահանջներ եկան, խառնուեցան,—մարդը գլուխը կորցրեց, ծնում է ձեռքը ծոցում դրած: Մեկ ապաւէնը վաճառականն է: Օ՛, դա քաղցր մարդ է. կը խօսայ, կը ծիծաղէ, խորհուրդ կը տայ, կափսոսայ, յոյս կը տայ, միանգամայն կը քրքրէ, կը հիացնէ նրա սիրտը և այդ «սրտից ջուր կը լռէ». և ապա կը տայ նրան այն, ինչին այնքան կարօտ է նա: Թուղթ էլ չը լինի, ոչինչ. հոգու պարտք է և այն մարդը մարդ չը պիտի լինի որ իր հոգու պարտքն ուրանայ: Գիւղացին գնում որ էլի գլուխ ձեռքերի իր հաշիւների վրայ: «Աստուած, Աստուած», ասում ու հանգստանում,

իսկ Թէ ինչ արաւ վաճառականը, ինչպէս կարող է իմանալ մի չուաղ գալի պէտք է Թափէ, ինքն էլ փափախը վերցնէ, կողքին դնէ, որ կարողանայ մի օր գալով հաշուել այն, ինչ վաճառականը մի երկու րոպէում հաշուել է մատները համրիչի վրայ վազեցնելով։—Պարտքի վրայով ժամանակ անցաւ, որքան շատ, այնքան աւելի վայ պարտականի գլխին... Վաճառականը մի գիւղ ունի, մի հրաշալի գիւղ, որի մէջ ամեն ինչ ուռչում է, մեծանում. նրա մէջ դրած է մի Թուանշան. նրան հանգիստ են տալիս, որ շատ չազանայ։ Եւ երբ վերջապէս նրան հրամայում են երևալ այն մարդի աչքին, որի «ոսին է գրած», տեսնում են որ հրեշային կերպարանք է ստացել, կարող է ուտել, կլանել ամեն ինչ։ Նրան միանգամից սպանել չէս կարող, պէտք է անդամահատել։ Սկսում են կտրատել այն սուր ու կպչող ճանկերը, որ շարուել են տուգած մարմնի վրայ։ Բացվում է ծոցի մէջ, սրտի կողքին դրած քսակը, հազիւ մի կամ երկու ճանկն է կտրվում. այդ քիչ է, պարտականը վախում է. գալիս է նրա ձին, խըրխնձալով կանգնում է Թուանշան պահողի դրանը, մի երկու ճանկ էլ ընկաւ. դուրս է գալիս կովը բառաչելով, ոչխարը մայելով, այծը մկկալով. գալիս է նաև պանրի պարկը, իւղի տիկը, ընկնում է վաճառականի շէմքի մօտ։ Այդ ամենքը վրայ են Թափում, այժ այժի են տալիս, հազիւ են կարողանում ուռած Թուանշանի բոլոր ճանկերը կոտրտել ճնում է մարմինը, որին նորից քնացնում են։ Սա մի շատ երկար պրօցես է, կը վերջանայ ով գիտէ երբ։ Դէպքը մէկը չէ, երկուսը չէ։ Մարդիկ գերի են դառնում տոկոսին խմբերով, գիւղերով։ Ժողովուրդը հասկանում է Թէ ինչ է վաշխառուի տոկոսը այն գործողութեամբ, որ նա է կատարում. ժողովուրդը նրան չի քննում, չը գիտէ Թէ ինչ է նա, ինչ դեմք ունի, ինչքով է ապրում։ Ժողովուրդը միայն զգում է նրան. ճանաչում է այդ տոկոսը այն ժամանակ, երբ նա պրում է իր մէջքն ու ուսերը. հէնց այդ պատճառով ժողովրդական լեզուի մէջ «տոկոս» բառին կպած է «կրակ» բառը։ «Չեմ ուզում կրակ-տոկոսի տակ մնալ», ասում է նա, «Թէ չէ վող տուղ շատ կայ»։ Շատ էլ չի ուզում. բայց չուզելով հետու գնալ չի կարելի։—Այսպէս ահա տոկոսը գերել է գիւղացուն և այսպէս է Գորիսը դէպի իրան ձգում գիւղերը։ Դրա պէս մեծ վաշխառութեան կենարան հազիւ Թէ միայն ինքը չէ։

Համեմատելով Շուշու և Զանգազուրի գաւառները, ես մեծ տարբերութիւն եմ տեսնում այդ միմեանց սահմանակից երկու երկրների աղգաբնակութեան դրութեան մէջ։ Շուշու գաւառի գիւղացին գեռ անելու և աշխատելու միջոց ունի. սպառ-

ման կենտրոնը կայ, որ Շուշի քաղաքն և նրա արդիւնաբերութիւնը իր գինը չի կորցնում. նրա արտը, այգին, բանջարանոցը տալիս են այնպիսի մթերքներ, որոնց մեծ կարօտութիւն կայ. նա ծախսում է ինչ որ աւելացնում է իր պաշարից. իսկ եթէ քաղաքից մօտ է, բաւական է որ մի քիչ խելք ունենայ և իր ապրուստի ապահով միջոցը հեշտ կը ճարէ: Մանաւանդ հայ գիւղացին. նրա ապրանքը միշտ ծախուած է, լաւ գին ունի: Եթէ հայ գիւղացին այժմ առևտրական հրապարակում դեռ շատ փոքր դեր է կատարում, եթէ թուրք գիւղացին է այսօր «աշխարհ լնացնողը», պատճառն այն է, որ հայը շատ թերեւ է նայում իր անտեսութեան, շատ քիչ քանակութեամբ է մթերք վաճառահանում. ես հաւատացած եմ որ եթէ Շուշուց մօտիկ գիւղացիները ընդարձակեն անասնապահութիւնը, անպատճառ կը խլեն հրապարակը թուրքի ձեռից: Բայց ղարաբաղցի հայը, վատահ իր հարուստ բնութեան, երկրի վրայ, այդպիսի մանր հարցերով չի զբաղվում. նա արդէն սովորում է փող աշխատել այնպէս, ինչպէս քաղաքացին է աշխատում: Առհասարակ ղարաբաղցի գիւղացին գլուխը բարձր է պահում, ունի մի յայտնի ասպետական հպարտութիւն և միայն վերջին անձաւութեան հասած ժամանակն է ուրիշի համար մշակութիւն անելը յանձն

առնում (իմ խօսքերը գլխաւորապէս Վարանդայ գաւառակի բնակիչներին են վերաբերում):

Բայց այդպէս չէ Սիւնիքը: Սիւնեցին չունի սպառման կենտրոն, չի ճանաչում շահաւէտ հրապարակ. նա իր տանն, իր գրանն է ծախսում ինչ որ ծախելի է. իսկ նրա դուռը եկողը մանր վաճառականն է, չարչին: Ոչքան գիւղացին ուղղում է, թող խելք բանեցնէ. չարչին վերջ ի վերջոյ, ինչպէս ասում են, նրա ատամները կը հանէ, միշտ կը խաբէ: Սրկիրը, պէտք է ասել, աւելի աղքատ է քան հարուստ: Բարձր լեռնագաշտերը, որոնց վրայ տարուայ մեծ մասը սարսափելի ցրտերն են տիրում, գիւղացու արտերի տեղերն են. իսկ սարսափելի ձորերը, որոնց մէջ ամառը խեղդող տօթն է բռնանում, գիւղերի տեղերն են: Հողը, կարծես, հիւանդոտ է, մաշուած. տալիս է փոխ, սև ցորեն, որ շատ ցած գին ունի. լեռները չեն ընդունում այգիներ պտղատու ծառերով: Աւելացրէք այդ ամենի վրայ և այն, որ այդ երկիրը ունի հաղորդակցութեան զարհուրելի ճանապարհներ և դուք մասամբ կը հասկանաք թէ ինչու Սիւնեցին մեծ մասամբ միշտ է, աղքատ միշտ, որ ուրիշի համար բան անելով պիտի ապրէ: Տնտեսական ծանր հանգամանքները, «կրակ-տոկոսը» հարկադրում են նրան հեռանալ հայրենիքից, ապաւինել ուրիշ երկրների օդ-

նուէթեան։ Ամենայն տարի, երբ գարնան տաքը բաց է անում ձիւների և բուքերի մէջ խեղդուած երկրի դառները, Սիւնիքից մեծ մեծ խմբերով հեռանում են հալխաւորաւոր, հազարաւոր գիւղացիներ, գնում են գլխաւորապէս Բագու մշակութիւն անելու։ Քանի որ երկաթուղի չը կար, Շուշու և Բագուի մէջ ընկած ահագին տարածութիւնը 10—15 օրուայ ճանապարհ էր. մշակները յանձնում էին իրանց պարկն ու շորը մի ֆուրգօնի, իսկ իրանք համարեա թէ ոտով էին այդքան ճանապարհը գնում։

1878 թուականին ես Բագու էի և տեսայ թէ ինչ բան է զանգազուրցի մշակը։ Գալիս էին, գալիս, խմբերով, մեծ մեծ բազմութիւններով մտնում էին քաղաքը. կարավանսարաներում տեղ չը կար նրանց համար, որովհետև փող էին պահանջում. ուստի նրանք թափվում էին փողոցներում, մանաւանդ «Ցիցիանովսկիյ Սկվէր» ասուած փոքր այգում և նրա շուրջը։ Գիշեր ու ցերեկ փողոցներում առանց անկողնի, առանց շորի ընկած ոլորմելիները ամեն մի պատահածին խնդրում, աղաչում էին, որ իրանց մի գործ տան։ Մանրամասնութիւնները մոռացել եմ, բայց այժմ էլ, 10 տարուց յետոյ, իմ աչքիս առջև պարզ պատկերանում է այն ընդհանուր տարաձնը, որին ականատես էի ամեն օր. յիշում եմ այն մռայլագոյն մասսան, նուաղած, թառամած դէմ-

քերը, այն ալաչաւոր և յուսահատ շարժուածքները, որոնցով դիմում էին անցորդին։ Կային ամեն հասակի տէր մարդիկ. 12—14 տարեկան երեխաներ, ժիր և առոյգ երիտասարդներ, ալեւորներ, թողած իրանց տունն ու տեղը, եկել էին այդ մեծ քաղաքը, որ իրանց ողնաշարի պնդութիւնը փոլձեն, հաց աշխատեն *)։ Իհարկէ, շատ աղետալի մահեր, շատ անժամանակ կորուստներ և շատ սրտատրոփ դժբախտութիւններ էին պատահում այդ ամբոխի մէջ. բայց ես չը գիտեմ, մոռացել եմ։ Չեմ մոռանում (և երբէք չեմ մոռանալ) մի թշուառ սիւնեցու, որ սիֆիլիսով և մի քանի ուրիշ կեղտոտ հիւանդութիւններով վարակուած էր։ Նա այնպէս յուսահատ էր, այնպէս շլացած, գժուած, որ նոյն իսկ փողոցում էլ բաց էր անում իր գարշելի վէրքերը. մարմնի ծածուկ տեղերի վրայ, ցոյց էր տալիս ամենքին և աղաչում էր մի ճար անել։ Նրան խաբել, հլուպուրել էին կնիկ ասուած մի քանի հրէշ արածներ, որոնք ապրում էին քաղաքի խուլ ծայրերում և համարեա թէ թմբուկներով էին հրաւի-

*) Այդ իսկ տարին «Մշակ» լրագրում, յիշում եմ, տպուեցաւ նրա Թղթակից Կասպիացու մի երկար նամակը, որ մանրամասն նկարագրում էր մշակների տխուր դրութիւնը. ուր են Կասպիացիները, ինչու այժմ էլ չեն երեւում այդ տեսակ պեղեցիկ նամակներ։

բում մարդկանց լրանց սարսափելի գիրկը ժամերու. նրանք կամեցել էին ծաղրել թէ պատժել պարզապէս և քիչ վայրենաբարոյ լեռնցուն և պարգևել էին նրան անձոռնի պարտներ։ Խեղճը օրէցօր յուսահատութեան ծայրին էր հասնում. նա ունէր կնիկ, երեխայ և դատապարտուած էր պարապ մնալ, դէն գնել հայի ազնիւական ամօթխածութիւնը։ Բազուից ես Շուշի չէի դարձայ Ֆուրգօնով, 10 թէ 11 օր ձանապարհորդեցի Կուր գետի անապահման տափարակներում։ Մեր Թուրք Ֆուրգօնչին, որ իր հինգ մատների պէս էր ճանաչում այդ սարսափելի միանման, մեռած, անապատ հարթավայրը, մի տեղ, ճանապարհի կողքին մի փոքրիկ Թումբի մօտ ցոյց տուեց մեզ այդ իսկ սիւնեցու գերեզմանը։ Այդ Թուրքի Ֆուրգօնումն էր հիւանդը տուն չէտ գառնում. բայց յուսահատութիւնը կամ դուցէ և անխնամ Թողած վէրքերը սպանել էին նրան ճանապարհին։ Թուրք Ֆուրգօնչին իր մարդասիրութիւնն էր ցոյց տուել. մի փոս էր փորել և նրա մէջն էր խրել անբախտ մարդուն։ Այդ գերեզմանը այն տխուր, անբնակ անապատում... ես յիշում եմ տեղն գիրքը, այն հողն հաղիւ նկատելի կոյտը, որ ծածկած էր պանդխտի կուրծքը։ Նա, այդ գերեզմանն է կրում իր վրայ հայի պանդխտամոլութեան պատկերը։ Դարերի ընթացքում այդ ազգը

չը խրատուեց. նա իր ոտների տակ գծեց անթիւ անհամար ճանապարհներ դէպի աշխարհի բոլոր կողմերը, անյիշատակ տխուր գերեզմաններ թողեց այդ ճանապարհների կողքերին և այժմ էլ պանդխտութեան, կորստեան նորանոր ճանապարհներ է բանում. այժմ գնացել է դուրս եկել մի կողմից Ամերիկա, միւս կողմից այնպիսի տեղեր, որ հասկանալ, ճանաչել անգամ անկարելի է։

Միանգամայն ցաւալի է ասել, որ մշակների այդ ահագին բազմութիւնը բացառապէս Սիւնիքի հայ գիւղերից է դուրս գալիս։ Թէև այդ գաւառի Թուրք ազգաբնակութիւնը հայերից շատ որ չը լինի, քիչ էլ չէ, բայց Թուրքը կորստաբեր պանդխտութեան սովոր չէ, լաւ Թէ վատ, տպրում է իր տանը։ Սիւնեցի մշակը տարուայ ամենալաւ ժամանակը օտարութեան մէջ է անց կացնում. գարնան սկզբին գնում է, աշնան վերջին վերադառնում։ Աշնան վերջին Շուշու հրապարակում կանդնած կարելի է տեսնել այդ տարափոխիկ թռչուններին. տեսնում ես, նաւթից սևացած, ժանգոտած, մշակի շորեր հագած սիւնեցին մի նոր անդուկ մի ձիու վրայ բեռնած տուն է գնում. այդ անդուկն է նրա աշխատանքը և դուցէ մի քանի րուբլի փող։

Այդ սիւնեցին և մանաւանդ Սիւնիքի Ղափան գաւառակի բնակիչը իր տանը մնալով էլ

կարող է միակութիւն անել։ Ես վերևում Սիւնիքի բնութիւնը աւելի աղքատ անուանեցի քան հարստատ։ Այդպես ասելիս ես ի նկատի ունէի բնութեան այն հարստութիւնները, որոնք մատչելի են ամեն մեկին, որոնք հաց ու ապրուստ են տալիս թէ անհատին և թէ մի ամբողջ համայնքին։ Թէ չէ, ոմ չը գիտէ որ Սիւնիքը հանքային անսպառ հարստութիւն ունի իր մէջ պահած։ Ղափանի գեղեցիկ պղնձահանքերը մեծ անուն և հռչակ ունին։ այնտեղ այժմ բան են անում հազարաւոր մարդիկ։ Սակայն այդ հարստութիւնը կապիտալին է մատչելի, տեղական հասարակութիւնների համար քիչ արժէք ունի։ Հանքերը յոյների ձեռքին են։ Հեռու տեղից գալիս է յոյնը, բերում է իր հետ շատ թէ քիչ փող, նստում է որ և է տեղ, գործ է սկսում։ Այդ գործը համարել են և համարում են միայն յոյնի գործ։ Նա է միակ տէրը և եթէ նա չը լինի, ոչ ոք չի մտածում հանքերին։ Եւ յոյնը բոյն է դրել այդտեղ, բնակութիւն է հաստատել, իր ձեռքի տակն է հաւաքել տեղացիներին։ Ղափանի պղնձահանքերը տեսնելը ես մի ուրիշ ժամանակի թողեցի, որովհետև Գորիսից շատ հեռու են. բայց այժմ աւելորդ չէ մի երկու խօսք հաղորդել ընթերցողիս, որ ես կարողացայ իմանալ։ Պղնձահանքերից մի քանիսը պատկանում են հայ և թուրք կալուածատէրերին, որոնք

համեմատաբար թէթև վարձ են տանում։ Այդ բնագործութեան համար ունենալով նահապետական կարգ ու կանոններ և գործիքներ, յոյները չէին կարող այնքան լաւ աշխատանք անել, եթէ չիմանային թէ ինչպէս է հարկաւոր մշակ պահելը։ Ծոյնը վաղուց արդէն գիտէ տեղացու պահասութիւնները. նա ռոճիկ է նշանակում, բանեցնում է մշակին, և ունի բոլոր միջոցները այդ ռոճիկը դարձեալ մասամաս դէպի իրան յետ դարձնելու համար։ Օրինակ, մշակը փողի հարկաւորութիւն ունի. նա փողը տալիս է, մեկին հինգ դրամ, տոկոսներ բարդում։ երկար բանեցնում է, մի քանի ամսուայ ռոճիկը կրտրում է, մշակի արած պարտքը առաջ է քաշում, այնպէս կապկպում է նրա ոտն ու ձեռքը, որ նա միշտ պիտի բան անէ և ոչինչ կամ շատ քիչ ստանայ։ Խօսք, հեռու ընկած անկիւն է, ոմ է հարցնողը։ Պարզ է, որ իր երկրում մշակութիւն անելով էլ գիւղացու գլուխը շատ բան չի ճռում. և նա դնում է Բագու, ուր դոնէ կարող է իր արածի վարձն ստանալ։ Անցնաքներում Մուրթաֆեանցի և ընկ. մի գործարանն է բացուել. ինչպէս ասում են, այս ընկերութիւնը գործը կանոնաւոր կերպով է սկսել և դուցէ մի ժամանակ կարող կը լինի ուրիշ կարգ ու կանոն հաստատել։

«Այս ամենից յետոյ մի քանի խօսք էլ խօսենք

ներկայ 1888 թուականի մասին Սիւնիքին վերաբերեալ ինչպէս յայտնի է, այս տարի ծանր տարի է բոլոր կողմերի համար. բայց Սիւնիքի համար կատարեալ թշուառութիւն կը լինի այս տարին, այնքան աղքատ երկիր է սա: Գորիսում եղած ժամանակ լաւ հայ չէր ճարվում, հարուստները նուխու կողմերից բերել տուած ցորենն էին գործ ածում: ամեն ինչի թանգութիւն էր, հացը, տեղական ալիւրից թխած հացը մի սև, հում, կոշտ զանգուած է, որ մեծ դժուարութեամբ է ուտվում: այդ դեռ ցաւ չէ, եթէ ալիւրը գոնէ առատ լինի. մի քիչ համ տալու համար եփած կարտօֆիլի ջուրն են խառնում խմորի հետ. իսկ մի քանի տեղ զանգատվում էին որ տեղական ալիւրից թխած հացը ուտողի ուղը տանում է, թմրեցնում: Ամբողջ գիւղեր գաղթում են Ղարաբաղի կողմերը, ուր յոյս ունեն ձեռք հայ ճարել, թէև Ղարաբաղն էլ այս տարի պակասութեան մէջ է: Գիւղերը տեղափոխվում են... երևակայեցէք այս երկրի անօգնական դրութիւնը. երևակայեցէք թէ ոլքան թոյլ է նրա նեղքին ոյժը, որ անկարող է գոնէ մի տարուայ պաշար հայթայթել բնակիչներին: Ես տեսայ տեղափոխուող գիւղերից մէկը ճանապարհին: Թուրք գիւղ էր, վաղ առաւօտեան անցնում էր Աբդալար լիճևանի առաջով. դրնում էին լուռ ու մունջ, ինչպէս մարդիկ, որ չը

գիտեն թէ ուր են գնում և ինչ յոյսով: Ամենքից յետոյ քիչ հպարտ քայլուածքով գնում էր մի թուրք, փափախը ծուռ դրած, խնամքով ածիլած վզակոթն ու գլխի մի մասը բաց արած. ալ ձեռքը կաշեայ ձեռնոցի մէջ հագցրած և նրա վրայ կանգնած էր բաղէն, որ մերթ մերթ թռթռում էր, իր տաներին կապած բոժոժները զնգզնգացնելով. թուրքը այդ ձեռը բարձրացնում էր, որ բաղէն էլ կանգնէ և հպարտ-հպարտ իր ջրաս կողմին էր նայում հաստ, մրոտած յօնքերի տակից: Դուք արդէն հասկացած կը լինէք, որ սա աղնուական բէկերից մէկն է: Ինչ զարմանալի բան. նա ոտով գնում է, փախչում է սովից, հեռաւոր տեղեր պիտի կոխ տայ և ով գիտէ ինչպէս պիտի ապրէ, բայց էնչքո՞վ է հրճվում, ուրախանում: Տեղական մանր աննշան բէկերն այնպէս են. միշտ սոված են, միշտ ոտոտմելի, ապրում են ձրի, ուրիշի հաշուով. երկրագործութիւնը ստոր պարապմունք են համարում, իսկ գողութիւնը ազնիւ: Կան և մանր հայ բէկեր, որոնք այս իսկ տեսակ կեանք են վարում. պապենական գոռոզութիւնը նրանց մանր պարապիտներ է շինել—ուրիշ ոչինչ: Ես ասացի որ թուրք գիւղերն են գաղթում. պիտի աւելացնեմ որ մի քանի հայ գիւղեր էլ դրանց օրինակին են հետևում:

Բայց սիւնեցին ժիր, աշխատասէր մարդ է, շատ աշխատասէր։ Եւ Սիւնեաց երկիրն էլ ունի գեղեցիկ անկիւններ։ Եթէ հողագործութիւնը լաւ վարձատրող աշխատութիւն չէ, անասնապահութիւնը նրա փոխարէն լաւ զարգացած է։ այդ կողմից սիւնեցի հայի անտեսութիւնը բաւական լաւ է։ Այդ անտեսութեան հետ ծանօթացնելու համար ես կը պատմեմ իմ մի փոքրիկ ուղևորութիւնը։

Գորիս գնալուց երեք օր յետոյ մենք ձի նստեցինք ու գնացինք Հին-Գորիս անունով տեղը, որ գտնվում է այժմեան Գորիսից դէպի արևմուտք, այն լեռնային բարձրութեան մօտ, որ, ինչպէս վերևում ասացի, արևմուտքից փակում է Գորիսի ձորը։

Կէսօր էր, մենք դուրս եկանք փոստի ճանապարհից, Գորիսի կարկաչահոս գետակի աջ կողմով դէպի վեր, դէպի սարը գնացինք։ Համեմատաբար քիչ տարածութիւն էինք անցել, վեց կամ եօթն վերստից ոչ աւել, բայց բնութիւնը յանկարծ փոխուեց։ Մենք շրջապատուած էինք լեռնային գեղեցիկ բարձրութիւններով, մեծ ու փոքր թումբերով, որոնց վրայ բացի կանաչ պարարտ խոտից ոչինչ չի բանում։ Ձորը քանի գնում հուպ էր գալիս, նեղանում, մեծ ու փոքր թումբերի արանքով վազ վզում էին վճիտ, ադմկաշատ ջրեր, իսկ սարերի

լանջերում երևում էին տաւարների մեծ մեծ հօտերը։ Մենք մօտենում ենք այն տեղերին, որոնք խմբուած են մի թումբի շուրջը և շատ հեռուից էին երևում։ Այս մի օրինաւոր գիւղ է, մի հայկական գիւղ իր սև սև տներով, աղբակոյտերով. թումբի գլխին կանգնած է հին եկեղեցին, որ այժմ աչքից հեռացրած է։ Բայց գիւղ չէ, այլ Գորիս գիւղի գիւղատնտեսական ագարակը (ֆերմա)։ Հին ժամանակներն այստեղ է եղել բուն գիւղը, որ չը գիտեմ թէ ինչու է թողել այս տեղը, գնացել է տեղաւորուել նեղլևում, բիզ-բիզ քարերի տակ։ Մեր առաջն են դուրս գալիս հին աւերակ տներ, որոնց մէջ մէկը, երկյարկանի մի տուն, սև քարերից շինած, ուշադրութիւն է գրաւում իր կամարակապ կտուրով և պատուհանների ու դռների քանդուած, անճոռնի կեղպարանք ստացած ճեղքերով։ Երևի աւերակների քարերից են կազմուել բազմաթիւ քարակոյտերը և քարի ցածրիկ քառակուսի պատերը, որոնք ցրուած են ամեն տեղ և որոնց մէջ տաւարն է դիշերը հաւաքվում։

Մենք այդտեղ կանգ չենք առնում, առաջ ենք գնում ջրի կողքով, անցնում ենք մի փոքրիկ ջրաղացի մօտով, դուրս ենք գալիս մի ուրիշ բլրակի առաջ. այդտեղ էլ շատ ընկած են գարձեալ տնակներ, տաճեսական զանազան շինութիւններ։ Մտնում

ենք մի բակ, երկու երեխայ վազում են երկու չար շների վիզը գրկում, որ մեզ պատառ-պատառ չանեն. իսկ մի աղջիկ նստած տեղից վեր է թռչում, վազում, անհետանում է փոքրիկ սև անակի մեջ, թողելով դլսում, իր նստած տեղը, մի ինչ-որ շորի կտոր, որ նրա ձեռքին էր: Մի տղամարդ բերում է մեզ համար մի աման մածուն. աթարի ափագին կոյտի մօտ մենք նստում ենք մի քարի վրայ և դդալով ուտում ենք թանձր, սալ-սալ մածունը. որքան պաղ է, համեղ: Տեսայ միւս տնակների բակերը. ամեն տեղ հարս ու աղջիկ, երբեմն և պառաւներ բան ու գործի են. մածուն են քամում, աճելով քաղհների մէջ, խնոցի են հարում, բակերի աղբն են աւելում, մի տեղ կուտում, որ աթար պատրաստեն: Այստեղ մարդկանց հոգսը կաթնատու կենդանիներն են. այստեղ ոչ հնձում են և ոչ կալսում: Միայն կաթն է, որ օրն ի բուն բան ու գործ է տալիս:

Այստեղից գնացինք դէպի բարձր, դէպի արևմուտք: Որքան հեռու ենք գնում, այնքան աւելի գեղեցկանում է տեղն ու բնութիւնը. աշնանային կանաչ և գեղեցիկ խոտը ժպտում է մեր առաջ. շուտ շուտ պատահում են փոքրիկ և հիանալի աղբիւրներ: Ամեն մի աղբրի մօտ ծարաւում ես, թէև ծարաւ չէիր. իջնում ես ձիուց, չոքում, ջրի վրայ

ընկնում. լսվիր, անվնաս ջուր է: Բայց որքան և սիրահար լինես աղբրի ջրին, չես կարող ամեն մէկին հարկ տալ քո ծունկ չոքելով ու բերանդ վրան դնելով. այնքան շատ են փոքրիկները... Եւ այդ գեղեցիկ տեղերում, միմեանցից շատ հեռու երևում են մենաւոր անակներ, որոնց առջևը հեռզհեռ հաւաքվում են կովեր, եզներ, դոմէշներ. այստեղ էլ միմեանցից հեռու են ապրում, այստեղ էլ այսպէս են զբաղուած: Մենակ հովիւներ չեն ապրում. ահա մի աղբրի մօտ կանգնած է սիւնեցի կինը, կապոյտ գոգնոցը կապած, թևքերը յետ ծալած, երեսը խնամքով ծածկած. մեր խնդիրքով նա լցնում է մեզ համար իր ձեռքին բռնած սև պղնձի ամանը, որի միայն ձևն է ցոյց տալիս որ պղնձի է, եթէ ոչ, մի նշան չը կայ, որ չասէ թէ սևացած, ածուխ կտրած երկաթ չէ: Ապրում են հովիւ ու հովուհի միասին, ապրում են մի բոլորովին ուրիշ կերպով: Ահա այն բանաստեղծական անկիւնը, այն հովուական աշխարհը, որ ողևորութիւն է տալիս բանաստեղծին. այստեղ, բնութեան այս ծոցում, բնութեան այս հարազատ զաւակների շրջանում է գտնվում նահապետական պարզ կեցութիւնը, մարդկային ազգի հին կեանքի կերպարանքը, որ մեր ժամանակի սպականող շունչն առաջ հեռանում է և հեռանում մեծ զգուշերից:

Մինք, վերջապէս, հասնում ինք լիրան սոզոմանին։ Ես մոռացայ ասել, որ մեր այստեղ գալու ղէհաւոր նպատակն էր տեսնել մատակ ձիաների երամակը, որ պատկանում է Գորխի յայտնի հարուստներից մէկին, պ. Միրումեանցին։ Ինքը, տէրն էլ մեզ հետ էլ։ Նրա հրամանով ձիանները պահող առոյգ և կարմրաթշիկ երիտասարդը հաւաքից, դէպի մեզ ուղղեց մատակներն իրանց քուռակներով։ Ես երկար նայում էի ձիանների այս բազմութեան, որ մի շատ գեղեցիկ տեսարան էր ներկայացնում։ Գոյնզգոյն ձիաներ գոյնզգոյն քուռակների հետ ոտոստում էին, դէս ու դէն վազում, խրխնջում։ ոլքան թեթեւաշարժ, գեղեցիկ են այդ փոքրիկ ու մեծ քուռակները. ոլքան շատ է նրանց մէջ կեանքի եռանդը, ջիմնութիւնը, որ վայրենութեան է հասնում։ Տեսնում ես մէկը, որ քեզ մօտ կանգնած էր, յանկարծ ապին բարձրացնում է, ականջները խլում, դէպի առաջ ցցում, քթածակերը լայնացնում է, շրթունքները միմեանց վրայ հաւաքում ճիշդ այնպէս, ինչպէս մի երեխայ է անում մօր ձայնը հեռուից լսելիս, և թռչում է խրխնջալով, խայտալով. նրա մայրը հեռու էր, ձայն հանեց, կանչեց և ահա նա թռաւ մօր մօտ։ Գեղեցիկ, քաջառողջ և զարմանալի դիւրաշարժ կենդանիները իրանց իրարանցումով, ձայներով և տեսքով հիացնում են մարդուն։ Իրարանցումը շատացաւ մանաւանդ այն ժամանակ, երբ հարկաւորուեցաւ մի մատակ բռնել։ Տեղը քարքարոտ էր և մի սուր եռանկիւնու ձեւով խրվում էր երկու բարձրութիւնների մէջ տեղը։ Մեզանից իւրաքանչիւրը մի տեղ բռնեց, որ չը թողնէք փախչել։ Երամակը մի քանի անգամ պատեցին տուաւ, մի քանի անգամ ցրիւ եկաւ, մաս մաս դառաւ. բայց մեր նշանակած մատակը չէր ուզում բռնուել և մի քանի անգամ փախաւ, մեր շրջանից դուրս եկաւ։ Վերջապէս նրան շրջապատեցին գետակի վրայ մի մեծ ժայռի տակ. նա դեռ ուզում էր պաշտպանուել, յօժար չէր իր վայրենի ազատութիւնը մի րոպէ անգամ ձեռքից թողնել։ Բայց մարդը... օ, ինչ չի կարողացել անել. վախեցնելով, միշտ իր թուլութիւնը հասկանալով, բայց հնարագիտութեամբ զինուած, նա մեծամեծ երամակներ է զբաղում, իր կամքին ծառայեցնում։ Ձին չեմացաւ թէ ինչպէս իմ յիշած առոյգ երիտասարդը յանկարծ կախ ընկաւ իր վզից. գլուխը թափահարեց, դէս ու դէն շուռ տուեց, պտտուեց քարերի մէջ, բայց իզուր։ գերութեան կապանքը, որ այս անգամ ուներ երիտասարդի մէջքին կապած կաշուէ գօտու ձեւը, բռնեց նրա վիզը։ Նա յաղթուած էր, իսկ նրա ոսկեգոյն քուռակը, տեսնելով մօր բախտը, փախաւ, ուստիկ փախաւ, խրխնջալով անհետացաւ, յետ էլ

չը նայեց։ Անձնապաշտպանութիւն, որ այնքան թանկ և քաղցր զգացմունք է սրտի մէջ... Բայց յետոյ ինչպէ՞ս ուրախ ուրախ վազեց դէպի իր մայրը, երբ սա ազատուելով մեզանից, կրկին սկսեց իր աշխատանքին անել քարերի վրայով։ Մենք յետ գնացանք։ Բայց այստեղ չը մոռանամ ասել, որ հէնց այս սարիցն է բղխում այն գետակը, որ ինձնում, հոսում է Դոլխի մօտով։ Գետակի ակը մի քարակաշկաւի մէջ է. վարար ջուրը դուրս է թափվում, փրփրած, բարկացած ցած է վազում։

Դեռ շատ չէինք հեռացել, մի գիւղացի հրաւիրեց մեզ իր տնակը (բէնա) թէյ խմելու։ Շատ էր թախանձում, չը կարողացանք մերժել, գնացինք նրա տեղինք մի փոքրիկ թումբի վրայ, ուր գլուխը մի մեծ ժայռից էր բաղկացած։ Այդ ժայռի տակ շինուած էր մի շատ փոքր տնակ, մի այնպիսի անձուկ բնակարան, որ երկու մարդուց աւել չէր կարող տեղաւորել իր մէջ։ Հովուական երեկոն չքնաղ էր. երեկոյեան կիսամթութեան մէջ աշնանային բնութիւնը յոյժ էր տալիս իր դիրքերի տեսարաններըն. օդը զով էր, մրսացնում էր, գետակը աղաղակում էր, կանաչ լանջերը լուռ ու անշարժ նայում էին ձորակին։ Այդ բնութիւնը մի ժպիտ ունէր, որ շատ բան էր քաղցրացնում մի ժպիտ, որ այնուամենայնիւ զօսում էր պահվում։ Դուք տեսո՞ղ

էք երեխային, որ քնել է ուզում հակառակ իր ծրագրերի ցանկութեան։ Նրան չէն թողում որ քնէ, խօսացնելով, ծիծաղացնելով, խոստումներ անելով աշխատում են արթուն պահել։ Բայց քունն իրանն արել է պլծել երեխան իսկ որ թոթափում է իրանից թմրութիւնը, դեղեցիկ աչքերը լայն բաց է անում, նրանց մէջ կրկին ալծաւծվում է կենդանութեան կրակը, նա նայում է սրան ու նրան, ծիծաղում է, բայց լոպէ չանցած տեսնում են որ էլի քնեց։ Հէնց այսպէս էր երևում ինձ շրջապատած աշխարհը, երբ բաժակիս մէջ ածելով թարմ, նոր կթած կաթը, աչք էի ածում չորս կողմիս։ Մեզ հիւրասիրող գիւղացին անդադար բաժակներ էր բերում փոքրիկ տնակից, չը գիտեմ թէ ինչ աներևոյթ ձեռքով պատրաստած բաժակներ և մենք պարպում էինք հաշիւը մոռացած։ Մի քիչ վերև ես ասացի, որ նահապետական պարզակեցութիւնը հովուի ծոցի մէջ այս տեսակ անկիւններ է քաշուել. բայց տեսնում էք, քաղաքակրթութիւնն այստեղ էլ է հասնում առ այժմ իր չայով ու շաքարով, բաժակներով, սամավարով և այլ կարգ ու սարքով... Շուտով, կարծեմ, նահապետականը, իսկական հովուականը այլ ևս փախչելու տեղ չի ձգելիք։

Այսպիսի օրհնեալ անկիւններ էլ ունի Միւնհեայ աշխարհը։ Գարնանը այս բոլոր տեղերի վրայ թա-

գաւառում է մարդահասակ խոտը բիւրաւոր տեսակ տեսակ ծաղիկների հետ. գարնանը այս ձորը մի հրաշալի բուրաստան է գառնում և նրա մէջ հայ գիւղացին քամում, մրղում է իր կաթնատու կենդանիների ծծերը, պատրաստում է իւղ, պանիր, որոնք շատ լաւ գին ուներն ամեն տեղ։ Իսկ ամառը այս բոլոր անդերը բարձրանում են սարի գլուխը, այնտեղ են ճոճում մինչև աշնան սկիզբը։ Այո, սիւնեցի հայը շատ աշխատասէր է, ժիր. եթէ բնութիւնը նրան հոլանաւորում է, նա գիտէ հողով և մարմնով նուիլուրել գործին։ Իսկ թէ այս տեսակ անտեսութիւնները երկրի ընդհանուր բարօրութեան գործում շատ ընչին դեր են կատարում, այդ էլ պարզ է։

Դ.

Հոկտեմբերի 4-ն էր, օրը կէսօր։ Առաւօտեանից մի քամի մեզ շատ վախեցնում էր։ Մենք մեր սիրած մոքի վրայ էինք, իսկ նա, այդ քամին, մէկ էլ տեսնում էինք, փրթացնում էր փոշոցի անկիւնից, բարձրանում էր, մեր սենեակի պատուհաններին հասցնում մոխրանման փոշին և քաուելով տան պատուհանների վանդակներին ու պատերին, չարագուշակ, խուլ վշշոց էր հանում։ Իսկ երբ նա անցնում էր և մենք տեսնում էինք պարզ երկինքը, արեգակի յու-

սագրական գեմքը, օդի և աշխարհի անդորրութիւնը, շարունակում էինք խօսել, գատել մեր ուղեւորութեան մասին. իսկ մեր մի ընկերը, որ արդէն ծանօթ էր մեր ընտրած ճանապարհին ու տեղերին, ոգեւորուած նկարագրում էր տեղի գիրքը, ձաթևը, ձորերը, «Սատանի-Կամուրջը», թղթի վրայ գծում էր այդ տեղերի ուղղութիւնը։ Մեզ խորհուրդ էին տալիս յետաձգել ուղեւորութիւնը մինչև միւս օրը, քամին, որ Սիւնեաց լեռներում իր մեծ պաշտօնն ունի, միայն մեզ չէր վախեցնում։ Բայց մեր վճռականութիւնը գլուխ կանգնեց։ Գնում ենք... Չի նստելիս քամին մէկ անգամ էլ փրթացրեց, մէկ անգամ էլ մենք լսեցինք այսօր ճաշելու խորհուրդը ու մի կիսատ վախ մեզ հետ վերցնելով, շուռ տուինք ձիաների գլուխները։ Ցաթևը տեսնելու ցանկութիւնն այնքան անհնազան բան չէր, որ մի քամի մեզ ընկճէր։

Ցետ թողեցինք գորխեցոց մի քանի աղքատ և մանր այգիները, սկսեցինք բարձրանալ դէպի այն բարձրութեան գլուխը, որ հարաւից պատում է Գորիսի ձորը։ Ճանապարհը, հեղհեղ ենը բոլորովին փչացրել են։ Իսկոյն երևում է, որ մենք դէպի մի հին վանքն ենք գնում։ Սովորած մարդը շատ շուտ է ճանաչում այդ ճանապարհը, թէև վանքը դեռ շատ հեռու է։ Հասնում ենք բարձրութեան գլուխը, քիչ գնում ենք և իջնում մի

ձորի վրայ։ Սիւնիքը վերջապես մի քիչ փոխեց իր դէմքը. ձորը ծմակով է պատած, որ միանգամից գերում է մերկ ապտակների և մախրագոյն ու ապքանակ կեղտոտ ցնցոտիներ հագած լանջիվայրերի տեսքով ձանձրացած մարդուն։ Մի ծմակ, որ աշնանային զգեստի մէջ է, դեղնած։ Զուր էլ ունի այդ ձորը և ոչ հաստատակ ջուր, նա անուանում է Շաքարի-Զուր։ Անունը հարկադրում է իմանալ, հասնի առնելը։

Այդտեղից քիչ բարձրանում ենք ծմակի միջով, յետոյ շուռ ենք գալիս դէպի հարաւ և գնալով մի մեծ բլրի ստորոտի մօտով, անցնում ենք մի փոքրիկ ջրով էլ, որ «Հօթն-աղբիւր» է կոչվում և դուրս ենք գալիս մի լայնածաւալ տափարակի ակիզքը, որ տարածուած է այս լեռնային բարձրութեան վրայ և Տեղ դիւղի լեռնադաշտի հարաւային քոյրն է։ Էլի նոյն մերկութիւնը, ծառի ու փայտի նոյն բացակայութիւնը։ Մի ծայրից մինչև միւսը արտաւեղրով է ծածկուած մեծ լեռնադաշտը, արտաւեղրով, որոնք այժմ անկենդան և յուսահատ պատկեր են ներկայացնում։ Սրեցակը շատ տկար է այսքան բարձր տեղը. նա կարծես ամաչելով է մի կերպ ըսպասաւորում դժգոյն հողը, փոքրիկ թուփերը և մեր մէջքը։ Դաշտափայրը ահագին երկարութիւն ունի արևմուտքից դէպի արևելք, այնպիսի մի երկարութիւն, որ ես գնալիս կարծում էի թէ Սիւնեաց լեռների գլխին չեմ, այլ Կուր գետի անեզը ուանապահման հարթավայրերում։ Լայնութիւնը հիւսիսից դէպի հարաւ գործեալ փոքր չէ, կարծեմ տասն վերստից աւելի։

Լեռնագաշտը արևմուտքից սկսվում է լեռնային երեք գագաթներից, որոնք զատ զատ դասաւորուած են միմեանց կողքին և մի նեղ անցք են թողում իրանց մէջ։ Դրանք են Հոչակաւոր Ուչ-Թաղաստը (երեք գագաթ)։ Հոչակաւոր ոչ այլ ինչով, եթէ ոչ իրանց սարսափելի անգթութեամբ։ Իմ յիշած նեղ անցքով է գնում դէպի Սիսիան և Հին-Նախիջևան տանող միակ ճանապարհը։ Մարդիկ ստիպուած են միշտ անցուդարձ անել այդ տեղով և իրանց կրած թշուառութիւններով աւելի և աւելի հոչակել երեք գագաթները։ Ձմեռուայ սկզբից մինչև գալնան կէսը այս բոլոր կողմերը թաղվում են խոր ձիւնի տակ, և սոսկալի քամին, որ անպակաս է բոլոր սարերից, սկսում է տանն ու վրայ անել, քարքրել ձիւնի կոյտերը։ Բարձրանում են ահռելի բքեր, որոտ ու մռնչիւն կատաղի մրրկութեամբ շրջակայում են ամեն տեղ, ձիւն ու ջրանք թափելով որ ոչ ոք չը համարձակուի բաց դէմքով ոտ դնել այդ տարտափելի թագաւորութեան սահմաններում։ Ընդում է ձիաւորը, հետուից սրտապատառ նայելով

մինչև երկինք բարձրացած խիտ ծխին, որ Ուչ-Թափալն է հանում, ոտքով ու ձեռքով կոչում է ձիւնի ոլորտապտոյտ ամպերի մէջ. սառած, փոշիացած ձիւնը սառցնում, փայտացնում է նրան ու նրա ձիուն, աչք ու բերան, քիթ ու պռունգ լցնում է սուր ասեղներով։ Քամին գլորվում է, գալարվում և շատ անգամ վերցնում է, դէն գցում ձիաւորին, ձիւնի մի պատկառելի բլրակ դիզում նրա վրայ։ Ընկածին էլ չի խնայում քամին. ընկածին էլ վերցնում է, հեռու շպրտում։ Ամենայն տարի այդ կատաղի գազաթների պատմութեան վրայ աւելանում են մարդկային ալիւնով ներկած մի քանի էջեր. և այդ է պատճառը որ նրանց անունը սարսափով են յիշում ամենքը։ Սիւնեաց աշխարհի ամենամեծ դառնութիւնը Ուչ-Թափալարի ձմեռն է. և այդ ամենամեծ դառնութիւնը հաւաքուած է մի մեծ ճանապարհի վրայ։ Հին, խելօք մարդիկ այդ ճանապարհի կողքերով քարի սիւներ են անկել, որ նրանց նայելով, նրանցով պաշտպանուելով առաջ գնայ անբախտ ուղեւորը։

Լեռնագաշտը, որի վրայ ընկած է մեր ճանապարհը, կոչւում է Ուչ-Թափալարի դաշտ և նոյնպէս անողորմ, դաժան է ձմեռուայ ժամանակ։ Այստեղ, այս ազատ տարածութեան վրայ էլ, վազվզում են քքիները, ձիւնը այստեղ էլ ամպերի պէս թափառում

է, տեղափոխվում։ Հէնց այդ քամիների երկիւղն էլ, որ հարկադրում էր մեր ծանօթներին մտածել մեր վիճակի մասին և խուճապի տալ որ մնանք։ Բայց մեր բախտից այսօր այդ դաշտը միանգամայն հանդարտ էր. մեր ձիանները արագ արագ շարժուելով կարճում էին ճանապարհը, որ ուղիղ գնում է վրիլահողերի միջով։ Այս անհիւրասէր բարձրութեան գլխին, ուր տարուայ մեծ մասը ձմեռն է տիրում, այն էլ Ուչ-Թափալարի ձմեռը, ինչ վարելահող, ինչ արտ կարող է լինել. փլատ ու ողորմելի են նրանք, տաղես են քիչ և անբաւարար հունձ, ցորենը խեղդուած է, մանր ու սեւ։ Դաշտերը լիքն են մանր քարերի անհամար բազմութեամբ. ծրտեղից է այդ քարակաշկառը... Կարծում ես թէ մարդիկ իրանք են ցանել քարերը, որոնք որպէս թէ շատ հարկաւոր են ադքատ հողը աւելի ևս ճնշելու, ադքատացնելու համար։ Այսպէս է Ուչ-Թափալարի դաշտը. և ի նկատի ունեցէք, որ այդ և միայն այդ դաշտից են հայտնում Գորիս, Խոտ, Շնհէր և Հալիձոր գիւղերը...

Դաշտավայրի մէջ տեղը, ճանապարհից քիչ հեռու, երևում է մի մեծ ծառ։ Զարմանում ես նրան տեսնելով. ինչպէս է այդ խեղճն ընկել այստեղ, կանգնել է միայնակ որբի նման և նայում է իր չորս կողմը, ուր տիրում է լուռ անապատի ամայութիւնը։ Ոչ մի տեղ չուր չը կայ, ինչով է ապրում խեղճ

ծառը ծլտեղից է հիւթ ստանում և որպիսի հնարքով է գիմանում ձմեռուայ արհաւիրքներին։ Բայց նրան չեն դիպչում, նրան պահպանում են, որովհետև նա հարկաւոր է ճանապարհ ցոյց տալու համար։ Եթէ ուղևորը շեղուի ճանապարհից և դաշտաւայրի ամեն տեղը իր բռնած ճանապարհի շաբունակութիւնը համարէ, երկար չի թափառիլ, կը հանդիպի մենաւոր ծառը, կը գանէ իր ուղղութիւնը։

Բայց բաւական է այս դաշտաւայրի տխուր կողմերի մասին խօսելը։ Ահա նրա լայնութիւնը հետզհետէ վերջանում է մեր առաջ, ահա հետզհետէ մօտենում է մեր առջևն ընկած լեռնային շղթան, որ արևմուտքից գնում է դէպի արևելք, Ուչ-Թափալարի լեռնագաշտին զուգընթաց. այդ շղթան իր մէջքի վրայ բարձրացրել է մի խրոխտ և լայն բարձրութիւն, որ Գազբէկ է անուանվում *)։ Իսկ մեր լեռնագաշտը գնալով, գնալով սպառվում է, կարվում, բաշել է կազմում։ Մենք շուտով հասանք այդ բաշի մի ծայրին, կանգնեցինք հիացած, ապշած։ Մեր առջև բացուած էր մի ահռելի, խոր և ահագին ձոր։ Երևակայութեան մէջ բոլորովին անտեղաւորելի բաներ են բնութեան այն վիթխարի տեսարանները, որոնք յանկարծ, անապատելի կերպով

*) Մեր հին գրութիւնների մէջ Գազբէկը Գազրոյր է տպում (Տես Զալեանի ճանապարհորդ. եւ Օրբէլեանի պատմութիւնը)։

փռվում են մարդու ոտների տակ։ Այսքան սոսկալի վայրենութիւն, այսքան անհասանելի վսեմութիւն բնութիւնը երբէք ինձ ցոյց չէր տուել Ղարաբաղի ոչ մի կողմում։ Նկարագրութիւն, գրչի ամեն տեսակ շարժուածք ոչինչ, արհամարհելի բաներ են այդ տեսարանների մօտ. մարդ պիտի տեսնէ, անպատրաստ պիտի գնայ, կանգնէ բաշի ծայրին և զգայ և իմանայ իսկութիւնը։ Ինչպէս և լինի, ես կը փորձեմ ընթերցողիս մի թոյլ հասկացողութիւն տալ այս տեղերի մասին։

Երևակայեցէք բարձր, ամպերի չափ բարձր սարերի մի երկայն շղթայ, մենք անուանենք Գազբէկի շղթայ, որ մեծամեծ ձորեր ու մթին անդունդներ վերցրած իր մարմնի վրայ, գալիս է արևմուտքից, գնում է դէպի արևելք, գնում է, կորչում հեռու աեղ, Ղափանի սահմաններում։ Այդ լեռնաշղթան իր մեծամեծ ձորերով, խոռոչներով և անդնդախոր վիհերով կտրվում է շատ բարձրից, կազմում է ուղիղ դէպի վեր ցցուած կողեր և իջնում է մի նեղ, սարսափելի խոր ընկած ձորի վրայ հասնում։ այս կողմից էլ Ուչ-Թափալարի լեռնագաշտն է կտրըվում ցած գնում, անթիւ լանջեր, գառիվայր ուսեր կազմելով իջնում է, բոլորովին մօտենում առջևից եկող լեռնաշղթային, կսթ է գցում իր մեծ մեծ ժայռերը. գոյանում է մի խիստ նեղ, խիստ հուպ

տուած ձոր, որի միջով հազիւ հազ կարողանում է իր ջրերը տանել Որոտանայ գետը: Այդ անուները նա զօբր տեղից չէ կրում: երկնաբերձ սարերը շատ են սեղմում նրա կողերը և նա բարձր ձայն է հանում, որ հասնում է այս բարձրութեան գլուխը:

Որոտանայ ձորը... Ոչքան մեծութիւն, արհաւիրք, աներևակայելի, անհատանելի աքանչելիք ունի իր մէջ: Բնութիւնը հրաշակերտել է մի այնպիսի անդունդ, որի տեսքը ահ ու դող ազդում մարդու վրայ, կապում, կաշկանդում է նրա հոգին ու միտքը, շլացնում, շփոթում է տեսողութիւնը: շատ բան ես տեսնում, մինը միւսից վեհիմարի, հսկայական, վայրենի բաներ. բայց շատ են, բազմատեսակ, ոչինչ չես տեսնում:

Որոտանայ ձորը... Բնութիւնը վերցրել է մի ինչ որ ամենի սուր գործիք, զարկել է սարերի կողքին, կտրել է, յղկել նրանց քարէ մարմինը, որ այնպիսի յանդուգն կերպով ուզեցել է առաջ և առաջ գալ, խորացրել է տեղը, որ գետը վազէ մռնչալով, որոտայ, լեզէ, քերէ այդ քարային պատուանդանները: Եւ ով է կարող բարձրանալ այդ սեպացած հատուածների վրայով, որի ոտին մատչելի են դրանք...

Միայն մեր կողմից, այս բաշի ծայրից է հնարաւոր մի անհնարին, թեք ճանապարհ, որ վերևից դահավիժում է դէպի ցած, գնում Հալիձոր անուն

նով գիւղը, որ մեզանից ցած է գտնվում, մեր այս բարձրութեան մի ուսի վրայ: Մենք իջնում ենք այդ ճանապարհով: Բաւական չէ, որ նա այնքան լանջկիւր է, գետ ծածկուած է մի տեսակ կարծր հողով, որ խոշոր աւազի է նման. գնալիս ոտը լըլըվում է և դէպի ցած սահում, հետքերը ջնջում են հողի վրայ: Այդ է հալիձորցոց միակ ճանապարհը: Գիւղը այսպէս իջել է Որոտանայ գետի վրայ, վար է անում Ուչ-Քափալարի դաշտում. ամառը չոքչոքը գլորուելով այսպիսի ճանապարհով են իջնում կրում վերևից դէպի ցած, կալսում գիւղի մօտ: Այսպէս է սիւնեցու վիճակը...

Այս ճանապարհով մենք շատ չենք ցած գնում. շեղվում ենք դէպի արևմուտք, մի կողմ թողելով Հալիձորը. մեզանից ցած բարձրացած էր մեր այս լեռնային լանջկիւայրի մի ուրիշ մեծ ուսը, որ Հալիձորից բաժանվում է մի ձորով և ունի ժայռոտ ու վայրենի տեսք: Այդ ուսը, կամ մեծ թումբը ներքևից կախ է ընկնում Որոտանայ գետի վրայ, իսկ իր աջ լանջկիւայր կողով նայում է դէպի արևմուտք, դէպի Տաթև: Ես, իհարկէ, առանձին ուշադրութիւն չէի դարձնիլ այդ բարձրութեան վրայ, եթէ ինձ ցոյց չը տային և չասէին որ դա ինքն է այն բարձրութիւնը, որի գլխից Թռել է հայ չքնաղ օրիորդը: Մի սրտառուչ անցք է մեր հին ժամանակներից, որ

այսպէս է պատմում Սեբէոսեանոս Օրբէլեանը (գլ. Լե)։ Գահերէց իշխան Վարազ-Տրդատի աղջիկ Շահանդուխտը հարսնանում է մի հայկազուն իշխանի (?)։ Օրիորդը հրաշալի գեղեցկութեան տէր է լինում և շրջապատուած բազմաթիւ սպասաւորներով, գնում է իր ամուսնու երկիրը, ուր այնտեղ պսակուի։ Մրտնելով Բաղաց պահմանը (հին Սիւնիքի մի գաւառը, ուր և Տաթևն է), ասում է պատմիչը, օրիորդը զբնում էր քարքարոտ ճանապարհի մի դժուար տեղով, ուր մի քարի փրթուած կար ահագին խորութեամբ, որ անդունդին է նայում «Հանդէպ մեծի հայրապետանոցին Տաթևայ»։ Այդտեղ դարանամուտ էին եղել Խամայելացիները, որոնք լսած լինելով օրիորդի չքնաղ գեղեցկութեան մասին, կամենում էին նրան յափշտակել։ Նրանց յանկարծակի երևալը շփոթ է գցում օրիորդի թիկնապահների մէջ, շատերը կոտորվում են. իսկ փախչասուն օրիորդը, իմանալով թէ ինչու են եկել խամայելացիները, ևս ինքը խաչակնքում է, մտրակում է իր ձին և թըռչում է քարի գլխից։ Այդ պատմութիւնը Օրբէլեանը դրել է հիմնուելով Շահանդուխտի ձեռքով գրած նամակի վրայ, որ նա գրել է Տաթևի վանքում։ Բայց թողնենք, օրիորդը ինքը խօսէ իր հրաշալի ազատութեան մասին։ «Ես մեղուցեալ ապաիւնոյ Քրիստոսի Շահանդուխտ՝ դուստր Վարազ Տրդատայ

երէցի Հարսն ի տունն Թորգոմեան. և եկեալ ի սահմանս Բաղաց՝ ի գլուխ քարիս, ընդ որ անցանէ ճանապարհն՝ յանկարծակի պատահեցան ինձ Խամայելացիք, որք վասն համբաւոյ գեղոյ իմոյ կամէին յափշտակել զիս, և սուր ի վերայ եդեալ կոտորէին զհեծելազունդն որ ընդ իս. ապա լաւ համարեցայ քան ի ձեռն այլազգեացն գայլապատառ կորնչել, վասն Քրիստոսին իմոյ զահավէժ մեռանել. և յիշելով զսուրբ Աստուածածնին և զսուրբն Հռիփսիմէ՝ յանձնեցի զիս սուրբ երրորդութեանն և ինքեցի զողջոյնն տուի անձն իմ սուրբ խաչիւն և զարձուցեալ զերասանակ երիվարին՝ թռեայ ընդ քարս։ Եւ յահագին չնչմանէ հողմոյ և անելոյթ զօրութեամբ լծի իբր կառաւք ի խորութիւն ձորոյս ես և երիվարն իմ անվնաս։... Եւ իջեալ ի հիշատակին՝ նուիրեցի զանձն իմ Քրիստոսի և ուխտեցի այլ ոչ ելանել աստի մինչ ցվախճանն իմ։... Թէպէտ թախանձեցայ ի ծնողացն իմ և ի հարսնածու իշխանացն՝ ոչ շարժեցայ ի տեղւոյս»։ Օրիորդը այդտեղ եկեղեցի է շինում, որ այժմ էլ կայ, ինչպէս պատմում են, և մինչև իր կեանքի վերջը ճգնում է այդտեղ։ Իր կալուածների կէսը բաշխում է կարօտեալներին, իսկ կէսը, Շնհէր գիւղի ձորից մինչև Գինական գետը, նուիրում է Տաթևի վանքին։

Դարեր են անցել այդ ժամանակից։ Եկեղեցին

մոռացել է իր արժանի զաւակի այդ մեծագործութիւնը. եկեղեցին, որ հարիւրաւոր անյայտ անուններն է մտցրել իր տօնացոյցի մէջ, անուշադիր է թողել մի այսպիսի մեծ քրիստոնէական առաքինութիւնը. մոռացուել է Շահանդուխտի անունը, մեր պատմութեան էջերին չի արժանացել նրան յիշում են միայն Որոտնայ ձորում բնակուող դիւղացիները, որոնք այդ բարեգործութիւնը անուանել են Շահանդխտի սար։ Թուրքերն էլ դիտեն, ճանաչում են իշխանազուն օրիորդին և նրա հրաշքի այդ տեղը անուանում են Գեաղին-Ղայա, այսինքն հարսի ժայռ։ Այդ ժայռը, այո, մի անխորտակելի արձան է, որ անհանգիստ Որոտանի վրայ ցցուած վկայ է հայ օրիորդի դիւցազնական առաքինութեան մասին. մի օրիորդի, որ այսպիսի մի գործով հռչակել է թէ ինչ է հղել հայ կինը այն բռնութեան դարերում, երբ սրբութիւն, օրէնք ու սեփականութիւն բոլորովին անյայտ բաներ էին։ Բայց ինչքա՜ն հարսի ժայռը փակուել է այս ձորի խորութեան մէջ. ինչքա՜ն նա չի բարձրանում, երկինքին հասնում, այնքան բարձր կանգնում, որ ամեն տեղից տեսնէին նրան մեր այժմեան թեթեւամիտ և օտարամոլ օրիորդները, տեսնէին և կարմրէին նրանք, որ փառքի և անմիտ պաճուճանքի գերի դառած ոչ միայն չեն յիշում իրանց նախնիքներին, այլ և ամօթ, ցածրութիւն

են համարում իրանց մայրենի լեզուով խօսել, կարծես մի Շահանդուխտ բաւական բարձր, բաւական պանծալի չէ, որ նրա գործ ածած լեզուն այժմ էլ հպարտութեամբ գործ ածէինք։ Շահանդուխտ... գեղեցիկ, սիրելի անուն։ Սիւնեաց երկրի պատմութիւնը երկու այսպիսի սիրելի անուններ ունի իր մէջ պահած. մէկն այս Շահանդուխտն է, միւսը Բաղաց թագուհի Շահանդուխտը, որ Տաթեւի վանքին մեծագին ընծաներ է նուիրել

Շահանդուխտի թումբի գլուխը պատած է անտառով. նրա միջովն է գնում մեր ճանապարհը, որ այստեղ բաւական ուղիղ է և յարմար. ծմակը մեծ ծմակ չէ, ծառերը թէև խիտ են, բայց փոքրահասակ և ժողովուրդը այս տեսակ ծմակին անուանում է «քոլ (թուփ)։ Ճարմար ճանապարհը շուտով վերջանում է. անտառը դէպի ցած լանջկայր է գնում, տանելով իր հետ մեր ճանապարհը, որ այստեղից քարքարոտ է դառնում, անձրևներից բոլորովին փչացած։ Մենք կանգնած էինք անտառի այս իսկ լանջկայրի գլխին, որ Սախակ-Թուխան (միրուք բռնող) է կոչվում։ Այդտեղից մեր առջևը մի ուրիշ հրաշալի տեսարան բացուեց։

Առաջին բանը, որ տեսաւ մեր աչքը, մի վանք էր Որոտնայ ձորի միւս կողմին, սարի լայն, բայց բարձր գագաթի մի ծայրին նստած։ Դա ինքը, Տա-

թևն է։ Մեր մի ընկերը, որ առաջներում շատ է եղել այս կողմերում, գտակը վերցրեց, սկսեց ջերմեռանդութեամբ երեսը խաչակնքել, այդ հին սրբարանի օրհնութիւնը և օգնութիւնը հայցել։ Իսկ ես ճեացել էի կանգնած, սառած. ես չը գիտեի ինչ անեմ, այնպէս անսպասելի էր այն հռչակաւոր տան երևալը, որի տեսնելը իմ միտական մտածմունքների առարկան էր։ Ահա նա, այդքան բարձր տեղից նայում է իր բարձրադիր գեղեցիկ գմբէթով։ Ահա նա, Սիւնեաց վերնահանգէտ և աստուածաբնակ տան (Օրբ.) աթոռը, որ հպարտով ասեմ թէ ճարտասանութեամբ հաստատուել նստել է այդ գագաթին և տան ամբողջ գար անվրդով նայում է սարսուռ ազդող ձորերին և անդունդներին։ Ողջո՜ւն քեզ, պատկառելի ծերունի։

Պէտք է ասեմ որ Տաթևի սարը Ոլոռանայ գեաի միւս կողմին ընկած լեռնաշղթայի շարունակութիւնը չէ. այդ շղթան գալով մինչև Տաթևի սարը, մի նեղ ձոր է թողնում նրա ու իր մէջ, իսկ ինքը շրջան է տալիս հեռու գնում։ Գազբէկ գագաթը Տաթևից հեռու տեղ է բարձրանում։ Բայց Ոլոռանայ գեաի համար ոչինչ թևթևութիւն չէ շղթայի այդպէս հեռանալը. նա գալիս է այս կողմից, այն ձորով, որ ճռում է Տաթևի սարի և Ուչ-Թափալարի դաշտավայրի մէջ տեղը։ Այս ձորն էլ խիստ նեղ է,

խիստ սաստիկ է սեղմում գետը։ Ուչ-Թափալարի այդ սարադաշտը Տաթևի դիմաց էլ այնպէս անմատչելի ուղղաձիգ լանջեր չի կազմում. վերևում, սարադաշտի բաշերից սկսած ժայռերը, ճիշդ է, պատերի պէս են կախ ընկած, սեպացած. բայց լանջը էլի շատ է մօտենում Տաթևի սարին, ձորը խորացնում։ Մենք պիտի իջնենք մինչև այդ ձորի յատակը և ապա սկսենք բարձրանալ դէպի Տաթև, սարի ուղղաձիգ կողքով։ Տէ՛ր Աստուած, այս ի՜նչ ճանապարհներ են և ի՜նչպէս են մարդիկ երթևեկում այս տեղերով։

Մենք Սախակալ-Թուխմանից դուրս ենք իջնում, իհարկէ, ոտով. ձին այսպիսի տեղեր շատ անյար է։ Սիւնիքի լեռների համար ստեղծուած է ջորին. այդ կոշտ ու կոպիտ, անհնազանդ կենդանին է միայն, որ մեծ վարպետութեամբ գնում է գլխիվայր և գլխիվեր, գնում է նեղլիկ քարքարոտ կածաններով և ոչինչ նեղութիւն չի կրում, ընդհակառակն, այդպիսի վտանգաւոր տեղերում էլ ցոյց է տալիս իր վայրենի բնաւորութիւնը։ Մեր ընկերներից մէկը, հէնց նա, որ Աբդալարի իջևանի մօտ հազիւ էր դայլերից ազատուել, ջորի էր հեծած, որովհետև նրա ձին յոգնել էր, կանգնել գետ Ուչ-Թափալարի դաշտում և մենք ստիպուած էինք եղել վարձել մի գիւղացու փոքրիկ ջորին։ Նրա վրայ դրել էինք

յոգնած ձիու անգլիական թամբը, իսկ մեր ընկերը նազով-սազով նստել էր նրա վրայ, մեր ամենիս ծիծաղն էր գլդռում շարունակ։ Սահկալ-Թուրթանի ծմակի մէջ այդ ջորին մի ինչ որ հարուածէ սոսնալով իր գաւակի վրայ, ծուլ-ծուլ եղաւ, սկսեց յետի ոտները դէպի բարձր խփել։ Մօտենալ նրան, պահել անհնարին էր և մեր դժբախտ ընկերն անշուշտ կտոր կտոր կը դառնար, եթէ մի լաւ միտք չանէր։ Տեսնելով որ հասմոլ ջորին պար է գալիս սանձի-բանի չը նայած, նա բռնեց իրանից բարձր գտնուող ծառի ճիւղերից և կախ ընկաւ, իսկ փոքրիկ ջորին բեռնից թեթեւացած, խփեց ծառերի մէջ, անգլիական թամբը տաշեղի պէս վայր գցեց և շարունակեց իր վայրենի աքացիները, մինչև որ տէրը վրայ հասաւ ու բռնեց նրան։ Եւ գիտէք ինչպիսի տեղ էր նա իր քէֆն անում։ Ձին պոչը սեղմում է ապրլներին, ոտները ծանր քարշ է տալիս, ականջները խլացած դիտում է ճանապարհը, որովհետև նա մարդուց շատ է վախում վայր ընկնելուց և փշրուելուց։ Ջորին իսկապէս մի Թանկագին պարգև է Սիւնեաց լեռներում և այնքան կարևոր է, ինչպէս ուղտը Արաբիայի անապատներում։

Մենք իջնում ենք, իսկ Տաթեւը հետզհետէ բարձր և բարձր, դէպի երկինք է գնում։ Նա միշտ մեր աչքի առջևն է, միշտ մեզ է նայում։ Մի մեծ

լանջ կայ մեր առաջ, որ գետի երկարութեամբ դէպի բարձր, դէպի հիւսիս է ընկած. հողը կոշտ է, քարախառն և միայն փշի թփեր է բացնում։ այդ պատճառով էլ տեղը Ցաքուտ անունն ունի (ցաք նշանակում է փուշ)։ Նայելով այդ տեղին՝ ո՞վ կարող է կարծել որ մի ժամանակ նա ծածկուած է եղել վարդենիներով և գեղեցիկ ու հարուստ այգիներով։ Բայց այդպիսի մի ժամանակ եղել է։ Օրբէլեանը (Գլ. ԽԸ) հետևեալն է պատմում։ Սիւնեաց առաջնորդ Յակոբ եպիսկոպոսը, որ շատ է հարստացրել Տաթեւի վանքը կալուածներով և շինութիւններով, Քրիստոսի 932 թուականին առնում է Սիւնեաց իշխան Փիլիպպէից Ձագէձորի *) Վարարակն անունով ջուրը, տալով 12000 դրամ և մի վուսաւոր Ջաւհար», որի գինը շատերը չը գիտէին։ Ջուրը շատ աշխատութիւններով և մեծամեծ ծախքերով բերում է սարից և այս Ցաքուտում շինում է գեղեցիկ այգիներ, որոնց մէջ տնկում է խաղողի որթեր, ձիթենի, թըզ-

*) Կարծում են որ Ձագէձոր (հին Սիւնիքի գաւառ եւ գիւղ) բառը Թուրքերի արտասանութեամբ այժմեան Ձանգազուր բառն է գոյացրել։ Միանգամայն հաւանական է, որ այսպէս լինի. որովհետև ամենքիս յայտնի է որ Թուրքը մեր ծ տառը զ է արտասանում. ուրեմն նա պիտի ասէր Զ ա գ է զ ո ր։ Ձագէձորը այժմ Գորիսի շրջակայքն է. եւ պէտք է ասել, որ Ձանգազուրը Թէեւ ամբողջ գաւառի պաշտօնական անունն է, բայց Գորիսի շրջակայ գաւառակի միայն անունն է։

նենի, նռնենի և ամեն տեսակ մրգաբեր ծառեր «ի վայելումն եղբայրութեանն (Տաթևի) և ի պետս ամենայն կալօտելոց և աղքատաց»: Ապա այգեկոչ գանելով մի գեղեցիկ բլուր, հարթում է նրա գլուխը, պարապով պատում և շինում մի գեղեցիկ վիտանոց, որ նայում էր բոլոր այգիների վրայ: Բլրի գլխին շինում է «զմբեթայարկ խոյան մի յոյժ հրաշակերտ յօրինուածովք, և զոյմ և զձեղուն նորա եւս զարդարել նկարչաց զանազան ելանգօք, նկարել զամենայն տնօրինական և տէրունական պատկերս և զառաքելոց և վկայապետաց, և բոլոր շուրջ զեկեղեցեաւն սրահակս գաւթաց»:

Այս գործը այնպիսի մեծ գործ է, որ ես հարկաւոր եմ համարում մի քիչ կանգ առնել: Զագէձորի ջուրը Ուչ-Թափալարի դաշտի դէպի Գորիսի կողմը գալթած ծայրի ջուրը պիտի լինի. ուրիշ տեղ շատ թէ քիչ մեծ ջուր չէք գտնիլ: Եւ ահա այդ ջուրը ահագին տարածութեան վրայ բերուել է այստեղ, ահագին լանջիվայրի երեսով է բերուել: Հեշտ գործ չէ, ծանր, դաժանակիր աշխատութիւն է: Այստեղից շատ մօտիկ է Որոտանայ գետը, բայց նա այնպիսի վայրենին է, որ խրուել է իր փորած խոր ձորի մէջ, որտեղից հնար չը կայ խմելու ջուր առնել վերցնել, ուստի և նրանից քիչ բարձր գտնուող տեղի համար հարկաւոր է եղել այնքան հեռու տեղից ջուր բերել: Այս մի գործով ես կարողանում եմ ճանաչել Յակոբ եպիսկոպոսին, թէ որքան տարաձգաւոր, աշխատասէր մարդ է եղել, շինող, մարդասէր մէկը, որ կարողացել է այդպիսի ահագին գործ գլուխ բերել: Մեր ժամանակները մենք անցկացնում ենք բնութեան դժուարութիւնների առաջ, ասում ենք և վճռում որ ոչինչ անել չի կարելի, երկիրը, բնութիւնն է անյաղթելի փականքներ դրել, մեզ չի հնազանդվում. բայց պէտք է ուշադրենալ մի Յակոբ եպիսկոպոսի տոկունութիւնը, խելքը և այն ժամանակ ինչքո՞ր չի կարելի անել: Գեղեցիկ բլուրը, որ յիշում է Օրբէլեանը, Յաքուտից քիչ ցած է, գետի վրայ, գտնում է մի փոքրիկ տափարակի մէջ տեղը և աւերի մի արհեստական հողակոյտ է նման. նրա գլխին այժմ էլ ծուռ է յիշեցնում փոքրիկ եկեղեցին, բայց զարդ ու զարդարանքից զրկուած. մի աւերակ շինութիւն է, որ ունի ամբողջ ծածած սրբատաշ և գեղեցիկ պատեր. բլրակի ջրոս կողմում նկատելի են շինութիւնների հետքեր, երևի գրանք են եղել սրահազարդ գաւիթները:

Այդ եկեղեցու մօտով քիչ էլ ցածրանում ենք և ահա վերջապէս գետը, Որոտանը. նա վազում է գոռալով, իր մարմինը դէս ու դէն պատելով, մէջքի վրայ փրփուր հանած: Զարմանալի, հրաշալի բան,

մեր ճանապարհը չի ընդհատվում, ջուր ու ցամաք անցնում է գետի միւս ափը. գետը չը կայ, կորել է. վերևից էլ, ներքևից էլ երևում է նա, ջրերը վազում են, աղաղակում, իսկ այստեղ, մեր ոտների տակ ձայն չը կայ, ջուր չը կայ: Այս է ահա հռչակաւոր Սատանի-Կամուրջը, Սիւնիքի բնութեան հրաշակերտը: Նա բաւական լայն է, նրա վրայով գնում է հանքային ջրի մի առուակ, որ բղխում է կամուրջի կողքին ցցուած ահագին ժայռի տակից: Պէտք է լաւ տեսնել այս զարմանալի ձորը, մանրամասն ծանօթանալ նրա հրաշքների հետ: Իսկ մենք, դժբախտաբար, ժամանակ չունենք. օրը վերջացել է, մութը կոխում է, մեր առջևը կայ մի անտանելի երկար ճանապարհ, որ գնում է մինչև ահագին սարի գլուխը: Թողում ենք Սատանի-Կամուրջը անծանօթ մինչև մեր յետադարձը, դէպի վեր ենք գնում:

Այս ինչ փորձանք է, ինչ տանջանք, այս ճանապարհը, որ արձակ համարձակ դիք ու թիք կպել է այս լեռնալանջին, որ կախ է ընկած կատաղի գետի վրայ: Ձիու բաշերը բռնիր, որ յետքով թամբիդ հետ վայր չընկնես, տես թէ ինչպէս է ձին գըննում, նայիր թէ ինչ խորխորատ է բացուած ոչ կողմիդ... Լանջը ծածկուած է ծմակով, կամ, ուղիղն ասած, թփերով. և մեր կածանը հազիւ նկատելի պատյանների անելով ուղիղ գնում է դէպի բարձր: Ինչ-

պէս են ձմեռն այստեղով գնում, գալիս — սարսափելի է մտածել անգամ: Ո՛չ, այսպիսի տեղով հանդիստ սրտով գնալ կարող է միայն տեղացին, այս լեռնների հարազատ զաւակը, որ ծնուել, մեծացել է այս տեղերի վրայ և գնում, գալիս է, մտածել անգամ չի կարողանում թէ աշխարհումն ուրիշ տեսակ ճանապարհ էլ կայ: Իմ ձին քարինքի մէջ կորել է, սասիկ փշշացնում է քթածակերով, բայց արեւաբար բարձրանում է, չի կանգնում. առջևից փոքրիկ ջրին այնպէս է արագ քայլում, որ մեր ընկերը փառաւորվում է: Պակաս չի փառաւորվում և ջորու տէրը, շնհէրեցի հայը, որ գնում է իմ ձիուց առաջ. նա հանել է չուխան, փափախը կռնատակին դրել, արագ քայլում է և չի էլ քրտնում, թանչին չի տալիս. խօսում է հանդարտ, անընդհատ, այնպէս, ինչպէս մենք կը խօսէինք, ընթերցող, մի բուլվարում ձեռնելիս: Ահա նա, այդ իսկ լեռնականը, որին այս ահարկու սարերն ու ձորերը բուն, հարազատ զաւակ են համարում, որին նրանք տուել են շարժողութեան այսպիսի զարմանալի ընդունակութիւն: Հին ժամանակները պատերազմական գործերի համար հետևակ սուրհանդակներ էին գործ ածում և սա շատ հասկանալի է և բնական. որ ձին կամ նոյն իսկ որ ջորին կարող է մեր գիւղացուց արագ գնալ այսպիսի տեղերով:

Մենք շուռ եկանք լանջիվայրի այն կողմը, որտեղից Որոտնայ գետի ձորը այլևս չէի երևում այժմ էլ մեզ վրայ կախուած են Տաթևի սարի ծայրերը կազմող մեծամեծ ժայռերը: Նայում ենք ներքանց, տեսնում ենք լուսնի լուսով ալծաթաջրած այդ վիթխարի քարերը, որոնք խրոխտաբար առաջ են քաշուել և նայում են դէպի ձորը. կարծես դրանք անխոնջ դիտում են գետը, թէ արդեօք նա միշտ չարչարվում, տանջվում է ժայռերի նեղ ղրկում: Այո՛, հէնց այդ մտքով են նրանք այսպէս միմեանց ղլուխ վեր ելել, սեպացել. տես, որքան հեռանում է գետը, ժայռերը փոքրանում են, իջնում, հաւասարվում գետնի հետ:

Ուշ, Տաթևի լանջն էլ վերջ ունի: Սպիտակ փրփուրով պատած ձիս վերջապէս դուրս է գալիս սարի գլուխը, կանգնում է որ շունչ քաշէ և ես յետ եմ նայում, դէպի ցած: Զքնաղ, աննման տեսարան, սրի համար ձարտար նկարչի վրձինն էլ թոյլ է իմ կարծիքով, շատ թոյլ: Բոլորակ լուսինը կանգնած է ջինջ, անամպ երկնքում, առատ լոյս է թափում Տաթևի առաջ ընկած անսահման ձորի ու լեռների վրայ: Այդ սարերը կոյտ կոյտ են դառել, դէս ու դէն են ձգել իրանց մէջքերն ու հսկայական ուսերը, գիշերուայ խորհրդաւոր քողով ծածկել են իրանց ահարկու մարմինները. ո՞ւր են գնացել, ո՞ր-

տեղին են հասնում: Իսկ դրանց, այդ լեռների մէջ տեղ ձգուած է Սիւնեաց երկրի հպարտ թագուհին, հրաշալի Որոտանը: Ո՛չ մի ժամանակ նա այնքան փառաւոր չէ, ինչպէս այս պահուն: Նրան լուսաւորում է պայծառ արեգակը, նրա վրայ իջնում են մշուշի կոյտերը, թափվում է անձրևը, որոտում է ամպը, փայլատակում է կայծակը, ոչինչ. միայն լուսնի հեզ, ամօթխած լոյսի տակ է նա դիւթական պատկեր ընդունում և միայն այդ ժամանակին է հասկացնում թէ ինչ է ինքը: Ահա ալծաթեայ օձը օղակ-օղակ պատվում է, կամաններ է անում: Փրփո՛ւր, փրփուր է հանում գժուած գետը, մռնչում է, աղաղակում է վիթխարի ժայռերի դէմ, որոնք մի քարայնող յամառութեամբ անշարժացել են նրա երկու կողմին և սառն, քարայնի ծիծաղով են ականջ գնում այդ գալաւոր գոռոզներին: Գիշերը հանգիստ է, խաղաղ, անվրդով. նա հաստատուել է, մարդ, անասուն, գազան լռել են, ձայն չը կայ ոչ մի տեղ. ամենքին հանգստութիւն է հարկաւոր, ամենքը ձանձրանում են շարժուելուց, ձայն հանելուց: Միայն այդ գետը չը գիտէ հանգիստ, դադար. գլուխ վերցրած փախչում է նա, դէ՛հ, տեղ, տեղ տուէք, սարեր, ժայռեր. ձոր տուէք նրան, լայնացրէ՛ք, հարթեցէ՛ք նրա ճանապարհը. չէք անում, ահա նա այդպէս կը գոռայ, այդպէս մոլեգնաբար իր խոնաւ ու

ուժիդ համբոյրները կը տայ ձեր ոտներին։ Եւ երկինք ու երկիր, անտառ ու լուսին ականջ են կախել այդ խրոխտ ու վայրենի ձայնին, ուշադրութեամբ ականջ են դնում, կարծես հասկանում են թէ ինչ է նա ասում, ինչի մասին է աղաղակում, բողբոջվում։ Ականջ է դնում խրոխտապանծ Գազբէկը հեռուից, բարձրացնում է իր գլուխը, որ երկնքի տակից տեսնէ նրան. ականջ է դնում հայ օրիորդի առաքինութեան յաւիտենական արձանը, Շահանդուխտի սազատուրն ժայռը, ականջ է դնում մօտիկուց, բողբոջվին կախ ընկած գետ Որոտանի վրայ...

Ձիու գլուխը շուռ տուի դէպի գիւղը, որ տարածուած է Տաթևի սարի հիւսիսային բարձր տեղի վրայ։ Այս սարը շատ լայն գագաթ ունի, որ գնալով միանում է մի տափարակ լեռնաշղթի հետ ու հասնում է Գազբէկի ստորոտներին, մի քանի բարձրութիւններ ու ձորեր կազմելով։ Լուսնի պայծառ լուսով ողողուած մի լուռ և խաղաղ գիւղ ենք մըտնում, անցնում ենք գետնափոր տների առաջով. հազարից մի անգամ մի որ և է շուն բարձրացնում է իր գլուխը, մռռում։ Մօտենում ենք մի երկյարկանի տան, որ պատկանում է Տաթևի հայ ազնուականներին, Օրբէլեաններին, տոհմի ներկայացուցիչներից մէկին։ Տանտէրը, երիտասարդ Սամսոն-բէկը, սի-

լով ընդունում է մեզ, մեր ձիաներին հոգսը յանձնում է իր ծառային։ Մենք հանդիստ ենք գնում վերին յարկի մի երկայն սենեակում, երկայն թախտի վրայ։ Կարելի՞ է միթէ գնահատել մի ժամուայ հանգիստը Տաթևի ձորի տանջանքներից յետոյ։ Սառնանի կամուրջից ես այնպէս սաստիկ ծարաւել էի, որ բերանս բոլորովին չորացել էր, գժուարութեամբ էի կարողանում խօսել Տիտեռնով մեր տանտիրոջ սեղանի վրայ ջրով լիքն ամանը, իսկոյն յափշտակեցի և գլխիս քաշեցի։ Այդ երեկոյ մինչև քնելը ես չափից դուրս շատ ջուր խմեցի. կարծես իմ այդ սաստիկ ծարաւը պատրաստուած էր նրա համար, որ ես աւելի լաւ հասկանամ թէ ինչ բան է Տաթևի ջուրը։ Այնքան խմում էի բաժակ բաժակի հետից և տանտէրը ամեն անգամ ասում էր ինձ. «Ջնաս չունի, անվնաս ջուր է»։ Ի՞նչ անվնաս. միթէ այսպիսի բարձրութեան վրայ, այսպիսի օդի մէջ ջուրը կարող է վնասել, այդ պարզ, պաղ և համեղ հեղուկը։

Տիղը, օդը, ջուրը հրաշալի։ Ի՞նչպէս կը լինեն մարդիկ։ Ես նկատել էի, սիւնեցին առհասարակ յաղթանդամ, բարձրահասակ, խոշոր մարդ չէ. ընդհակառակն, կարճահասակ է, վախտ, բայց զիմացկան, տոկուն, ջլուտ—Տղամարդի հպարտտը բնական կոշտ է. վերևից հպնում է մխիթարդին կոպիտ շալից գործած չուխայ, կրում է այդ տեսակ

վարդիք, իսկ ջուխայի տակ սև կտաւից արխալուղ. նրա դէմքը մելամաղձոտ է, խոշոր գծեր ունի և առհասարակ վկայում է նրա ծանր, տակաւաքօս, առանձնասէր և տխուր բնաւորութեան մասին:

Մանր են թէ տղամարդիկ և թէ կանայք: Ինձ զարմանք պատճառեցին մանաւանդ վերջիններս. կարճահասակ, փոքր արարածներ են, կարծես ամենքը դեռ 15—16 տարեկան լինեն: Նրանց դէմքը կարմիր է, գլուխը բեռնաւորուած անթիւ լաչակներով: Գլուխը կապկպելու կողմից սիւնեցի կինը շատ է առաջ գնացել ղարաբաղցի կնոջից: Ղարաբաղում, ճշմարիտ է, կինը առանձին խնամքով է իր գլուխը պինդ կապում, փաթաթում, բայց ուրիշ բան է սիւնեցի կինը. նա կրում է իր գլխի վրայ շորերի և լաչակների մի ահագին բեռ, այնպէս որ գլուխը միշտ զարմացնում է իր մեծութեամբ՝ համեմատելով իրանի հետ: Սիւնեցի կնոջ հասարակ հագուստը աւելի կոշտ է և կոպիտ, քան թէ ղարաբաղցի կնոջ հագուստը, թէև ձևով և տարազով մի և նոյնն է. հասարակ, կոպիտ կտաւը մեծ մասն ունի սիւնեցու հագուստների մէջ. շատ անգամ պատահում ես կնոջ, որ հագած ունի սև կտաւէ շապիկ, որ Ղարաբաղում չես տեսնել: Այդ բոլորը— հագուստը, գլխի անճոռնի փաթաթանները, պէտք է ասել, սիւնեցու կնոջ արտաքին տեսքը քիչ չեն

տգեղացնում: Բայց եթէ նրա արտաքին տեսքով դատենք նրան, շատ կը սխալուինք. մի՛ նայէք, որ նա այնքան կարճահասակ է, կարծես զարդացման կէս ճանապարհին կանգնած, նայեցէ՛ք նրա ֆիզիքական և մտաւոր կարողութեան վրայ, տեսէք թէ ինչ դեր է նա կատարում:

Սրանից երեք տարի առաջ «Մշակ» լրագրում ես խօսել էի Ղարաբաղի կնոջ մասին, գլխաւորապէս աչքի առաջ ունենալով շուշեցի կնոջը: Ես փորձել էի ցոյց տալ թէ որպիսի տխուր դրութեան մէջ է այդ կինը, որքան թոյլ է և անկարող անկախ գործելու և վաստակելու համար. ես մանաւանդ ցոյց էի արել որ հայ կինը պարսկական կանանոցի թունաւալից շունչի ազդեցութեամբ փոխել է իր նախնական դրութիւնը, դարձել է մի սիրուն առարկայ, որ տղամարդի «հալալ ապրանքը» լինելով, փակուած է մի անգործ շրջանի մէջ և այդ տղամարդի կամքին միայն ծառայելու պարտականութիւնն ունի: Բայց հայ կնոջ իսկական տիպը այնքան մեծ փոփոխութիւններ չի կրել այնպիսի տեղերում, ուր չի հասել կամ քիչ է հասել պարսկական քաղաքակրթութիւնը, ուր կինը ճնացել է հեռու օտարի և նորութեան կաշկանդանքից: Այդպիսի տեղերն են Ղարաբաղի և Սիւնիքի հեռաւոր լեռները: Այդ տեղերի կեանքը, պայմանները հարկադրել են պա-

հուել անփոփոխ։ Հովուական կենցաղը, ումէն չի յայտնի, պարզասիրութեամբ է միայն կենդանի. այդ կենցաղը չունի հասարակ կեանքի բոլոր յարմարութիւնները, հետևաբար չի էլ կարող կատարել զանազան ծէսեր և կանոններ, որոնցից շատերը բոլորովին աւելորդաբար յօրինել է իր համար հանգստութիւն վայելող պարապ կեանքը։ Միևս կողմից երկիրը վայրենի է, անհնազանդ. կարիքն է ապրել միայն այն պայմանով, որ առանց դժդոհութեան, սիրով և պատրաստականութեամբ մաքառեն երկրի և կլիմայի խստութիւնների դէմ։ Գիւղացու կեանքը, խօսք չը կայ, շատ չարքաշ կեանք է, մշտական աշխատութիւնների մի լայն ասպարէզ։ Բայց լեռնցի գիւղացու գործը մասնաւորապէս շատ դժուար է. աշխատող, քրտնող, ոյժ վատնող ձեռքերի մեծ պահանջ կայ. տղամարդը մենակ չի կարող անել։ Եւ ահա աշխատանքի մի մասը վերցնում է կինը։ Պէտք է տեսնել սիւնեցի կնոջը աշխատանքի ժամանակ. դա մի ցուլ է, մի անյագրելի բանուոր, որ վազ առաւօտեանից մինչև երեկոյ անդադար գործի և աշխատութեան մէջ է։ Նրա գործունէութիւնը տան մէջ է և նա ինքն է այդ տանը զօրաւոր նեցուկը, մի դլխաւոր սիւնը։ Դեռ փոքր աղջիկ լինելով, նա սովորում է աշխատանքին, գործելուն և երբ մեծանում է, մարդու

գնում, դործն ու պարտականութիւնը երկպատիկ շատանում է. կատարում է տղամարդի գործ, ֆիզիքական ոյժ է վատնում և հէնց այդ պատճառով շուտ է դէն դնում կանացի քնքշութիւնը, նոյն իսկ դեղեցկութիւնը և ստանում է այրական կերպարանք։ Եթէ ես սկսեմ մի առ մի թուել սիւնեցի կնոջ կատարելի գործերը, ընթերցողը ինձ կասէ, որ այդ բոլոր գործերը կատարում են ընդհանրապէս բոլոր հայ գեղջկուհիները։ Ուստի ես չեմ մի առ մի թուում, այլ բաւականանում եմ ասելով, որ սիւնեցի կնոջ ժրութիւնը, աշխատասիրութիւնը, ուժեղ կազմուածքը միանգամայն զարմանալի են։ Ֆիզիքապէս այդ կնոջը բոլորիկ ոտներով դէս ու դէն ընկած, կասէք որ դա ինքն է մարմնացած եռանդը։ Ոչ, կասէք թէ նա ինչպէս է ահագին հակը մէջքին դրած սարերն ի վեր գնում, կասէք որ այդքան ոյժ, դիմացկանութիւն ամեն տղամարդ չի ունենալ։

Ես չեմ կարողանում երևակայել գիւղացի ընտանիք առանց կնոջ։ Երևակայեցէք մի ընտանիք, որ խոր, զարմանալի խոր տգիտութեան և անհասկացողութեան մէջ է ապրում. տղամարդը տարուայ մեծ մասը տանից դուրս է անցկացնում, թողելով իր հետևը, տան մէջ, անհաշիւ հոգսերի, ցաւերի մի մեծ քանակութիւն։ Եւ կինն է, որ այդ դէպքում կատարում է նրա բոլոր պարտականութիւնները։

Նա ունի պատասխանատու պաշտօն, ունի իրաւունքների մի յայտնի շրջան: Նա է շատ դէպքերում ղեկավարում իր մարդուն, առանց նրա խորհրդի շատ բան չի կատարվում: Տղամարդի նեղն ընկած տեղը նա ինքն է հրապարակ դուրս գալիս, պաշտպանում է իր իրաւունքը՝ իր սեռին ներելի և անթերելի միջոցներով, կոպտութեամբ թէ քաղցրութեամբ, ազաչանքով թէ կռուով: Այս բոլորը աւելի շատ նկատելի է Սիւնիքում. այնտեղացի կինը աւելի է աչքի ընկնում, քան զարաբաղցի կինը: Սիւնիքում ճանապարհորդելիս շատ կանայք կը տեսնէք, որոնք տղամարդի տրեխներ հագած, տղամարդի ցուպը ձեռին, տղամարդի քայլերով անցընում են. նրանք հետաւոր տարածութիւններ են թողնում իրանց հետը, շատ անգամ միայն մի հատ իրանց բարեկամ տղամարդի հետ, այնքան համարձակ, անվախ են:

Երբ նրան կամ նրա որդուն, թոռանը պինդ դիպչում են, երբ կոլճակի ոյժը գալիս է նրա ընտանեկան դրութիւնը խախտելու, նա, այդ կարճահասակ կինը, մոռանում է իրան, զինուորվում է իր բոլոր քաջութեամբ, պաշտպան է կանգնում: Մեր հիւրընկալ Օրբէլեանը պատմում էր մեզ մի մեծ կռուի մասին, որ նորերումս է պատահել Տաթեւի մէջ մի ինչ որ պատճառով: Կռիւը բացառա-

պէս կանայք էին անում մեծ մեծ խմբերի բաժանուած, ահագին մահակներով զինուորուած: Ո՞վ էր կարող նրանց մօտենալ. ինքը Օրբէլեանը, և նրա հօրեղբօր որդին, իբրև դիւղի աւագներ, խառնվում են, որ մի կերպ խրատեն, խաղաղացնեն: «Բայց մեր հարևան կինը, ասում էր նա, այ որ մեր պատի միւս կողմին է, այնպէս զարկեց մէջքիս իր ձեռքի ահագին փայտով, որ ես գետինը փռուեցայ և ձախս կտրած սկսեցի խրախուսել նրանց, ասել որ լաւ են անում, որ կռվում են. իմ հօրեղբօրորդին էլ իմ օրն ընկաւ, նրան էլ ծեծեցինէ: Այսպէս քաջ և անվախ է սիւնեցի կինը. դուք կասէք որ վայրենի էլ է. ես համաձայն եմ և հաւատացած, որ անհասկացողութիւնը, թանձր տգիտութիւնն է շատ անգամ հարկադրում այնպիսի բան անել, որի հետևանքը շատ ծանր է: Բայց ինչ ասենս, նախնական պարզ դրութեան մէջ ծնացած կինը իր գեղեցիկ յատկութիւնների հետ ունի և վայրենութեան հանդոյ կոպիտ գործեր:

Կոպտութիւնները ձուլուած են հասարակական բարք ու վարքի հետ, շատ դէպքերում աննկատելի չափ են ստանում: Միայն մարդու և կնոջ, իբրև ամուսինների, յարաբերութիւնների մէջ որքան տգեղ, ցնաստակար կողմեր կան: Ցիշենք ամենից մեծը, ամենից չարը: Կարծեմ, ոչ մի հայաբնակ

տեղ այնքան հասարակ բան չէ երեխաներին պատկելը, ինչպես Սիւնիքում։ Այստեղ միանգամայն զարմանալի սովորութիւն է. 9, 10 տարեկան երեխաները ամուսիններ են։ Ես չը գիտեմ թէ ինչն է սրա պատճառը. արդեօք այն է, որ տան համար հարկաւոր գործով պիտի են ուղում աւելացնել և շտապում են այդպէս շուտ ամուսնութեան լուծ դնել երեխաների վրայ, թէ կայ մի ուրիշ հանգամանք։ Ինչ որ լինի, ամենքին յայտնի է այդքան վաղաժամանակ ամուսնութեան վնասը. և այդ վնասը մեծ չափերով Սիւնիքն է կրում։

Ի վերջոյ երկու խօսք ասենք սիւնեցոց լեզուի մասին։ Սիւնեցու գաւառական բարբառը շատ է տարբերւում Ղարաբաղի բարբառից. պէտք է խոստովանել, որ Սիւնիքի բարբառը իր ձևերով աւելի մօտիկ է մեր այժմեան գրական ձևերին, քան Ղարաբաղինը. սիւնեցին խօսում է երկար ձայն տալով, մանաւանդ երբ նախադասութիւնը հարցական է. նա համեմատաբար քիչ է գործածում թրքական բառեր. նրա լեզուի մէջ կան «ալ» (էլ) և «մըն» (մին) բառերը. զարաբաղցին ասում է «ասում ըմ, ասում ըս», սիւնեցին՝ «ասում եմ, ասում ես»։ Իհարկէ, Սիւնիքն էլ ունի մի քանի տեսակ գաւառաբարբառ, բայց բոլոր բարբառներին յատուկ է մի ձև, որ բաւական խորթ է թւում

ղարաբաղցուն. արտասանութիւնը մի տեսակ երգելու ձև ունի. բառերը, ինչպէս ժողովուրդն է ասում, լցրած են գալիս, կարծես կրծքիցը չէ գալիս ձայնը, այլ ուղղակի բերանից։ Սիւնիքում դեռ գոյութիւն ունի նաև Խոյի և Սալմաստի լեզուն. այդ լեզուով խօսում են սիսիանցիք, որոնց մեծ մասը բնիկ սիւնեցի չէ, այլ 1828 թուին Պարսկաստանից է գաղթել, այս կողմերում բնակութիւն հաստատել։ Այդ գաղթականներին բնիկ սիւնեցիները «վլլան» են անուանում։

Այսպէս ահա տեսանք, որ Սիւնիքը լեզուի, սովորութիւնների, ապրուստի, բնութեան կողմից մի բոլորովին տարբեր, ինքնուրոյն աշխարհ է։ Հաքարու գետից դէպի հարաւ անցնողը բոլորովին նոր շրջան, նոր կեանք է տեսնում։ Այդ կեանքի մի քանի թեթև, թուլիկ նշանները ես տեսայ պատահաբար. բայց Սիւնիքը էլի ինձ համար մի խորհրդաւոր երկիր մնաց, մի երկիր, որ ամենից շատ կարօտ է մանրամասն և հիմնաւոր ուսումնասիրութեան։

Ե.

Առաւօտը շատ կանուխ վեր ենք կենում, որ շուտ պատրաստուենք, վանքը գնանք։ Դուրս ենք

գալես պատշգամբը։ Երևակայեցէք մեր դրութիւնը. ամբողջ հրկիզքի վրայ մի մատնաչափ պարզ տեղ չը կար, փչում էր մի ցուրտ, ձմեռնային քամի, բոլոր սարերի գագաթները կորել էին թանձր մշուշի մէջ։ Բախտը, որ հովանաւոր էր այս քանի օրերը Սիւնիքի լեռնագաշտերում, այժմ երես էր դարձրել մեզանից։ Ոչինչ այնքան ծանր, այնքան վհատեցուցիչ չէ, ինչպէս պատպիսի եղանակը բարձր լեռների գլխին։ Մտաբերում ես տեսած ձանապարհներդ, յիշում ես թէ որքան դժուարութիւն կայ ջոր ժամանակին անգամ. ինչ կը լինի եթէ անձրևը սկսուի, Սիւնիքը այժմ էլ իր դէմքի գառնութիւնը սկսէ ցոյց տալ. մեր առջևը Ուչ-Քափալար կայ, մենք բարձր սարի գլխին ենք, այս ցուրտ, կորող քամին չէ՞ կարող ձիւն էլ բերել... Եւ մինչդեռ մենք յուսադրւում էինք միմեանց, մշուշը սկսեց արագութեամբ ցած իջնել Դազբէլից, ձորեր ու գաշտեր ծածկեց, եկաւ, վազեց Տաթևի վրայով, հեռու գլնաց. իսկոյն սկսուեց աշնանային մանր անձրևը։ Ցրտից կուչ եկած, ձեռքերս թևքերիս մէջ խրած շտապ շտապ յետ ու առաջ էի գնում պատշգամբի վրայ, որպէս զի տաքանամ, նայում էի չորս կողմիս, ոչինչ չէի տեսնում. արտաքս աշխարհ կուլ էր գնացել մշուշի մէջ և միայն մեր հարևան տան կտուրն էր երևում իր անտրոշ գծագրութիւններով։ Անձրևը բաւական վարար էր. տան բակով անցնող ծառայի տրեխները արդէն ցեխի կոլոններ էին վերցնում...

Այսպիսի մի զզուելի դրութեան մէջ ես մտածում էի, կարծես մտածելով շատ բան կարելի էր անել։ Իսկ մեր երիտասարդ տանտէրը, մեր ուշադրութեան ակնկալած, սկսել էր մի երկար պատմութիւն Օլբէլեանների տոհմի մասին. նա թէև աչքը շարունակ ինձ վրայ էր պահում և ես մի լսողի դիրքն էի բռնած, բայց շատ քիչ բան լսեցի նրա ասածներից։ Նա պատմում էր հայ և թուրք ազնուականների ընդհարումների մասին, որոնք սովորապէս արիւն և սպանութիւն են պատճառում։ Ընդհարումները գլխաւորապէս հողերի մասին են սկըսվում. թուրք բէկերը շատ չեն սիրում իրանց իրաւունքները օրինական ճանապարհով հաստատել և երբ դատարանը խլում է նրանց հափշտակած հողը ու տալիս մի ուրիշին, սկսվում է արնախում թշնամութիւնը։ Արիւնը արիւնով պիտի լուացուի. և Օլբէլեանները այժմ արիւն են պահանջում թուրք բէկերից, որոնք իրանց մի բարեկամին սպանել են և դատարանի ձեռից փախել։ Իւր արիւնաներկ պատմութիւնները մեր Սամսոն-բէկը վերջացնում է մի կատակերգութեան պատմութեամբ, որ վերջին ժամանակներս անցքն է։ Յայտնվում է, որ Տաթևի

բոլոր Օրբէլեաններըը Հնդկաստանի 70 միլիոններին աչք դրած են։ Ցայս ուրին այժմ թէ ոչ—ես չեմ ցայ. բայց մի քանի ժամանակ սրանից առաջ ունեցել են. գուցէ այն ժամանակն էլ չը լինէր, եթէ չը գտնուէին մարդիկ, որոնք հեշտ հալստանալու ցաւոմն են տանջմում։ Ժան-Ժակ Օրբէլեանի ֆանտաստիքական կառակը շատ երկար ժամանակից է պղտորում մեր միտքը։ Ձայն հասաւ որ Հնդկաստանում 70 միլիոն րուբլի են դրգել Օրբէլեաններին հնամար և ինչէր չէղան, ով ասես որ չը շտապեց Օրբէլեան ազգանունը իր գլխին գցելու։ Դեռ ձիշտ ու սխալը չեմացած, դեռ մի «ասում են» միայն լսած, ժառանգների մէջ մի թունդ պայքար սկըսուեց, որ շուտով մեր մամուլի մէջը մտաւ։ Միմեանց հայհոյեցին, միմեանց ստախօս անուանեցին, ամեն մէկը շտապեց հրապարակով պարծենալ թէ ինքն է միայն այդ ահագին գումարի տէրը։ Հայի ազահութիւնն այս չափն ունէր, ոնպատճառ մէկը պիտի ստանար։ Եւ վերջը... Թիֆլիսից Տաթևի կողմերն է գալիս մի պաշտօնաթող գնդապետ, հաւաքում է բոլոր Օրբէլեան կոչուածներին և կոչուել ցանկացողներին, պայման է կապում նրանց հետ, որ եթէ ինքը գերութիւնից ազատէ այդ ահագին գումարը, այսքան և այսքան բաժին ստանայ։ Ժառանգները, ինչ կայ որ, համաձայնում են մի քա-

նի միլիոն էլ այի գնդապետին տալ։ Այի գնդապետն այնպիսի սիրով և պարծանքով է սկսում գործը, որ գայթակղեցնում է մի խեղճ հայ քահանային. սա էլ ուզում է Օրբէլեանի դիզած ոսկու կոյտերից մի խոխտ իր կողմը քաշել կեղծ գօկումենտներ շինելով և ծախելով։ Գնդապետն այժմ, ինչպէս երևում է, ձեռք է վերցրել Օրբէլեաններից և Գանձէսի ափերում դիզած համեղ պատառներից. միլիոնների տերանալու փափագը մոռացած, այժմ ուշի մտօք գիտում է և սրտատրոփ սպասում թէ երբ կը գայ այն օրը, երբ քրէական դատաստանը կը պատժէ վերոյիշեալ խեղճ քահանային *)։ Ոչինչը ոչինչ է մինչև վերջը։ Բայց Տաթևի Օրբէլեանների տոհմական հին թղթերն ու գօկումենտները այժմ էլ ծնում են. Թիֆլիսում։

Բայց ինչ ուզում է, թող լինի, մեզ համար ուրախալին այն էր, որ այդ օրը Սիւնիքի երկինքը այնքան էլ անգութ չէր։ Մեզ վրայ ժողովուած թանձրը գոլորշիների ովկիանոսը մի ինչ որ յայտոլ գէպքից պատռուեց, սկսեց ցրիւ գալ անձրևը դադարում էր։ Խնդրն հանել ենք ուսից մեր ձիանները, վանքն ենք գնում։ Ահա Տաթև գիւղը։ Սրա տները ցրուած են մի բաւական տափարակ գաւիթայ-

*) Այս տողերը գրելուց յետոյ դատարանը Ազիզեանց բահանային Սիբիր աքսորել վճռեց։

տի վրայ, Տաթևի սարի հիւսիսային կողմում: Այնքան էլ շատ չեն անելը, գիւղը բաւական աղքատ է. գետնափոր խրճիթներ են պատահում ամեն մի քայլում, որոնց սրահներում երևում են բոլորիկ ու կիսամերկ երեխաներ, կարճահասակ կանայք, երեսին և մոխրագոյն շնիկ. այդ ամենքը նայում են մեզ զարմանքով, կարծես հարցնում են. «ո՞ւր որտեղ, այստեղ որտեղ»: Ինչու՞ Տաթևն այսքան փոքրիկ և հասարակ գիւղ է և աղքատ. նա մեծ պիտի լինէր, որովհետև կովկասեան շատ քաղաքներից է նա հին: Մեր պատմական թղթերի մէջ գտնում ենք, որ Տաթև գիւղը նուիրուած է վանքին դեռ 844 թուականին (փրկչական), դուցէ այդ ժամանակից էլ շատ առաջ գոյութիւն է ունեցել, յայտնի չէ: Հազարամեայ կեանք վարած այդ գիւղը այժմ այնպիսի դրութիւն ունի, որ չես հաւատում թէ նա այնքան ծեր է. մի՞թէ այդքան ժամանակի ընթացքում ժողովուրդը չաճեց, չը բազմացաւ և մի՞թէ այս լեռնային գեղեցիկ օդն ու ջուրը կարող են նպաստել մարդկանց ապառամն: Ո՛վ դիտէ, ինչ ձեակատադիր է ունեցել Տաթևը. գիւղի այժմեան դրութիւնն անշուշտ մի պատմութիւն ունի, որ ոչ մէկին յայտնի չէ:

Մենք այցելում ենք Տաթև գիւղի եկեղեցին: Դա մի բաւական սիրուն և հին շինութիւն է, ու-

րի կառուցը վերջերումն է նորոգուել: Մանում ենք և տեսնում մի գիւղական պարզ եկեղեցի, որ, ինչպէս ամեն մի հին եկեղեցի, շատ մութն է. ցածրիկ առաստաղից այժմեան մեսալական ջահերի տեղ կախ ընկած են հնադարեան կանթեղներ, ապակեայ ամաններ, որոնք ձիթով են լցուած: Բայց գիւղական պարզ եկեղեցի ասելը բաւական չէ. անպատճառ պէտք է ասել հովուական եկեղեցի, այնպիսի մարդկանց աղօթատուն, որոնք մի րոպէ չեն ապրիլ, եթէ չը լսեն իրանց ադմկաշատ ջրերի ձայնը, չը տեսնեն իրանց ադրիւրների դէմքը: Այդ խօսքերը ես չեմ ասում, ինքը, եկեղեցին է թելադրում: Դեռ նրա շէմքից չը մտած, ձեր ականջին է հասնում մի ինչ որ ջրի մեղմ քչքչոցը. կարո՞ղ էք երևակայել որ այդ ջուրը այս մութ կամարների տակ է քչքչում. մօտեցէ՛ք հիւսիսային պատին, կը տեսնէք պատի մէջ մի փոքրիկ խոռոչ և նրա մէջ մի փոքրիկ աղբիւր, որ թափվում է փոքրիկ աւազանի մէջ և այդտեղ էլ կորչում, գետնի տակով գնում է եկեղեցուց դուրս, չը գիտեմ թէ մէկ էլ ո՞րտեղ է դուրս թափվում: Եկեղեցու մէջ կայտառ թոթովախօս աղբիւր... Ասացէ՛ք, այս ժողովուրդը լա՞ չէ հասկանում թէ ինչ է հովուական պօէզիան: Քահանաները ու դպիրները երգում են, կարդում, ձայն ձայնի տալիս, ժողովուրդը լսում է. և ա-

տուածային փառաբանութիւններին միացնում է իր ձայնը լեռնային անապատ, պարզ աղբիւրը. դրանից էլ լաւ ինչ հրաժշտութիւն: Հէնց այդտեղ, այդ նուիրական կամարների տակ, պարզասէր ժողովուրդը մօտենում է աղբրին, կռանում է, անուշ ջուրը խմում, ձեռքերը լուանում: Իսկ երբ ձայն ու ծպուտ հեռանում են եկեղեցուց, փոքրիկ առաստաղի տակ թագաւորում է եկեղեցային լռութիւնը, աղբրիկը սիրտ է ստանում, աւելի բարձր ձայն հանում: Այսպէս է սիւնեցի հայը, այսպէս է կառոզանում արտայայտել իր սէրը դէպի իր բնութիւնը:

Անմոռանալի է այդ անզարդ ու անշուք եկեղեցին, անմոռանալի իր այդ ջրով, որ նրա միակ զարդարանքն է: Ականջ կախած նրա մեղմ քչքչոցին, մենք քիչ էլ շրջում ենք դրսում, եկեղեցու շուրջը և ապա ուղևորվում դէպի ցած: Ճանապարհին տեսնում ենք վանքի կալը, մի լայն և հարթ հրապարակ, որի մօտ կանգնած է մի կամարակապ և սիւնազարդ շինութիւն: Ահա երևաց վանքը, որ գիւղից հազիւ թէ մի վերստ հեռու լինի: Վերջապէս այդ վանքը այնքան մօտիկուց երևաց, վերջապէս նա կանգնեց մեր առջևը, մեր ճանապարհի վրայ: Շրջապարիսպն ու գմբէթները հեռուից են մարդու սիրտը պատրաստում. ահով

և պատկառանքով պիտի մօտենալ, տեսնել շատ, ղդալ աւելի ևս շատ:

Իմ ընթերցողին մի քիչ ամփոփ տեղեկութիւն տալու համար կասեմ, որ գիւղից դէպի վանքը գընացողը տեսնում է դրսից մի լայն շրջափակ պարիսպ, որ սևացած է հնութեան պատճառով, շատ տեղ աւերուած և կալկատած. ներսից այդ պարսպին կպած են շատ շինութիւններ, երկյարկանի սենեակներ, որոնք նոյն հնութեան պատճառով աւերուած են: Այդ շինութիւնները սկսում են հիւսիսային մեծ գռների մօտից և անկանոն շրջան գոյծելով պատում բակը, գալիս են կանգ առնում արևելեան կողմում, ձորի վրայ. իսկ շինութիւնների մէջ տեղը առանձին կանգնած է վանքը*): Սա ունի մի բարձր գլանաձև գմբէթ, որի չորս կողմը շարուած են մեծ ու փոքր, նեղ ցանցապատ լուսամուտներ: Շրջապատից դուրս, հիւսիսային մեծ գռներից քիչ դէպի արևելք կայ մի ուրիշ երկար շինութիւն, որ նայում է Որոտանայ գետի ձորին:

Մանենք պարսպի իմ յիշած մեծ գռնով: Այդ

*) Տաթեւի շատ գեղեցիկ եւ գոլորովին նման պատկերը տպուած է 1888 թուականի «Нива» ռուսական պատկերազարդ շաբաթաթերթի առաջին համարում: Պատկերը նկարուած է ոչ թէ Տաթեւի գիւղի կողմից, որտեղից մենք մտանք վանքը, այլ հակառակ կողմից, հարաւային ձորի վրայից:

գլան գլխին շինուած է մի փոքրիկ և գեղեցիկ եկեղեցի, որ վանքի շինութիւնից հեռու է, բակի երկարութեամբ բաժանուած։ Եկեղեցին ունի մեծ, նշնպէս գլանաձև գմբէթ, շինուած է սրբատաշ քարերից և ունի Անիի եկեղեցիների յատակագիծը։ XI դարու շինութիւն է, որ շինել է Տաթևի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսը։ Երևակայեցէք մի մեծ և լայն դուռն. մինչև ներս մտնելը ձեր աչքի առաջն է մի գմբէթ, որ կարծում էք թէ վանքի գմբէթներից մէկն է. այնքան զարմանում էք, երբ լայն դռնով անցնելիս ձեզ յայտնում են, որ ձեր գլխից վերև մի ամբողջ եկեղեցի կայ կանգնած։ Եկեղեցին մտնելու համար պէտք է բարձրանալ քարէ սանդուղքներով պարսպի գլուխը, անցնել մի նեղ անցքով. եկեղեցու դուռը պարսպի գլան ձակատի ծայրին է բացվում։ Ոլքաձև սրամիտ է եղել շինողը։

Մեծ բակից անցնելով, մի դռնով մտնում ենք փոքրիկ բակը, որ վանքի հարաւային դռների առաջն է գտնվում. մտնում ենք պատշգամբաւոր շինութեան ներքին յարկի նեղ դռնով։ Հին ու մրոտայ շինութիւններ են, մի նեղ միջանցք են կազմում, որ առնում է մեզ մի մեծ և հին ճաշակով շինած սենեակ։ Այստեղ է ապրում վանքի վանահայրը, որ միևնոյն ժամանակ Սիւնեաց վիճակի փոխանորդն է *) և հոգևոր կառավարութեան նախագահը։ Ներկայացանք փոխանորդ հօրը արժանապատիւ Անանիա վարդ. Համազասպեանցին, որ նոր էր վերադարձել Մեղրիից և սկսեց պատմել այդ գաւառի անտանելի, միանգամայն անանցանելի ձանապարհների մասին։ Հայր սուրբի այդ սենեակը մի հին դահլիճ է, որ կոչվում է Թանաբի. արևելեան կողմից երկու հատ երկյարկանի մեծ լուսամուտները թէ և բաւական լոյս են ներս թողում իրանց դուռնաւոր ապակիների միջով, բայց սենեակի կէսը, ինչպէս բոլոր հին շինութիւնների մէջ, կիսամուտների մէջ է ընկղմուած։ Փոխանորդ հօր բնակարանը անզարդ է, համարեա բոլորովին մերկ, ինչպէս մի վանական հասարակ խուց։ Մենք անցանք այդ դահլիճի միջով, իմ յիշած երկու պատուհանների տակ շինած մի փոքրիկ դռնով դուրս ենք գալիս, իսկոյն մեզ ընդունում է մի փոքրիկ, շատ փոքրիկ պատշգամբ, որ մի հրաշալի բան է։ Ես ճնում եմ զարմանքից հիացած, ապշած, մեխուած. մեխուած աւելի այն պատճառով, որ հնացած փտած պատշգամբը չարգուելու, վայր ընկնելու աշն ունի իր վրայ դրօշմած։ Իսկ եթէ վայր ընկնէ...

*) Սիւնեաց վիճակը Երեւանի Թեմին է պատկանում։

Դա հասարակ պատշգամբ չէ. դա կախ ընկած է մի պղպիսի խոր ձորի վրայ, որին վերևից նայելիս մարդու գլուխը պտույտ է գալիս։ Նեղ ձոր է, ահարկու և գեղեցիկ իր ուղղաձիգ կողերով. Ցածի սարի գլխից ուղիղ խփում է դեպի ցած, Որոնցայ գետի վրայ։ Նա լուռ ձոր չէ. վերևից գալիս է մի մեծ առուակ, թափվում է նրա միջով։ Բայց ինչ թափուկը... Դուք, իհարկե, տեսել էք ջրբաղացի գլուխը, գիտէք ինչպես է ջուրը վերևից ցած շռշռում փայտե նաւի միջով։ Ահա երևակայեցէք մի հսկայական, մեծ ու շատ խոր նաւ, երևակայեցէք և մի մեծ ջուր, որ գլխի վրայ ցած է նետվում և իր կարկաչիւնը երկինքն է հասցրել։ Նա ջրվէժ չէ, նա գետակ է, որի ընթացքը պղպէս է սարի գլխից մինչև ստորոտը. նա յուսահատ է, կարծես վախից սարսափած է ընկնում բարձրութիւնից, օգնութիւն է աղաղակում վախից սպիտակած, փրփուր կտրած։ Բնութիւնն այսպիսի վիճակ է յատկացրել Տաթևի ջրերին. ամենքը պիտի ազաղակեն, ամենքը պիտի սաստիկ վազեն։ Այս ջուրը նեղքևի ձորի որոտալից գետի փոքրիկ, բայց հարազատ զաւակն է. գետն այնտեղ վշշում է հաստ, երբէ կարելի է ասել, ազամարդի ձայնով, իսկ սա բարակ, կանացի ձայն է արձակում, փախչում է, վազում և տեղ տեղ ջրվէժներ կազմելով ընկ-

նում է Որոտանի գիրկը, աղաղակում է նրա հետ։

Ձորի երկու կողերը կանաչազարդ են, տեղ տեղ թփերով և ծառերով ծածկուած։ Գարունն ու ամառը այս պատշգամբից նայողի աչքի առաջ հրաշալի տեսարաններ են փռում. բնութեան փառքին սիրահար մարդը թող այստեղ գայ, նստէ այս կախարդական պատշգամբի վրայ, որ չը գիտեմ ինչպէս են դուրս բերել, կախ գցել հիմնել մի պատի վրայ, որ ձորի շրթունքից է սկսվում։ Ահա ես կանգնած եմ, նայում եմ դէպի ցած։ Այս չարաճճի, յուսահատուլ ջրի վայրենի աղաղակը գերել է իմ միտքը, գրաւել է իմ ամբողջ ուշադրութիւնը և ես ժամանակ չունիմ զմայլուելու վայրենի ադամենիների խմբերով, որոնք օդի մէջ թափահարելով իրանց ձիւնափայլ մաքուր թևերը, թռչում են ինձանից ցած, շատ ցած. թռչում են ձորի և ջրի վրայ, երանի նրանց, դժուար, անմերձենալի ձանապարհ չեն ճանապարհ, գահավիժուելու, կտոր կտոր դառնալու վախը չեն հասկանում. նստում են, որտեղ կամենում են նրանց փոքրիկ սրտերը—ջրի վրայ են նստում, նրա փոշենման կաթիլներով լուացվում, զովանում, կտուցներով քիչ քորում են թևերի տակը, էլի վեր են կենում, էլի թռչում. ահա նրանք դէպի ցած գնացին, ուր սարը պատ է դառնում, կտրվում, ահա վերջին անգամ փայլեցին

նրանց սպիտակ թևերը և նրանք անյայտացան ցած-
րում, ձորի խորութեան մէջ...

Աշուն է այժմ, ցուրտ ժամանակ. այդ պատ-
ճառով ձորի բնակիչները միայն ալաւներն են և
ելեսապինդ ծառերը: Բայց երբ «բացուին դռներ
յուսոյ և մեր երկրէն վախ տայ ձմեռ», երբ ոչ
միայն Տաթևը, այլ և Սիւնեաց երկրի բոլոր լեռնա-
դաշտերը հագնում են աննման կանաչ զգեստ, այն
ժամանակ այս ձորը նրանն է ցոյց տալիս. ազմուկի
և աղաղակի համար ստեղծուած այս ջուրը ամեն
առաւօտ և ամեն երեկոյ իր գլխին է հաւաքում
ամեն ազգի և տեսակի թռչուններին. գա-
լիս է, իհարկէ, և Սիւնեաց աշխարհի սոխակը, նըս-
տում են ամենքը մի տեղ, և լցնում են այդ ձորը
հրաշալի եղանակներով: Ահա այսպիսի փառաւոր
բան է այս փոքրիկ պատշգամբը. նա ապքաա է, ճըշ-
մարիտ, պառաւած է, նրա կէսն արդէն փուլ է
եկել. բայց և այդպէս, տեսէք ինչ համալսական է
և ոլքան սիրտը բաց: Նայեցէ՛ք, տեսէք ինչեր չէ
ցոյց տալիս: Բարձրացրէք ձեր աչքերը ահաւոր խոր
ձորից, ձեր առջևը բաց է Ոլոռանայ գետի ձորը մին-
չև Հալիձոր գիւղն սահմանները. տեսնում էք դէպի
վեր ցցուած լեռնակոյտեր իրանց քարային կողե-
րով, տեսնում էք այդ լեռների վրայ մէնաձ ան-
տառներ, ձորեր, փապարներ: Ահա մեր երեկուայ

եկած ճանապարհը. նա անփոյթ կերպով բաց թո-
ղած մի ժապաւէնի պէս բարձրանում է գետի ձո-
րից, սողում է լանջերի կրծքով, ծառերի և թփերի
միջով, ոլորւում է դէս ու դէն, դուրս է գալիս Շա-
հանդուխտի ժայռի գլուխը ու անյայտանում: Էլի
այդ ժայռը, այդ հարսի ժայռը, ինչպիսի գժուար
կողեր ունի և ինչպէս ագահ Տաթևի վանքին է
նայում: Նա կարծես դեռ պահել է այն ուշագիր
հայեացքը, որ մի ժամանակ նրա ոտների մօտ ճգնող
կոյսն է մեհած պահել այս վանքի, գուցէ և այս
պատշգամբի վրայ: Այ թևի ուղղութեամբ նայեցէ՛ք.
այստեղ էլ, ձեր ոտների տակ ընկած ձորի միւս
կողմին, երևում է տափարակի վրայ տեղաւորուած
փոքրիկ գիւղը Տանձատափ անունով: Որպիսի գե-
ղեցիկ տեղ է ընտրել այդ ծառերն էլ, որոնք մի-
մեանցից հեռու ցրուած են տափարակի վրայ, երևի,
տանձի ծառեր են: Այստեղից, Տաթևի արևմտեան
կողմից, ուր ձորն այնքան խոր չէ, գնում է մի նեղ
ճանապարհ, անցնում է «Հանգիստներ» անուանած
քարերի մօտով և մենակ ու դատարկ մնում է
Տանձատափ գիւղը: Բայց մի մի թռուել այն տեղերը,
որոնք երևում են, այն տեսարանները, որոնք մի
րոպէում նկարվում են պատշգամբի առաջ — ան-
հնարին է:

Ես չեմ կարողանում խօսել իմ ընկերների և

վանահօր հետ, որոնք ինձ հետ կանգնած էին պատը շրջամբի վրայ. ես ուզում էի շատ բան տեսնել, շատ տեսարաններ թողնել մտքիս և յիշողութեանս մէջ. ես միայն լսում էի նրանց խօսքերը: Իմ մի ընկերը, նա, որ առաջներում էլ եղել է այստեղ, մօտիներում է ինձ և ասում հետացած.

—Ինչպէս ես կարծում, ինչպէս կը լինի ամառնային մի երեկոյ այս պատշգամբի վրայ. ես տեսել եմ այդպիսի երեկոներ: Նատես այստեղ, չայ դնեն, թառ վերցնես, թուչունների կարմունքին տազացնես թառի ձայները. և լաւ երգիչ լինի, երգէ. «Ատուաձ է գիտում, քեզ շատ եմ սիրում, գեղեցիկս, մի անգամ էլ քեզ տեսնեմ...» (Թումքեբէն): Ինչպէս կը լինի, հը՞...

Եւ նա ծիծաղում է: Այո, համաձայն եմ, կախարդական կը լինի ամառնային երեկոն. բայց էլ ինչու՞ անպատճառ «Ատուաձ է գիտում» երգել. որ գեղեցիկը կարող է լսել այդ խոր ձորից: Անօգուտ է սիրոյ երգը, այստեղ միանգամայն անօգուտ. այստեղ բնութիւնն է միայն, նա է թագաւորում, նա է որ գերում է, իր մէջ կորցնում տեսնողի միտքն ու ուշքը. աշխարհային բաներից, հոգսերից, քաղցրութիւններից հեռու է մարդը: Զուր է կարծում իմ ընկերը թէ նրա թառի լարերը շունչ և կենդանութիւն կը ստանան այս ջրի ալմուկի մօտ,

բնութիւնն ինքն է աչքի և լսելիքի համար ամեն քաղցրութիւն պատրաստել. հարկաւոր է միայն յօժարութիւն ունենալ, գնալ, Թանաբերի փոքրիկ պատշգամբի վրայ կանգնել:

Բայց մեղ պէս քիչ չը կանգնել: Այդ տեղը տեսած—չը տեսած, տեսածի համն ու հոտն առած—չառած, ներս մտանք Թանաբերն և մեր եկած մշջանցքով կրկին բակը գնացինք: Այդտեղ, այդ գռնեըի առջևը, կանգնած է Տաթևի հոչակաւոր քարէ գաւազանը, ինչպէս անուանում է ժողովուրդը, կամ Ս. Երրորդութեան սիւնը, ինչպէս կոչվում է մեր մատենագրութեան մէջ: Ես տեսել եմ այդ սիւնի պատկերը, կարծեմ, «Աղբիւրի» և «Արարատի» մէջ և այժմ կասեմ որ ով ինձ պէս ուզում է հասկացողութիւն կազմել սիւնի մասին և այդ մտքով պատկերին է նայում, նա շատ սխալուած կը լինի. պատկերները շատ անշնորհք են և նսեմացնում են Հնադարեան յիշատակարանը: Իմ տեսածը բոլորովին ուրիշ բան էր. մաքուր տաշած և կոկած քարերից կազմած մի բարձր կոթող, որի լայն հիմքը քանի բարձր է գնում, այնքան նեղ և նեղ է դառնում, մինչև որ վերջանում է մի գեղեցիկ քարեայ խաչով, որ գլուած է մի կամարաձև բարակ շրջանակի մէջ: Նա կլորակ է, ունի մի քանի կարնիզներ, որոնք օղերի պէս նստած են նրա վրայ: Բայց

այդ սիւնը հռչակաւոր է նրանով, որ շարժվում է։ Եթէ նեղքևից շարժես, չի շարժուիլ պէտք է երկ-յարկանի տան կտուրը հնչես և շարժես սիւնի գլուխը, բարակ տեղը։ Որովհետև այդ տան վերին յարկը միանգամայն աւերակ է դարձել, այդ պատճառով մենք ինքներս չենք բարձրանում, այլ ուղարկում ենք վանքի ծառաներից մէկին։ Նա երկու ձեռքով սկսից շարժել. առաջին անգամը սիւնը շատ թեթև, աննկատելի կերպով է տատանվում, բայց հետզհետէ, երբ ծառան շարունակ շարժում է, սկսում է ճօճալ, երերուիլ. նրա մարմնի վրայ տեղաւորուած բոլոր քարերը շարժողութեան մէջ են ընկնում, հանելով թեթև ձայն. մինչև անգամ քառակուսի քարը, որ խրուած է գեանի մէջ և որի վրայ էլ կանգնած է սիւնը, նա էլ շարժվում է, այդ պարզ է նկատվում։

Շատ հետաքրքրութիւններ կան սիւնի այդ տատանակ երերման մասին. բայց դրանցից ոչ մէկն էլ համոզիչ չէ, ուստի և ոչ մէկի մասին չարժէ խօսել. գաղանիքը կը բացուի այն ժամանակ, երբ կիմացուի թէ սիւնն ինչպէս է հաստատուած գեանի մէջ. դրա համար պէտք է սպասել մինչև որ կը քանդուի. իսկ քանդուելուն շատ երկար պէտք է սպասել։ Սահմանուում Օրբէլեանը վկայում է որ սիւնը վանքի հետ է շինուած։ «Կանգնէ *), ասում է, և

*) Յովհաննէս եպիսկոպոսը, վանքի շինողը։

մերձ եկեղեցոյն հանդէպ դրանն հարաւու՝ սիւն մի զարմանալի յանուն սրբոյ երրորդութեանն ի մանր քարանց պատուաճեալ ի չափ 30 կանգնոյ»։ Հետեւաբար հազար տարիների ծանրութիւն կայ այդ զարմանալի, իսկ որ զարմանալի սիւնի վրայ, բայց ոչինչ, նայում ես ասում թէ մի հարիւր տարուայ շինութիւն է, այնպէս ողջ ու առողջ է մնացել ժողովրդի մէջ շատ աւանդութիւններ կան երրորդութեան սիւնի մասին։ Ասում են թէ Լանկթամուրը կամեցել է Տաթևը հիմնայատակ կործանել, մանաւանդ այս սիւնը արմատախիլ անել, ոչնչացնել. նրա հրամանով լծում են տասն զուխտ գոմէշ, գութանի փոկով կապում են սիւնը նրանց լծերից։ Գոմէշները ձգում են, ձգում, գութանի փոկը կտրըվում է և նրանք թափվում են ձորը, կոտորվում. այն ժամանակ ահռելի կաղ հրեշը հասկանում է, որ իր աւերիչ կամքի առաջ այս սիւնն է միայն, որ անսասան է մնում Աստուծու հրամանով և թողում է Տաթևը, գնում ուրիշ տեղեր՝ ապրի վրայ մսագործ դառնում։ Պէտք է ասել, որ Լանկթամուրի ալշաւանքը այստեղի ժողովրդի մէջ ուրիշ աւանդութիւններ էլ է թողել. Պատմում են որ նա փայտ է դիզել տուել որ վանքն այրէ. կրակը վառուել է և զանգակատան տակ և այն օրից Տաթևի զանգակները լաւ ձայն չեն հանում։

Այդ զանգակատունը մի փոքրիկ շինութիւն է, որ կպած է վանքին հարաւային դրան վրայ. ունի մի փոքրիկ գմբէթ, որ հաստատուած է բարակ սիւների վրայ: Զանգակատունը իսկ որ սեւացած է, կրում է մի ինչ որ բարբարոսական հրդէհի հետքերը: Նրա մօտ վանքի սրահն է, որ երկար է և ունի մի քանի կամարաւոր մուտքեր: Սրահով քիչ դէպի արեւելք ենք գնում, տեսնում ենք կամարակապ առաստաղի տակ մի բաւական գեղեցիկ և փոքրիկ մատուռ, սրբատաշ քարերից շինած և զանազան քանդակներով ու խաչերով զարդարած. նրա փոքրիկ կտուրի վրայ կան երեք մանր և գեղեցիկ գմբէթներ: Այդ մատուռը շինուած է Գրիգոր Տաթեւացու գերեզմանի վրայ: Մուտքը ներսից է, վանքի միջից: Տաթեւացին թաղուած է վանքի հարաւային դրան առաջ, որ այժմ ծածկուած է այդ մատուռով, որի դէպի դուրսը զարձրած պատերի վրայ երեւում են շինողների արձանագրութիւնները: Մատուռը նոր շինութիւն է, գուցէ մի երկու կամ երեք հարիւր տարուայ գործ:

Մատուռի արեւելեան կողմում մի դուռն է բացուում մեր առջեւ; մի հին, նշանաւոր դուռն. նա բազկացած է ընկուզենու մի հատ չափազանց հատ, լայն և շատ ծանր տախտակից, որ երկու կողմից զարդարուած է հիանալի քանդակագործ նկարնե-

րով: Այդ նշանաւոր հնութիւնը մարդու զարմանքն է յարուցանում: Ո՛վ գիտէ, երբ է շինուել և որքան ժամանակ է անցկացրել, իր ամբոյ կազմուածքի շնորհիւ ամբողջ և անվնաս մնացել: Իսկ այդ կանոնաւոր և նուրբ քանդակնե՞րը... Մենք ասում ենք թէ ճարտարապետութիւնը մի ժամանակ հայերի մէջ շատ է եղել զարգացած. և այդպէս ասում ենք տեսնելով հին քարէ շինութիւնները: Իսկ այս դրան տախտակը չե՞ հաստատում, որ հին ատենները էլ շատ ծաղկած մի արհեստ է եղել. այժմ ո՛վ կարող է այսպիսի դուռն շինել:

Այդ դուռը մոտ ենում է մեզ մի փոքրիկ, բայց շատ բարձր եկեղեցի: Սա թէև վանքի կողքին է կպած, բայց առանձին շինութիւն է և նուիրուած է ս. Գրիգոր Լուսաւորչի անուան, որովհետև, ինչպէս պատմում է Օրբէլեանը, սրա մի պատի մէջ պահվում է Լուսաւորչի գանդի մի մասը: Անշուշտ եկեղեցի է. բեմը, յատակը, պատերը մերկ են, բոլորովին, սեւացած, աղքատացած. երեւում է, որ այս եկեղեցին մոռացուած, աչքից ընկած է եղել: Զեն ամաչել վանքի վանահայրերը, գոնէ ամաչելին Լուսաւորչի մասունքից: Արժ. փոխանորդ հայրը մեզ պատմում է, որ ինքն է այստեղ գալուց յետոյ մաքրել տուել, աղբն ու կեղտոտութիւնը դուրս թափել տուել: Եկեղեցին ոչ սիւն ունի, ոչ գմբէթ, որից

սովորաբար լցյալ են սաանուամ մեր հին վանքերը. այս պատճառով ներսը շատ մուԹն է, իսկ բեմի վերևից բացած մի փոքրիկ լուսամուտը շատ քիչ լոյս է տալիս։

Ս. Լուսաւորչի եկեղեցին վանքից էլ հին է։ Օրբէլեանը (Գլ. ԼԸ) հետևեալն է պատմում նրա մասին։

Հին ժամանակները այստեղ, այս ձորի բաշխին, անտաշ քարերից շինած մի եկեղեցի կար, որ ծնացած էր ս. Ներսէսի և Սահակի ժամանակից։ Սիւնեաց եպիսկոպոսները այս տեղը յարմար համարելով առաջնորդական աթոռի համար, որովհետև անմատչելի և ապահով տեղ է, խնդրում են Սիւնեաց իշխաններից որ իրանց յանձնուի այդ եկեղեցին։ Եւ գալիս են այս կողմը, բերելով իրանց հետ սրբերի և մարտիրոսների բազմաԹիւ մասունքները։ Օրբէլեանը չի կարողանում ասել ԹԷ ով էր այստեղ եկած առաջին եպիսկոպոսը, որովհետև նրա ժամանակները այդ մասին տեղեկուԹիւններ չը կային, բայց հաստատ գիտէ, որ շատ ժամանակներից ի վեր բնակուած էին այստեղ։ Քրիստոսի 839 ԹուականինՍիւնեաց Դաւիթ եպիսկոպոսը 10000 դրամով առնում է Սիւնեաց Փիլիպպէ իշխանից և եկեղեցուն սեփականացնում Արծիւ և Բերդկաներից գիւղերը։ Իսկ 844 Թուականին, ինչպես վերև յիշեցի, նոյն

Փիլիպպէ իշխանը նուիրում է վանքին իր սեփական Տաթև գիւղը, որ ժառանգուԹիւն էր ստացել իր հօրից, Վասակ իշխանից։ Ձորս ասրուց յետոյ, այսինքն 848 Թուին, այդ Փիլիպպէ իշխանը շինում է մի գեղեցիկ եկեղեցի հին եկեղեցու մօտ, հետաքրքրական կողմից, Ս. Լուսաւորչի անունով։ Ինքը, իշխանը, մեռնելուց յետոյ Թաղվում է այդ եկեղեցու գաւեթի մօտ։— Օրբէլեանի այս խօսքերից շատ պարզ երևում է, որ ս. Ներսէսի և ս. Սահակի օրերից ծնացած եկեղեցին շինուած է եղել այն իսկ տեղը, ուր այժմ Տաթևի վանքն է կանգնած։ Ուրեմն, Տաթևը սրբազան է չորրորդ դարուց սկսած մինչև մեր օրերը։ Իսկ ս. Լուսաւորչի եկեղեցին, որի մէջ մենք կանգնած ենք, ինչպես տեսնում էք, շինուած է մեզանից ճիշդ 1040 տարի առաջ։ ՇինուԹիւնը ամբողջապէս նոյնը չէ, ինչպես շինել է Փիլիպպէ իշխանը, երկու անգամ կործանուել է, վերանորոգուել և վերջին նորոգողը եղել է ինքը, պատմիչ Սահմանուս մեծատոհմ Օրբէլեանը, Տարսայիճ իշխանի որդին։ Ինչպէս և լինի, ս. Լուսաւորչի եկեղեցու գոնէ տեղը, յատակագիծը, հիմքը 1040 տարուայ մի պատկառելի հնուԹիւն է։ Տեսնողը, նայողը զգուարուԹեամբ է հաւատում այդ ահագին Թուականին։ ՀնուԹեան անունն այնպէս նախապաշարում է մարդուն, որ տաբինե-

քի պէտ երկար շրջանը աչքիդ առաջ բռնած, կամենում ես տեսնել մի հոգի, որ բոլորովին նման չը պիտի լինի այժմեան հոգին, մի քար, որ մեր ժամանակի քարերից բոլորովին տարբեր կազմուածք պիտի ունենայ։

Թողում ենք ս. Լուսաւորչի եկեղեցին, նոյն սրահով յետ ենք գնում, անցնում պանդակաան տակով, մտնում ենք վանքի գաւիթը, ուր դրած կայ մի փոքրիկ բեմ Նախավկայի անունով։ Մեզ ներս է թողնում նոյնպիսի հասա, ծանր և քանտակներով զարդարած դուռը։

Երկու քայլ ևս։

Ահա նա... ինքը, հռչակաւոր Տաթևը։ Գրկես ձեռքիս ճնում եմ կանգնած շէմքի մօտ, սառած նայում եմ բարձր, նայում եմ չորս պատերին։ Ինձ իր գերին է առել մի հիանալի, լայնարձակ և մեծ, մե՜ծ անուան տէր սրբավայր, այն իսկ տաճարը, որի մէջ մի ժամանակ Սիւնեաց աշխարհի մեծանուն և քաջ իշխաններն էին հաւաքվում, որի մէջ մի ժամանակ գումարուած էին մեր հոգևորականութեան ծաղիկները, ազօթում էին, մտածում, կառավարում։ Կենդանի մարդը ոչնչութիւն է այսպիսի անմահ յիշատակարանների մօտ. ինչպէս մոռանում է իրան, ուրանում իր մեծահշիւ «ես»-ը և խոնարհվում է, ցածանում։ Նա, այդ մարդը, ա-

մեն րոպէ մտհուան վտանգի առաջ իր գեղեցիկ կեանքի կարճութեան մասին մտածել սովորած, յանկարծ փշրվում է, փոխվում, ուրիշ բան դառնում, երբ նայում է, իր սեպհական աչքով տեսնում է անշունչ ու անհոգի քարը, որ նշանակութիւն է ստացել որ բարձրացել է մարդուց, կանգնել է նրա ցոյց տուած տեղը, միացել հզրայրացել է ցեխի ու կրի հետ, որ հազար տարիներ ճնշելով վկայէ թէ մարդն այն չէ միայն, ինչպէս նա ինքն է կարծում, այլ մի ստացած, որ իր կարճ կեանքի ընթացքում կարողացել է մի բան կատարել, մի միտք, մի սուրբ աւանդութիւն ստեղծել և կտակել իր հեռաւոր սերունդին, թողել է իր շունչը, իր կեանքի յիշատակը որպէս մի կարող և անընկճելի ուղեցոյց, որին պիտի ապաւինէ դժուարութիւնների և ցաւերի մէջ պաշարուած սերունդը։ Ինչ կը լինէր, եթէ կենդանի մարդու առաջ յանկարծ բացուէր գերեզմանական կեանքը և ստուերների աշխարհը երևակայական բաների կարգից դուրս գար, խօսէր մի քանի հարիւր սերունդների բերանով. ինչ կը լինէր, կենդանի մարդը վերջապէս չէր հասկանալ իրան միշտ տանջող, բայց միշտ անհասանելի, անլուծանելի խորհուրդները, չէր իմանալ վերջապէս թէ ինչ է ինքը, ինչ է իր հոգին, իր միտքը, իր էութեան բոլոր անհասկա-

նալէ կողմերը։—Ես կարծում էի թէ այս սրբազան յարկը, որ ինն հարիւր իննսուն և երեք տարի է լուսացրել և մկնացրել, կարող է մի այդպիսի պաշտօն կատարել, կարող է հասկացնել շատ անհասկանալի բան, որովհետև նա էլ մի մեծ գերեզմանի դերն է կատարել, որի տակով անցել են բազմաթիւ սերունդներ, բերելով իրանց հետ բազմատեսակ պատկերներ, երևոյթներ, պատմութիւններ, որոնց ոչ մի գրքի մէջ գովանգակել չէ կարելի։—Տեսէ՛ք Օրբէլեանը ինչ անուններ է տալիս այս վանքին. «Մեծ հայրապետանոց», «աստուածաբնակ, լուսաձեմ եկեղեցի», «սուրբ մայրաքաղաք» «վեհափառ ակռանցն Սիւնեաց և ցեղին Սիսակայ», «ազգիւր շնորհաբաշխութեան տանն Սիսական՝ Տաթեւ». այդքան մեծութեան, փառքի տաճարն է որ այնպէս ճնշում է ինձ, որ այնքան բազմաթիւ մտքեր և վիշտեր է կենդանացնում մեր ազգի և մեր պատմութեան մասին։ Ամեն մի հնութիւն է պատկառելի, այդ ճիշտ է. բայց կան հնութիւններ, որոնք մի ամբողջ ազգի թանկագին սրբութիւններն են, որոնք այդ ազգի մարմնի և արեան մէջ են ձուլել իրանց անունը ու փառքը։ Ինչպէս կարող է միտքը անշարժ, անգործ ձեալ այդ տեսակ հնութեան կամարների տակ։ «Երանի՛ քեզ, գնում էս Տաթեւը տեսնելու», ասում էին ինձ Շուշում բարեկամներս ու ծանօթներս։ Այդպիսի մի ցանկալի տեղ է Տաթեւը մեր կողմերի հայերի համար, այդպիսի մեծանուն հնութիւն է Տաթեւը...

Նա մի լայնարձակ շինութիւն է. ես առաջին անգամն էի տեսնում այդքան մեծ վանք։ Սրկոս հատ հաստ և գեղեցիկ սիւն կանգնած են հիւսիսային և հարաւային պատերի մօտ և, ինչպէս ասում է Օրբէլեանը, «հաստահեղոյս խարսխօք, և բարձրաբերձ գեղեցկագիր թաղակապօք պարսպաբաձեալ ունին զահագին թանձրութիւն երկնաձեղունն քարակարկառ յարկին»։ Յարկի վրայ բարձրացած է մեծ գմբէթը, որի լուսամուտներից առատօրէն թափվում է լոյսը և խորհրդաւոր, գեղեցիկ տեսք է տալիս վանքի ներսին։ Թագաւորած է խորին լռութիւն, որ կաշկանդում է մարդուն. մանողը խօսում է ցած ձայնով. չը գիտեմ ինչն էր ինձ հարկադրում ոտներիս մատերի ծայրի վրայ մանդալ—Ամեն ինչ—պատկեր, սիւն, կամար, լուռ է, կարծես սպասողական դիրքի մէջ։ Ինչի՞ են սպասում այդպէս։ Ես հասկանում եմ.—աւերման, վերջնական քայքայման են սպասում։ Կարծես վերջը մօտ է, կարծես այդ լռութիւնը պատրաստվում է ցաւալի, ախուր թնդիւնի փոխուելի, որ պիտի հանէ կամարից ընկած առաջին քարը։—Այդ կամարները, թաղերը, պատերը սևացած են, անշուք, ան-

զարդ, միանգամայն և մեայլ կերպարանք ունին։ Բայց Թաւրւաճ ծեփի տեղ տեղ ճեացած կտորներուն վրայ նկատելի են նկարած պատկերներուն մասերը։ Մի ժամանակ վանքի ներսի կողմը զարդարուած է եղել բազմաթիւ գեղանկար պատկերներով. և որքան դեղեցիկ է եղած այն ժամանակ, ես երևակայում եմ։ Օրբէլեանը պատմում է, որ այդպէս զարդարողը եղել է նոյն Յակոբ եպիսկոպոսը, որ Զաքէոյի Ջուրը բերել է, Յաքուտ անունով տեղը այգիներ շինել։ Նա ասում է. «Այս Յակոբ ետ ածել նկարիչս և զաւառաիս, որ է պատկերագործ, ի հեռաւոր աշխարհէ Ֆռանդ ազգաւ, և զլուսաճեմ յարկս աստուածաբնակ տաճարիս բազում և անհուն ծախիւք ետ նկարել զբովանդակն ի վերուստ մինչև ի վայր, և զիրկչական պատկերն յոյժ ահաւոր տեսլեամբ ետ նկարել Հանդիպակիւռ աստուածագործ սեղանոյն ի վերոյ՝ զբոլոր երկինն աւագ կամարին. և ի ներքոյ նորա շուրջ զսեղանովքն՝ զմարգարէական և զառաքելական և զհայրապետական կենդանագրութիւնս յոյժ խորհրդաբար, նմանապէս և զբոլորն համակ զարդարեալ այնքան, զի տեսողաց տեսարանքն շլանային ի նայիլն. և երբէք ոչ թուէր ի դեղոյ և յկրանգոյ յօրինեալ, այլ համայն կենդանիք, յորոց զարհուրելք խուսափէին տեսողքն։ Նե արար զայս ի Թուականին Հա-

յոց 379» (Գլ. ԽԲ.)։ Այսպիսի զարդարանքի ողորմելի կտորներն ու փշրանքներն են այժմ ճեացել։

Դասերը ժողովրդի տեղից բաժանվում են քարէ ահագին սրբատաշ սալերով, որոնք կանգնած են մի շարքում, թողելով մէջ տեղ մի փոքրիկ անցք։ Այդ անցքի աջ և ձախ կողմին, յատակի սև սալ քարերի մէջ երևում են երկու մարմարեայ քառանկիւնի սալեր. ասում են որ դրանք յայտնի եպիսկոպոսների գերեզմաններ են, գուցէ և գաղտնարաններ։ Գաղտնարաններ երևում են և պատերի մէջ, վերևում, կամարի տակ։ Վանքն ունի մի մեծ և գեղեցիկ բեմ, որի երևելի զարդն է հինաւուրց վարագոյրը։ Դա կարած է սպիտակ դիպակի ոսկեթել կտորից և մինչև այսօր շատ լաւ է ճեացել։ Աւանդութիւնն ասում է, որ վարագոյրը վանքին է նուիրել Պարսից Շահաբաս Թագաւորի (որ Շահաբաս) քոյրը։ Եթէ ճշմարիտ է, պէտք է ասեմ որ նուէրը միանգամայն արժանի է և պատուաբեր արքայական գերդաստանին։ Ամենից գնահատելին դիպակի բարակութիւնն է, նկարների նրբութիւնը և կտորի լայնութիւնը. ահագին վարագոյրը երեք կտորից է բաղկացած։ Ափսոս, որ այդ թանկագին բանը որ և է թանգարանում չի պահվում, այլ այստեղ անփոփոխ կախուած լինելով բեմի վրայ, հետզհետէ փչանում է. ես մի քանի փոքր կտրուկ

տաններ նկատեցի, որոնք սարդի պէս կպած էին պեղեցիկ մարմնին և կարծես սարդի պէս էլ ծծում էին բոլոր գեղեցկութիւնը։ Այդպիսի ախտաւոր տներից էր Տաթևացոց գերեզմանի վրայ շինած փոքրիկ մատուռը, որի ամբողջ մարմինը, ինչպէս վերև յիշեցի, սրահումն է գտնվում։ Նեղ տեղ է, երկու մարդ հազիւ կարող են միմեանց մօտ կանգնել. և մութ է, ոչ մի տեղից լոյս չի գալիս։ Գերեզմանը շատ ուխտաւորներ ունի, ամեն ժամանակ ճրագներ են վառվում նրա վրայ։ Պատից կպցրած է մի պատկեր, որ ներկայացնում է մի քանի հայ վարդապետներ, որոնցից մէկը ինքը, Տաթևացին պիտի լինի։ Այդտեղ դրած է մի փոքրիկ անգուկ, որի մէջ պահվում են այս յայտնի հոգևորականի եպիսկոպոսական զգեստն ու հողաթափերը, նոյնպէս և մի ձեռագիր փոքրիկ աւետարան, որ նրա ձեռքովն է գրուած։ Զգեստը մեզ ցոյց չը տուեցին, թէև խընդրեցինք *), բայց աւետարանը տեսանք։ Մաքուր և ընտիր մազաղաթի վրայ գրած մի շատ գեղեցիկ աւետարան է, մանրատառ, իբրաքանչիւր երկու սիւնակի բաժանած, ունի շքեղ վետալական կազմ, որ այս կողմերի գործ չէ։ Գրքի մէջ կան շատ նկարներ և պատկերներ, իսկ վերջում մի երկար յիշատակարան ոտանաւորի ձևով, որը կարդալիս մարդ իսկոյն յիշում է Տաթևացու ուժեղ ոճը։ Գրքոյկը պահվում է մի ձեռագործ պահարանի մէջ,

*) Այս մասին ես իմ զանգատը յայտնել եմ «Մշակ» լրագրում, Առհասարակ, Տաթևի հին անօթներից, զգեստներից և գարդերից ոչինչ չը տեսանք։ Բայց մի ուրիշ պաշտօնեային ցոյց են տուել և նա ինձ ասում էր թէ բաւական լաւ բաներ են. մանաւանդ գովում էր մի եպիսկոպոսական գաւազան, որի գանկապին ակները հանուած են, յափշտակուած։ Օտարազգի այցելուին ցոյց էին տուել, բայց մեզ պատասխանում էին «ոչինչ, ոչինչ»... Գուցէ մեր շատ հասարակ մահկանացու լինելն էր պատճառը...

որ տեղական բարբառով «ղաւղուխ» է ասվում։ Գա ունի մեր այժմեան ծրարների նմանութիւնը, պատրաստած է մետաքսեայ ծիրանագոյն կտորից և զարդարած ասեղնագործ նկարներով։ Աւանդութիւնն այժմ էլ ասում է թէ այդ ծրարը շինել է Տաթևացու քոյրը, ինչպէս յիշում է և Սարգիս եպիսկոպոս Ջալալեանը իր Ճանապարհորդութեան մէջ։ Բայց կարելի է չը հաւատալ այդ աւանդութեանը։ Տաթևացին ապրել է մեզանից 500 տարի առաջ, իսկ այդքան ժամանակ այդ շորի կտորը չէր կարող այդպէս լաւ մնաչ տեսնողն ասում է թէ այդ ձեռագործը երէկ չէ, միւս օրն է գուցա եկել մի օրիորդի ձեռքից։ Բայց եթէ ընդունենք էլ որ «ղաւղուխը» մի կամ երկու դար մեզանից առաջ է գործած Սիւնեաց աշխարհում, լաւ հասկացողութիւն կը կազմենք սիւնեցի կնոջ «ձեռքաջըի» մասին, որ այնքան գեղեցիկ է և նուրբ։ Ո՞ւր է կորել այդ կատարելագործուած արհեստը և ինչո՞ւ սիւնեցի կինը կոպիտ և հասա գործուածքներ է միայն կարողանում պատրաստել—այդ մի հանելուկ է, մէկին այն հանելուկներից, որոնք մեր պատմական կեանքի ամենամթին կողմերից են ծնունդ առել։

Ս. Գրիգոր Տաթևացու գերեզմանը համբուրելով, մենք էլ մի մեծ մոմ վառեցինք։ Փոյթ չէ, որ

Տաթևացին այժմ ունի թշնամիներ. փոյթ չէ, որ Մխիթարեան կաթոլիկ պատուիրակը վարդապետները ատելութեամբ են յիշում նրա անունը. Տաթևացին մեր եկեղեցու յարգելի պաշտօնեաներից մէկն է, նախանձախնդիր նրա ժողովրդական ոգու ազատութեան և անկախութեան։ Եւ մեր եկեղեցին չի մոռացել նրան, յիշում է նրա անունը հայրապետանիւ շարքում։ Բաւական չէ, որ նա, լինելով Ցովհան Որոտնեցու ընդունակ աշակերտը, բազմաթիւ աշակերտներ է պահել և լուսաւորել, բաւական չէ որ կլիմայական մասենագրութիւնը հարստացրել է իր մեկնութիւններով. այս ամենը բաւական չէ։ Տաթևացու մեծ ծառայութիւնը այն է, որ հռանդով մրցել է կաթոլիկ ունիթորների հետ և միանգամայն չի թողացել որ պապականութիւնը մտա խառնէ մեր եկեղեցու գործերի մէջ։ Նրա նպատակն է եղել եկեղեցին պահել իր հնաւանդ դրութեան մէջ. և երբ մի անգամ իր աշակերտների հետ վասպուրականը գնացել տեսնելով Աղթամարայ հակաթոռ կաթոլիկոսի արարմունքը, որ ժողովրդի մէջ խռովութիւն էր ձգում (այժմ այդպէս չէ), չի դիմանում և գահընկէց է անում խռովարարին, քարոզում է ժողովրդին որ այդպիսի մանուածոր աթոռներ չը ճանաչեն, էջմիածնին հպատակուեն։ Այդպիսի գործերի պատճա-

ռով են Մխիթարեան հայրերը թշնամութեամբ յիշում Տաթեւացու անունը: Կարդացէք Զամչեանի պատմութեան երկրորդ հատորը, տեսէք թէ ինչպէս 18 դարու մարդը մասը դցած մեր պատմութեան մէջ, խառնշտորում է, ուզում է հաւատացնել որ Գրիգոր Լուսաւորիչ, Նարեկացի, Յովհան Օձնեցի, մի խօսքով մեր բոլոր յայտնի հայրապետները պապական են եղել, իսկ Գրիգոր Տաթեւացու նման «Թանձրամիտ» մարդիկ են ստեղծել մեր այժմեան եկեղեցական կարգերը: Համարեա միևնոյն մաքերն է յայտնում և 19 դարու երկրորդ կէսի հեղինակը, Ս. Զարբհանալեանը: Այսպէս է եղել հայի ճակատագիրը: Հայը դատապարտել է, պատժել է մի հային, որ քաջութիւն է ունեցել իր եկեղեցու անկախութիւնը պաշտպանելը: Բայց, կրկնում եմ, մեզ ինչ փոյթ: Տաթեւացու յարգն ու պատիւը ճանաչողները շատ կան. ազգական ժողովուրդը ամեն տարի խմբերով ուխտ է գալիս. իսկ երբ երաշտութիւն է լինում, գալիս են, Տաթեւացու զգեստը դուրս հանում և այն ժամանակ—ամենքն են հաւատացնում—որտեղից որ է, անձրեւ, առատ անձրեւ է գալիս:

Տաթեւի վանքի վրայ չը տեսանք նշանաւոր արձանագրութիւններ: Այս հանգամանքը զարմանք չը պիտի պատճառէ: Ուրեմն մի առած ասում է

թէ «ամեն վանք իր ծէսն ունի»: Եթէ նորից վանքեր պատած են արձանագրութիւններով, որոնց մէջ յիշվում է թէ ով է ինչ շինել, ով է ինչ ընծայել, Տաթեւը այդ տեղեկութիւնները իր վրայ չի վերցրել, մի փաստ, որ հաստատում է, թէ որպէս փարթամ դրութեան մէջ է նա պահել և ինչպէս են պահպանել այդ պատերը, թողը չը տալով ամեն մէկին արձանագրել, փորել ինչ որ ուզում է: Բայց Տաթեւն իրան ընծայ տուողներին չի մոռացել, ամեն մի նուէր թղթի վրայ է արձանագրուել: Այս միաքը մեզ տալիս է Օրբէլեանը, որ իր պատմութեան յառաջաբանի մէջ ասում է թէ տեղեկութիւնների մեծ մասը քաղել է հին նամակներից, կալուածագրերից և արձանագրութիւններից, որոնք պահվում էին «յամուրս քարանձաւին, որ ի սուրբ ուխտս հայրապետանոցիս Տաթեւ»: Նամակների, դաշնաթղթերի և կալուածագրերի մի բազմութիւն առաջ է բերում Օրբէլեանը, իսկ ճնաւցած շատերը, ինչպէս ինքն է խոստովանում, զանց է անում ընթերցողին չը ձանձրացնելու համար: Բայց Օրբէլեանի պատմութիւնից Տաթեւն ունի մի մեծ յիշատակարան, որի մէջ արձանագրուել են ոչ միայն պաշտօնական թղթեր, այլ և անցքեր: Այդ յիշատակարանն է Տաթեւի յայտնի «Քէօթուկը» (կոճղ), որի սկիզբն է, ինչպէս լսել եմ, Օրբէլեանի

պատմութիւնը *), իսկ յետոյ գլուած է պատմութեան կեսատ—պատ շարունակութիւնը։ Իրաւ, մի բարեկարգ վանքից, մի պարտաճանաչ միաբանութիւնից միայն կարելի էր սպասել այսպիսի օգտակար և համակրելի գործ։ Եւ եթէ ամէն ժամանակ հասկացող մարդիկ լինէին միաբանութեան գլուխ կանգնած, «Քեօթուկը» այժմ մեզ համար մի անգին յիշատակարան կը լինէր։ Սակայն ինձ չէր վիճակուած տեսնել այդ յիշատակարանը, որովհետև նա վանքումը չէր, այլ գանվում էր տեղային վարժապետի տանը, Տաթև գիւղում, ուր ձեռս է

*) Օրբէլեանի պատմութիւնը, որքան ինձ յայտնի է, երկու հրատարակութիւն է ունեցել։ Առաջին անգամ հրատարակել է յայտնի Կարապետ վարդապետ Շահնազարեանցը Փարիզում, 1859 թուին, յետոյ պ. Էմինը 1861 թուին Մոսկվայում։ Կարապետ վարդապետը կցել է իր հրատարակութեան մի բաւական հետաքրքիր յառաջաբան «Սիւնիք» վերնագրով եւ բազմաթիւ ծանօթութիւններով բացատրել է Օրբէլեանի պատմութիւնը։ Բայց «Քեօթուկ»-ի մասին նա ոչինչ չի յիշում, թէեւ գրքի վերջում գրած «Ցաւելուածը», որ Տաթեւի մի քանի առաջնորդների համառօտ կենսագրութիւնն է, իմ կարծիքով, այդ «Քեօթուկ»-ից պիտի հանած լինի։ Սարգիս եպիսկ. Ջալալեանը իր ճանապարհորդութեան մէջ գրել է բաւական մեծ կտորներ մի ինչ որ հին յիշատակարանից, որ դարձեալ նոյն «Քեօթուկ»-ը պիտի լինի։ Զարմանալի է որ Կարապետ վարդապետը, չորս տարի Տաթեւի վանքը կառավարելով, իր կողմից մանրամասն տեղեկութիւններ չի տալիս թէ այդ գրքի եւ թէ առհասարակ վանքի մասին։

երկու տարուց աւել՝ չը գիտեմ ինչ նպատակով։ Ցաւումս եմ որ չը կարողացայ այդ գիրքը թէկուզ թեև տեսնելու ցանկութիւն յայտնուեցաւ, բայց ծով էր մեզ լողը։ Այդ տեսակ գրքի տեղը վանքն է և միայն վանքը, ամէն մարդ, լինի նա թէկուզ վարժապետ, կարող է վանքումը տեսնել և օգտուել։ Ինչ և իցէ...

Ես վերևումը ասացի որ Սիւնեաց եպիսկոպոսները Տաթևումը աթոռ հաստատելով, հաւաքել բերել էին բազմաթիւ սրբութիւններ և մասունքներ։ Դրանց մէջ ամենից հռչակաւորն է եղել ոսկի խաչը, որի մէջ դրած է եղել Քրիստոսի սրբունով նեղկած խաչափայտի մի մասը։ Սիւնեաց իշխանները այդ հրաշագործ խաչին նուիրել են գիւղեր, կալուածներ։ Բայց հին եկեղեցին, ասում է Օրբէլեանը, որ ս. Ներսէսի և Սահակի օրերին էր ձնացել, շատ փոքր էր և անյարմար իբրև Սիւնեաց մեծ. վիճակի հայրապետանոց։ Ուստի Յովհաննէս եպիսկոպոսը իշխանների և գլխաւորապէս Փիլիպպէի որդի Սչոտ իշխանի և նրա ամուսին Շուշան տիկնոջ օգնութեամբ Քրիստոսի 895 թուին սկսում է շինել Տաթևի այժմեան վանքը, որ և վերջացնում է 11 տարուց յետոյ։ Սա ինքն է շինել և ս. Երրորդութեան սիւնը, որի մասին արդէն խօսել եմ։ Վանքի օծման հանդիսին ներկայ են եղել Սմբատ

Բագրատունի Թագաւորը (Սմբատ Ա.) *) իր իշխանների հետ, Յովհաննէս կաթողիկոսը (պատմագիր, Դրասխանակերտեցի), Վասպուրականի առաջին Թագաւոր Գագիկ Արծրունին (Գագիկ բռնաւոր), Աղուանից Սիմէոն կաթողիկոսը բազմաթիւ եպիսկոպոսների հետ։ Այդ բարձրաստիճան հիւրերի մէջ Աշոտ իշխանը Սիւնեաց միւս իշխանների հետ վանքին մի լայնատարած վիճակ է նուիրում։ Եւ այնուհետեւ Տաթեւը սկսում է հարստանալ, փարթամանալ, մեծ անուն և հռչակ է հանում, թագաւորներն և իշխաններ թանկագին նուէրներով ուխտ են գալիս։ Հէնց սկզբում, ինչպէս վկայում է Օրբէլեանը, Տաթեւի միաբանութիւնը 500 կրօնաւորներից էր բաղկացած։

Պէտք է այն էլ ասել, որ Տաթեւի այդքան մեծ հռչակը, հարստութիւնը կապ ունի Սիւնեաց աթոռի նշանակութեան հետ։ Սիւնեաց երկրի թէ մարմնաւոր և թէ հոգևոր իշխանութիւնները ամե-

*) Այդ հանդէսից 8 տարի յետոյ դժբախտ Սմբատ Թագաւորը զոհ գնաց Գագիկ Արծրունու եւ միւս նախարարների դաւաճանութեան շնորհիւ եւ Յուսուի ոստիկանի բարբարոսական հրամանով սոսկալի տանջանքներ կրելով սպանուեց Երնջակ ամրոցի դիմաց։ Մեր ազգի պատմութիւնը ընդհանրապէս արիւնով է գրուած. բայց այս սիրելի եւ ողբալի Թագաւորի պատմութիւնը չափազանց սրտամաշ է, ազէկտուր։

նահին ժամանակներից Հայաստանի առաջնակարգ և հռչակաւոր աթոռներից էին։ Օրբէլեանը մի ոճի Վահանի զրած գահնամակի մէջ գտել է որ Տրդատ Թագաւորի ժամանակ ճաշ էին նստում չորս հարիւր իշխաններ, և ամեն մէկի համար նշանակուած էր առանձին տեղ և բարձ։ Այդքան իշխանների մէջ գահակալուած էին ութ իշխաններ, որոնց թւում էր և Սիւնեաց իշխանը, որ եղել է երկրորդ հրամանատար արևելեան բոլոր կողմերի վրայ և ձեռքի տակ ունեցել է քսան և մէկ իշխան։ Իսկ մեր պիտանական պ. Էմինի հրատարակած գահնամակի (կամ գահ նեհման) մէջ (Исторія Арменіи Моисея Хоренскаго, եր. 359), որ կազմել է Սահակ Պարթևը, առաջին տեղը բռնում է «առաջին իշխանն և մաղխազն Սիւնեաց տէր»։ Այսպէս և հոգևոր իշխանները *)։ Գրիգոր Լուսաւորչի 36 եպիսկոպոսների մէջ երկրորդ գահը աջ կողմից պատկանում էր Սիւնեաց եպիսկոպոսին։ Այդ վկայում է Սարգիս կաթողիկոսը 1006 թուին հրատարակած շրջաբերական նամակի մէջ (Օրբէլ. Գլ. ԾԶ), ասե-

*) Կարապետ վարդ. Շահնազարեանցը իր ծանօթութիւնների մէջ աշխատում է ցոյց տալ, որ Օրբէլեանի այդ պատմութիւնը ճիշտ չէ։ Անշուշտ այդպէս չէր գրել նա եւ մեզ տեսնէր պ. Էմինի հրատարակած գահնամակը։ Ահռասարակ վարդապետը շատ անտեղի խոտութիւններ է պահում իր ծանօթութիւնների մէջ Օրբէլեանի վերաբերութեամբ։

լով թէ այդ ժամանակուայ Յովհաննէս միտրապօլիտը ներկայացուել է իրան 55 նամակ զանազան կաթողիկոսների ստորագրութեամբ, սկսած Գրիգոր Լուսաւորչից մինչև ս. Սահակը յունարէն գրով և Սահակից մինչև իր ժամանակը հայերէն գրով, որոնք հաստատում են Սիւնեաց աթոռի դահիրեցութիւնը։ Եւ Սիւնեաց եպիսկոպոսները մեծ ատիճան և փառք ունէին, միտրապօլիտ էին անուանվում, գոյծ էին ածում կաթողիկոսներին յատկացրած սիամոռներ։ Այդ առաջնորդներից մի քանիսի անուննները յիշեցինք, սակայն նրանց ջանքն ու եռանդը Տաթևը շէն, հրաշալի դրութեան մէջ պահելու համար։ Օրբէլեանը չափազանց գովում է մանաւանդ միւս Յովհաննէս եպիսկոպոսին (XI դար)։ Սրա ժամանակ, ասում է նա (Գլ. ԾԷ) Տաթևը զարդարուեցաւ զանազան զարդերով, մեծամեծ սպասներով և գեղեցիկ կարգերով, լցուեցաւ կրօնաւորների բազմութեամբ, անչափ փիլիսոփայներով, վարդապետներով, ճգնաւորներով, աննման երաժիշտներով և բազմաթիւ արհեստաւորներով։ Տաթևը մի մեծ մայրաքաղաքի պէս էր. երդիկի բազմութիւն կար շինուած և ապրում էր հազար մարդկանց մի ամբոխ, որի ազօթքը Աստուծու առաջն էր բարձրանում։ Այսպիսի հարստութեան հռչակը գրգռում է պարսիկներին, որոնք Աբաքան

անցնելով, յանկարծ թափվում են վանքի վրայ։ Միաբանութեան մի մասը կոտորվում է, միւս մասը ցրւում ձորերի մէջ. պարսիկները կողոպտում են վանքի անհուն կարասիները, այրում են, կործանում Լուսաւորչի եկեղեցին, բայց վանքի շինութեան վրաս հասցնել չեն համարձակվում։ Անցնում է այդ աւերիչ լաւան, միաբանութիւնը էլի հաւաքվում է, Յովհաննէս եպիսկոպոսը շինում է Լուսաւորչի եկեղեցին, էլի զարդարում, հարստացնում է վանքը։ XIII դարու վերջում միտրապօլիտ է նշանակվում ինքը, պատմիչ Ստեփաննոս Օրբէլեանը. նրա հայր Տարսայիճ իշխանը նուիրում է վանքին գիւղեր և մի մեծ այգի, որ մինչև օրս կայ և վանքինն է, գանվում է Խոտ գիւղի մօտ։ Մի կարճ ժամանակ մետրապօլտութիւնը Օրբէլեանների իշխանական տան սեփականութիւնն է դառնում։ Այսպէս, Ստեփաննոսից յետոյ միտրապօլիտ ենք տեսնում Յովհաննէս Օրբէլեանին, որ միևնոյն ժամանակ Սիւնեաց մարզպետ իշխանն է, կառավարում է երկիրը և, ինչպէս վկայում են պատմութիւնները, մեծ նշանակութիւն և դիրք է ստանում բոլոր կողմերում։

Այս ամենն է պատճառը, որ Տաթևը բացի անհուն շարժական կայքերից ունէր և շատ անշարժ կալուածներ։ Օրբէլեանի յիշած գիւղերից

ներկից երևում է, որ Տաթևը դանազան ժամանակ նաեւէր է ստացել մինչև 47 գիւղեր և կալուածներ *)։ Եւ ոչ միայն գիւղեր։ Բազայ վազամեռիկ թագաւորութեան ներկայացուցիչներից մէկը, Վասակ թագաւորը հաստատել է Տաթեւի վրայ Վայոց

*) Աւելորդ չեմ համարում դնել այստեղ գիւղերի եւ կալուածների անունները, փակագծերի մէջ նշանակելով եւ նուիրողների անունները։

Շնհէր (Շահանդուխտ օրիորդ), Արծիւ եւ Բերդկաներիչ (Դաւիթ եպիսկ.), Տաթեւ (Փիլիպպէ իշխան), Նորաշինիկ (Հրահատ իշխան), Վաղաւեր (Տիգրան նահապետ), Բեխ (անյայտ), որ յետոյ Չեւանշէր իշխանը փոխում է իր Արուքս գիւղի հետ. Պարոստափ (Սողոմոն եպիսկոպոս), Մաճ (Բուսղիդուխտ իշխանուհի), Կարճաւան, Հարժիք, Խորասանչիրակ, Գոտող վանք (Սմբատ առաջին, Բագրատունի Թագաւոր), Յօղունի, Բնունիք, Յուր, գետն Յուրայ, Տանձատափ, Դեղձածոր (Աշոտ իշխան Սիւնի), Տաշու, Եղէգ (Բաղայիք), Ծաճարտ, Քարատնի (Շուշան տիկին), Հայիս (Համասպրուհի իշխանուհի), Կոկոյս (Սմբատ իշխան), Աղուերծ, Յուբաբանխոռ (միւս Փիլիպպէ իշխան), Տամալէք (Սոփիա տիկին), Տեղ (Շահանդուխտ Թագուհի), Բոլորաքար (Փարաջ իշխան), Դօղեվանք, Խոշտատայ տափ (Վասակ Թագաւոր), Գրուակ (նոյն), Շոռոթն (Խարր, Արտաւազ եւ Սուփան իշխաններ), Խոտ, Ծաղկիկ (Պլէն իշխան), Արիտ աւան (Սենեքերիմ Թագաւոր), Ձեռատի վանք (Հասան իշխան), մի գիւղ Բարկուշատում (անյայտ), Խողվանք գիւղ (անյայտ), Ամբրաւաքար (Աշոտ իշխան), Բորտի եւ Փեթիվանք (Տարսայիճ իշխան)։ Բացի այս գիւղերից վանքը ստացել է եւ մի քանի մեծ այգի, առանձին հողեր։ Վերջերում նուիրուած են նաեւ Հալիծոր, Լծէն, Շնաձաղ եւ Լօր գիւղերը։

ձոր, Գեղալքուն, Փորակն, Հանբանդ, Ջուղայ և Երնջակ գաւառների իրաւունքը։ Հետաքրքրական է այն հանգամանքը, որ բոլոր կալուածագրերի մէջ ամենամեծ հաստատող ոյժը նզովքն է։ Թագաւորը մի գիւղ է նուիրում և սարսափելի նզովքներ է կարդում այն մարդու գլխին, որ կը յանդգնի այդ նուէրը յետ խլելու։ Անցեալ դարերի օրին է երևում այդ թղթերի մէջ։

Այսչափ մեծ փառք ու հռչակ ունէր Տաթեւը։ Բայց ոչքան ժամանակը մեզ է մօտենում, այնքան էլ ընկնում է վանքը, կորչում իր շուքն ու զարդը, մինչև որ հասնում է ներկայ դրութեանը։ Ներկայ դրութիւնը, ուրիշն ասած, բաւական անմխիթար դրութիւն է։ Վանքը ազքատ է. նրա հարստութիւնները կողոպտել են դանազան անկուշտ ձեռներ, մի մասը ուղղակի յափշտակել են, միւս մասը անխղճամտ դրութեան մէջ թողնելով, փչացրել են, ոչնչացրել։ Շինութիւնը երկար ժամանակ ասպատան ճեացած քանդուելու վիճակին է հասել։ Դաւիթի մի պատի վերևից մինչև ներքև մի մեծ ձեղք է գոյացել, այնպէս որ առաստաղի ծանրութիւնը շուտով իրանը կանէ, կը թափէ։ Այդ դաւիթի մի քանի քարերը թափուել են, ծակեր բաց արել, որոնց միջով երևում է դրսի լոյսը։ Մեծ մեծ սալ քարերից կազմած կտուրը ամբողջ միաբանու-

թեան և հոգևոր կառավարութեան աչքի առաջ ծածկուել է խիտ խոտով, այդ պատճառով էլ ջուրը անցնում է, առաստաղից կաթում. խոտերը բոյն են դրել նաև պատերի մէջ։ Մեր գործիչները անձրևի մանրիկ կաթիլների հետ մրցել չեն կարողանում, նրանցից էլ ինչ լաւ բան սպասես։ Ջարմանալի կերպով փոխուել է մեր վանքերի դերը։ Մի ժամանակ նրանք էին պահպանում ժողովուրդը զանազան թշուառութիւնների ժամանակ, ապաստան և կերակուր էին տալիս խեղճերին ու պանդուխտ առաւպետներին. ազգն ունէր շէն ու հասատատ տներ, որոնց շէմքից դուրս էին գալիս օրհնութիւն, ողորմութիւն, օգնութիւն և լուսաւորութիւն։ Իսկ այժմ իրանք վանքերն են անձայն ու անտէր ճնացել, ապրում են հանգամանքների ողորմութեամբ և կարօտ են, այնքան կարօտ... Շէնը աւերվում է, աւերակը փոշիանում։ Ինչի՞ն է...

Այս տարի էջմիածինը, ինչպէս յայտնի է, կարգադրել է մի քանի վերանորոգութիւններ անել Տաթևի վանքում, նշանակելով 6000 րուբլու մի գումար, որի մի էնէլն մասը, կարծեմ 1400 րուբլի, վանքի արդիւնքից պիտի վերցնուի, իսկ ճնացածը ժողովարարութեամբ պիտի ձեռք բերուի։ Արժ. Համազասպեան վարդապետը մի քանի թեթև բաներ շինել է տուել և, ինչպէս երևում էր, շատ էր

մտածում թէ ինչպէս և որի՞ օգնութեամբ շինել տայ ամենահարկաւոր բաները, որ դժբախտաբար մեծ գումար են պահանջում։ Երկու օրից յետոյ հայր սուրբը մեզ հետ Վորիսից ճանապարհ ընկաւ Նուշի և այդտեղից Գանձակ, Բաքու, Թիֆլիս, տանելով իր հետ նուիրատուութիւնների թղթեր։ Տեսնենք ինչ կը տան հայերը այդ թանկագին հնութիւնը վերջնական կորստից ազատելու համար։

Բայց ես չեմ հասկանում թէ ինչո՞ւ Տաթևը ժողովարարութեամբ պիտի վերանորոգուի. նա այժմ էլ բաւական կալուածներ ունի, որոնք, ինչպէս լսել եմ, տարեկան մինչև 8000 րուբլի արդիւնք են տալիս։ Արդիւնքը էջմիածին է գնում. և եթէ այդտեղ վերանորոգութեան, շէն և բարեկարգ դրութեան մէջ պահելու գաղափար լինէր, մինչև այժմ այնքան անխնամ չէր ճնալ այս շինութիւնը. կարելի էր տարեկան մի թեթև գումար յատկացնել վերանորոգութեան համար. փոքր առ փոքր կը շինէին, կը պահպանէին և այսօր այս տեսակ դրութիւն չէինք տեսնիլ։ Վանքի կալուածները վէճի տակ են, թէև միշտ վանքին են պատկանել և նրան են տուրք տուել։ Ինչ հաստատութիւն է հարկաւոր, բաւական չէ այն, որ վանքի այժմեան գիւղերից մի քանիսը 1000 տարի սրանից առաջ են վանքին նուիրուած...

Տիգրիս և Ցաոս ամեալ կամարներին մեր խոնարհ ողջոյնը ասելով, գնացինք, տեսանք մի քանի սենեակներ, որոնց մէջ յայտնին է Հինաւուրց սեղանատունը. դա մի երկար և լայն սենեակ է, որի երկու պատերի ամբով դրուած են երկար քարէ սեղաններ, իսկ նրանց հանդէպ քիչ բարձր տեղ շինած ծալապատիկ նստելու համար: Վերի ծայրում հաստատուած է մի քառակուսի քարէ սեղան, ըստ երևոյթին, մեծաւորի համար: Սենեակի հարաւային լուսամուտը, որ յատակից շատ բարձր է, նայում է Տաթևի ջրի ձորին, որը հս ստղէն նկատելի եմ: Ձորն այստեղ այնքան խոր չէ, բայց ջուրը էլի իր բարձր ափամէկն է բարձրացնում, այդ լուսամուտով սեղանատունն ածում:—Աւելորդ է ասել, որ այդ սեղանատունը այժմ անհարկաւոր բան է. վանքը բացի փոխանորդ Հայր սուրբից, ունի երկու վարդապետ միայն: Սկզբնատան կից սենեակումն է տեղաւորուած Հոգևոր կառավարութիւնն իր անգամներով և ծառայողներով:

Աստծնեղիս վրայ պիտի ասելայնեմ և այն, որ Հալաւային գաւիթը, նրա բակի մի մասը և վանքի շուրջը մեծ մեծ ասիլակ գերեզմանաքարեղովալայատակ են արած. բազմաթիւ գերեզմանաքարերից մի քանիսն ունին արձանագրութիւն. հրաշագործ է մի գերեզման, որ վանքի արևելեան կողմն է. երբ նրա վրայ ջուր են ածում, պատմում են տեղացիները, իսկոյն անձրև է գալիս:

Տաթև անունը մեր մատենագրութեան մէջ բացատրում են նրանով, որ այստեղի սկզբնական եկեղեցին շինուած է եղել Սատէք առաքեալի անունով. Սատէկի ազատաղօտելով Տաթև է դառել: Բայց ժողովուրդն իր բացատրութիւնն ունի: Ասում են թէ երբ Ճարտարապետը շինում էր վանքը, հասնում գմբէթի ծայրին, տեսնելով ձորի սարսափելի խորութիւնը, վախում է, խնդրում է Աստուածոց թևեր, որ թռչէ, իջնէ ձորի միւս կողմը: Եւ Աստուած թև է տալիս (տայ թև). Ճարտարապետը թռչում է, գնում հեռու աշխարհ: Բայց վանքի մէջը փայտով լցուած է մնում: ոչ ոք չի իմանում թէ ինչպէս թափէ գերանները ու աստղաձան, որոնց վրայ շինուած է եղել կամարակապ կտուրը: Ու գնում են Ճարտարապետին որոնելու, հեռու տեղեր են գնում որ հարցնեն թէ ինչ անեն: Բայց չեն Ճարում և հեռու երկրների մարդիկ ասում են, որ դռներին մօտ մի տեղ կայ, այդ տեղին զարկեցէք, բոլոր փայտերը կը թափուին: Գալիս են, այդպէս էլ անում. և այնօրուանից վանքը կանգնած է:

Երեք ժամ տևեց մեր այցելութիւնը և երեք ժամուայ ընթացքում իմ Ճանաչած ու տեսած Տաթևն այս է:

Տաթև, Տաթև... Սիւնեաց աշխարհի նուիրական սրբութիւնը, փառքն ու պարծանքը: Նրա անունը, մեծութիւնը անցեալում է: Նրան սիրել, փայփայել է հայը՝ Բագրատունեաց, Բագրատունեաց, Բագրատունեաց,

այժմ հեռու է քաղաքից ու կենտրոնից, առանձնացած, հնութեան փոշիների մէջ կորած, մոռացուած։ Եթէ հեռաւոր հայերն էլ զանց անէն, գոնէ տեղացիները, շուչիցի, բաղուցի, գանձակեցի հայերը չը պիտի մոռանան... Տեսնենք։

Վանքից հեռանալուց առաջ այցելում ենք դպրոցը։ Վանքը մանելիս ես ասացի որ շրջապատըսպից գուրս, մեծ դռների մօտ կայ մի երկյարկանի երկար շինութիւն, որի երեսը դարձրած է դէպի արեւելք, դէպի Որոմնայ ձորը. այժմ պիտի ասեմ որ այդ շինութեան ներքին յարկը հին է, վերինը նոր և դպրոցը վերին յարկի մի սենեակումն է գտնվում այսպէս նստած էին քսանչափ երեխաներ, որոնք կարդում էին։ Սիւնիքի իմ այնքան սեւած և լսած գիւղերի մէջ այս էր մի հաւասիկ հայոց ծխական ուսումնարանը. բաւական չէ այսքան ժողովրդի համար, շատ քիչ է *)։ Տաթեւի հոգեւոր կառավարութիւնը, բոլորովին պարզ է, ժողովրդի կրթութեան մասին չի մտածում։ Վերևից իջանք ներքև, ներքին յարկը տեսնելու համար։ Բայց լաւ կը լինէր եթէ չը տեսնէինք։ Սենեակները արտաքնոց են շինել, լցուած են աղբով և անմաքրութիւններով, որոնք պարիսպի հետ են տարածում

*) Սիւնիքում կայ եւ երկրորդ ծխական դպրոց Սոսիանի պաւառակում, Բռնակոթ գիւղի մէջ, որ ես չեմ տեսել։

այժմեան այդ արտաքնոցները առաջնորդում միւս բաներից խուցերն են եղել։ Ինչքան տգեղ բան, ինքներդ դատեցէք։ Եթէ այդ սենեակները աւերուած լինելու պատճառով են պակասում, ես կասեմ թէ ինչի կարող էին հարկաւորուել նրանք։ Այս դպրոցը կարող է մեծանալ, ինչպէս ասում են, «մի բանի նման դառնալ» միայն այն ժամանակ, երբ յարմարութիւն կը տայ շրջակայ ուրիշ գիւղացի մանուկներին անպատճառ յաճախել, ուսում առնելու։ Տաթեւը շրջապատուած է ութ թէ ինն հայաբնակ բազմամարդ գիւղերով, որոնք միմեանց հետ կանոնաւոր յարաբերութիւն չեն կարողանում պահել տարուայ բոլոր ժամանակներում, այնքան երկիրը դժուարութիւններ ունի ստեղծած։ Դպրոցն, ուրեմն, կը մեծանայ այն դէպքում, երբ միւս գիւղացիները կարողութիւն կունենան վանքում ճեալ։ Վանքը կարող է շատ աշակերտներ պահել իր մէջ, դրա համար դասարկ և կիսաւեր շինութիւններ շատ ունի. եթէ լաւ մտածեն, մանաւանդ աշխատեն, դպրոցը կարող է մի լաւ կենտրոնական դպրոց դառնալ և տարածել ուսումը, որ այնքան հարկաւոր է այս կողմերում։ Եւ իմ յիշած կեղտոտ խուցերը եթէ մաքուր և լաւ պահուէին, գիւղական երեխաների համար հիանալի բնակարան կարող էին դառնալ։ Այսքան էլ պէտք է ասեմ, որ ուսումը

այդ դպրոցում ձրի պիտի լինի. վանքը իր հաշուով ուսուցիչ և դպրոց պահելու կարողութիւն ունի։ Եւ այն ժամանակ գործը կը կանոնաւորուի, ամեն մի գիւղացի իր հացը վեր կառնի, կը դայ կը նստէ, գիր կը սովորէ։ Մտածող չը կայ, մտածո՛ղ. եթէ լինէր, ինչո՞ւ մի դպրոցի ներքին յարկը այսպիսի խայտառակ գրութեան մէջ կը լինէր... Այստեղ է եւ լսւում այն հրէշը, որ անտարբերութիւն է կոչւում և որ այսպէս մաշում, բարակացնում է վանքը։

Այսպիսի տխուր մտքերով պաշարուած մենք գնացինք վանքի բակը, ձի նստացինք և վերջին տխուր բարևը տուինք Սբ. Ներսէսեաց աշխարհի հրաշակառոյց, անմոռանալի հնութեան...

Գետը խոր է ընկել... Ամեհի ժայռերը երկու կողմից հակել են մօտիկից, ճակատ առ ճակատ կանգնել, քարի ահագին բեկորները առաջ են քաշել, նեղացրել փոքրիկ անցքը։ Ներքևում այդ ժայռերի նեղ արանքում, օր ու գիշեր մի կատաղի տեսարան է կատարվում։ Ուռած, փքուած ջուրը, որ վերևում շատ հեռուից է ասպարէզ առաջ մղուելու ահագին զարկ ստացել, ալեպատկերով գալիս է թափվում այստեղ, կարծես մի բանից փախչում է, ազատութիւն է ուզում։ Բայց ո՛վ է ազատութիւն

տուողը. այստեղ ափերն է ափերի կոչ է գալիս, դառնում է քարայրին գլխապինդ հսկաների խազալիք. պար է գալիս նրանց ոտների տակ, յօրձանք տալով, ալիք ալիքի զարնելով, կատաղի յուսահատութեամբ ջրային լեզուակներ է հանում, քարերը լիզում, յղկում, սպիտակացնում։ Նա ինքն էլ սաստկապէս սպիտակել է, փրփրել, յարձակվում է, վազում, ամեն մի անկիւն, ամեն մի խոռոչ մտնում, որ նրան ափերի ևս կատաղեցնելու համար ժայռերը բաց են արել լրանց մէջ. յարձակվում է, բայց իզուր. մէկ էլ ճակատի վրայ չէտ է դառնում, պատվում է, ջրային շարժուն շղթաներ է կազմում։ Եւ մենակ մնացած թռուփերը, որոնք այնպիսի համաձայնութեամբ կպել են ձեղքուածքի կրծքին, միշտ մնում են այն մանր կաթիլների տարափի տակ, որ պատն է ցրվում իր ափերից բարկութիւնից։ Իսկ մանր, աննշան մարդը կպչում է ժայռի որ և է ուսին, սրտոր պողպատած թեքվում է, խառնում մի ծայր, որ դուրս է ցցվում ժայռի գրկից և նայում է, տեսնում այդ վայրենի, ահեղ տեսարանը։ Եթէ նա յանկարծ պոկ գայ այդ ծայրից, ընկնէ ցած... օ՛, մտածել անգամ չի կարելի թէ քանի՛ քանի՛ պատյաներ պիտի անէ ջրի հետ, արտրուի... Ջուրն այդպէս կրակ կտրած, այդ խորոշ անձուկ անցքից ազատուելու համար ոյժն ու

կարողութիւնը մի տեղ է հաւաքում և գլխի վրայ ցցվում է, ընկնում մի նեղ ծակի մէջը: Դա ինքն է Սատանի կամուրջը:

Սատանի կամուրջ: Որ է չինել այդ քարեայ հրաշքը, որ այնքան երկար տեղ վերևից փակում է գետի երեսը: Այս կողմից, վերևի կողմից, ուր գետն է նեղս խրվում, կամուրջի քարային կողքն է երևում: սեպագոյն, միապաղաղ քար, որ լայն ընկած է և ձորի յատակում մի ծակ է թողում գետի համար: մթին ծակ է, այնպիսի մի դժոխային անձկութիւն և մռայլ տեսք ունի, որ նայողի մազերը փշաքաղում են: Եւ մթութեան, աղօտ կիսալոյսի մէջ երևում են ահագին, հրաշալի սառալակոխանները, որոնք սպիտակ վեճամեճ մառերի պէս կախ են ընկել ջրի վրայ: Ո՞նչ կայ նրանց նաևը, ի՞նչ է ծակը, այդ միայն սատանան գիտէ: Նրա կամուրջը վերևից դէպի ցած, այնինչն գետի ուղղութեամբ շատ է լայն, հասարակ կամուրջի—և ոչ միայն հասարակի—չափ չէ. և այդքան տարածութեան վրայ ոչ մի բան չի ցոյց տալիս մարդկային ձեռքի որ և է հետքը: Քարափառն հող է, բոլորովին նման այն ճանապարհին, որով եկել ենք և պիտի գնանք: Այդ տարածութեան կէս մասը չոր ու ցամաք է, կէսը ծածկուած հիանալի կանաչ խոտով: Գնացէք դէպի ցած կամուրջի մէջքով, կը գնաք, յանկարծ կը տես-

նէք որ նա կորուեց, ձեր առաջ բացուեցաւ նրա նեղքին կողը, որ նոյնպէս քարային է. այդտեղ գետի ծակը չէք տեսնիլ, կը տեսնէք միայն գետը, որ դուրս է թափվում և առաջ վազում: Ցատակը վերջապէս, քիչ լայնանում է և խեղճ գետը իր աղմկաշատ ընթացքն է շարունակում: Իսկ մարդը ճնում է շուարած իրրև ամէն ինչն լսանալ, հասկանալ ցանկացող ապարած, որ այստեղ ճնում է միանգամայն անզէտ: Մաքին ու խելքին շատ է զօրաւոր, բայց իզուր... Սատանայի կամուրջը գաղտնիք յայտնող չէ: Ոչ ոքին, բացի միայն այն ջրից, որի վրայ է ընկած:

Այս է Սատանի-Կամուրջը:

Նրա աջ կողմին Տաթևի սարը մի ահագին ժայռ է դուրս ցցել, մի լայնանիստ, կարմրախայտ ժայռ, որի տակից ջրեր են բղխում և ոչ թէ հասարակ, այլ հանքային ջրեր: Մի լճակ կայ այդտեղ, որ լիքն է ակրիածխջրով. այդ լճակից ջուրը գետնի տակով տարուած է և թափվում է ջրոս ցածրիկ պատերով շրջափակուած մի տեղ, ուր ջրոս փոքրիկ քառակուսի աւազաններ կան շինած լողանալու համար *): Ջուրն առատ է, լճակն ու աւազանները միշտ լիքն են: Մեր մի ընկերը իսկոյն հանում է շորերը և մտնում լճակի մէջ: «Ու իսկ, գո-

*) Աւազանները շինել է Տաթևի այժմեան փոխանորդը:

ջուամ է նա, մախմալ է, կակաո. և այնպես ուրախական ազաղակներ է արձակում, այնպես լաւ է երեւում նա ջրի մէջ, որ մենք երկուսս էլ վարակվում ենք և նոյնպէս հանվում, ջուրը մտնում: Հոկտեմբերի 5-ն էր, ինչպես յիշում է ընթերցողը. առաւօան անձրեւ էր եկել, սարն էլ ձիւնել. երկինքն այժմ էլ պղտոր էր, բայց արեգակն այնպիսի պարզ տեղ էր հասել, որ ցոյց էր տալիս մեզ իր դէմքը: Ահա այդպիսի ժամանակ մենք լողանում էինք բաց երկնքի տակ, մոռացած դպրոցութիւնն ու խնդքը: Բայց մեզ պահպանեց կամրջի ձորի խորութիւնը: Ջուրը ցուրտ չէր, շատ էլ տաք չէր, ունէր մի աստիճան, որ ոչ մրսացնում էր, ոչ տաքացնում: Նրկարացած, ընկած էինք ջրի մէջ, ականջ էինք դնում թէ ինչպես էր նա դուրս թափվում մի քարի տակի խոռոչից և խուլ աղմուկ էր հանում, կարծես եփ էր գալիս: Պահած ժամանակ գդում ես յանկարծ որ մի բարակ բան նշարահի պէս ցածրից խփում է կոզքիդ. նայում ես ջրի պարզ յատակին, տեսնում ես որ քեզ ծակողը ջրի մի փոքրիկ, շատ փոքրիկ ծովակն է, որ գետինը ծակել է և գետի բարձր է խփում, հանում ջրի մակերևոյթին և փոքրիկ պղպջակներ կազմում, տարածում մի փոքրիկ շրջանակի մէջ:—Բայց ամեն տեսակ զուարճութիւն, քէֆ վերջ ունի. մեր փոքրիկ քէֆն

էլ վերջ ունեցաւ. մենք դուրս եկանք:

Այժմ թող ընթերցողը գայ իմ հետից: Այդ լճակի մօտից ես քիչ դեպի ցած եմ գնում բարձրահասակ բոյսերի միջով. մի նեղ և դժուար տեղով իջնում եմ կամրջի վրայ և երկա դեպի վեր, դեպի հիւսիս եմ դարձնում, որտեղից գետն է գալիս: Ես իսկապէս կամրջի վրայ չեմ, այլ կանգնած եմ այն ժայռի ծայրին, որ կամրջի վերին կողմից սեպացած է գետի վրայ. ուրիշ մեծ ժայռեր գալիս են վերևից, իջնում են իմ կանգնած տեղի վրայ, սանդուղքի աստիճանի պէս մի աստիճան են կազմում, որ մոլդօ հասակի չափ բարձրութիւն ունի. ժայռի ծայրը, ուր ես եմ կանգնած, երկար ընկած է այդ աստիճանի տակով. այդ ծայրով էլ գնում է մի նեղ, ձիր երևակայածից շատ նեղ կածան: Մարդու հասակի բարձրութեամբ կանգնած աստիճանը, ասենք ժայռի վերին ուղը, ամբողջապէս ծածկուած է կանանչ երկարահասակ խոտերի տակ: Այդ խոտերը կախ կախ են ընկած, իսկ նրանց միջով ծըծծըլում է ջուրը: Որտեղից է նա գալիս, ես չեմ տեսնում: Մօտենում եմ այդ կանաչազարդ բաշին, տեսնում եմ որ ջուրը վերևից գալով խփում է խոտերի մէջ, մանր կաթիլներ է դառնում, փշըրվում և ցրվում ամեն մի հատ խոտի վրայ: Դա մի մշտական, բայց փոքր և սովորականից շատ գեղե-

ցիկ անձրև է, որ անասելի ախորժանք է պատճառում ինձ, երբ ցոզում է իմ դէմքն ու մազերը։ Բայց ամբողջ ջուրը չէ այդպէս փշրվում, փոշիանում. կան և ամբողջ ծորահներ, որոնք խոտերի արմատների մէջ ցիր ու ցան գառած գալիս են հաւաքվում և ծլծլում քարի բաշն ի վեր։ Այդ ջրերն էլ կրային ջրեր են, սովորական ջրից քիչ տաք, որ ինչպէս կիր պրում է կաշին։ Բայց միայն ծլծլալն ու անձրևելը չէ այդ ջրերի գործը. նրանք կազմում են հազարաւոր գեղեցիկ, բազմաձեւակ, մանր սառլակտիտներ. ձեռքդ առ կախ ընկած պարարտ խոտերի տակը, փոյթ չէ որ նրա վրայ ծլում են ջրերը, որքան կամենաս, կրային ճիպոտներ կը պոկես. մեծ ու փոքր, երկճիւղ, օձաձև, կանաչ և սպիտակ ճիպոտներ, որոնց սուր ծայրերից անդադար ջուր է ծլում։

Զը պէտք է կարծել թէ այս քարային բաշը կարճ է. ո՛չ, կածանը երկար է գնում դէպի բարձր, գետն ի վեր։ Ահա մի սարսափելի վատ տեղ. կածանը ցած է ընկնում, աւելի գժուարանում. այնքան նեղ է, ժայռի շուրթն է, ինչ կածան, որի տակ գետն իր մոլեգնի պատյանների է անում։ Այդտեղով գնալու համար մեծ հմտութիւն է հարկաւոր. կածանն ամբողջապէս ջրոտոդ է գառած, կրային զանգուածը, որ գոյանում է ջրերից և շերտ

է կապել քարի վրայ, լարծուն է. չը պէտք է կողքիդ նայես, եթէ ոչ ուշքդ կը խանգարուի, գլուխդ պտոյտ կը տայ և դու գետի մէջն ես։ Ահա մեր հէքեաթների մէջ յիշած մագէ կամուրջներից մէկը, այս սարսափելի կածանը. քայլելով առաջ ես գնում, մի քիչ բարձրանում, տեղը մի քիչ լայնանում է. մի քանի փոքր ծառեր կան և այդ ծառերի մէջ շինուած է մի շատ փոքրիկ տնակ, որ ձգնաւորի բաղնիս է կոչվում։ Բայց ինչ տուն. մի պատ է, որ մի մեծ ժայռի է յենուել, գոյացրել ամեն կողմից ծածկուած մի տեղ, ուր լողանում են։ Սրեք տեղից ջուր է թափվում, լճանում. վերևից, հեռից և յատակից. երեք ջրերն էլ հանքային են, որոնցից չը գիտեմ թէ որն է մեծ և հատ առ առլակտիտներ կազմում։ Այդտեղ ցոյց են տալիս քարը, որի վրայ ձգնաւորն է նստել և պատի մէջ շինած խորշը, որտեղ շորերն են գնում։ Ո՞ր ձգնաւորն է շինել այս զարմանալի բաղնիսը, այսպիսի մի տեղ, որ թէև շատ գեղեցիկ է, բայց և շատ գժուար մատչելի։ Նէ արդեօք ձգնաւո՞ր է շինել. չեմ կարծում, աւելի հաւանական է ենթադրել, որ գա էլ Տաթևի առաջնորդների գործն է։ Իսկ ժողովուրդը ձգնաւորի բաղնիս է ասում այն պատճառով, որ ամեն մի գժուար տեղում շինած առունը կամ հեզեզին անպատճառ ձգնաւորի է

վերագրում:

Բայց ինչպէս ուզում է, Թող լինի, այդ լոգալանը մի հրաշալի բան է. շինուած սարսափելի ապառաժի կրծքի վրայ, կատարի գեամ վրայ կախ ընկած, հաւաքում է իր մէջ երեք առատ հանքային ալբիւրներ: Իսկ հեռուից նա շատ գեղեցիկ է երեւում Թէ իր դիրքով, Թէ ճանապարհով և Թէ իր փոքրիկ ծառերով: Ուզում էք տեսնել այդ գեղեցկութիւնը, գնանք, յետ դառնանք, անցնենք կամրջի միւս կողմը. այդտեղ ահագին ժայռն ունի մի երկար խոռոչ, որ բաւական յարմար է գնալու համար. գնանք, նստենք ժայռի ծայրին, մէկ էլ տեսնենք գեամ կերպարանքը, ինչպէս ես նկարագրեցի վերեւում, այս գլխի սկզբում: Ցոյց են տալիս այս իսկ ժայռի մի հատուածը, որ առաջներում կապած է եղել այստեղ և յարմար ճանապարհ բացած դէպի ճիշտ որի բարձրը. բայց այժմ կամուրջը փլըլուել է և ձեր ու բարձրի մէջ մի մեծ խորութիւն է գոյացել: Ահա նա, այդ բարձրը աջի առաջ է. ահա այն կանաչազարդ բլուրը, որ նրա մօտից սկսւում է ու մինչև կամուրջի ծայրը գնում. ոլքան հրաշալի են խոտերը, որոնք կախ կախ են եղել, բազմերանգ շարաններ կազմել. հանքային ջուրը տեղ տեղ գեղնացրել է նրանց, տեղ տեղ կարմրացրել և նրանք ծանրացել են, հրաշալի ծոպերի պէս կա-

խուել: Ես այդտեղից երկար նայում էի այդ զարդարուն բլրին: Ես մտածում էի. ահա հարուստ բնութիւն գգուած փայփայած անկիւնը, այս ձորը, որ այդպիսի հրաշքներով է լցուած. ո՞վ գիտէ Թէ ինչքո՞ր է ապրատրում բնութիւնը, ինչ հարստութիւններ է պահում իր ծոցում: Ո՞վ գիտէ, քանի քանի տեսակ հանքային ջրեր են ապառաժի տակից դուրս գալիս և ոչնչի, ոչ մի բանի չը հարկաւորուելով գնում են ծլլում, Թափւում գեամ մէջ: Այդ խնամքով և ճաշակով զարդարուած բլրները, այդ հարստութիւնը ե՞րբ պիտի օգուտ բերեն հայկին. կը լինի՞ որ երբ և իցէ Ալոանայ ձորի գիւղացիները այստեղից, ինչպէս ասում են, մատ լիզեն «Ախր ի՜նչ գալո՞ւ է մի օր ժամանակ», յիշում եմ ես բանաստեղծի խօսքերը և աւելացնում. «տեսնել գիւղացուն այս հարստութիւններից մասն և բաժին վերցնելիս»: Հասում են այդ ջրերը: Ո՛չ ոք չի հետաքրքրւում նրանց, ոչ ոք չի յայտնել Թէ որը ինչ ցաւի համար լաւ է: Իսկ իրանք, ջրերը, լեզու չունեն, Թէև այնքան առատ են...

Շատերը կարծում են որ Սատանի-Կամուրջը շինել է կրային ջուրը: Ասում են Թէ այդ ջուրը դարերի ընթացքում ստալակտիտների պէս զանգուածներ է կազմել գեամ վրայ, որոնք հետզհետէ պնդանալով՝ կամուրջ են կազմել: Ես Թէև այդ տե-

սակ մի հարցի մասին անկարող եմ մի վճռական խօսք ասել բայց իբրև մի հաստատակ մարդ կասեմ, որ այդ կարծիքը կարող է այնքան ձշմարիտ լինելը ոչքան և ծուռ։ Նախ որ ձորի այն մասը, որ կամուրջով միաւորուած է, բաւական լայն է, իսկ գետը խրուած է ցածրում, շատ խոր։ Կրային ջրի աղբիւրը, որ պիտի կազմէր այդ կամուրջը, դադնում է ձորի միայն մի կողմում, Տաթևի կողմում, հետևաբար իր գործողութիւնը պիտի կատարէր միայն մի կողմի վրայ, այն ինչ կամուրջը մի ամբողջութիւն է կազմում, բոլորովին միատեսակ կազմուածք ունի։ Երկրորդ, կամուրջի բաց կողերին նայելով տեսնում ենք, որ նրանք միապատառ քարից են, այն իսկ քարից, որից կազմուած են ձորի ժայռերը։ Երրորդ, կամուրջի մեծ մասը այնպիսի տեղ է գտնվում, ուր աւելին չը կայ որ և է հանքային ջուր։ Կամուրջը շատ երկար է և լայն, և ոչ մի տեղ չի նկատվում, որ ջուրն այժմ էլ քարանալու նշաններ ունենայ։ Իմ յիշած լճակը, որի մէջ լողացանք, «երկաթաջուր» է ասվում, նման է Շուշու մօտ գտնուող Թթու-ջրի հանքային մի տեսակ ջրին, կիր չէ պարունակում իր մէջ։ Այդ «երկաթաջուրը» այժմ թափվում է Սատանի-կամուրջի վրայ և առուակ դառած կամուրջի վրայով գնում է նեղքին ծայրով գետն է թափվում. սա-

կայն այդ ջրի մօտ քարացման ոչինչ հետք չը կայ։ Իսկ կրային ջուրը, որ անթիւ ստալակտիտներ է կազմում, ինչպէս ասացի, ծլում է կանաչազարդ բաշի գանգրան տեղերով և այդ ջրի մի փոքրիկ մասն է միայն թափվում կամրջի վրայ, նրա վերին ծայրից ծորելով կազմում է գետի համար բացուած ճակատ եղեւացող ստալակտիտները։ Ինչպէս որ լինի, եթէ այդ հնութիւնը անգնահատ լինի, պիտի այժմ էլ ջրի շինութիւնը տեսնենք, բայց չենք տեսնում։

Կան և այնպիսիները, որոնք ասում են թէ կամուրջը կազմուել է ժայռի մի սհաղին պատառուածքից, որ պոկ գալով վերևի ժայռերից, ընկել է և փակել ձորը։ Այս էլ հաճարձակ հնութիւն է, որ ոչ մի փաստ չունի. եթէ ընդունենք, պիտի հաւատանք որ մի անհրաժեշտ մեծ ժայռ է ընկել այնքան լայն և այնքան երկար։ — Կարելի է մի երրորդ հնութիւն էլ առելացնել, այն է, որ ձորի այս մասը միապատառ քար է եղել և գետը, ճանապարհ չը գտնելով իր համար, ծակկել է ոտգիը գտնելով ջրի մէջ լուծվող մասերը։ Այդպիսի հանդամանք մեր երկրի համար խորթ չէ. Ղարաբաղում Թարթառ գետի մի վտակը նոյնպէս անցնում է մի այդպիսի տեղով, իսկ Ժողովուրդը պատմում է թէ մի առասպելական վիշապ է ծա-

կել պետերի սկանը, որ արժանանայ մի ինչ-որ գեղեցկուհու։ —Ես ալդչէն ասացի, որ մի քանի տարի առաջ Ճգնաւորի բաղնիսը գնալիս են եղել գեղի հակառակ կողմից մի ուրիշ բնական կամուրջի վրայով, որ այժմ փլուել է. այդտեղից քիչ վեր լեռ այժմ էլ կայ մի բարակ, շատ բարակ քարային կամուրջ, որ գեղի մի կողմից միւսն է անցնում. և ոչ ոք էլ չէ ասիլ թէ այդ կամուրջն էլ հանքայինն ջուրն է շինել, որովհետև նրա մօտ այդպիսի ջրի հետք էլ չը կայ և ամէն կողմից երևում է որ նա քարից է կազմուած։ Բայց, կրկնում եմ, ոչինչ դրական բան ասել չեմ կարող. ես ինքս ասացի ալդչէն, որ Սատանի-Կամուրջը բնութեան հրաշք կոչուելու բոլոր իրաւունքները ունի և գալանիք չեմ յայտնում ոչ ոքին։

Մի զարմանալի հանգամանք էլ պատմեմ. Սատանի-Կամուրջի վրայ կարելի է ծարաւից մեռնել։ Որտեղ նայում ես, ջուր է. ոտներիդ տակով գետն է ոլոտալով գնում, կողքերիդ ես նայում, ջուր է, որ այստեղից-այնտեղից ծլծլում է, կաթկաթում. բայց խմելու մի կաթ ջուր չը կայ, գետը անմատչելի է, ապրիւլնիկը հանքային են, իսկ ջուր խմելու համար պէտք է գնաս Ցաքուտի աւերակ եկեղեցու մօտ բաւական հեռանաս, հասնես այն տեղին, ուր գետի հզիլքը ցածրանում են, կամ

պէտք է դէպի վերև գնաս, գետն ի վեր, ով գիտէ ինչ սատանայական տեղերով անցնես, որ գտնես դիտարիան ջրի տղբիւրը։ Ես սատրի ծարաւել էի, ծարաւ էլ ձի նստեցի. խմելու ջուր մէկ էլ Գօլրիսի սահմաններում պիտի գտնէի։

Ժամի մէկն էր, երբ թողեցինք Սատանի-Կամրջի զարմանալի ձորը, սկսեցինք բարձրանալ այն իսկ լանջերով, որ երէկ մեզ համար խիստ լանջերային էր։ Էլի ձին սկսում է չարչարուել քրտնել։ Լանջերի կիսից երևում է ս. Աստուածածնի վանքը, որ մի հիանալի տեղ է շինուած։ Տաթեւի սարը նոյն իսկ վանքի տակից պարսպի պէս է իջնում դէպի Որոտանայ գետը. բայց գետից դեռ բաւական բարձր մի լայն և երկար տափարակ է կազմում և յետոյ էլի պատի պէս ձգւում, հասնում դեպին։ Այդ տափարակը հարաւային կողմից վերջանում է մի մեծ ձորով, որի միջով վազում է Տաթեւի մեղ յայտնի գետակը և թափւում Որոտանի մէջ։ Տափարակը այդտեղ կազմում է մի եռանկիւնի, որի վրայ շինուած է վանքը, իսկ նրա մօտ տարածուած է մի մեծ այգի։ Վանքը բաւական դեղեցիկ է, պարսպապատ. ունի բազմաթիւ սենեակներ և Աստուածածնի տօնին մեծ թուով ուխտաւորներ է ընդունում իր մէջ։ Աւելի դեղեցիկ տեղ չէր էլ կարելի ընտրել միայն ցաւն ու կրակը

ճանապարհն է, որ այնտեղ է տանում։ Տէդի գիւքը բնութիւնը միանգամայն յափշտակում են հեռուից նայողին։ Նա կորած է կանաչների մէջ, երկու գետեր ահագին ալմուկներով գալիս, պատում են նրան երկու կողմից, խառնվում նրա մօտ։ Երևակայել կարելի է թէ ինչ ձայների մէջ է վանքը օր ու գիշեր անց կացնում։ Տեսնելով նրան այնպէս, ես խիստ ափսոսացի, որ չը կարողացանք գնալ նրան էլ տեսնել։ Ինչ անէի. ցանկութիւն շատ կար, բայց ժամանակն էր պակասում. աշնան օրերն այնքան կարճ են։

Այո՛, ժամանակի կարճութիւնը ... քանի տեղից ինձ զրկից, քանի բաների կարօտ թողից։ Ժամանակի քչութիւնը ինձ ծանր, շատ ծանր թուաց այն ժամանակ, երբ հասանք Նահանգուխտի սարի գլուխը, մնանք Սախկալ-Թութանի առաջը։ Մինչև այդտեղ Տաթևը մեզ հետ էր, իր բարձր խաչափակ գմբէթով մեզ էր նայում։ Բայց ահա նա հեռացաւ, անցաւ մի կողմ, անյայտացաւ։ Մի ինչ որ ծանրութիւն ընկաւ իմ սրտի վրայ, ես զգացի որ շատ բան չեմ տեսել, շատ չեմ կշտացել այն տեղերից։ Ես բարկանում էի իմ ընկերի վրայ, որ իր Թեթևաշարժ ջորու վրայ առաջ էր վազում. ինչ կայ, ինչո՞ւ շտապել։ Մի տեղ ջորին իր մեծ թամբի հետ գլխի վրայով վայր գցեց այդ ընկերիս, և շատ էլ լաւ արաւ. պէտք էր ծանր գնալ գոնէ այս կողմերին շատ նայել։

Ահա մեզանից ցած Հալիձորն է փռուած, ցոյց է տալիս իր փոքրիկ ու ցածրիկ տները։ Այս բոլոր տեղերը, Տաթևից սկսած, նորից մեծութիւն և փառք են ստացել Հանդուցեալ Րաֆֆիի «Դաւիթ-բէկ» անունով պատմական քաղցրիկ վէպի շնորհիւ։ Թէև վէպի այն մասը, որ գրել է Հանդուցեալը մինչև այս տեղերն այցելելը, ունի անճշտութիւններ տեղերի նկարագրութեան վերաբերեալ, բայց նրա հերոսները, պատմած անցքերն ու մոքերը մի լոպէ չեն հեռանում ուշադրի յիշողութիւնից։

Հալիձորի տանջող ու չարչարող լանջիվերով բարձրանում ենք, գնում ենք դլուխը։ Մի քանի քայլ ևս և Որոտանայ գետի մեծ, ահարկու ձորը իր բոլոր գեղեցկութիւններով ծածկվում է մեզանից, մենք գնում ենք Ուչ-Թափալարի տխուր դաշտով։ Եւ ինքներս էլ տխուր ու տրտում ենք։ Զրպուելի եղանակ է սկսուել։ Դաշտի վրայ կոյտ կոյտ թափառում է սառրաքարշ մշուշը, մանր անձրև է գալիս, մեզ թրջում։ Ձիու վրայ կուչ եկած, քթիդ ու պռունդ վեր թողած ծանր գնում ենք, միմեանց հետ չենք էլ խօսում։ Աշխարհը կորցրել էր իր հրապոյրը գեղեցկութիւնը...

Բարեբախտաբար հեղանակը երկար չէ մեզ զզուեցնում։ Մշուշը քաշվում է, անձրևը գադարում, մինչև անգամ մի զգալի արեգակային լոյս էլ սփռվում է գաշտի վրայ։ Անցնում ենք մի տեղով, ուր կան մի քանի փոքրիկ չինուհիներ, չոր քարից գցուած պատեր. Շնհէրի գիւղի պըւսնն է։ Այդ պատերն ու կիսաւեր չինուհիներն են կարծել տուել Զալալեան եպիսկոպոսին, թէ առաջներում Շնհէրն այստեղ, գաշտումն է եղել (Տես նրա Ճանապարհորդութիւնը, մասն Բ.)։ Ի գուր է նա այդպէս կարծում. մի գիւղ կարող է գոյութիւն ունենալ միայն այնպիսի տեղ, ուր ջուր կայ. իսկ այստեղ ջրի հետք էլ չկայ, հետևաբար պէտք է ասել որ այս չինուհիները անտեսական. չինուհիներ են, դուրէ գոմեր։

—Գնանք, Շնհէրին նայենք, առաջարկում եմ ես ընկերներին։ Գուրս ենք գալիս Ճանապարհից, գնում ենք լեռնագաշտի ծայրը։ Կրկին երևում է Որոտանայ գետի ձորը և դայլ է տալիս իր հրաշալի տեսարաններից մեկը։ Ուշ-Քափալարի գագաթը դէպի Որոտանը յանկարծակի կտրում է մի շատ լայն լեռնային գոգ, որի արևելեան և արևմտեան կողմերում ընկած են յանկարծ դէպի բարձր երկար լեռնային սեռեր։ Այդ գոգն է Շնհէրի ձորը. մենք կանգնած ենք ձորի գլխին, որքան հեռու ենք

Որոտանայ գետից, բայց էլի լսում ենք նրա ձայնը. ոլքան մեծ, նահապին ձոր է Շնհէրի ձորը։ Մենք կանգնած ենք մեծամեծ ժայռերի գլխին, որոնք նեպացել են, գցուել այդ լայնարձակ ձորի գլխին. այդ ժայռի տակ փռուած է Շնհէրը, որի երեսը դէպի Որոտանայ գետն է դարձրած. մեր աչքին երևում է միայն տափակ ու սպիտակ, միմեանցից կտած կտորների մի մեծ բազմութիւն. Գեղեցիկ գիւղ է. գեղեցիկ է ոչ այլ ինչով բայց միայն իր անհամար այգիներով։ Նահապին լայն ձորը այգեստան է, որին երկար նայում ես ախորժանքով զբաղվում ես։ Գիւղի արևմտեան կողմին մի մեծ աղբիւր է բղխում ժայռի տակից, այդ ջուրն է այս հիանալի ծառաստանի պատճառը։ Սիւնիքում ես մի այսպիսի ուրախ և զեղեցիկ անկիւն չը տեսայ։ Պարզ երևում է մարդու յամառ մրցութիւնը բնութեան խստութիւնների հետ և այդ մրցութեան յաղթանակը։ Մարդը իրան օգնական է բռնել մեծ աղբրի ջուրը և դուրս է եկել թևքերը ծալել, երեսը պնդացրել, վերցրել է ջուրը, հապարոս մի տեղերով պատյանել է անել տուել, ցոյց է տուել իր բոլոր հնարագիտութիւնը, իր կամքին հպատակ է արել այդ լեռնային ահռելին գողը իր ուղղաձիգ սեռերի կողերով. և տեսէք որքան ծառ է տնկել ծառ և ծառ ամեն տեղ, աչքդ ուրկէ

բան չի տեսնում այնպիսի բարձր տեղից ծառ անկից, որ զարմանում ես թէ ինչպէս է այնտեղ ջուր գնում։ Իսկ նեղքեւում Ոլոտանն է քիչ ողողմած գառից. նրա դէպի գիւղը դարձրած ափը լայն է, տափարակ, այգինների մէջ կորած. իսկ միւս ափը ողքան սարսափելի սեպացած է դէպի բարձր և բարձր։ Ահա սիւնեցու աշխատասիրութեան մի ուրիշ տեսարանն էլ. աշխատասիրութիւնը, տեսնում, յամառ աշխատասիրութիւնը միայն կարող էր այսպէս անել Իսկ ծոյլ ժողովուրդը, օրինակ, այնպիսի ժողովուրդը, որ Խաչէնում է ապրում, ոչինչ չի անիլ և այնպիսի տեղ ուր բնութիւնը աւելի քաղցրաբարոյ է, քան այստեղ։ —Շնհէրեցին, այսպիսի հսկայական գործ կատարած շնհէրեցին այդ րոպէից իմ աչքում մեծ տպաւորիչ դառաւ և իր կոպիտ, մոխրագոյն հասա չուխայի մէջ աւելի լաւ երևաց ինձ, քան ձռձռան կօշիկների համն առած գեօղխեցին, որի վիզն ու գազափարն է հիշտ հարստանալ, ծծելով այդ իսկ մոխրագոյն չուխաները։ Բայց Շնհէրը մի անտանելի բան ունի։ Դա նրա ձանձրապարշն է, որ Ուչ-Թափալարի դաշից գալիս է, իմ կանգնած տեղից քիչ հեռու սարսափելի կոպտութեամբ լանջիվայրով դէպի գիւղն է գահավիժում։ Տաթեւը, Հալիձորը այսքան վատ ձանձրապարշ չունին։ Տէր Աստուած, ամեն բանի

ձայն կը լինի, տեսնես Սիւնիքի այս ձանձրապարշների ձայն ինչ է լինելու։

Շնհէրից շատ մօտ, դէպի արևելք, գոնվում է Խոտ գիւղը։ Դա էլ այգինների մէջ. բայց թէ գիւղը և թէ այգինները Շնհէրից շատ փոքր են և վերջինիս պէս գեղեցիկ տպաւորութիւն չեն թողնում։

Ցիշենք, որ Շնհէրն ու Խոտն էլ շատ և շատ հին գիւղեր են, շատ հին ժամանակներում Տաթեւին են նուիրուած և այժմ էլ Տաթեւին են պատկանում, ինչպէս և Հալիձորը։ Ցիշենք, որ Շնհէրն էլ Սիւնիքի պատմութեան մէջ տեղ ունի և մինչև այժմ էլ նրա այգինների մէջ ճնապհել է հինաւուրց բերդն իր ահագին երկաթապատ դռներով։ Ցիշենք... մի անգամ էլ նայենք գեղեցիկ Ոլոտանին և շուռ տանք մեր ձիանների գլուխները դէպի Ուչ-Թափալարի դաշտը ու փակենք մեր յիշատակարանը։

Երկու օրից յետոյ փոստի սայլակը ինձ դէպի Շուշի էր տանում։ Վերջին անգամ նայում էի ինձ արդէն ծանօթ տեղերին։ Ահա Տեղ գիւղի տխուր լեռնապաշարը։ Առաւօտ էր, այդտեղից դէպի արևելք բացուել էր մի լայն տեսարան. ինձ ցոյց տուին բարակ մշուշի նմանութիւն ունեցող

մի շերտ, որ երկար ընկած էր հեռու հօրիզօնի ծայրում և ասացին որ այդ Արաքսն է։ Այդտեղից ցոյց տուին ինձ նաև Զէյթիմու անունով թրքական գիւղի տեղը, որ հեռու էր, գտնվում էր Բարիուշատի կողքով ընկած մի լեռնաշղթայի ստորոտի մօտ։ Զէյթիմուն յիշատակութեան արժանի է իր հռչակաւոր օջախով, որ բժշկում է կատաղած շներուի կծածներին։ Պարաքաղը և Զանգակուրը շատ շատ լաւ են ճանաչում Զէյթիմօջախը և երբ մեկին կծում է կատաղած շունը, իսկոյն վ երցնում են այդտեղ բերում։ Գնացողը պիտի չտապէ, որովհետև, ասում են, կատաղած շունն էլ շատ է ուշանում օջախը հասնել իսկ մեկ իր կծած մարդուց շատ հեռու, վիրաւորութիւն չկայ։ Օջախը պատկանում է մի մոլլայի, իսկ բժշկութիւնը կատարվում է մի հրաշալի հացի զօրութեամբ, որ մոլլան է պատրաստում, խառնելով նրա հետ և հիւանդի արիւնը, որ հանում է նրա ոտի մատներից մեկը ծակելով։ Մեծ փառքի տէր է օջախը և շատ գիտեմ Պասանհօրի գիւղը կը գնասէ նրան թէ չէ։

Մեր օրը բարձրանում էր Թթու-ջրի շրջակայ բարձրութիւններով։ Ինձ վրայ շքեղ լոյս էր տարածում արեգակը, հրաշագեղ բնութիւնը էլի ևկել էր իմ շուրջը բոլորակ և քաղցր ծիծաղում էր աշնանային ծիծաղով։ Բայց ես տխուր էի։ տըխ-

րութեամբ յիշում էի այն երեկոն, երբ ես այնքան ուրախ ու զուարթ դէպի ցած էի գնում։ Տեսնում էի ճանապարհի կողքին մանկ հոգի գիւղացի երեխաներին, նրանց երջանիկ, ծիծաղկոտ դէմքերը, նրանց թեթև և կայտառ շարժուածքները. և ափսոսում էի, որ հեռանում եմ նրանցից ու նրանց աշխարհից։ Նրանց մօտ, այս անցած տեղերում կային նորութիւններ, հետաքրքիր երևոյթներ, կեանքի թարմութիւն։ Եւ ահա Սիւնիքը իբրև մի վաղանցուկ երազ հեռացաւ գնաց. հրէն երևում են նրա սարերի անորոշ, մթնագունած դէմքերը։ Սայլակը վազում է, շտապում է առանց իմ կամքին։ Եւ Շուշին, իմ ծննդավայրը, իր ծոյլ ու գաւառկ կեանքով, իր անտահման և անվերջ նախանձով և զզուելի բամբասանքներով ճանաչում է իմ տխուր սրտին։ Եւ ինձ ատելի է երևում, բոլորովին ատելի...

ԹԱՐԹԱՐ ԵՒ ՄՌԱԽ.

(1889).

ԹԱՐԹԱՐ ԵՒ ՄՈՒԱՒ։

Ա.

Ես վերադառնում էի Թիֆլիսից։

Մութ դիշեր էր, մեքենան երկրորդ զանգը լսեցրով, սուլեց վախաւ։ Օդը վագոնի մէջ հեղձուկ էր, բազմաթիւ ձմեռապարհորդներից կախ արած ածօտ կանթեղի տակ ընդունեցին զանազան դիւրքեր։ Ամռուկը դեռ չէր վերջացել, կապոցները տեղաւորել, քնելու տեղ պատրաստել, երեխաների ձայնը կտրել տալ — տհա թէ հինգով էին զբաղուած մարդիկ, մինչդեռ շոգեմեքենան ծանր շնչելով, հեռուհեռու արագացնում էր իր գնացքը Թանձր խաւարի մէջ։

Պատուհանի առաջ մի լոգէ երեսաց գիշերայինն Թիֆլիսը։ Մեզանից դաժ, մի մեծ հսկայական փոսի մէջ վառուած էին բիւրաւոր ճրագներ, որոնք կիս առ կիս խմբուած էին և ուրախ պըր-

վում էին։ Կով կասի ամենամեծ քաղաքը ամբողջ Ջապէս ճրագ կտրած, բիւրաւոր մանրիկ բոցեր դարձած՝ վերջին անգամ պրագ սահում էր մեր աչքերի առջևից։ Պատուհաններին մօտ խմբուել էին մարդիկ, որոնք աքանչանում էին այդ կախարդիչ տեսարանով, յայտնում էին իրանց զարմանքը, գովում էին այդ մեծ քաղաքը։ Բայց տեսարանը մի րոպէում փախաւ, հեռացաւ, տեսնելու բան չը կար, իսկ լսելու միակ բանը անիւների միանման թըխկ-թըխկոցն էր. ամենքը նստեցին, ղևները կախ արին։

—Ալլահը քեզ օգնական, ագաս, Ալլահը պինդ պահէ, բարով գնաս, բարով դաս. օջախի շնորհքը քեզանից անպակաս, ագաս։

Այս խօսքերը բարձր արտասանւում էին թաւրքերէն լեզուով և մի թանձր ձայնով։

—Աստուած տայ, Աստուած տայ, կրկնեցին ուրիշ թաւրքերը։

Ես չեմ նայեցի։

Նստած են մեր պատուհի քաղբատիքը, ծըխում են և ոդջերթ են ժպթում մէկին, որ ուղիղ գնում էր Խորասան՝ Մաշադի օջախին ուխտ։ Նրանք նստած են այնպէս, ինչպէս կը նստէին իրանց տափակ կտուրներին, պարսկական գորգի վրայ, թմրեցուցիչ ղալեանի կողքին։ Նրանց հոգսը չէ, որ ուրիշ ճանապարհորդներ էլ կան։ Նրանք

անփոյթ խօսում են, ձայն ձայնի խառնում, բղաւում, քրքջում։

Գնում են շատերը։ Կուզէն արդէն կռացրել է, մի կողքի վրայ գցել մեր Պէպօների և Կակուլինների երկու ընկերակիցներին, որոնք իմ հանդէպն են նստած։ Այդ վաղքի վուրթիքը ունին բաւի դէմքեր և միշտ անհոգ, ուրախ արտահայտութիւն, մի յատկանիշ, որ այնպիսի հոչակ է տուել բնիկ թիֆլիսեցիներին աշխարհի առաջ։ Քալբալայինների ոգևորուած բացականչութիւնները սրանց սրախօսութիւններին էին նիւթ տալիս։ Ես իս սիրում էի այդ բարի, ուրախ արտայայտութիւնը, շարունակ այդ դէմքերին էի նայում, մտքիս առաջը բերելով իրրև հակապատկեր, մեր կողմի մարդիկներին, նրանց միշտ անհասկանալի, մռայլ, սակաւախօս դէմքերը։ Ահա մարդիկ, մտածում էի ես, որոնք կեանքի համար գոնէ մի բան ասում են բացարձակ։ Ի՞նչ է տալիս մեր աշխարհի կեանքը դրանց, այդ Պէպօներին ու Կակուլիներին։ Ինչ որ էլ տայ, բայց նրանց զուարթ, ուրախ բնաւորութիւնը ամեն բանից բարձր է կանգնած։ Այդ ինձ հասկացնում է «քաղքցիներից» մէկի ձեռքը, որ բռնած ունի մի փոքրիկ սաղ։ Մարդը քնած է, բայց ինչպէս լաւ պահում է սաղը, ինչպիսի խնամքով է տանում նրան, որ միշտ ձայները պիտի հա-

նէ, քարակ դողդոջուն ձայներ, նրա սրտի ու հոգու անբաժան ընկեր ձայներ...

Միւս կողմում, երիս նստարանի վրայ, բազմած են մեր քաղքցի Կեկելներն ու Փեփելները։ Նրանք խօսում են, խօսում... անվերջ խօսում են։ Դատապատն ու քննութիւն են անում իրանց ծանօթների ու բարեկամուհիների շորերն են քննում, գնահատում, նրանց ու իրանց բամբասանքներն են շարունակում այդքան մարդկանց մէջ։ Լսում են մի ինչ որ պատառ, հոտաւատոզ դինուորականի հմայիլեանները, մի երջանիկ ամուսնու ծիծաղը, իրանք էլ պատասխանում են։ Մի խօսք, կաչաղակների պէս չրթչրթում են. ննջում են, էլի վեր կենում, էլի խօսում։ Երբ հայերէնը մի քանի նախադասութիւններով այնքան շուտ ձանձրացնում էր, անսպառ վրացերէնն էր առաջ գալիս։ Ինձ անծանօթ էր լեզուն, բայց գիտեմ որ խօսակցութեան նիւթը մի և նոյնն է. հայուհիները այնպէս են «ջուր արել» վրացերէնը, որ այդ փերջին լեզուով էլ կարողանում են չրթչրթալ կաչաղակների պէս։ Եւ ես յիշեցի, որ Թիֆլիսում վրացերէնը կատարեալ թագաւոր է. յիշեցի իմ զարմանքը, երբ իմանալով որ Թիֆլիսի բնակչութեան մեծ մասը հայ է, ամեն տեղ, ամեն քունջում լսում էի վրացերէնը և վրացերէնը միայն։ Ես կարծում էի թէ ձակատագիրը ինձ թոյլ չի տալիս որ մի հատ հատարակ հայ տեսնեմ Թիֆլիսում, ուստի եկեղեցի էլ գընում, հայի եկեղեցի, որ գոնէ այնտեղ տեսնեմ։

Կանթեղի թոյլ բոցը դողում է առաստաղի տակ, շրջկատը թուխում է և թուխում, մեղմ օրօրում է այս տեսակ տեսակ մարդկանց։ Անցնում են իջևանները միմեանց ետևից, խոր դիշեր է, խաւարը կլանել է ամեն ինչը, մեքենան բլուրտալ կայծեր է թռցնում իր աշագին բերանից։ Ահա ծանր խոմրում է Խորասանի ուխտաւորը, որ անկարող ոտ անկանոն տարածուել է նստարանի վրայ. բայց նրա ընկերները մի մի զարթնում են և իսկոյն, վայրկեան չը կորցնելով, խօսք ու զրոյց են բարձրացնում։ Ահա Փեփելներից երկուսը ծածկուեցան բարակ վերմակների տակ, Պէպօի ընկերակիցը դեռ մի և նոյն խնամքով պահում է փոքրիկ սպաղ, թէև երկու քսան է անգկացրել։ Դիրքերը չեն փոխում, այնքան յարմարութիւններ ունի երկաթուղին. և ես նայում եմ, մտածում որ մենք գնում ենք այսքան արագ և այսպէս յարմար։

Այո՛, լուսաւորութիւնը այսպիսի բաներ է ստեղծում. այսպիսի բարութիւն, այսքան սլաքաձև գոյնզգոյն անհատներ բերել է, մի յարկի տակ ժողովել, քնացրել է ու տանում է, թռցնում։ Ցիշում եմ մեր տանջող ձանապարհները, մեր չըհեգնական

արկղները, որոնք չորս անիւի վրայ հաստատուելով սայլակ անունն են ստանում և անխնայ ծեծուում, ցաւեցնում են մեր կողերը, շշմացնում են մեր գլուխները։ Իսկ այստեղ այսպէս... Լաւ բան է քաղաքակրթութիւնը, յառաջադիմութիւնը, շատ լաւ բան է, բայց ինչ անես որ այնքան հեռու է մնում մեզանից, այնքան անմատչելի է մեզ։ Ինչո՞ւ մեր երկիրն այսպէս է, ինչո՞ւ չի ընդունում լուսաւորութիւնը, յառաջդիմութիւնը։ Մի՞թէ նա իր դեղեցիկ կլիմայով, իր խիտ ազգաբնակութեամբ, իր լեռնային հսկայական տեսարաններով ստոր է այն ողորմելի, անջրդի անապատներից, որոնց կրծքի վրայ իր վիթխարի շուրջը ամեն առանդով գործում է շոգեմեքենան, մարդկային հանճարի ամենագեղեցիկ հնարներից մէկը։

Շուացնում է այդ մեքենան. բայց ո՛վ է նրբան լսողը։ —Անապատներ, որոնք Գաբրիէլեան փողից հազիւ թէ կարողանան քիչ կենդանութիւն ստանալ։ Այդ շուրջից փախչում են միայն անապատի որդիները, աղուէսներն ու չագալները. այդ շուրջը իսկի լսել էլ չի ուզում գոլտերի թագաւորութիւնը, որ խլացուցիչ ձրվռոցով մի քանի վերստ տարածութիւն բռնած, համախմբուած է մի ինչ որ թշուառ ջրի մէջ, որ արհեստական առուներից աւելորդ ճնացած՝ իզուր թացութիւն է տալիս

անապատի բոյսերին. իզուր, որովհետև այդ բոյսերը երբէք չեն փոխուիլ, երբէք չեն պայծառանալ։ Ահա թէ ուժի համար է շոգեմեքենան արձակում իր հպարտ, ուրախական շուացները։

Ամայի, տիրոջ անապատ չորս կողմում։ Սարսափելի իր անողորմ արեգակով, իր մանր թունաւոր քնակիչներով։ Եւ այդպիսի տեղերում բոյն են դրել մարդիկ, որոնք պիտի սպասաւորեն լուսաւորութեան, հանճարի գործին։ Տանջվում են այդ մարդիկ, տանջվում են ոչ միայն ահագին, կրակացած արեգակի երեսից, այլ և մի կէտի չափ մեծութիւն ունեցող, միայն մի բարակ ձայն հանելու ընդունակ մճճակի ձեռքից։ Ներանց, այդ խեղճ սպասաւորների կերածը կերած չէ, ոչ էլ խմածը խմած։ Նրանք իրանց արիւն-քրտինքով, իրանց դեղնած և սևացած կաշիով, իրանց սարսափելի, մահառիթ ջերմուտէնդով պիտի գիմանան այդ սպանիչ կլիմային, պիտի ապրեն այդ յաւիտենական մեռելութեան մէջ, որպէսզի քաղաքակիրթ բարբարոսները անուշ քնեն, ազատ նամակ անեն հանգիստ շոգեկառքերում, փեփեղները անուշ-անուշ բամբասեն, կախուլիները իրանց սպիները անվնաս տանեն։ Իսկ քիչ հեռու այս տեղերից կան քաղաքներ, կան ծաղկազարդ դաշտեր, որ անտառներ, քչքչան գետակներ. կայ մի թեթև օդ,

որ աղմկոտած է լինում գիւղացի ժողովրդի աշխատասէր սրտիների ձայներով ու աղաղակներով։ Այնտեղ կայ կեանք, այնտեղ բնութիւնը առանց այդ կեանքի ողբում է։ Բայց այնտեղի հետ գործ չունի լուսաւորութիւնը. այն տեղերին մօտենալ չի կարողանում այն գեղեցիկ շարժիչը, որ մարդը պարծանքով հնարել է աշխարհի բարեկաւութեան համար...

Մեր երկիրը խռով կը մնայ այդ հանդիստ շրջակաքերից, երբէք չի տեսնիլ նրանց երեսը...

Դարձեալ մեր ապրանքը, անիւների վրայ հաստատած սրկղը, որը մեզ պտնում է Եւրախ կայարանից։ Նա հեռացնում է երիտասարդից, հեռացնում է ամեն յարմարութիւններից, ծեծում է մեր կողերը Մեծ ու գեղեցիկ շոգեկառքը երազ է թուում։ Կարծես երազի մէջ է երեսում փոքրիկ պատուհանը, որի առաջ անընդհատ աշխարհ—ահագին լեռներ, դաշտեր, ձորեր, ծառեր, տներ, երկնքի ամպեր դրօսից վերցրած փախչում էին տսկալի արագութեամբ, իսկ մենք կարծես թէ կանդնած էինք, չէինք շարժվում... Այդ երազն անցաւ։

Առաւօտ է, բայց ապրիլի արեգակը այս տափարակ տեղերում դիտէ իրան ցոյց տալ։ Ծոլը փոշի է դառել և այդ փոշին ամպերի պէս բարձրանում է, ծառում մեր երեսին, մեր վրան, պլտում է մրմունջ պատճառում։ Ձիանկերը փաղաղ են, տափարակը հետզհետէ անցնում է։ Մենք դուրս ենք գալիս նեղ ու բողբոջակ հովիտներից, ահա հեռու երեսում են տարերի մութ-կապոյտ գծագրութիւնները։

Երբեմն երբեմն մեր առաջն են գալիս տափարակների գիւղերը իրանց մեծ մեծ այգիներով։ Այդ գիւղերը, այդ այգիները մեռած տափարակների վրայ ստեղծել է Թարլթար գետը, որ համարեա ամբողջապէս տարածվում է այդ հարթութիւնների վրայ արհեստական առուների միջոցով։ Քսան-տասին ճանապարհը հարիւր ու մի տեղ անցնում է այդ առուների վրայով։ Դուք տեսնում էք մի դեղին ու պղտոր, միշտ պղտոր ջուր, որ հոսում է բաց արեգակի տակ, լուծում է իր մէջ փափուկ, փշրացող հողը։ Այդ ջրի մէջ տպրում են բիւրաւոր գորտերը, այդ ջրից խմում են անասունները, անապատի ամեն տեսակ միջատները ու նրանց դրացի մարդիկը։ Սմոլը գիւղերը դաստարկանում են, որովհետև Թարլթարը չի կարող փոխել մահարի կլիման. և անապատի սերացած, այրուած որդիները վերցնում են իրանց ուղեկցած-չուղեկցածը, փախչում են տարերը։

Թարթար գետը սարերից իջնելու տեղից ընկած մինչև Կուր գետը թափուելու տեղը այդպիսի ահագին գոլծեր է կատարում: Առանց նրան մի օր չի կարող ապրել մի մեծ գաւառ: Հասկանալի է, ուրեմն, նրա նշանակութիւնը այս տեղերում: Հասկանալի կը լինի և այն, եթէ ասեմ որ թէև շատ մեծ գետ չէ Թարթարը, բայց յայտնի է Ղարաբաղի ամեն կողմերում, ունի յարգելի անուն, որ ժողովրդի, գլխաւորապէս թուրք ժողովրդի, երդերի մէջ է մտել: Նրա ափին շինած է Թարթար անունով փոստային իջևանը. և որովհետև այդտեղ գետի վրայ կամուրջ չը կայ շինած, ամեն մարդ, որ ձանապարհորդում է գալնանը, շատ լաւ է յիշում այն երկիւղը, որ աւելի և աւելի մեծանում է իջևանին հասնելուն պէս: Գալնանը, մանաւանդ ապրիլ և մայիս ամիսներում, Թարթարը սաստիկ մեծանում է, կատաղում, մարդկանց խեղդում: Լինում են տարիներ, երբ Թարթարը մի քանի օր շարունակ կտրում է հաղորդակցութիւնը: Ղարաբաղի ոչ մի գետ նրա չափ ահ ու դող չի պատճառում այդ ժամանակները:

Բայց այս տարի, ապրիլին, գետը չէր վարարել, որովհետև երկար ժամանակ անձրև չէր գալիս: Օգուտ քաղելով այդ լաւ եղանակից, ես փոստային իջևանում թողեցի իմ իրերս, մի ձանապարհորդու-

թիւն կատարեցի դէպի սարերը:

Բ.

Թարթար իջևանի տեղն էլ շատ ուշագրաւ է այն հարթ տափարակի, որ միանման տարածւում է Կուր գետից մինչև Շահբուլաղ իջևանը: Տափարակի արևմտեան կողմում, երբեմն մօտենալով փոստային ճանապարհին և երբեմն նրանից 10—20 վերստ հեռու, վերջանում են Ղարաբաղի ամենամեծ լեռների շղթաների վերջին ոտները: Այդ շղթաները ընկած են արևմուտքից դէպի արևելք, ահագին տարածութիւն ունին: Դրանց արանքով հոսում են երկու գետեր. մէկը՝ Թարթարը, որ Ջրլաբերդ անունով գաւառակի գետն է և ամենամեծը Ղարաբաղի գետերից, միւսը Խաչէնագետն է, որ գալիս է Խաչէն գաւառակից, Գանձասարի բարձրաբերձ լեռների միջով, Թարթար իջևանից 25 վերստ դէպի ցած: Խաչէնն ու Ջրաբերդը սահմանակից են և, ինչպէս յայտնի է, մի ժամանակ առանձին առանձին պատկանում էին Խամսայի երկու մելիքական տոհմերին: Իսկ այժմ այդ անուններն պաշտօնապէս գոյութիւն չունին. Խաչէնը մտած է Շուշու գաւառի մէջ, իսկ Ջրաբերդը, Խաչէնագետից սկսած, կոչւում է Ջուանշիրի գաւառ:

Ջուանշիրի պատմական իշխանութիւնները բնակութիւն ունին Թարթար իջևանում այժմեան կան շինութիւններ նրանց բնակութեան համար, կայ առևտրական հրապարակ, կայ նոյն իսկ «արքունական այգի» անուն ստացած մի պտղատվայր։ Ամառը, սակայն, Թարթար իջևանը դժոխք է դառնում. հոչակաւոր է մանաւանդ այստեղի մոծակը, որից ազատութիւն չը կայ։ Այդ պատճառով ամառը բոլոր իշխանութիւնները, բոլոր բնակիչները քաշուում են գնում լեռնային հայ գիւղերը. միայն մնում են միայն փոստային իջևանի վերատեսուչը և մի հատ ոստիկանական պաշտօնեայ։ Գրանք չը գիտեմ թէ ինչ հրաշքով են ողջ առողջ մնում ժժոխային տապի մէջ։

Թէեւ դեռ ապրիլի 14-ն էր եւ ես մի օր առաջ կարողացել էի լրագրում, որ Շուշում ձիւն է եկել, բայց սրեդակն այնպէս էր այրում, որ շուարքը շատ քաղցրացել էր։ Կէսօրից բաւական անց էր, երբ ես իմ մի ընկերի հետ Թողեցի Թարթար իջևանը եւ գնացի դէպի արևմուտք։ Մեզ ընկերացան երկու հայ գիւղացիք և մի գիւղական քահանայ։ Վերջինս հեռու տեղ էր գնում — Գանձասարի մօտ եղած Վանք անուանով գիւղը, իսկ երկու գիւղացիները մօտիկ գիւղերից էին։ Սրանք ասում էին թէ առաջին հայ գիւղը, ուր մենք պիտի հանդիպինք, այստեղից մօտիկ է, մի կամ երկու ժամից կը հասնենք։ Մենք քշեցինք ձիանները։

Մենք դեռ անցնում էինք միանման տափարակով, բայց հետզհետէ հեռուից բացւում էին լեռնային տեսարաններ։ Կողմ ու նեղ հովիտներից հետզհետէ մեզ առաջն էին գալիս փոքրիկ ու կանաչ բարձրութիւններ, որոնք առաջնապահ պահակների պէս շարուած էին հսկայ Մասիս սարի առաջ։ Ինչեն նա, հսկան, որի գլուխը դեռ ծածկուած է ձիւնով։ Ինչեն, երեւում են մեծամեծ ձորերի բերանները, որոնք այդ լեռնաշղթաների մէջ բաւ սեղմուելուց յետոյ դուրս են գալիս այս անհուն, անծայր տափարակների վրայ։ Ճանապարհ չը կայ, անդադար կրկնում էին գիւղացիք, շատ տեղ տարով պէտք է գնալ քարքարոտ, նեղ կածաններ են, գլխիվայր և գլխիվեր են տանում, և եթէ մի անձրեւ էլ գայ, որին այնպէս սպասում են գիւղացիք, այն ժամանակ բանը պիտի գուարճութիւն չէք տեսնիլ։

Անծանօթ երկրի այդ մասը նկարագրելը հարկաւորում է մեզ շուտ շուտ նայել դէպի լեռները, նրանց վրայ հաւաքուել են գարնանային կտպտացը և սև ամպերը և մայր մտնող արեգակը լուսաւորում է նրանց անձուկն, ծանր կցտաները։ Եւ գնում ենք լուռ, շատ էլ չենք շտապում. ամենքիս

վրայ նախապաշարմունքի ծանրութիւնն է նստել...

Անցնում ենք մի քանի հատ արուեստական առուներով. թարթառն է տալիս այդ ջրերը ահագին դաշտի բազմաթիւ արտերը ջրելու: Այդ արտերը ընկած են Թոզոտ Ճանապարհի երկու կողմով, կանաչ են, գեղեցիկ, ժողովրդի գերածխած յոյսն են պատկերացնում մի յոյս, որ աւելի հասկանալի է 1888 տարուայ պահասութիւնից և թանգութիւնից յետոյ: Հայ գիւղացիների արտերն են: Ծեղ տեղ գարնան վարն են անում գութաններով: Եզնեն ու գոմէշները ճռճռալով ձգում են երկրագործական ծանր գործիքը, թոզելով կանաչ արտերի մէջ լայն ու փափուկ շիրտեր, որոնք արդէն ընկրկել են աւելի տալ երեկոյեան նուազ լոյսի տակ: Այդ հարթ ու հաւասար դաշտերը միայն երկրագործութեան համար են ստեղծուած: Եւ հայ ու թուրք երկրագործները տեղի յարմարութիւնից օգտուելով, մի քայլ առաջ են գնացել մինչև այժմ եղած գրութիւնից: Ամենքը չեն հին, նահապետական ծանր ու դանդաղաշարժ գութանով վարում. պատահում են և նոր տեսակի գութաններ, երկաթէ, թեթև, անուաւոր, որ գիւղականների լեզուով «մաշին» են կոչվում: Չհագհաւ այդ «մաշինները» տարածվում են, բայց թեթևութիւն դեռ շատ չեն տալիս երկրագործներին: Էլի նոյն բազմաթիւ

եզնեն ու գոմէշները են քաշում այդ գութանները, քաշում են իրանց հոչակուած դանդաղկոտութեամբ: Ես հարցրի թէ ինչո՞ւ ձիով չեն վարում: Պատասխանեցին թէ ձի պահելը դժուար է, թանգ է նստում. գարի, գարման, չոր խոտ շատ է հարկաւոր երկու կամ երեք ձի պահելու համար: Այդ ստարկութիւնը, իմ կարծիքով, անչիմն է. գիւղացու համար այնքան էլ դժուար չէ մշակ ձիաներ պահել: Իսկոյն երևում է, որ «մաշինը» նոր երևոյթ է, որին չեն սովոր, որը դեռ չի յարմարուել տեղացիների տնտեսական անհրաժեշտութեանը: Առհասարակ, ամբողջ Ղարաբաղի մասին խօսելով պիտի ասեմ, որ գիւղական հայ ժողովուրդը այնքան սեր չունի դէպի ձին. և այս կենդանին ամենից քիչ է պատահում հայ գիւղերում: պատահածներին էլ... Աստուած օղորմութիւն անէ: Բայց պէտք է տեսնել, որ ինչպէս «մաշինի» թեթևութիւնն ու յարմարութիւնն է գնահատուել, այնպէս էլ մի ժամանակ գնահատուած կը լինի ժամանակը, արագ գրոծելու հարկաւորութիւնը և այդ ժամանակ ծոյլ գոմէշները կը հեռանան «մաշիններից»:

Արեգակը մայր մտաւ Մուաւ սարի գագաթին, կոյտ կոյտ ամպերի հետ: Բայց մենք դեռ գնում ենք, մեր հարթ ճանապարհը չի վերջանում, թէև գիւղացիք ասում են. ահա, ահա այստեղ է, մօտիկ

է։ Իզուր չեն ուրիշ հրկրացի հայերն ասում «զատաբաղցու մի միրուք շալժելը մի օրուայ ճանապարհ է», այսինքն թէ զատաբաղցին հեշտութեամբ մի օրուայ ճանապարհը շատ կարճ կասէ։ Եւ իրաւ, մեր հրկրի հայերն այսպէս են։ Գնում ես, հարցնում պատահած մարդուն. «ոտաեղ է այս ինչ գիւղը, ձիւտ կը հասնեմ։—Չրեզ առջեզ, թուռմեն անցիր, առջեզ կը գայ։ Այդ կարճ պատասխանը լսելով գնում ես, գնում, սպասում ես ամեն մի րոպէ թէ ահա գիւղը կը տեսնես. բայց ոտաեղ է։ Ծեզ հասնելուց յետոյ ես հասկանում թէ ինչ է նշանակում այդ «հրեզ, առջեզ է»... Այսպէս և այժմ։ Գիւղը, ուր պիտի գիշերենք, չը կայ, բայց մեր ուղեկիցների խօսքերին նայած՝ հինգ անգամ մեր առջեզ պիտի զուրս եկած լինէր։ Իսկ մենք անհամբեր ենք սպասում այդ գիւղին։ Չարթ ու հաւասար տափաստանով ձիով գնալը շատ ձանձրացուցիչ է. ուզում ես զուրս գնալ այդ տափակ տեղերից, ազատուել այդ միանման հօրիզոնից. ուզում ես շուտ մտածնալ այդ լեռնային բարձրութիւններին, տեսնել մեծ մեծ տեսարաններ։ Եւ շտապում ես, բայց ուղին քեզ անվերջ է թուում։

Իմ ուղեկիցներն էլ—ես նկատում էի—այս տեսակ ձնշուած դրութեան մէջ էին։ Եւ զարմանալի չէ, նրանք էլ լեռնականներ էին։ Մէկը, մի ջո-

րացած, միջակ կազմուածքի տէր գիւղացի, Մեծ—Շէնիցն էր։ Նա հիւանդ էր, ուստի գլուխը փաթաթել էր շորի մի մեծ կտորով և նրա վրայով էլ գլխին էր հագցրել մեծ բրդոտ փափախը. հագել էր շալէ կոպիտ վերարկուն, խօսում էր թանձր, խռպոտ ձայնով, որի հնչէջները հաստատում էին մարդու իսկապէս հիւանդ լինելը. նա հէնց թարթար էր գնացել դեղօրայք գնելու և այժմ տուն էր գնում փոքրիկ քուռակը հնձած։ Երկրորդ գիւղացին Գիւլ-եաթաղցի էր, մի միջահասակ, շատ բան տեսած և շատ բան արած մարդ, որի մազերը սկսում էին սպիտակել։ Նա մէջքից կռացած՝ նրսած էր ձիու վրայ, շուտ շուտ վառում էր իր չիբուխը և ոչքերը մինչև յօնքերը իջած փափախի տակից դէս ու դէն շարժելով, բերանից բաց էր թողնում ծխի քուլաները և լիզուն ազատութիւն էր տալիս միայն այն ժամանակ, երբ հարկաւոր էր ուղեկիցների տանձարձակ խօսակցութիւնն ընդհատելու։

Իսկ այդպիսի խօսակցութիւն կար մեր խմբի մէջ։ Մեր սէրտերը երբեմն ուզում էր զարմացնել մեզ իր գիտնականութեամբ և փիլիսոփայութիւններ էր անում գանազան թեմանների վրայ. մինչև անգամ պատմեց և վերլուծեց փաթիսեցու և մաքսաւորի յայտնի առակը, որպէս պէ լաւ հասատատ

որ մենք բոլորս մեղաւոր ենք։ Երկու դիւցազունները լսում էին այդ փիլիսոփայութիւնները լուռ եւ յարգանքով։ Հիւանդը շուտ շուտ մատաղ էր դնում տէրտէրի կարգին, իսկ Գիւլ-Եաթաղցին գալիս էր դեպի ինձ իր խորհրդաւոր դէմքը, ծոյլ հայեացքով չափում էր ինձ եւ մի թեթեւ ժպիտ առած իր ալեխառն բեղերի վրայ, չերուխը կծած՝ բերանի մի անկիւնով ասում էր.

— Շա՜տ ես եկած տէրտէր է, հա՜...

Իսկ որ «ես եկած» տէրտէր էր։ Փիլիսոփայութիւնից չանկարծ անցնում էր ծաղրաբանութեան, մի որ և է հանաք էր անում, Գիւլ-Եաթաղցու ծանր ծիծաղը չարժուն և ապա էլի կպչում էր խեղճ հիւանդ Մեծ-Շէնացու օձիքից. ծաղրում էր նրան, որ նա փիլարկուի տակ կտպել էր երիցնու կեղ թուղը։ Այդ ծաղրը մի անգամ, երկու անգամ չէր որ կրկնուեց. տէրտէրը լաւ էր ճանել Հանաքի տուաը։ Բայց թրաաերը հետզհետէ նեղանում էր այդ հանաքներից։ Նրա քէֆին դիպչում էր այդ ծաղրը, նա սկսում էր պատասխանել և ահա այդ իսկ րոպէին մէջ էր ընկնում սակաւախօս Գիւլ-Եաթաղցին, կռացած յետ էր գարձնում իր ծանր ու սառն հայեացքը և յանդիմանում էր հիւանդին, որ նա այդպիսի պատասխաններ է տալիս երեցին։

Բայց մի տեղ հիւանդի համբերութիւնը խա-

պաո կորուեց. ծաղրը խիստ կծեց նրան և նա իր քուռակի կողերին երկու անգամ ոտ խփելով, քիչ առաջ եկաւ և ասաց.

— Ծղամարդութիւնն այդ չէ, տէրտէր. տղայ ես, սրի ձիանքը բաց թողենք։

Տէրտէրը միայն ծիծաղեց, նրա ձին լաւն էր։

— Դու Զալալեանների գիւղից ես, իսկ ես Դալիմահլրասցի գիւղից եմ. փորձ՛ի՛ր, տեսնենք ու՞մ մայրն է տղայ բերել։

Տէրտէրը մի անախորժ, կոշտ խօսք ասաց և իր ձին բաց թողից, հիւանդը նրա ետևից։ Մի ակնթարթում նա թռաւ հեռացաւ, կարծես կերպարանափոխուեց. բարձրացաւ ասպանդակների վրայ, մկրքը դուրս ցցեց, իսկ փոքրիկ ու վոխտ քուռակը, կարծես սիրոջ սիրտը հասկանալով, ջորտոնների այժ տուաւ և գնաց տէրտէրի ձիու ետևից, յայթասրիւնը տարաւ։ Երբ մենք հասանք, հիւանդը մոն էր ածում իր քրանած քուռակը։

— Ասում էի... գարձաւ նա դէպի մեզ։

Ես և ընկերս գովեցինք նրան խեղճ մարդը, վերջապէս, պիտի լսէր մի համակրական խօսք։ Եւ նա ուրախացաւ։ Իսկ Գիւլ-Եաթաղցին էլի փչերը հանեց և սկսեց սառցնող ձայնով յանդիմանել նրան։

— Է՛, անաշէն, պատասխանեց նրան հիւանդը,

ապրում՝ տեղ ընկանք, սիրտս բացուեց, թէ չէ իմ քուռակն ինչ ոյժ ունի, որ այսպէս քշեմ։

Հասկացայ։ Ձիշդ որ մենք դնում էինք մեծ մեծ թումբերի մօտով. ճանապարհը բարձրանում էր, կանաչներն աւելի թարմ և պայծառ գոյն ունէին։ Լեռները բոլորովին մօտեցել էին և այդ պատճառով լեռնաբնակ Աբրին այնքան սրտաճաշակ, որ տերտերի հետ այդպիսի ձիարշաւ սարքեց։

— Հազար անգամ ջրին, այդպիսի կանաչ չեն տեսնի, շարունակից նա ցոյց տալով մի թումբ, որ իսկապէս շատ դեղեցիկ կանաչած էր։ Նա համեմատում էր այդ կանաչը դաշտավայրի չջրուած կանաչի հետ։

Նրա լեզուն այդպէս բացուեց։ Հայրենիք բնութիւն, փառք քո դիւթական գօրութիւնդ, մարդը կէս ժամ որքի էր նման, այժմ խօսում, ծիծաղում է...

Վերջապէս դիւղը հասանք։ Մենք մտանք մի ոչ այնքան լայն և մեծ կիրճ, որ երեք կողմից փակուած է լեռնային բարձրութիւններով։ Այդ կիրճում տեղաւորուած է դիւղը, որի անունն է Մըրզակիւղ, կամ եթէ կամենում էք, Մարզակերտ. ես էլ այս վերջին անունն էի գործ ածում, բայց դիւղացիք ծիծաղում էին ինձ վրայ, կարծելով թէ չեմ կարողանում արտասանել դիւղի իսկական անունը—Մըրզակիւղ։ Ես, իմ ընկերը և Գիւլ-Եա-

թաղցին հիւրընկալութիւն գտանք տեղական քահանայի տանը. իսկ տերտերն ու հիւանդը ուրիշ անկր գնացին։

Մեզ հիւրասիրող քահանան մի ուրախ մարդ էր և սկսեց մեզ զուարճացնել զանազան պատմութիւններով։ Ես իմացայ, որ Մարզակերտը ունի 140 տուն բնակիչ և նայէ կարմելի, մի ութ կամ ինն տարի առանից առաջ։ Բնակիչները այստեղ եկել են Կաւատպատ գիւղից, որ այսօրից շատ մօտիկ է. ունէին մի նոր եկեղեցի և երէց քահանայ։ Բայց, ինչպէս երևում է, այսօրուայ հին ժամանակները շէն է եղել. անունն էլ—Մարզակերտ—հնութիւն է բարոզում։ Ցէր հայրը պատմեց, որ գիւղը ապրատ գիւղ չէ. ամենքն ունէին բաւականաչափ վարելահող, առատ հունձ են հաւաքում. մեր տեսած դաշտավայրը իր մեծ մեծ արտերով հէնց այս գիւղին է պատկանում։ Բաւական էպէնքանն ասել, որ ներկայ 1889 թուի առաջին կիսամեակում, երբ ամեն տեղ հացի պակասութիւն է և թանգութիւն, մարզակերցիք ունին բաւականաչափ պաշար և դեռ ծախում են։ Գիւղը, առհասարակ, լաւ ապրուստ ունի թողեց ինձ վրայ։

Գ.

Առաւօտ է, շատ կանուխ մենք կանգնած էինք մեզ հիւրասիրած տան բակում։

Օրը կիրակի է և ոչ հասարակ կիրակի, այլ կրկնազատիկ, կարմիր կիրակի։ Անունը կարմիր, ինքը այնքան սիրելի ժողովրդին... Այդ օրը փոքրիկ զատիկ է կատարվում, այդ օրուայ համար նորից ձու են կարմրացնում։

Ձեմ կարող ասել թէ կեանքումս այդպիսի գեղեցիկ կարմիր կիրակի եմ տեսել։ Մեր լեռները գարնան մեծ մասը մթնացնում են մեր գլխին, այնքան առատ ամպեր են ծնում, այնքան յորդ անձրևներով են լուացվում։ Բայց այս օրը... Մի հրաշալի կապոյտ երկինք կախուած էր մեզանից շատ բարձր. մի կէտի չափ ամպ էլ չէր տեսնվում նրա սիրուն, մեղմ դէմքի վրայ։ Արեգակը առաւօտեան չքնաղ ու ցուրտ ճառագայթներով լուսաւորել էր հիանալի կանաչ, փափուկ, թաւմ բնութիւնը. հրաշալեայ շուաքները հեռուհեռ հաւաքվում էին, կարճանում. տաւարը բառաչելով արօտ էր գիմում, գիշերը բացօթեայ արածած ձիանները տուն էին գալիս։ Գիւղը աօնական կերպարանքի մէջ էր. բոլոր երդիկներից էր ելում կապոյտ ծուխը, որովհետև բոլոր օջախները էին վառած։ Զարդարուած, պճնուած հարսներ ու աղջիկներ արդէն ճանապարհ են ընկել դէպի ուխտատեղին, դէպի Ինամասանց անապատը։

Եւ ես ուրախ եմ, երջանիկ։ Դարձեալ գիւ-

ղումն եմ, ուրիշն։ Դարձեալ ինձ շրջապատում է գիւղի մթնոլորտը։ Քաշուել, հեռացել է քաղաքի ճնշող, փայտացնող կեանքի յիշողութիւնը։ Այստեղ ամէն մի ազատութիւն, գեռնափոր խրճիթից դուրս Աստուծու ազատ ու պայծառ աշխարհն է հրաւիրում իր անսահման լայն ծոցը մտնել։ Ահա նա այդքան մեծ, այդքան գօրեղ, տանում է, հեռո՜ւ է տանում միտքն ու հոգին։ Չլսուքներ չը կան այս աշխարհում. բայց այս սրտաբաց պարզութիւնը, այս կատարեալ մաքրութիւնը հրաշքի չափ կախարդիչ է։ Ահա գիւղական աշխարհը, ահա նա իր անվերջ ցաւերով ու վշտերով, իր այսպիսի գեղեցիկ օրերով, որոնց համար, ճշմարիտ, արժէ ցաւ ու վիշտ կրել։ Եւ մարդը, այդ աշխարհի տէրը, որի երեսի ժպիտն ու արցունքը միայն և միայն այդ լայնատարած երկնքի կամքին է, այդ մարդը սովորական մարդուց շատ հետաքրքրական է. այդ աշխարհի կեանքը, չը նայած իր ցնդաբանութեան, իր սրտաճմլիկ անօգնականութեան, դարձեալ զօրաւոր է բնութեան ծոցում հանգիստ որոնող սրտին քաղցրութիւն տալու։ Քաղցրութիւն ամէն մի հատորակ մանր առարկայից. քաղցրութիւն, որ պատճառում է նորածին հորթի սիրուն դունչը, ժայռի տակ տեղաւորուած ջրաղացի փրփրած ջուրը, աղբակոյտի վրայ կանգնած մերկ երեխայի զարմա-

ցած, հոսկացող և տարակուսող դէմքը, մի որ և է ծառ, որ Աստուած գիտէ թէ ինչպէս ծառուել, կամ է ընկել խոլխոլաման բերանից ու իր կալող ձիւդերը տարածած, կարծես, լարուած ուշադրութեամբ ուզում է անդունդի գաղտնիքը քննել: Որքան շատ դիտես այդ քաղցրութիւններից, կը տեսնես որ բոլորն էլ սրանց չափ պարզ են, հասարակ, չափազանց հասկնալի բայց այդ բոլոր մանրութիւնները հաւաքւում են, միանում, ձուլւում են մի ահագին շղթանի մէջ, որ ինքը, գիւղական աշխարհն է: Այդպէս, այդ խաղաղ աշխարհում եմ եղել:

Մենք իմուժ ինք թէյը թարմ կամէի հետ եւ մինչդեռ մեր ձիաները ջուրն էին տանում, պատրաստուում էին, ես ականջի աչքի անցկացնել մեր հիւրընկալ տէր հօր փոքրիկ գրադարանը, որ դրսած էր մի փոքրիկ հին, թոզով ծածկուած սեղանի վրայ: Այնպիսի մի հետաքրքիր բան չը դտայ: պարապ թիւնից թերթում էի «Աղբիւր» ամսագրի մի քանի հրատարակութիւնները, նայում էի պատկերներին: Տէր Հայրը այդ անունով, ասաց թէ ինքն ունի մի շատ լաւ գիրք և հայցնելով թէ արդեօք ես փոքր ի շատէ հասկանում եմ գրոց լեզուն, պատուհանից վերցրեց և ինձ տուեց մի փոքրիկ կաշեկազմ գիրք, հին տպագրութիւն: Բարոյական և հմայատակրական անուանած գրքերից

մէկն էր դա, ուղիղն ասած՝ առակների մի հաւաքածու, հեղինակութիւն մի ինչ որ վարդապետի: Ես կարդացի երեք թէ չորս կտոր, հասկացայ թէ ինչու այդ գիրքը այնքան գովասանքի է արժանացել, ինչու այնքան շատ է կարդացուել, որ քրքրուել է: Եմ կարդացած կտորները սառառայի և գեհերի մասին էին, որոնք միշտ յայտնւում են կանանց կեղտպատանքով: Կինն անհաւատարիմ է, կինը տուն քանդող է, կնկանից պատրաստ կաց, կանչում է այդ գրքի աւելն մի թերթը, աւելն մի տատր: Ահա հայ մարդու լոգէալը ահա այն մարդերը, որոնց վրայ նա հիմնում է իր փիլիսոփայութիւնները կնանքի զանազան հրէշպնների վերաբերմամբ: Ահա թէ ինչ տեսակ գաղափարներ է երկրպագում հայ մարդը: Նրա համար ամենապարզ ճշմարտութիւնը հէնց այդ է, այդ գիրքն է, որ ժեծատրնները, գրի սեւն ու սպիտակը իմացողները գովում են, յարգում: Սատանաների ու գեհերի հետ այդքան մտերիմ յարաբերութիւն և նմանութիւն ունեցող էակները, այդ կանայք, մի օր պիտի աշխարհը կործանեն: Նրանք հարիւր լեզուի տէր են, նրանք ամենամեծ ճշմարտութիւններին, մարգարէներին են խաբել. ծ, պատրաստ կացէք նրանցից:

Բայց ովքե՞ր են դրանք, այդ սարսափելի արարածները, այդ կանայքը: Մենք շուտով նրանց կը

տեսնենք, շատախնք միայն ձի նստել և շուտ գնալը եւ ահա Ձիանկրի վրայ ենք, գնում ենք դէպի փոքրիկ սարերը։

Մի ամենաչքնաղ լոյսի մէջ ենք ոտքոտուած, մի այնպիսի գունեկան, թարմացնող լոյսի, որ կարող է տալ միայն ապրիլի պարզ առաւօտը մի այս տեսակ հարուստ լեռնոտ երկրում, այն էլ կարմիր կթսակի առաւօտը։ Մարդու աչքը շլանում է մի այսպիսի լոյսի տակ նոր, մանկական քնքոյշ շունչ քաշող կանաչներից։ Եռում է, հռանդով գործում է նորահաս կեանքը, ամեն քայլը ցոյց է տալիս թէ ինչպէս է նա մեծանում, զարգանում մարդը երես առ երես կանգնած է բնութեան հզօր, կենդանատար հանճարի առաջ։ Երևում են բազմատոհմ տեսարաններ, թռուցիկ ու սարեկ, կիրճեր, նեղ հովիտներ ու լեռնագագաթներ։ Ահա ձորի մէջ, ճանապարհի մի կողմում ձգուած են մեծ մեծ ու խիտ այգիները։ Նրանց մէջ տեղ տեղ սպիտակին է տալիս, մաքուր հայկական պէս պսպղում է լեռնային վճիտ առուակը և մարդը, այդ գեղեցիկ տեսիլի ու այգիների տէրը, շարժվում է, խօսում, բահն ու բրիչը ուսին գցած։ Նա իր աշխատասիրութիւնը միացնում է բնութեան անխոնջ գործունէութեան հետ և սառն երկաթը, ծանր ու դանդաղ գործելով, տալէցտալի նորանոր գեղեցկութիւններ է ա-

ւելացնում, նոր և նոր շէնք ու շինարհք է շատացնում։ Այժմ երկաթը այդպիսի շինող ձեռքերում է, այժմ այն երկաթը չէ, որ մի ժամանակ քանդել, աւերել է այս աշխարհը։

Ձորից բարձրանում ենք, մեր առջևը նոր նոր բարձրութիւններ են բռնում։ Այդ բարձրութիւնների վրայով մեզ տանում է դիւզական ճանապարհը։ Ահա շատացան մանր ու երկար սարերը, խումբ խումբ, առանձին առանձին ցրուած են աշխարհի ամեն կողմերը, մի հիանալի անկարգութիւն են կազմում այդ տհաճ սարերի միջից վեր է ցցուել Հսկայական Մուսաբ։ Մենք մտնում ենք մի խիտ և կարճահասակ անտառ։ Այդ անտառից մենք տեսնում ենք միայն մեր առջևը բարձրացած սարը և նրա հիւսիսային սառոտի մօտ տեղաւորուած Մոխրաթաղ հայաբնակ գիւղը։ Գիւղի մէջ բարձրացած է քարաշէն մեծ տուն, ուր բնակվում է կալուածատէր Նիկոլայ-բէկ Փիրումեանցը, Ջրաբերդի մելիքների միակ ժառանգը։

Մեր նեղ ու զով ճանապարհը մի երկու պոյտ էլ ալաւ, անցկացրեց մեզ այդ սարի քամակը։ այստեղից, անտառի միջից ուրիշ տեսարաններ, ուրիշ ձորեր երևացին։ Այդտեղ մենք հատանք ուխտաւորների հետևից։ Դրանք մեծ մասամբ կանայք էին, մանաւանդ նորահարսներ և դեռահաս աղջիկներ։

Ամէնքը հագած էին ազնական նոր շորիկ, որոնք ամբողջովին կատմիր գոյն ունէին։ Այդ կարմիր հագուստներըը երեսում էին ծառերի հաւիկ և ընդհանուր գիւղերի ահագանքը, այդ գարնանային բնութիւնը, աւելի հրապոյր, աւելի գեղեցկութիւն էին տալիս այդ կայտառ ու աշխոյժ, այդ նոր բացուած տերևներին պէս թարմ ազատամծների ընտրիւնը։ Նրանք գնում էին ոտաբոբիկ, լուռ էին, տանում էին իրանց նուէրները. մէկը մի աքաղաղ, մէկը մի ջուխտ մոմ։ Ա՛յ, այդ օրը մի մարիշ տեսակ օր էր։ գիւղական աշխարհը հարիւր թէ կարողանայ աւելի չքնդութիւն գոյց տալ։ Աղքատութիւնն չէր երեսում, ամէնը կատարեալ էր, բնութիւնը զարդարուն, մարդիկ այդքան ղուարթ, գեղեցիկ։ Ահա գնում է նորահարսը։ Նրա կարճիկ տրխալուղը կարմիր է, կարմիր է և երեսի շորիկը. իսկ աւելի կարմիր է գլխին գցած քողը, որ ծածկում է նրա ամբողջ դէմքը և նա երկար ձեռքով բռնած է քողի ծայրերը, որպէս զի ճանապարհը տեսնէ։ Սկսած գիւղական խաչ տեղերում, ճամբիների անթափանցելի ծառում էլ նորահարսը չը պիտի բաց անէ իր դէմքը։ մինչև տաճարը սոցիկը կարողանում է ամօթխածութեամբ դէպի վեր նայել, մի կարճ հայեացք գցել և էլի ճանապարհին նայել։

Այսպէս շարունակ ոտաբոբիկ կանանց խմբերի

առաջն ընդունելով, շարունակ գնալով ծառերի միջով, մենք դուրս հինք գալիս մի բլրի գլուխ ուր կանգնած են մի փոքրիկ շինութիւն մատուռի ձևով և մի հաստատակ, դիւզական տուն։ Հասել հինք, այդ մատուռն է։ Ինն մատանց սրխատակելին։

Ջիուց լիմնելուն պէս իմ ուշադրութիւնը գրաւեց մատուռը. բայց ոչ թէ շինութիւնը, ոչ նա մի շատ հաստատակ բան է, որ նոր է սկսուել և հարիւր հազ վերջացել։ Իմ ուշադրութիւնը գրաւողը այդ մատուռից լսուող ձայներն էին։ Ես լսում եմ քահանաների ախտալ և ծանր երգեցողութիւնը և մի և նոյն ժամանակ լացի ձայն, այն էլ խմբական լացի ձայն։ Զարմացած գնում եմ դէպի մատուռի դռները և ինչ եմ տեսնում։ Փոքրիկ մատուռը ձայրէ ի ձայր լեցն է կանանց բազմութեամբ. փոքրիկ բեմի առաջ շրջած են քահանաները, ախտալ ձայնով «աէր ողորմեա» են երգում, յաճախ ժամեն են կատարում։ Նրանց հետը շրջած են մի քանի տղամարդիկ։ Ծունկների վրայ թափուած է և կանանց բազմութիւնը, որ տեղ տեղ, այնպէս խտացած է, որ կարծես թէ իրար վրայ են շրջած։ Եւ ահա այդ բազմութիւնը ողբում է, սուգ է կանչում։

Ես ճնշուի տարած, այդ ախտալ, բնկերկուն ձայները, որոնք խեղդվում էին ջերմ արտասուքների մէջ, մի յոգեում բռնեցին իմ սիրտը. այդ

ընդհանուր կոծը, որ ախուր ձայնակցում էր եկեղեցական ախուր երգեցողութեան, այնքան թոյլ չէր, այնքան անմիտ չէր, որ դեռ բան չը հասկացած մի օտարին չը հարկադրէր եթէ ոչ նոյնպէս ողբալ, գոնէ ամենաախուր արտասրութեան առիթ մտնել, մի այնպիսի արտասրութեան, որ ստանում ես մի սգատուն մտնելիս։ Բայց այստեղ սգատուն չէր։ Այստեղ այս բազմութիւնը, ես յանկարծ հասկացայ, արտասուքով ադերսում էր երկնքի դթութիւնը։ Տարին բարի լինի, բերքերը առատ, աշխարհը խաղաղ, մեռնողը քիչ, ապրողը շատ—այս էին խնդրում այսքան մարդիկ։ Նրանք, այդ սգատուները, մեղաւոր են, այդ հասկանում են և ահա տեսնում են որ անձրև չի գալիս. մեղաւոր, ապականուած աշխարհ, որ կարող է արբուել, մաքրուել միայն այսպիսի ջերմ արտասուքներով։ Ահա հաւատ...

Լացը երկար էր շարունակվում։ Եւ ես մատուռի շէմքում կանգնած, սառոիկ զգացուած նայում էի այդ բազմութիւ օրօրուող գլուխներին, մեղմ կեցուով այրուող դիւղական բազմութիւ դեղին ճրագներին։ Ահա, մտածում էի, սրանք, այս կանայքն են, որոնք մեր հին վարդապետների և մեր ժողովրդական փիլիսոփաների հասկացողութեամբ սատանայական արարածներ են, որոնք պիտի աշխարհը

կորճանեն, որոնց չը պէտք է հաւատալ։ Չէ՞ն մոլորութիւն, որի վրայ հիմնուած են մեր կանանց համար ստեղծած հասարակական և ընտանեկան օրէնքները, որոնք այնքան ստոլացրել են նրանց, այնքան ճնշել են, խլել նրանց լեզուն ու կամքը։ Նրանք, իմ առջևը թափուած այդ քնքոյշ արարածները, տպամարդի չափ զորձ են կատարում և երբ տեղն է գալիս, ամբողջ աշխարհի համար սգատու են դառնում, երկնքի ողորմութիւնն են պապատում ոչ միայն սուտած, չոր խօսքերով, այլ այսպիսի հոգերուկ ապտակներով, ապիոպոմ հիծիծանքներով։ Եւ դեռ նրանք վատ են... Իսկ ապամարդի՞կ, որոնք մի կաթիլ արտասուքի համար էլ պէնքան ժլատ են։ Օ՜, դրանք են ուրիշներին վատ ասողը...

«Ծէր ողորմեա»-ն վերջացաւ, լացն էլ հետզհետէ կարուեց և ժողովուրդը սկսեց դուրս գալ մատուռից։ Աւետիքի դէմքերի վրայ գրօշմուած էր մի ախորութիւն. ամենքը երկիւղով էին աչք բարձրացնում դէպի պարզ երկնքի հրաշալի կապուտակութիւնը. կարծես այդ դիզեցիկ օրը սև ուրուականի պէս էր նրանց նայում, կարծես այդ գեղանկար բարձրութիւնները, ամեն տեղ տարածուած ծառերի խմբերը և կանաչած, կանաչ թաւիշի պէս պսպղող արտերը լաց էին լինում նրանց երեսին։ Անձրև էր հարկաւոր...

Ես գնացի տեսնելու Մելիք-Հաթամի աւերակ ապարանքը, որ այս մատուռից շատ մօտիկ է և գտնւում է մի կանաչազարդ տափարակ տեղ, այն իսկ ձորի գլխին, որ գալիս է, խորանում, անցնում է մատուռի առջևից դէպի ցած, դէպի Կուտապատի կողմը։ Գնալիս ճանապարհայ մատուռում հրդոյ գիւղական քահանաներից մէկի հետ։ Դա մի յաղթանդամ, արի տարեց էր, երկարահասակ, թուխ մաղերով, քիչ արևատ և անմխիթարութիւն արտայայտող դէմքով։ Առաջին բարևից յետոյ նա իսկոյն պարծանքով յայտնեց, որ ինքը Ղարաբաղի պատմական նշանաւոր հերոս Դալի-Մահրատայի ժառանգներից է. և պատասխանութիւն յայտնեց առաջնորդելու մեզ ոչ միայն այսօր, այլ և վաղը, միւս օրը։ Ես, իհարկէ, ուրախ էի Տէր-Հայրապետի ընկերակցութեամբ. այսպիսի տեղերում քաղաքի թոզերից փչացած մարդը միշտ կարօտ է մի յաղթաբազուկ օդնականի։ Նա շատուց մի երկու բան պատմել այդ պատմական վարդապետի փոթորկալից կեանքից, խոստացաւ ցոյց տալ ինձ նրա քաջագործութիւնների մի երկու տեղերը։

Մենք հասանք Մելիք-Հաթամի ապարանքին։ Ղարաբաղի զանազան կողմերում իմ արած ճանապարհորդութիւնների ժամանակ ես չը կարողացայ տեսնել իշխանական մի ապարանք։ Տեղերը կան,

այո, մեծ են կիսատ-պռատ պատեր, ինչպէս, օրինակ, Ջալալ իշխանի դարպասները. բայց մի այսպիսի ամբողջութիւն ոչ մի տեղ չը կար, ես առաջին անգամն էի տեսնում։

Ես կանգնած էի մի մեծ տան մեծ դռնելի (դարբազայ) առաջ։ Այդ դռնեղով մտանք մի քառակուսի լայն բակ, որի շուրջը քառակուսի ձևով ձգուած էր զանազան տեսակ շինութիւնների անընդհատ շարք։ Տան վրայ արդէն բռնացել է աւերումը, ամբողջ բակը լեցն է շինութիւններից թափուած քարերով։ Բայց և այդպէս, մելիքի դահլիճը և նրա կից փոքր սենեակները բոլորովին ամբողջ են մնացել։ Ես մտայ ներս, թէև ուղեկիցս ասում էր թէ չարժէ մտնել, որովհետև շատ լու է լինում այդտեղ. երկար նայեցի, տնդրեցի, հասկացայ իշխանական տան բոլոր մնացուածութիւնները։ Բոլոր սենեակները, ինչ ասել կուզի, քարուկրի են, չունին պատուհաններ և լոյսը ներս է թափանցում կատարի վրայ թողած կլորը ծակից, որ երդիկն է։ Բաւական լայն և մեծ է դահլիճը։ Պատերում շինուած են շատ և անկողին դարսելու տեղեր, այլ և փոքրիկ խորշեր մանր իրերի համար։ Երդիկի տակ, յատակի վրայ, երևում է օջախի տեղը. այդ տեսակ օջախներ այժմ էլ գոյութիւն ունին գիւղական հին ձևի տներում և Ղարաբաղի բար-

բառով կոչվում են «վրթօջախ»: Կարելի է ասել, որ այդ օջախը մելիքի դահլիճում վառարանի պաշտօն չէ կատարել, որովհետև սենեակը նախ կոմից մշտական ծխից սևացած չէ. բայց թէ օջախ հարկաւոր է ամէն մի տան մէջ, այդ ևս պիտեմ նրա նշանակութիւնից. օջախը տան սրբութիւնն է համարվում, նրանով երդվում են. ինչու՞ ոչխին մելիքի մի ժամանակ հարուստ դահլիճը չը պիտի ունենար այդ սրբութիւնը: Ամբողջ տան պատերում մի կտոր փայտ չէք գտնիլ. առաստաղներն էլ քարուկրի են, գմբէթաձև, կոլոլակ բարձրացած, ինչպէս տաճար են, թաղ տուած:

Այդ դահլիճը հզել է մելիքի հիւրանոցը: Նրան կից կան չորս զանազան մեծութեան սենեակներ, ինչպէս երևում է, ընտանիքի անդամների համար: Այդ բոլոր հինգ սենեակները շինուած են բակի հիւսիսային կողմում, երկար դէպի հարաւ: Դահլիճի առջև կայ մի փոքրիկ, սիւնազարդ և դեղեցիկ սրահ: Իսկ բակի հարաւային կողմից դէպի հիւսիս են նայում զանազան անասնական շինութիւններ, ծառաների համար շինած սենեակներ, թոնրատուն. արևմտեան կողմից առանձնակրպակ դեղեցիկ նկուղներ գինի և այլ պաշար պահելու համար: Ամբողջ շինութիւնը մի յարկանի է, չունի առանձին ջրհորպարիսպ: Դահլիճի և նրանից կպած սենեակի դռների ճակատին կան արձանագրութիւններ, որոնք լաւ չեն կարդացվում. ես նկատեցի մի բարբարոս ձեռքի հետք, որ կոտրել, եղծել է շատ տեղեր: Կարողացայ կարդալ միայն Մելիք-Յաթամ, Մելիք-Իսրայէլ անուններըը և այն, որ այդ գեղեցիկ շինութիւնը (արձանագրութեան խօսքերն են) շինուեր, վերջացել է Աստուծու օգնութեամբ: Արձանագրութիւններըը կարելի էր կարդալ երկար ժամանակ զոհերով. ես աւելորդ համարեցի այդ, կարծելով թէ ուշացած կը գտնեմ Զալալեանի ճանապարհորդութեան մէջ: Սակայն ոչքան մեծ եղաւ զարմանքս, երբ յետոյ թերթելով այդ ճանապարհորդութիւնը, չը գտայ նրա մէջ որ և է խշկանի տան արձանագրութիւն: Բանից երևում է, որ Զալալեանը միայն եկեղեցիների ու վանքերի արձանագրութիւններն է հաւաքել...

Մինչդեռ ես գլուխ էի պատռում գժուար փակագրութիւնների վրայ, հնան երկու ուրիշ քահանաներ և մի քանի գիւղականներ: Խօսք բացուեց շինութեան և շինողի մասին. և ես զարմանքով լսեցի ծխունէի քահանայից, որ նա մի յիսուն տարի սրանից առաջ այս իսկ դահլիճում ժամահաց (քելեխ) է կերել: Մնացածներն էլ հաստատեցին այդ և պատմեցին որ մելիքների ժառանգները մինչև վերջին ժամանակներս այստեղ են բնակուել:

Քաղաքն տարօրէն ամէն չէր, որ այնպէս անխնամ և ամբարակ է Թոդուած Զրաբերդի ակերսի այս գեղեցկաշէն, պինդ տպարանքը. այժմ գիւղացիներն այստեղ իրանց տուարն են պահում, այդ պատճառով էլ բաւիր լեզն է ալաեղութիւններով։ Ես չը գիտեի թէ ուժին մեղադրեմ։

Տպարանքի չորրորդը, երկար տարածութեան վրայ երեւում են անտաեղեր, որոնք ցրուած են գեղի տարբ բարձրացող լանջերի երեսին։ Այստեղ է եղել Մոնթրաթոդ գիւղը, որ, չը գիտեմ թէ ինչ պատճառո՞վ փոխուել է, գնացել գեղի հիւսիս, տարի միւս կողմը։ Մի մեծ գիւղը անհետացել է, Թոդելով իր գոյութեան մասին միայն փոսեր միայն և ոչինչ ուրիշ տեսնել, ոչ մի քար անգամ։ Իսկ մեզիքի ապրանքը մնացել է ամբողջ, գեղեցիկ և միայնակ կանգնել է կանաչազարդ դաշտում, լուռ, տարտափետի կերպով լուռ տպրում է գիւղ մի գերեզմանատան կեանքով, տպրում է մեռած, կանգուն է չընչացած, չորացած...

Գիւղացիները խօսում էին անցեալի և միայն անցեալի մասին։ Պատմում էին ասեղութիւններ Մելիք Հաթամի, Մելիք-Միժրումի ժամանակներից. պատմեցին նաև թէ ինչպէս կուսակալ Մելիք-Վանեին տզատել է Շահբուլաղի բերդում շրջապատուած ռուս զօրաբաժինը խոպան չնչուելուց, թէ

ինչպէս է նա գիշերը ուրս գնուարներին փախցրել, գուրս բերել պաշարող պարսիկների շրջանից և բերել է այս իսկ ապարանքում ծածկել նրանց։ Զը մոռացան նաև յիշել որ սարերում կան եկեղեցիներ, որոնք աւերուել են Լանկթամուրի ձեռքով։ Լանկթամուր և Լանկթամուր ամեն տեղ ուր որ գնում էր, ուր երկու խօսք էր հարցնում մի հին աւերակի մասին, Լանկթամուրի անունն էր լսում։ Ո՞վ գիտէ, գուցէ կաղ հրէշը այս բոլոր տեղերը չի էլ տեսել, աւերել։ Բայց նրա արշաւանքը այնպիսի սոսկալի յիշատակ է թողել, որ ամեն մի աւերմունք նրան են վերագրում։

Գ.

Կէսօր էր։ Ինձ հետ եղած գիւղացիներից մէկը հրաւիրեց ճաշի, մատաղ ուտելու։ Ինն-մասը այդ րոպէին շրջապատուած էր ուխտաւորների ահագին բազմութեամբ։ Կանայք, աղջկերք, մեծ ու փոքր երեխաներ այնպէս էին միմեանց խառնուած, որ համարեա շարժուելու տեղ չը կար։ Գեղեցիկ դիրք ունի այդ ուխտատեղին։ Ամէն մի ծառի տակ, կանաչ խոտերի վրայ նստուած էին մարդկանց խմբեր, սուփրա—սեղան բացած։ Զը կար բոլոր ուխտադնացութիւններին յատուկ ուրախութիւնը.

ջը կային ազատականներ, քէֆի ձայներ, չէին լսվում գնաձայն, փողի կամ նայն իսկ գիւղական սրինգի հնչիւնները։ Լռութիւն էր ամբոխը, միայն խուլ ապրմունք էր տիրում։

Մեր սուփրա—սեղանը բաւական երկար էր և նրա շուրջը բոլորուեցան բաւականաչափ տղամարդիկ և բոլոր չորս քահանաները։ Ես իմացայ որ մեզ հիւրասիրող գիւղացին շատ հարուստ մարդ է, իհարկէ գիւղի հարուստ. ունի մի քանի հազար րուբլի, անշարժ կալուածներ, մեծ թուով տաւարներ։ Օգնում է ամենքին, թէև այդ օգնութիւնը շատ թանգ է նստում. նա մեծ տոկոսներ է պահում, ուրեմն վաշխառուի մէկն էլ։ Բայց իրան նայելիք, կասելիք թէ մի հասարակ գիւղացի մշակ է, որը եթէ այնպէս առողջ է, ղուարթ խօսում է և խօսքը տեղ հասցնում, պատճառն այն է, որ լաւ աշխատասէր մարդ է։ Հայի վրայ ես միանգամայն ձանձրացայ մեր գիւղական քահանաների խօսք ու զրոյցից։ Երիտասարդներ են, նոր սերնդից, չը գիտեն ծեր քահանաների պէս իրանց լաւ պահել, համեստութիւն չունեին, ասում են աչ ու ձախ չը նայելով, խօսքի կարողութիւն չեմանալով և ուշադրութիւն չը դարձնելով սեղանակից գիւղականների դժգոհութեանը։ Ժամանակի որդիք են և կարծում են թէ իրանց խելօքութիւնն են ցոյց տալիս այդպիսի աննեղելի հանաքներով։

Շուտով ես թողեցի այդ գեղեցիկ ուխտատեղին, այդ ահագին բազմութիւնը, որ ոչ գրից, ոչ մի հատ բերանից չէ լսել քաղաքավարութեան, այնինչ խրատական մի խօսք և այսուհետև էլ չը պիտի լսէ, քանի որ այդ են նրա հոգևոր հովիւները։ Մենք ճանապարհ ընկանք դէպի Մեծ-Շէն անունով գիւղը, որտեղից պիտի գնայինք Երիցմանկանց վանքը։

Կէս ժամից յետոյ անտառի ծայրից երևաց Մեծ-Շէնը։ Անունը մեծ, ինքը մի տղրմելի բան, քառասուն տանից ոչ աւել։ Այդ փոքրիկ մեծութիւնը տարածուել է մի լեռնային շղթայի հարթ տեղատեղում և շրջապատուել է հիանալի տեսարաններով։ Կանաչը աւելի ևս թարմ է, անտառները աւելի ևս գեղեցիկ։ Գիւղը նահապետական կերպարանք ունի. ցածրիկ, գետնատարած տնակներ, մի փոքրիկ, ազքատ եկեղեցի, խոզեր և խոզի ձտեր աղբոտ փողոցներում թաւալիլիս—ահա այդ մեծութիւնը։ Մենք մտնում ենք մի ոչ այնքան խոր ձոր, որի մի կողմից դուրս է գալիս գիւղի աղբիւրը, որ Պլպլան անուն ունի։ Դէպի ցած, ձորն ի վայր, գիւղի պզինեկն ու բանջարանոցներն ենք տեսնում, իսկ վերի կողմից, ընկուզենիների հաւից, լսվում է մի հաստ ձայն, որ բարձր երգում է մի խիստ տխուր եղանակ։ Ի՞նչ անշնորհք երգիչ է, միթէ ինքը չի՞ լսում իր ձայնը...

Մենք իջանք Տէր-Հայրապետի տանը։ Աբեղան այնքան զօրեղացել էր այս հովտաւան տեղում, որ մենք ախորժանքով նստեցինք պրսում, խոտածաւի *) շուաքում։ Այդտեղից ես նայում էի դիւղի շըրջակայ բնութեանը, անհամար օարերին։ Մանաւանդ շատ էր իրան նայել տալիս դիւղի հիւսիս-արևմըտեան կողմում դէպի վեր ցցուած մի սարը, որ Խարթապատուկ է կոչվում։ Նա այս կողմից համարեա ակլոր է և որքան ուղղաձիգ կողեր ունի։ Այդ սարի գլխին է գտնվում դիւղի սուրբը. Տէր-Հայրապետի Հայրը, որ նոյնպէս քահանայ է, այնտեղից եկաւ ահագին փափախը գլուխը քաշած, տրեխները հագած։ Ինքը, մեր առաջնորդը, Ինն մատանց անապատումն է ծնացել, խօսք տալով մեզ որ շուտով կը գայ մեր եռևից և իսկոյն կը ճանապարհուենք դէպի երից մանկանց վանքը։

Բայց անցնում է ժամանակը, ամբոխը չի գալիս և մենք իսկույն ենք նայում մեր եկած ճանապարհին։ Շուաքը, անգործ ընկնելը և միշտ մի և նոյն տեղին նայելը ձանձրացնում է։ Իսկ ընկուզենիների եռևում բարձր երգողը չի լսում. անպատճառ լսում է նոյն ախորը, հասա ձայնը։ Ես իմ անբաւականութիւնը յայտնեցի. այդքան էլ գլուխ

*) Խոտածաւ Ղարաբաղցի դիւղականների մէջ նշանակում է խոտի դէզ։

կը ցաւացնէն մի անախորժ երգ լսել տալու համար... Ինձ հասկացրին, որ ընկուզենիների եռևում է գտնվում դիւղի գերեզմանատունը և այդ երգ չէ, այլ մի կնոջ ողբը, որ կատարվում է այս քանի օրերը մեռած երիտասարդի վրայ։ Ես զարմացայ. միթէ այսքան ժամանակ ողբալուց չը յոգնեց, այդքան ատլակելուց, այդքան արտասուք թափելուց չը ձաքուեց։ Ի՞նչ անէ խեղճը, բացատրից ինձ մնա կանդնած դիւղացին. տեսնում է աշխարհն այսպէս պայծառ, իսկ իր որդին չը կայ. օրն էլ մեծ օր է։ Եւ ես հասկացայ և ես ցաւակից գտայ այդ խեղճ մօրը։

Լսիկանն էլ լռեց, բայց Տէր-Հայրապետ չը կայ։ Ուրեմն այս դիշեր Մեծ-Եկեռնում ենք։ Բայց օրուայ ծնացորդը բոլորովին իզուր չը կորցնելու համար գնացինք Խարթապատուկ։ Ճանապարհը գնում է ոչ թէ դէպի դիւղը գարձած կողմով, որ, ինչպէս ասացել, պատի պէս ուղղաձիգ է, անմատչելի, այլ միւս, հակառակ, կողմով։ Այդ կողմը ծածկուած է անտառով, որի գեղեցկահասակ ծառերը կարծով կանոնով խառնուած են մեր հարթ ու լայն ճանապարհի երկու կողմին և այդ ճանապարհը մի հիանալի ծառուղի են շինում, որ մշտական ստուերի տակ է։ Մի տեղ այդ գեղեցիկ ծառուղուց բաժանվում է մի փոքրիկ կածան, որ լանջն է վեր է ա-

գում ծառերի ստանքով։ Սուրբի կածանն է որ, սակայն, մատչելի է ձիու համար և մենք շուտով դուրս ենք գալիս Հարթաստուկի գլուխը։

Բաւական բարձր սար է, և նրա գլուխը, իսկ որ, հարթ է ու բաց։ Այդտեղ երևում են ինչ որ շինութիւնների պատեր, որոնք մասամբ թաղուած են գետնի մէջ, թափուած է քարերի մի մեծ կոյտ։ Կոյտի մօտ երևում է մի ցածրիկ ողորմելի շինութիւն, մի կիսով ծածկուած հողով և ծառերի ճիւղերով։ Ես մէջքիցս կռացած նայում եմ խրճիթի բաց դռնով և չեմ կարողանում հասկանալ թէ ինչ է դա՝ գաղանների՞ տ, թէ մարդու համար շինած տուն։ Ուխտաւորին այդ խրճիթի ձախ կողմին է գտնվում։ Դա մի փոքրիկ փոս է, որ կիսով չափ ծածկուած է մանր քարերով և մի արհեստական այրի նմանութիւն է տալիս։ Եթէ ուզում էք տեսնել մի երկու հատ մեծ, ծխուած քարերը, դեղին մոմերի ճրագորդը և մի քարի վրայ դրած մի հատ կոպէկանոցը, որ, երևի, թողուած է տեսնողի գլուխը կոպէկներ հրաւիրելու, պիտի մէջքից ծալուէք, որ մտնէք, և պիտի այնպէս մտնէք որ կատարի տեղ դարսած քարակոյտից քարեր չը թափուին գլխներիդ։ Ուրիշ տեսնելու բան չը կայ։

Բայց ուխտաւորը կատարից քիչ բարձր տեղից, որ գագաթի ամենաբարձր տեղն է, բացվում է

մի հսկայական տեսարան. այդ որ արժէ տեսնել։ Այդ բարձր կէտը համոզիւս թէ հատատար է իմ յիշած ողորմելի խրճիթի հողէ կատարին և միացած է վերջինիս հետ։ Ես կանգնած էի այդտեղ։ Իմ ոտների տակ գտնուող ծակից, որ խրճիթի երդիկն էր, դուրս էր թափվում մի բարակ և նօսր ծուխ։ Այս ինչ է։ Բացի մեզանից մի ուրիշ «մարդու հոտն անգամ չի գալիս». ամբողջ գագաթը միանդամայն ամայի է, լուռ։ Բայց ծուխը քուլաներով դուրս է թափվում։ Ո՞րտեղից որտեղ. ես յանկարծ յիշում եմ մեր հէքեաթների կախարդական ծխերը, որոնք մղում են ջադուկ պատահների համ դևերի այսպէս առանձնացած, հեռու կտրած անկիւնից։ «Մի տեղ, մի տեղ, մի բարակ ծուխ էր մղում սարի գլխին», ասում են հէքեաթ պատմողները։ Իսկ և իսկ այս խրճիթն էլ այդպէս է. ծուխը բարակ, երդիկից դուրս գալուն պէս ցրվում է լեռնային բարակ քամու առաջ։ Ուրեմն այստեղ մարդ է ապրում։

Բայց ո՞վ է։ Ինչ իմանաս. մի՞թէ բնութիւնը փեղ հանել է իր հսկայական գործերի գլուխը, որ դու այդպիսի մանր բաներով զբաղուես։ Եւ միթը, որ մի լոպէ կանգ էր առել ոտների տակ փռուած հողի վրայ, լսվում է, ընկնում հեռու, անհուն օդային տարածութիւնների մէջ։ Նայի՛ր, տե՛ս, մի

ամբողջ աշխարհ է փառել առջևը: Այստեղ, դեպի հիւսիս, մեզանից մօտիկ, Մասեաց է կանգնած. այդ ինչ հսկայ է, որ առել է նրան բնութիւնը. այս բարձր սարի գլխից էլ նա այնքան բարձր է երևում, կարծես թէ խրուած է երկնքի հրաշալի կապուտակութեան մէջ: Հսկայի կատարի կատարները շողշողում են ձիւնի կապտախառն սպիտակութիւնից: Ձիւներից ցած ութում է կատարեալ մերկութիւնը, որը այս բոլոր տեղերում արդէն տէր ու իշխան է, գեռ այնտեղին չի հասել: Այդ մերկութիւնից էլ ցած մզնած են անտառները. մզնած են լայնաբեհեան ձորերը, որոնք կարատում են նրա վիթխարի մարմինը: Դրանց թիւը շատացնում են հսկայի մօտ կուչ եկած, թզուկ սարերը, որոնք գեսից դէնից գալիս են, նրան կպչում: Եւ այդ մզնած անտառների ծոցում, այդ թզուկ սարերից մէկի կապմած դոգում հաղիւ հաղ կարողանում է սպիտակին տալ մի շինութիւն. դա Երիցմանկանց վանքն է: Ո՞րտեղ է գնացել.. Այդ խորութիւններին, այդ ծառազարդ լանջերի պաշտպանութեան մի ժամանակ թիկն տուած, այժմ հանգիստ ու հանդարտ կարողանում է սպիտակին տալ, անփոյթ ուզողին միայն մոռասանջութիւն պատճառելով: Ինչպէս պէտք է գնալ, հասնել այդ տեղին: Վանքը Հարթաթափուկից բաւական ցած տեղ է կանգնած: Բայց

այստեղից ու այնտեղից մէջ ընկած ահագին ձորը տեսէք և վանքի տեղը շատ և շատ է բարձրանում: Այդ ձորը Թարթար գետին է պատկանում. բայց ինքը, գետը, այստեղից չի երևում, ծածկուած է մի ցածրիկ լեռնաշղթայի հետևը, որ ընկած է նրա և Հարթաթափուկի մէջ տեղ: Դէպի արևմուտք, սարերի մէջ երևում է մի լայն հովիտ, որի միջով Թարթարն է գալիս կամաննել տալով: Այդ հովտից դէնը, հեռու, ցոյց են տալիս Հաթեկը գիւղի սարերը և նրանցից էլ հեռու Խոթայ վանքի ուղղութիւնը: Հարաւից գալիս են Գանձասարի լեռները, որոնք երկար ձգուած են դէպի արևելք: Իսկ արևելեան կողմում Հարթաթափուկը ցոյց է տալիս հարթ ու հաւասար դաշտավայրեր, Թարթար գետի միանման, ախուր տափարակը որ տեղ տեղ դեղնած է, այրուած՝ ջրի պակասութիւնից:

Այս է այն տեսարանի ընդհանուր պատկերը, որ միշտ սփռուած է Հարթաթափուկի շուրջը: Բայց մի՞թէ այս և այսքանը պէտք է ասել այդ չքնաղ և ահաւոր բնութեան մասին:—Ո՛չ, ուղևորը իր սրտի մէջ տանում է մի հիացում, որի ինչ և ինչպէս լինելը բախտաւոր գրիչները միայն կարող են նկարագրել: Թողնենք այն, ինչ որ կարելի չէ ասել, գանք էլի մեր Հարթաթափուկը:

Այստեղ այս ամենաթարմ տեղը, կան հին և

նոր դերեզմաններ։ Տապանաքարերը հների մասին բոլորովին լուռ են, անխօս, անլեզու, իսկ նորերի մասին մեծ մեծ ատեներով վկայում են, որ հանգուցեալները Մեծ-Եէնոցի են։ Բայց այստեղ ինչպէս երևում է, բնակութիւն եղել է մի ժամանակ։ Հողի տակ, կարծում եմ, շինութիւններ կան ծածկուած. երևում են դուրս ցցուած պարիսպների ծայրերը։ Ասում են, որ այստեղ ամրոց է եղել Շատ հաւանական է։ Նորերում մի գիւղացի արդյ երազներ է տեսնում, որոնց մէջ յայտնվում է նրան, որ հողի տակ ծածկուած են արծերի մասունքներ. նա մի քանի անգամ էլ ուշաթափվում է, ժողովուրդ է հաւաքում իր դլխին և պահանջում է, որ քանդեն իր ցոյց տուած տեղը։ Քանդում են և մասունքների տեղ բացվում է մի ահագին չրաամբար, որ այժմ էլ կայ։ Սա բաւական խնամքով է շինուած, սալքարերից, ունի փոքրիկ սանդուղք։ Ինձ համար անհասկանալի ճնաց այն, թէ որտեղից են ջուր բերել այս ահագին աւազանը լցրել արծաթ անձրևի ջուրն է եղել հաւաքուելիս, թէ տորերկրեայ ջուրը։ Այսքանը գիտեմ, որ մօտերքում ջուր բոլորովին չը կայ. և չրամբարն այժմ չոր է ու դատարկ։

Մինչդեռ մենք մտածում էինք այդ շինութեան և չրի մասին, անակնկալ կերպով երևաց

իմ նկարագրած խրճիթի բնակիչը։ Դա մի միջահասակ ծերուկի էր, մէջքից կռացած, թանկ պէս սպիտակ մազերով։ Մի պատկառելի հնութիւն էր, մի կենդանի աւերակ, ինչպէս ասում են, հին ձևի դարձած, մի մարդ։ Նա հագած էր մի հին կապոյտ արխալուղ միայն. դլխին ունէր մի սպիտակ, զղզուած փափախ. մի ոտը տրեխ էր հագած, միւսը մի հին հասա դուլպայ միայն։ Դա ինքն էր այդ բարակ ու նօսր ծխի տէրը։

Նա պատահաբար էր դուրս եկել այդ ժամից։ Դէս ու դէն նայեց, առաջ, իմպրկէ, արեգակին, ուրից իր աչքերը պահպանելու համար ձեռքը դրեց ճակատին և ապա, առանց յետոյ, դէպի մեր կողմը նայելով, կարծես մի բան որոշեց ու դէպի մեզ մօտ եկաւ։ Յայտնուեցաւ որ մարդու մի աչքն է միայն քիչ տեսնում, իսկ ձախ ականջները վատ է որ լաւ չեն լսում։ Այդ բոլոր զրկանքների փոխարէն կեանքը նրա մօտ գեռ մի բան էր թողել —պինդ և արագ քայլուածք, ոտով գիւղը գնալու և գալու կարողութիւն։

Մենք համարեա բարեւելով մի քանի հարցեր առինք. նա էլի դժուար էր լսում, առաջ մտածում էր, մինչև իսկ մի քանի անգամ լուռ բերանը բաց ու խուփ էր անում, կարծես թէ խօսքեն էր սովորում և ապա պատասխանում էր դողդո-

ջիւն, բայց ոչ բոլորովին նուաղած ձայնով։ Բանից երևաց, որ այդ քայքայուած մարդը այսահղի մուղդուսին է, սրբի ծառան, որին ուխտաւորները բաժին են տալիս։ Ուխտաւորի մէկը տուել էր նրան մի հատ աքաղաղ, որ այժմ ընկերութիւն էր անում նրա հետ այս մշտալուռ և ամայի բարձրութեան գլխին։ Կար և մի շուն, որ այդքան ժամանակ գոնէ մի անգամ չը հաչեց. նա էլ, երևի, իր ցեղի կենդանի աւերակն էր. ծերութեամբ քարշ էր տալիս իր պոչը կուչ եկած, կիսաբաց աչքերով քնաթաթախ նայում էր ամեն մի նոր մարդու և նայում էր, կարծես, միայն յայտնելու համար, որ ինքը անտարբեր է բոլորովին, ով ուզում է, թող գայ։

Ոտից ձեռից ընկած ծերունին նստեց մեզանից հեռու։ Ես բարձր ձայնով հարցրի նրանից, թէ չը գիտէ արդեօք մի բան հին ժամանակների մասին։ Նա երկար մտածեց, ձորերին նայեց իր անբզգայ, կարծես քարից շինած աչքերով և ասաց որ իր մտքում ոչինչ չի մնացել։ Շուտով ես հանգիստ թողեցի նրան, տեսնելով որ մարդը խօսելու ախորժակ չունի, այլ շուտ շուտ նայում է մեր ուղեցոյց գիւղացու դէմքին և ուզում է նրան մի բան յայտնէ։ Այդ բանը նա, վերջապէս, յայտնեց և ոչ թէ ծածուկ, այլ բացարձակ կերպով. ուզում էր իր աքաղաղը ծախել մեզ վրայ։

— Մենք ուխտաւորներ ենք, հանաքի ձևով ասաց իմ ընկերը.— եկել ենք սուրբի տակ, դու էլ մուղդուսի ես. աքաղաղը հո դու չե՞ս առել բե՛ր, մոլթենք, խորովենք. այ, մեզ հետ գինի էլ կայ։

«Ոչինչ չասաց ոսկի ձկնիկը
... «Ու անցաւ, գնաց դէպի խորին ծով» ...

Ծերունին էլ ոչինչ չասաց. վեր կացաւ, գնաց, իր կախարդական խրճիթը մտաւ։ Խրճիթից, քիչ անցած, լսվում էր աքաղաղի ճղճղոցը։ Ինչպէս երևում էր, ծերունու ձեռքից էր այդպէս աղաղակում։ Երևի մարդկային աւերակը նրանով էր անցկացնում իր օրը, այդպիսի ձայներ հանել տալով էր զուարճանում։ Եւ ի՞նչ խելք էր, նա դեռ ուզում էր ծախել իր այդ ձայնաւոր ընկերին։ Երբ մենք հեռանում էինք Չարթապատուկի գլխից, աքաղաղը դեռ յուսահատական աղաղակներ էր արձակում։ Ի՞նչ էր ուզում ծեր միայնակեացը այդ խեղճից. արդեօք այնքան հիացել էր ուխտաւորի պարգևի վրայ, որ չը գիտէր թէ ինչպէս պահէ, թէ չէր հաւանում նրա խելքը և ուզում էր խելք սովորացնել...

Երեկոն մենք անց կացրինք Տէր-Հայրապետի տանը և ամբողջապէս նուիրեցինք պատմական ասանդութիւններին։ Տէր-Հայրապետի հայրը, ծերունի Տէր-Մկրտիչը, մի պատկառելի քահանայ,

երկար մեզ պատմում էր իր իմացածը Ջրաբերդի մելիքների, զևոտ-օղլաէս Մելիք-Համամի մասին. խօսեց Երիցմանկանց վանքի հակաթոռ կաթողիկոսութեան վրայ, պատմեց իր պապի հայր Դալի-Մահրատայի ով և ինչ լինելը, այլ և Մելիք-Համամի միւս զինակից Թիւրլի-Աղդումանի պատմութիւնը: Դալի-Մահրատան, Թիւրլի-Աղդումանը, Երիցմանկանց վանքի առաջին կաթողիկոս Սիմէոնը Մեծ-Շէնցի են եղել*), այն իսկ գիւղից, ուր մենք էինք նըստած: Մի գիւղից, մի համայնքից դուրս են եկել թէ լաւ թէ վատ գործիչները. Դալի-Մահրատան և Թիւրլի-Աղդումանը եղել են մելիքական իշխանութեան անվախ պաշտպաններ, ազգակային խմբեր կազմակերպած պատիժ են տուել թշնամիներին. իսկ օծեալ Սիմէոնը Գանձասարի հակաոռ կաթողիկոսներին պատժելու համար մելիքութեան ջնջուելու գլխաւոր պատճառներից մէկն է եղել Մեծ-Շէնը**) դանդաղով Մոխրաթաղի և Ջրաբերդի (Ջրա-

*) Հանդուցեալ Բաֆֆին ասում է („Խամսայ Մելիք„ երես 114) թէ Սիմէօն կաթողիկոսը Խաչաշէնցի է եղել: Բայց վանքի արձանագրութեան մէջ պարզ ասուած է. „Որ եմք որդիք Սարգիս քահանային Մեծ Շէնացւոյ„:

**) Այս գիւղը հին ժամանակներում իսկ որ մեծ է եղել, բայց բնակիչները մաս մաս ուրիշ տեղեր են գնացել, ուստի եւ գիւղը այժմեան փոքրութեան է հասել: Այդ երեւոյթը այժմ էլ կրկնւում է Ջրաբերդում եւ դրա համար յետոյ կը խօսեմ:

բերդ գաւառի բերդի) մէջ տեղը, աւելի մօտիկ է եղել պատմական անցքերին: Եւ աւանդապահ ժողովուրդը այժմ էլ չի մոռացել իր նախնիքներին, բերանացի պատմում է այն, ինչ որ խաւար ժամանակը կարողութիւն չի ունեցել թղթի վրայ արձանագրելու:

Աւանդապահութեան մասին խօսելով, ես պիտի վկայեմ, որ Ջրաբերդի ժողովուրդը այդ կողմից շատ բարձր է Ղարաբաղի միւս գաւառների ժողովրդից: Այստեղ դիտեն, ճանաչում են այն տեղերը, ուր կատարուել է պատմական յայտնի անցքեր, զանազանում են պարսկական և առհասարակ օտար հնութիւնները բուն հայկականից: Այստեղ ձեր առաջնորդը այլ ևս չի ասում մի որ և է հին աւերակի մասին այն, ինչ որ Ղարաբաղի միւս կողմերի հայ դիւրականների համար սովորական ֆրազ է դարձել. «Հո ա գիտում, խանների վախտան ա մնացալ»: Այստեղ այդ չեն ասում, որովհետև դեռ չեն մոռացել թէ որտեղ ինչ բան է եղել:

Այսպէս, դեռ այստեղ մլում է աւերակնացած, ախուր անցեալի փոշին. դեռ կենդանի են մարդիկ, որոնք սէր և ախորժանք են զգում իրանց լսածնեը պատմելով: Այդ աւանդութիւններից գեղեցիկ կերպով օգուտ է քաղել Հանդուցեալ Բաֆֆին: Նա հաւաքել է, արձանագրել է նիւթեր Ղարաբաղի

մելիքների պատմութեան համար և պրանով մի անգնահատելի ծառայութիւն է արել մեր գրականութեանը, նիւթեր, որոնք թէև դեռ ևս մշակութեան, ընտրութեան կարօտ են, բայց բաւական պերճախօս են։ Տէր-Մկրտիչն ասում էր թէ հանգուցեալը երկու օր իր տանն է ճնացել նստել է պատահել, ուր մենք էինք նստած և գրել է յարգելի քահանայի արած պատմութիւնները*)։ Այս խոսք, մոռացուած աշխարհում շատերն էին ճանաչում Բաֆֆիին և ոգորմի էին տալիս նրա հոգուն։

Ջրաբերդի մելիքներից ինձ շատ հետաքրքրում էր Մելիք-Մեժլումը։ Դեռ «Խամսայի Մելիքութիւնները» առաջին անգամ կարդալիս իմ մտքի մէջ մի տեղ էր բռնել այդ քաջ և անվախ հերոսը, որ ժամանակի հանգամանքների տակ ճնշուած թափառում էր զանազան տեղեր։ Իր հայրենի ժառանգութիւնը պահելու համար նա դիմում էր ամեն միջոցների, որոնք, սակայն, վերջ ի վերջոյ խորտակեցին նրա մտքերը։ Ես հարցրի նրա մասին և բոլորովին չը զարմացայ, երբ լսեցի որ Ժողովուրդը

*) Թող ներէ ինձ ընթերցողը, եթէ ես իմ յիշատակարանում չեմ արձանագրում իմ լսած աւանդութիւնները։ Դրանք գրականութեան մէջ յայտնի աւանդութիւնների մանրամասնութիւններն էին կազմում, որոնք աւելի յարմար տեղ ունին մի վիպական գրուածքում։

նրան անիծուած է անուանում, ահաւոր թեամբ է յիշում նրա անունը։ Ժողովուրդը պատմում է թէ Ալա-Մամադ-շահը Թիֆլիսը քարուքանդ անելուց յետոյ Մելիք-Մեժլումին է թողնում հայոց եկեղեցիների վիճակը, որ ինչպէս ուզէ, այնպէս էլ անէ. իսկ սա կողոպտում, աւերում է այդ եկեղեցիները, իբրև թէ վրէժ է հանում այն դաժանութեան համար, որ մի քանի տարի առաջ պատահած էր Թիֆլիսում նրա անձի դէմ։ Այդ դեռ քիչ է։ Մինչև վերջին շունչը Մելիքը, ինչպէս յայտնի է, Շուշու խանի արիւնարբու Թշնամին էր և իր ամբողջ ոյժն ու կարողութիւնը դործ էր դնում այդ խանին ոչնչացնելու համար։ Ամեն կողմից անյաջողութիւնների պատահելով, այդ մարդը այն աստիճանին հասաւ, որ մեծամեծ ձեռներ էր հասցնում Շուշու շրջակայքում ապրող հայ գիւղացիներին, աւերում էր նրանց արտերը, սարսափելի պատիժներ էր տալիս։ Բայց միևնոյն ժամանակ Մելիք-Մեժլումը դաւաճան չէր, ուրացող չէր, այլ իր երկրի պաշտպանութեան համար օր ու գիշեր մտածող մի քաջ։ Եւ եթէ ժողովուրդը նրան անիծում է, պատճառը այն է, որ այդ հառնդոտ մարդը բոլոր միջոցները սուրբ էր համարում իր նպատակի առաջ։

Ե.

Լուսացաւ առաւօտը, նոյնպէս թարմ, անոյշ, հիանալի պարզ առաւօտը, ինչպէս էր նախընթացը: Ժամի հինգին մենք ոտի ենք կանգնել, իսկ մի ժամ ու կէսից յետոյ ձի նստած գնում ենք դէպի երիցմանկանց վանքը:

Մեր ճանապարհը սկզբում վատ չէր: Նա լայնացած գնում էր անտառների միջով, պատ տատ-յով Հարթապատուկի հիւսիս-արևմտեան ստորոտի մօտով: Մենք գմայլուած լսում ենք բազմաթիւ թռչունների առաւօտեան քնքոյշ լոյսը ջերմացրմ ողջունող զեղգեղանքը: Դեռ գիշերուայ թմրութիւնն էր բռնացած բնութեան վրայ, նա էլ հետզհետէ սեղմ էր տալիս մի զուարթութեան, որ ապրիլի հիանալի առաւօտի ամբողջ էութիւնն է: Ուղիղ ճանապարհը յետոյ թեքուեց դէպի ցած, դէպի Թարթարի ձորը, որը դեռ ամբողջովին չէր երևում: Անցնելով մի քանի արտերի մօտով և մի քանիսի միջով, մենք հասանք այն լեռնային բարձրութեան, որ, ինչպէս վերև ասացի, ընկած է Թարթարի ափին: Այդ բարձրութեան միւս երեսը դեռ աին է նայում: Ստորոտը այս կողմից կոչւում է Խանագեահ: Մեզանից քիչ հեռու, մի արտի ծայրին երևում էր մի աւերակի պատը: Տէր-Հայրապետը պատմեց, որ դա իջևան է եղել Երևանից եկող մեծ ճանապարհի վրայ: Ճանապարհը, իջևանները Երևանի խաներին են պատկանել և Թարթարի ձախ ափին յաջախ պատահող այդ աւերակ իջևանները այժմ էլ ցոյց են տալիս հին մեծ ճանապարհի ուղղութիւնը, որ այսպէս գնում է, անցնում դէպի արևմուտք, Նոր-Բայազէտի գաւառը: Բայց ճանապարհն այժմ անկատելի է:

Այդտեղից մենք մտնում ենք մի թանձրախիտ անտառ, որ բոլորովին ծածկում է մեզանից շրջակայքը. երկինքն էլ եթէ երևում է մի կերպ, պատճառն այն է, որ ծառերը շատ չեն բարձր: Անտառը ահագին տարածութիւն ունի. նա այդպէս խիտ պատած է ոչ միայն այս լեռնային լանջը, այլ և շրջակայ բոլոր ձորերն ու բարձրութիւնները: Գնում ենք, գնում, անտառը աւելի թանձրանում է, անտառային տմայութիւնը, ձնշող լռութիւնը խտանում է մեր սրտի մէջ հաստատուած հիացման հետ մի տեսակ երկիւղ, մենակութեան, անմարդ, անձայն դատարկութեան երկիւղը: Բայց ահա անտառի խորքից, հեռուից, մի խուլ ձայն է գալիս, որ կրկնվում է կանոնաւոր կերպով: Փայտահատի կացինն է զարձում այդպէս՝ և այդ ձայնը, այդ խուլ թընդիւնը, որ պատճառում է աներևոյթ ձեռքը, պատասխանում է սրտի երկիւղը: Ոլքան մենք առաջա-

նում ենք, այնքան պարզ լսելի է դառնում ձայնը, աւելի լայն է տարածվում, աւելի և աւելի հեռացնում է իր խուլ արձագանքը անհամար բունեբի ծոցում։ Շուտով աներևոյթ փայտահատը մեր հետևումն է ձեռմ. հետզհետէ ձայնը նուազում է, խեղդվում, փոխվում է կարճաձև խուլ թխկոցների և վերջապէս մարում է, կորչում մի ինչ-որ անկիւնում։ Իսկ ծմակը քիչ դուրթ է ցոյց տալիս, մի նեղ պատուհան է բաց անում մեր առջևը անհամար ճիւղերի միջով։ Այդտեղից երևում է հեռու տարածուած ծմակների թագաւորութիւնը, իսկ նրա մէջ, մի բարձրութեան վրայ, աւերակների մի խումբ, որ կոչվում է «Քալաքատեղ». երևում են մի աւերակ ապարանքի պատերը, դռները, այլ և ուրիշ ցրուած պատեր։ Այդ ապարանքը Մելիք-Յաթամի միւս ապարանքն է, որ, որքան նկատելի է այսպիսի մի հեռու և նեղ տեղից, աւելի գեղեցիկ է, քան Ին-մասանց անապատի մօտ տեսածը։ Որքա՜ն մեծ էր իմ դժգոհութիւնը, երբ տէր Հայրը յայտնեց, որ այդ աւերակները մենք մօտիկից տեսնել չենք կարող, որովհետև գնում ենք բոլորովին ուրիշ ուղղութեամբ։ Մեր ու այդ «Քալաքատեղ»-ի մէջ կայ մի մեծ, անդնդախոր ձոր, որի եզերքով հազիւ կարողանում էր գնալ մեր նեղ կածանը։ Եւ ես ձարահատեալ պիտի խեղդէի այդ գեղեցիկ աւերակները

տեսնելու փափագս։ Տէրից շարժուեցանք, անտառն էլի կանոց մեզ, բայց Տէր-Յայրապետը այդ օրը իմ ձեռքից չը պրծաւ, այնքան արանջացրի։

Մենք, վերջապէս, դուրս եկանք լեռնային բարձրութեան այն երեսը, որ նայում է Թարթարի ձորին։ Այդ տեղը կոչվում է «Սերգևիչեն սեռ»։ Ճանապարհը դէպի ցած է գլորվում անտառի միջով, որ այստեղ մանուանդ հրաշալի, աննկարագրելի գեղեցկութիւն ունի։ Այդէն լսվում է մի խուլ վշշոց. այդ Թարթարն է։ Բայց նրան չենք տեսնում. ծմակը, որի վրայ դեռ չի տարածուել առաւօտեան արեգակի լոյսը, աւելի խիտ է և աւելի խնամքով է ծածկում իր մէջ ուղևորին։

Վշշոցը *) արագ արագ մօտենում է մեզ, բարձր և բարձր է լսվում։ Երբեմն ճիւղերի միջով երևում է մի ժայռ և նրա վրայ մի պարիսպ։ Դա Զրաբերդն է... Եւ ես վազում եմ, որ մի վայրկեան առաջ տեսնեմ Թարթարը և նրա ահարկու բերդը։

Ահա նա... Ես գետի ափին եմ. իսկ իմ առջևը, միւս ափին, ցցուած է, բարձր, բարձր է գնացել ժայռը իր բերդի հետ։ Սոսկալի, վայրենի տեսա-

*) Բաֆֆին Զրաբերդը նկարագրելիս («Արձիւր» 1883 թ.) ասում է թէ Թարթարի ձայնը երկու երեք սարերի ետևեն է լսվում ստորերկրեայ ահռելի թնդիւնների պէս։ Այդ չափազանցութիւն է, Զրաբերդի մօտ այդպիսի բան չը կայ։

բանս. Սարսափը պատում է մարդուն, երբ նա չորս կողմին է նայում: Ինքը մի խոր ձորի մէջ է. տեսնում է այն ճանապարհը, որով պիտի գնայ, տեսնում է այդ զարմանալի բերդը. չորս կողմը ժայռեր, ձորեր, սարեր, ծառեր. տեսնում է և դէպի ցած, դէպի գետինն է քաշվում, ահ ու զարով նայում է երկնքին, որ այնքան բարձր է գնացել, որ դարձեալ գեղաժպիտ է, դարձեալ սքանչելի կապոյտ. և մարդը, խեղճը, հիանում է, սքանչանում, վախում և ժպտում:

Պզտոր է Թարթարը: Սհագին քարերը թափուել են նրա ճանապարհին և նա վշշալով, մռնչալով ոստոստում է նրանց մէջ, պզտոր ալքներով հարուածում է նրանց գոլշ, անզգայ, բութ մարմինները և ցրվում է, կարտափում, դէս ու դէն դրնում: Մարդու աչքերն է տանում. նրա այդ յաւիտենական վայրենի խաղն ահեմ թէ չարչարանքը, որին վիպ են այս տեղ, սարսափելի ձորը, այս ժայռերն ու կուսական ծմակը:

Ջո՞ր... Լեռնային բարձրութիւնը, Սևրպի լինն սեռը միայն մի տեղ է քիչ յարմար ոտ ձգում դէպի գետը. այդ այն խոկ տեղն է, որով մենք եկել ենք: Մնացած տեղերում նա գետի վրայ կախ կախ է արել ահագին ժայռեր, որոնք զարձեալ ծածկուած են մեծ մեծ ծառերով: Բնութեան այդ ա-

հարկու պատկերը, այդ սեպացած ժայռերը մատչելի են միայն քարայծերին. ուրիշ կենդանի ոտ դնելու տեղ չունի: Այդ ժայռերի գլխից, գետի միւս կողմից գալիս է ուրիշ լեռնային բարձրութիւն, գալիս է, ցցվում գետի վրայ և սպառնալից հայեացք անկում այս կողմի բարձրութեան ճակատին: Եւ այդպիսի հայեացք անկած բարձրութիւնը մենակ չէ գալիս առջևից, իր հետ բերում է մի վշշան գետ, որ կոչվում է Թրլե. սա այստեղ, իմ աչքերի առաջ, վազվզ ընկնում է Թարթարի գիրկը: Թրղու համար լայն ու մեծ ձոր է բացուած. այդ ձորով է գնում վանքի ճանապարհը: Իսկ այնտեղ, ուր նա խառնվում է Թարթարի հետ, հիմք է բռնում և վայրենաբար դէպի վեր է ձգվում Ջրաբերդի ժայռը: Այսպէս ամեն կողմից ժայռեր են միմեանց դէմ յանդիման արձանացել, իրար են նայում: Նրանց ահռելով իմ միտն են գալիս ռուս բանաստեղծի (Լերմոնտով) այս գեղեցիկ տողերը.

«Ես տեսայ մթին ժայռերի դէմքեր,
Երբ նրանց ճակատում էին վտանգներ,
Եւ ես ըմբռնում էի նրանց մտքեր.
Ի վերուստ էր ինձ այդ շնորհքը արուած:
Օդի մէջ վտոից հետէ տարածուած
Կան քարէ պլկերն, և ամեն վայրկեան
Ծարաւ են քաշում իրար հանդիպման.

Բայց օրեր փախչում, փախչում են տարիք—
Նրանք չեն երբէք իրար գալ մօտիկ։

Զաքերդա Նա շատ պինդ է կանգնած այս ահարկու ձորի վրայ։ Եռևից ընկած է Մռաւի ամպածբար շղթան, որ մի քանի համեմատաբար ցած բարձրութիւններով միացած է բերդի հետ։ Եւ կարծես Մռաւը այդ բարձրութիւնների միջոցով միշտ դէպի առաջ է հրում այս ժայռը, բայց սա ոտները դէմ է տուել Թալթալի լեզուներին, առաջ գնալ չի ուզում և անհնարին ոյժին դիմանալու համար յետ է դարձել իր գլուխը, կուրծքը ուռցրել է, դէպի առաջ ցցել։ Եւ Թալթալը մաևմոթեամբ պոռայ է տալիս նրա առաջ, շրջան է գործում, երկու կողմից պատ տալիս ահարկու բերդի ոտների մօտ։ Երբորդ, արևելեան, կողմից Թրղին է Զաբերդի ժայռը քերում։ Եւ ժայռը այդպիսով Զաբերդ գառնալով, մօրուկանց պատապարել է իր կրծքի ու գլխի վրայ։

Զաբերդը ցած է իրան շրջապատող շատ սարերից. Սերդիլլեն-սեան անգամ բաւական բարձր է նրանից։ Այդ շրջապատող սարերից նայողը նրան անհնարին բան կը համարէ։ Բայց նա ահարկու, զօրացնող Զաբերդ է այս ձորերից։ Նրա երեք կողերը, որոնք նայում են ջրերին, բոլորովին անմատչելի են, ցցուած են այնպէս ուղղաձիգ, որ մարդ

նայելիս միայն հառաչում է։ Ձորից մօտիկ այդ ժայռը շրջապատած է ամուր պարիսպով։ Մարդը, ուրեմն, բերել է իր հնարագիտութիւնն էլ միացրել է բնութեան ամրութիւնների հետ, որ կարողանայ ապահով ձեալ իր նման մարդու ձեռքից։ Շրջապատը հարկաւոր է եղել այդ ձորից դէպի բարձր գնալու հնարը միանգամայն ոչնչացնելու համար։

Թալթալի վիճակից հարուածող, ոտտոտացող կոհակների վրայով անցնելու համար պատրաստ է փոքրիկ, փայտէ կամուրջը, որ քիչ բարձր է ջրերից։ Գնալիս քո և ձիուդ ոտների տակ ճօճում է փայտէ կամուրջը, որ տալին մի քանի անգամ ղօղում է յորձանքի խոպին, անդհատնում և դարձեալ շինում է երիցմանկանց վանքի միաբանութեան ջանքերով։ Կամուրջից մի քանի քայլ բարձրանալով Թրղի գետի ժայռոտ ձորի կողքով, ճանապարհն ղեկին, ժայռի մի ահագին բեկորի վրայ։ երևում է բերդի դուռը, որ պարսպի հետ դեռ ամբողջ է ճայկեր բայց, իհարկէ, առանց փայտեայ մասերի։ Եւ վճռել եմ բարձրանալ բերդի ղռները, բայց չեմ վստահանում ընկերներիս յայտնել, վախում եմ թէ մի գուցէ նրանք հրաժարուին ինձ հետ գալուց։ Տեսէք ինչ ժողովրդութիւն է, որ Դալի-Ահմադայի ժառանգը, մեր առաջնորդող ոգի հայրը, որ «Ձայր մէր»-ի պէս պիտէ Թալթալի ձորի

բոլոր ծակ ու ծուկերը, դեռ երբէք չի գնացել դէպի բարձր։ Վերջապէս ես ծիծաղելով իմ առաջարկութիւնն արի և երբ նա համաձայնեց, ասելի իր աժանաւորութիւնը չը կորցնելու համար, իմ միւս ընկերն էլ սիրտ առաւ և մենք չհանելը թողեցինք ձանապարհին, մեր ձիապանի մօտ, գնացինք դէպի բերդի դուռը։

Առջևից, իհարկէ, Տէր-Հայրապետն էր գնում։ Նա դռնով մտաւ, բայց իսկոյն կանգնեց և, երբ ես հասայ, ցոյց տուեց մեր առջևը ցցուած սև ու մոխրագոյն ժայռերը, ասաց անյոյս կերպով. «այսպիսի տեղեր են, ի՞նչ գնանք...»։ Նա չէր ուզում բացարձակ ասել թէ գնալ չի կարելի։

—Այստեղ աշխ կածան է երևում, ասացի ես.— տե՛ս, այսպէս բարձրանում է. ուրեմն մարդիկ գնացել են, մենք ինչու չը գնանք։ Գիտես որ Բաֆֆին էլ բարձրացել է։

Տէրտէրը առաջ գնաց, մենք նրա հետևից։ Առաջին իսկ քայլերից հարկաւոր եղաւ բռնել մանր թուփերի ճիւղերից դէպի վեր գնալու համար. եթէ թուփ չէր լինում, օգնում էին բոյսերն ու խոտերը, վերջապէս մարտկի կարճլիկ կոթը, որի վրայ ես յենվում էի, օգտուելով այն հանգամանքից, որ այդ ուղղաձիգ լանջերը անցնելու համար պէտք էր մեջքից շատ կռանալ նեղ և անհանելի, քարքարոտ

կածանը, որ սկզբից մեզ սիրտ տուեց, դեռ կախ ընկած ժայռերին չը հասած՝ կորաւ, անյայտացաւ։ Երևի մարդիկ մինչև այս տեղն են գալիս, նստում բերդի պարսպի վրայ, որ տեսնեն Թլղատ ու Թարթարի խաղերը։ Բայց այդքան ճանապարհը ամբողջ չի կէսն էլ չէր, կէսի կէսն էլ։ Թուլացած, ընչասպառ ես և իմ ընկերը ընկանք խոտերի մէջ, սկսեցինք դժուարութեամբ շունչ քաշել և սրբել մեր քրտինքը։

Զար կածանի այդ յանկարծակի կորչելը աւելի ևս մեզ նեղացնում էր։ Այդ դէպքում յայտնուեցաւ թէ ինչպիսի թանկագին բան է լեռնցի առաջնորդը լեռներում ճանապարհորդի համար։ Մեր աչքը հայրն էլ լեռնցի էր. նա չէր յոգնել, թողեց որ մենք հանգստանանք, ինքը գնաց որ երթէ չը գտնէ մի նոր կածան, գոնէ իմանայ թէ որ տեղերով կարելի է գնալ։ Երկու րոպէ չանցած՝ նա կանգնած էր այն ժայռի գլխին, որի տակ մենք հանգստանում էինք և ցոյց տուեց մի ուղղութիւն, որ տանում էր այդ ժայռի տակով դէպի արևելք և ապա ոլորաւելով դէպի բարձր է գնում։ Մենք գնացինք կուշ եկած, համարեա միշտ մի ձեռքով գետինը շօշափելով։ Բերդի ժայռոտ և քարոտ մասիմնը շատ տեղ ծածկուած է հիանալի խոտով, որ մի քանի տեղ մինչև մարդու ծունկն է հասնում։ շատ են նաև զանազան տեսակ վայրի բոյսերը, այնպէս որ տալուսայ

այս ժամանակ չես իմանում թէ ոտդ ինչպիսի տեղ են դնում։ Իսկ ժայռերի ձեղքերը, որոնք մեր գնալու տեղերն են, հսկայական պէս բռնած են մեծ ու փոքր թմիերը։ Որոշել թէ որտեղով և ինչպէս պիտի գնաս, որ մարմինդդ ոչինչ չը հատրես, չը վնասես, կարող է միայն լեռնաբնակը, որ ճանաչում է այս տեսակ տեղերի բնութիւնն ու կերպարանքը։ Եւ տէր Հայրը ժայռի ծայրին կանգնած՝ մեզ է նայում, իսկոյն զգուշացնում է, երբ մենք մի ծուռ քայլ ենք փոխում։ Ինչպիսի «անիծուած» տեղերով գնացինք... Տեսնում ես, մի ժայռի հիմքն է առջևդ կանգնել. մի ինչ որ խոռոչ կայ ոտներիդ մօտ, որը դու իսկի չես էլ նկատում, շտապում ես որ դնել, անցնել. բոլոր երակներդ կարծես տաք անգիկով են լցուած, ուզում ես կրակի պէս առաջ գնալ, ոչնչացնել այդ դժուարութիւնները, թէև շնչելու օդ չես գտնում։ Բայց ժայռի ծայրից տէր Հայրը փախել է ուրիշ ճանապարհը։ Ոտդ դէպի խոռոչը մի՛ տանիր, պիտի անցնես ժայռի հիմքին քսուելով։ Աւելի կուչ եկ, մոխր ժայռի սակը, գա դեռ քիչ է. հենց այդ ժայռի տակից էլ բաել է մեծ թռուիր։ Ի՞նչպէս գնաս Դամ պիտի ընկնես թմիի վրայ, ձմռան, ձլեակ քո տակ որ անցնես, կամ թէ մի մի պիտի վերցնես ձիւները, քիչ հետոյ նես, որ մի նեղ, սառնապատան անցք բացուի առջևդ։

Բայց այդքան աշխատանքը էլի մեզ թուլացնում է, էլի մենք չնչասպառ ընկնում ենք քարերի վրայ որ հանգստանանք։ Տէր Հայրը ծիծաղելով առաջ է գնում։ Կարճ հանգստութիւնից յետոյ մենք էլի սկսում ենք դէպի վեր մագլցել։ Ահա, վերջապէս, երևում են պատերը. նրանցից դաս, թեք լանջիվայրի վրայ բսել է այնպիսի հիանալի բարձր ու. խիտ խոտ, որ ափսոսում ես կոխ տալ. դա մի կատարեալ գորգ է և տէր Հօր քայլերը երևում են այս ու այն կողմ թեքուած խոտերի մէջ։ Այդ հետքերը նման են նոր եկած խոլ ձիւնի մէջ ճամպած հետքերին։

Ահա մենք աւերակների մէջ ենք։ Մի քանի հատ մեծ ու փոքր տներ են, գանազան ուղղութիւններով շինած. կտուրներն են միայն փլուել, բայց ճնապած մասերը զարմանալի ամբողջ են ճնացել. մինչև անգամ դռների գլխին, պատի մէջ դրած փայտի ձողերը այնպէս անվնաս են, որ կարծում ես թէ երկու, երեք տարի օրից առաջ են դրուած։ Մենք զանազան կէտերով, հետաքրքրութեամբ մանեկանք ամեն մի տուն, նայեցինք ամեն մի ծակ ու ծուկ տեղ։ Մի հատ տուռ չը գտանք ոչ մի քարի վրայ, բայց գոնէ գազաթներ կազմեցինք անցեալ դարերի մեր հայերի ռազմական գիտութեան և գործերի մասին։

Կարճ բան կարելի է ասել Ջրաբերդի մասին, այնքան, որքան ես ասացի։ Բայց մի՞թե այս հանգամանքը կարող է պատճառ համարուիլ, թէ ուրիշ չարժէ այդքան նեղութիւն կրելով բարձրանալ, տեսնել նրան։ Չէ՞ որ Ղարաբաղի ոչ մի կողմում չը կայ այսպէս ամբողջ ճնացած հին ամրութիւն և միայն այս Ջրաբերդն է, որ, լինելով այս կողմերում իշխողների բերդը, դեռ պինդ է ճուռմ այս ժայռի գլխին, չը նայելով որ վաղուց, շատ վաղուց են հեռացել, գնացել նրա տէրերը. փշրուել, հող են դառել այն ձեռքերը, որոնք կազմել են բերդը, կազմել են պաշտպանութեան գործը. իսկ այդպիսի ձեռքեր հսկայական են։ Վայրենի բնութիւնը ընկճել, զէնք շողացնել նրա կատարի վրայ, հեշտ բան չէ։

Եւ շինութիւնները, որ այժմ սաստիկ զարմանք են պատճառում—զարմանք թէ ինչպէս են այստեղ քար ու կիր հասցրել, այսպիսի կանոնով կարգել, կազմել—կանգնած են տխուր ու լուռ։ Նրանց վրայ հովանաւոր են ծառերը, որոնք արմատ դնելով աւերակի, յաւիտենական մեռելութեան կրծքում, այդ տների մէջ, աճում, բազմանում են, ընձիւղներ արձակում, գեղեցիկ կեանք վարում, մեղմ օրօրվում են լեռնային քամու հոսանքի տակ և սիրուն, զովարար սօսափիւն արձակում։ Փշրուած, ջախջախուած բախտի բեկորների վրայ շունչ ու թալամութիւն սուացած ծառերը հիւրասիրում են իրանց զով շուաքի տակ մեզ, տանջուած, քրտինքում կորած ուղևորներիս, այժ ու կենդանութիւն են հաղորդում մեզ, լի ու լի վարձատրում են մեզ այնքան չարչարանքների փոխարէն։ Եւ մենք գէթ մի կէս ժամ երջանիկ մարդիկ ենք այստեղ նստած։ Երբ ուռած, տաքացած երակները հանգստանում են, քրտինքը ցամաքում է, թոքերը կանոնաւոր կերպով օդ են ընդունում, մարդու առաջն է կանգնում բնութեան յաւիտենական խաղը. մեռելութիւն, մահ մի կողմից և գեղածիծաղ, երիտասարդական քնքոյշ կեանք միւս կողմից նայում են նրան։ Երկուսն էլ համր են, երկուսն էլ միաք են տալիս։ Մէկը, արդէն մեռածը, լքեալը, իր կմախքի տեսքով, իր ծերն, անպէտք մարմնի ակատութեամբ մարմնացած վհատութիւնն է, որ, կարծես, ծանր, քարային սառնութեամբ ասում է. «Էհ, ինչո՞ւ էք ճուռմ լաւ է աւերակը, ոչնչութիւնը, յաւիտենական անդորրը անյայտութիւնը»։ Իսկ միւսը, կենդանութիւնը, որ ածել, բարձրացել է այդ մահահոտ, աւերակային անշարժութեան ուսերին և բարձր է զնացել, ասում է ժպտալով, այնքան քաղցր, որքան քաղցր է մեզ շրջապատող անդունդի խորքից լսուող մշշահաւի ցաւ ու կրակ կտրած

երդը՝ «ահա, ոչքան լաւ է ապրելը, ինչքան սիրուն բան է միշտ թարմ, երիտասարդ մնալը»։ Եւ հրկուան էր, վհատեցուցիչ մեռելութիւնն ու լուսատու երիտասարդութիւնը, մլցում էին միմեանց հետ, միմեանց առաջն էին ընկնում և հարցնում հանդրտացած ուղեւորին. «ձրն է լաւը, ասա, ինչը»։— Իհարկէ, երիտասարդութիւնը, որ մեռելութիւնից բարձր է կանգնած։ Հանգիստ է, այո, խաղաղ է մեռելութիւնը, բայց նրա վրայ կանգնած երիտասարդութիւնը, որ աւելում, ձաքվում է ձմեռնային ապառնամանրքներից, կանում է ահռելի փոթորիկների տակ, որ գոռում է երկնքի ամպամիւղի կայծակներից ու որոտից, այդ երիտասարդութիւնն է սիրելի. նա գոնէ կարողանում է այսպէս աքանչելի գալնան առն կատարել, ծլել ու ծաղկել, այսպիսի եռանդով մեր սիրտը քաղցրացնել։

Եւ ոչպէս կը տեսնենք մեռելութեան սառցնող հեգնութիւնը այդ մարի վրայ, վեր ենք կինում ու առաջ գնում։ Աւերակներից քիչ դէնը, գաղաթի վրայ կայ կալի չափ հարթ և հաւասար տեղ։ Փարթամ և գեղեցիկ խոտերի բնութիւնն արդէն ծածկել է այդ տեղը. մի քանի հատ ծառեր կանգնած են այդ կալի ծայրին, շուրջ են արձակում գեղ առատ ցօղից թրջուած երկարահասակ խոտի վրայ։ Երեք այս հարթոցն է եղել բերդի դիտա-

նոցը. այստեղ են, երևի, խորհրդի հաւաքուել բերդի պաշտպանները։ Եւ այժմ մենք երեք հոգի, ոտ գրած այդ գեղեցիկ տեղը, թագաւորում ենք Թարթարի և Թրղու ահռելի ձորերի վրայ։ Մանաւանդ սոսկալի է այս վերջին ձորը։ Այս, արեւմտեան, կողմից Ջրաբերդի ժայռը վայրենութեան վերին աստիճանին է հասնում։ Մի խոպոպաղաղ ժայռը կտրուած է, պատի պէս ցած, ցած և ցած է գնում։ Հրէն, Թրղին, կտրած այն խոր ձորում, վշշում է անդօր։ Այստեղից բաց թողած մի փոքրիկ քարն էլ կարող է այնտեղ կանգնած մարդն ապանել։ Մարդու գլուխը շուռ է գալիս, աչքերը մթնում են և նա զոհալով յետ է քաշվում։ Այդ կողմից, Թրղու ափից բարձր, մեր այս միապաղաղ ժայռի սոսրոտը քերելով առաջ է գնում մի նեղ կածան, որ տանում է դէպի երիցմանկանց վանքը. այդտեղ կանգնած են մեր ձիանները. ոչքան փոքր են երևում նրանք, միւս, արեւելեան, կողմից Թարթարի լայն ու քարքարոտ տաշտն է երևում և պղտոր կոհակներով միմեանց զարնուելը։ Հարաւային կողմից ընկած է Սեւրվիլին տեսը։ Բայց ըստ է պատմը է, թէ բնութիւնը ծառերը միմեանց է կպցրել, բարձրացրել, տարի նման մի ծառային բարձրութիւն չլինել կարող է այդ էլ լինել աչքը խաբում է, այնքան խիտ է անտառը։ Միայն հիւսի-

սային կողմն է, որ Զրաբերդի առաջ չի բաց անում այնպիսի լայն ու մեծ ձորեր, այդ կողմից բերդը միաւորվում է Մուսալի ցած ճիւղերից մեկի հետ, բայց այդ կողմից էլ նա անմատչելի է. որովհետև բերդի ժայռը այդ կողմից էլ սարսափելի վիհեր և անդունդներ է բաց անում: Մի խօսքով ամեն կողմից մեզ շրջապատած է սաստիկ ուժեղ, սաստիկ մեծ բնութիւնը. ամեն ինչ գլուխ պատճառելու չափ հսկայական է, վայրենի և գեղեցիկ:

—Ժամանակ է, գնանք, գնանք, օրը տաքանում է, ասում է տէր Հայրը ցոյց տալով վանքը, որ այստեղից լաւ երևում է:

Վերջին ազահ հայեացքն ենք ուղղում, մեկ էլ տեսնում ենք չորս զարմանալի կողմը և անցնելով աւերակների միջից, ցած ենք գնում վազվզելով, հազիւ մեզ պահելով. այժմ էլ պէտք է կողքի վրայ կռանալ, մարակի կոթը հողին դէմ տալ, հաւասարակշռութիւն պահել թէ չէ, եթէ ոտդ դուրս սըրծաս, ինչպէս ասում են, մեծ կտոր ականջդ է ճռալու:

Զը մոռանամ յիշել, որ բերդի միջից, ժայռերը փորած ծածուկ անցքեր կան, որոնք տանում են դէպի Թարթարը: Դրանք խիստ մթին և նեղ են, ցած են գնում աստիճաններով և անուանվում են Զրագողի ճանապարհ: Բերդի պաշարման ժամանակ

այդ տեղերով են գնացել, Թարթարից ջուր վերցրել: Գետի միւս կողմից երևում են ժայռից դուրս բերած ծակերը, որոնք ուղղակի ջրի վրայ են: Որքան աշխատանք, արիւն քրտինք է կրել այս բերդը. ոտեղ է այն երևակայութիւնը, որ կարողանայ մի այդպիսի սոսկալի հաշիւ անել:

Ցած գլորուելով, անհամար քարերի մէջ ձեռքեր վիրաւորելով մենք էլի հասանք բերդի դռներին, դուրս եկանք, նստեցինք շուաքում: Դէպի բարձր, դէպի ժայռի գագաթը նայեցինք, զարմացած լուռ միմեանց մտիկ արինք, գլուխներս շարժեցինք ու էլի ճանապարհ ընկանք:

Այս է Զրաբերդը, որին ժողովուրդը անուանում է Զրմռկի կամ Զերմռկի-Ղալա: Նա պատմութիւն չունի, նրա անցեալը շատ մութն է: Ո՞ր ժամանակներից է նա պատերազմական բերդ դարձել, յայտնի չէ: Մեր պատմագրութիւնների մէջ միայն մի տեղ է ինձ յայտնի նրա անունը: Կիրակոս պատմագիրը (գլ. ԾԳ) յիշում է Զարաբերդ, որ 1250 թուականներին Թաթար Բաթու իշխանի որդի Սարդախը կրկին տալիս է Խաչենի տէր Զալալ իշխանին իբրև նրա սեփականութիւն, որ դրանից առաջ ուրիշները խլած են եղել: Զարաբերդ անունը այժմ էլ տեղ տեղ գործ է ածվում: ուրեմն Զրաբերդը երեք թէ չորս անուն ունի: Բայց նրա

կատարած դերը շարունակուել է մինչև անցեալ դարու վերջերը։ Մեր Տէր-Չայրապետը պատմում էր թէ իր տատը այստեղ պաշարուած է եղել մի ժամանակ միւս գիւղացիների հետ։ Իհարկէ, այսպիսի մի ամրութիւն անհնարին էր պատերազմական գործողութիւններով գրաւել. ուստի պաշարողները համբերութեամբ նստել են նրա շուրջը, հեռուից նայել, մինչև որ կամ մի դաւաճան կը մատնէ բերդը, կամ թէ սովը կը սկսէ պաշարուածներին զօռել։ Աւանդութիւնը պատմում է թէ մի անգամ այդպիսի սով է ընկնում բերդի մէջ. բայց գտնում են քաջեր, որոնք չեն թողնում, որ սովը մարդկանց գերութեան դուռը տանէ։ Նրանք դուրս են թափում բերդի շինութիւնների համար ամբարած կիրը, փռում են, սկսում քամել մոգերով։ Պաշարող թշնամին տեսնում է այդ, կարծում է թէ կիրը ալիւր է, որ դեռ երկար ժամանակ պիտի պահէ պաշարուածներին և յուսահատուած քաշվում է, հեռանում։ Բայց ամեն անգամ չեն կարողացել կրով խաբել թշնամուն։ Եւ ժողովուրդը պատմում է թէ եղել են մարդիկ, որոնք գիշերները դուրս են եկել բերդից, խուլ ու ժժուալ ճանապարհներով գնացել են գիւղերից ալիւր բերել և կշեռքը կախ արած հաւասար բաժանել են պաշարուածներին։ Ժողովուրդը գիտէ այդ հերոսներից երկուսի անունը.

մէկը Թիւրնից Կարմրափթաւան *) է, միւսը Աւետաքօլէն։ Մի այսպիսի բերդից, պաշարման ժամանակ, գիշերով դուրս գալ, գնալ, ալիւր բերել... մեծ հերոսութիւն է։

Ջ.

Թրլեն բաւական տեղ ուղեկցում է մեզ։ Մենք ոտով ենք գնում, որովհետև ժայռերի վրայ ընկած ճանապարհը բաւական վտանգաւոր է. ինչ տեսակ ճանապարհ են կարող շինել մարդկանց ոտ անասուններն իրանց պէտքի համար այնպիսի գոյշ, միապաղաղ ժայռերի վրայ, որոնք, կարծես, իրանց գոյութեան սկզբից չեն փոխել իրանց դէմքերը։

Սրեզակը բարձրացել է, կէսօրուայ տեսիլն է հաստում և բաւական պզալի չափութիւն է թափում նեղ, անտառապատ ձորի մէջ, նեղացնում է մեզ, հետևակներիս։ Ցոգնած, քրտնած, մենք, վերջապէս, մտնում ենք մի ուրիշ ձոր։ Թրլեն մի կողմում մնաց, նրա ձայնն էլ չենք լսում։ Թանձր անտառ է, նրա շուաքը այժմ հմայիչ մրապնում է մեզ։ Այստեղ կարելի է ձի նստել։

Ես կարծում էի թէ ճանապարհն, ուրեմն,

*) Կարմրափթաւան նշանակում է կարմիր փթաթայ տեղ. փթաւան այն չորն է, որի մէջ փաթաթվում է ոտը գուլպայի տեղ. գործ են ածում մանաւանդ տրեխ հագնող հովիւները։

յարմար է, երբ ձիով ենք գնում։ Բայց ձրաեղից։ Անթիւ և անհամար եղևէջներ ենք անում, կամ լանջիվ երերն ենք բարձրանում ձիու գաւակն ընկած, կամ գլխիվայր իջնում ենք դէպի խոր ձորերը։ Ես յետոյ իմացայ, որ այս հսկայական անտառը շատ երկար է ընկած, մի ամբողջ օր ճանապարհ պիտի կտրենք նրա միջով, երբ կուզևորուինք երիցմանկանց վանքից։ Չարկաւօր է արդեօք ասել, որ այս անտառապատ ձորերում միայն և միայն կուսական բնութիւնն է իրաւունք հաստատած։ Կեանք, մարդկային կեանք—ինչ տեսակ և լինի—չը կայ բոլորովին։ Գնում ես, գնում և շարունակ քեզ վրայ կախ ընկած է անբնակ տեղի ծանր ամայութիւնը, քո կոկորդը հուպ է տալիս կուսական անտառի սառցնող լռութիւնը։ Զարս կողմերում գիւղ, բնակութիւն չը կայ ամենևին. Մուսաը իր հսկայական կազմուածքին յարմար ազատութեամբ ու համաձակութեամբ այս թանձր վերարկուն, այս ծմակը, իր ոտներին է գցել, պինդ ծածկուել և դեռ շատ երկար ժամանակ չի թոյլ տալ, որ մարդը բնակուի այս կողմերում, հացի կտոր աշխատէ։ Միայն վանքն է, որին նա մի փոքրիկ անկիւն է շնորհել իր թաւ ծոցում։ Ահա մի վայր, որ իսկապես հեռու է աշխարհային ազմուկից։ Այստեղ կարճ միջոցում կարելի է մոռանալ թէ ինչ է հասարակութիւնը, ընկերութիւնը։ Թող մարդկային աշխարհը, որ կեանքը եռացման աստիճանին է հասցնում, որ ամբոխի մէջ անհատներին, այն էլ բազմաթիւ անհատների դոյութիւնն է կորցնում, աննկատելի դարձնում, թող այդպիսի աշխարհը թնդայ, որտեղ, գլուխ ու սիրտ պատռէ ամեն օր, ամեն րոպէ իր տանջանքի համար հնարած խնդիրների վրայ, թող ինչքեր ուզում է հնարել իրան փառաւորելու, իրան զօրեղացնելու, հարստացնելու համար,—այս տեղերը ոչինչ չեն հասկանայ, չեն լսիլ, չեն զգալ Այստեղի ամբողջ կեանքը, շարժողութիւնն այն կը լինի, որ երբեմն կերպէ ձիւղերի տակ թաղնուած թռչունը, երբեմն գազանը մի անձռնուի ձայնով կարճ արձագանք կը թողնէ այդ ձորերի մէջ, իսկ փոքրիկ առուակները կը խոխոջան խիտ բուսականութեան մէջ կորած և այդպէս աննկատելի կը գնան, կը թափուին Թրղու մէջ, որ անդուլ ու անդադար վշշում է։

Ահաւոր բնութիւն, որի դէմքը տեսնելը, սակայն, հիացումն է պատճառում։ Ես էս, տեսնելով այդ բոլորը, շնորհակալ եմ վանքը շինողից։ Ես ուրախ եմ որ ճակատագիրը մեր վանքերից մի քանիսը շէն ու հաստատ է պահել Հսկայական ծառերի տակ թզուկ, ծալրելի են երևում իմ մեր կօսմօպօլիտներըը, որոնք մեր վանքերի նկարագրու-

թիւնը կալդալիս բացականչում են «ՀՀ, նեղացանք, ձանձրացանք այդ ճանապարհորդութիւններից»։ Միճապելի են այդ, Մուսի այս սառոտանելուն. որովհետև այսպիսի տեղն է լաւ խնայելու մեր վանքերի մի մեծ նշանակութիւնը։ Ահա թէ ինչպէս։

Բնութիւնը, ասմիր չի յայտնի, զարմանալի փառահեղ է այսպիսի հեռու ընկած, խուլ և անմատչելի անկիւններում։ Այժմեան ժամանակները, երբ հաղորդակցութեան ճանապարհների կառուցուածքի հասցրած յառաջդիմութիւնը կեանքի պըրխաւոր մի պահանջն է, երբ մեր Թուլամնթ տեսնողը հանգստութիւն ու յառաջդիմութիւն է պահանջում նոյն իսկ բնութեան բարիքները վայելելու համար, այսպիսի ժամանակ ո՞վ կը ձանձրանայ մեր երկրի այսքան հեռաւոր, անմատչելի կողմերը, եթէ չը լինէին մեր հին վանքերը։ Մեր ազգութեան նախնիքները, անկասկած, մեզանից շատ լաւ ճաշակ են ունեցել և շատ լաւ են հասկացել բնութեան գեղեցկութիւնը։ Դժուարութիւնը, վտանգը կարծես գոյութիւն չեն ունեցել նրանց համար. և նրանք այս տեղերում շինել են հայոց աշխարհի սրբավայրերը, որոնց անուններին հետ կապուած են այնքան գեղեցիկ յիշողութիւններ, սիրուն մարքեր և մի և նոյն ժամանակ սոսկալի ու

յուզիչ պատմութիւններ, շինել են և մինչև այսօր ձգում են գէպի այդ սրբավայրները շատ և շատ մարդկանց։ Եւ գնում են այդ սառնավարութիւն մարդիկ, որոնց սրտի համար վանքերը ահագին նշանակութիւն ունին, որոնք միշտ բաց են պահում ճանապարհը գէպի այդ մոռացուած վայրերը։ Այդ մարդիկ մեզ պէս աննշան այցելուները չեն. ո՛չ, ինչ ենք մենք. հազարից մի անգամ կը յիշենք, կը գրնանք, այն էլ զանազան պահանջներով. երկնքից կը պահանջենք պայծառ արև, թռչուններից կը պահանջենք սիրուն երգ, ձիուց խելօք ու զգոյշ քայլուածք, մի խօսքով այն ամենը, ինչ հարկաւոր է մեր սիրած մարմինը ողջ ու անվնաս տանելու համար։ Գիւղացի մարդիկն են գրանք, որ գնում են պարտք կատարելու, որոնց համար ձիուն ու անձրևը, արևն ու ցեխը մի և նոյն են։

Ինչպէս ես կարող կը լինէի հասկացողութիւն կազմել Մուսի անտառային ահարկու թագաւորութեան մասին, եթէ չը լինէին երիցմանկանց և եզնիչ աստքեալի վանքերը։ Ո՞րտեղից կը տեսնէի Թալթալի քարայրին ձորերը։ Ո՞վ կը համաձայնէր բերել ինձ և ես ինչքա՞ն պիտի ցանկանայի տեսնել այս ծմակները, այս ահեղ լռութիւնը, այսքան շքեղ պատկերներ մեր երկրի բնութիւնից, եթէ այս նեղ ու երկիւղալի ճանապարհը չը լինէր։ Ճանապարհը

բանուկ է, խափանուած չէ. և բաց է, գործում է միայն վանքի համար։ Անտառի վայրի բոյսերը չեն թափվում նրա վրայ, չեն կոլցնում, անհետ անում. որովհետև այն ժողովուրդը, որ իր սրտի ուխտի համար իր բոբիկ ոտների կրունկներով այսպիսի ճանապարհներ շինել գիտէ, այդ իսկ ժողովուրդը այսօր էլ կոխ է տալիս իր շինածը և կոխ տալով կենդանի պահում։ Այդ ժողովուրդը ճանապարհներ շինելու և պատելու մի առանձին աչք չունի։ Նրա գիւղերը տանող ուղիները սրանից լաւ ու մեծ չեն, թէև բոբիկ ոտներով չեն շինուած, ինչպէս սուրբ Գիւղի ճանապարհը, նկատեցէք, հարթ, ապուռատի, շունչ ունենալու համար է և այնպէս է, ինչպէս որ է այն ճանապարհը, որ ոչ թէ մարմանուոր, զգալի, նիւթական կեանքի համար է, այլ լոկ հոգևորի։ Համեմատեցէք այդ երկու ճանապարհները—բոբիկ ոտներով շինածը և միւսը—և կը հասկանաք թէ ինչ նշանակութիւն ունի հին, ամայի վանքը, որ մտել է այսպիսի մի վայրենի բնութեան խուլ ծոցը։

Անտառի կէսը չանցած՝ երևան եկան այդ իսկ ճանապարհի շինողները։ Դրանք ուխտաւորների մեծ մեծ խմբերն էին, բաղկացած զվխաւորապէս քնքոյշ սեռից։ Երկար ու անկարգ շարքերը միմեանց հետևից ընկած գնում էին։ Սակն հասակի մարդ կարելի էր տեսնել, ծծկեր երեխայից սկսած մինչև

սպիտակահեր ալեւորը։ Համարեա բոլորը հետևակ էին, իսկ կանանց մեծ մասը ոտաբոբիկ։ Նրանց խօսակցութիւնների ձայները, բացականչութիւնները խեղդուած, օտարոտի, զարմանալի անտեղի էին թուում վայրենի անտառի մէջ։ Մենք աւելի դանդաղ էինք գնում, հարկադրուած էինք շուտ շուտ կանգ առնել մինչև որ մարդիկ մի կերպ կանցնէին նեղլիկ կածանի կողքով։ Ի՞նչ իրաւունք ունէինք արագ գնալու և նրանց վրայ ուշադրութիւն չը դարձնելու, մեզանից որի՞ ոտն էր ճանապարհի շինուելիան գործին մազի չափ օգնել։ Ճանապարհը նրանցն է։ Դա է նրանց քաղցր յոյսերի, մխիթարութեան միակ ճանապարհը։ Եկել էին յուսով, վերադառնում են յուսապրուած։ Այսքան բազմութեանը նայելով, մենք յոյս չունէինք վանքում ուխտաւորներ տեսնելու։ Եւ իրաւ, երբ մարդկանց քաղցր յոյսերի կածանը, վերջապէս, ձանձրացաւ ձգուելուց, դէս ու դէն պատուելուց և մեզ տալուց, դուրս բերեց վանքի բակը, համարեա ոչ ոք չէր մնացել վերջին մի քանի հատ ուխտաւորներն էլ ճանապարհ էին ընկնում։

Երիցմանկանց վանքը շինուած է մի շատ խոր, անտառապատ ձորի գլխին, ջրաս կողմից շրջապա-

տուած է Թանձր, կուսական անտառներով։ Իսոր ձորի անտեսանելի յատակով, վանքի առաջ, օր ու գիշեր վշշում է Թրղին։ Այդ ձորից վանքի առաջ բարձրացած է մի բաւական մեծ և երկար սար, որ այս կողմից նոյնպէս ծածկուած է խոր և մթին անտառներով։ Այդ սարը—չէք զարմանում—կոչ-ւում է Մասիսայ սար։ Վանքից մի քանի քայլ հեռու, դէպի հիւսիս, ձորի գլուխը սկսում է աստիճանաբար բարձրանալ, բարձրանալ, մինչև որ հասնում է այստեղից երևացող սարսափելի բարձրութեան։ Դա ձիւնապատ Մոսաբի շարունակութիւնն է։ Ահա թէ որ տեղերին է հասել հսկան. նա նեղքից մինչև կէսը ծածկուած է այսպիսի թանձր անտառներով. իսկ մնացած մասը միանգամայն մերկ-ւոր է և երևում են կախ ընկած ահագին սև ժայռերը։ Ըստ երևոյթին անհնարին է այդ սաստիկ բարձր ձգուած լանջերով գնալ գալը։ Բայց ամենաշատը մի ամսից յետոյ, երբ հրաշալի կանաչը դուրս կը գայ այդ բարձրութեան վրայ, այդ իսկ լանջերին բոյն կը դնէ ամառնային մի գեղեցիկ կեանք։ Այդտեղ են գալիս Թարթարի տափարակներից բնակիչները՝ հայ թէ թուրք, բերում են իրանց անտառութիւնը, հօտերը և ապրում են շարժական վրաններում մինչև որ պակասում է խոտը և ցուրտը համբուրում է այդ բարձրութիւնները։ Մոսաբի ամառնային արօտատեղերը—հէյլաղները յայտնի գեղեցիկ տեղեր են։

Արևելեան և արևմտեան կողմերից վանքը նայում է Թրղու ձորին։ Ինքը, այդ վանքը հասարակ շինութիւն է, չունի ճարտարապետական շատ թէ քիչ նշանաւոր բան, շինուած է, ինչպէս այժմ են շինում, մանր քարերից ու ցեխից։ Շինողը, ինչպէս վկայում է մի հատիկ դրան ճակատի արձանագրութիւնը, եղել է «Սիմէօն, չնորհիւն Աստուծոյ կաթողիկոս Աղուանից» իր հարազատ եղբայր Իգնատիոս վարդապետի հետ, «որ եմք որդիք Սարգիս քահանային Մեծ շինեցոյ»։ Շինութեան թուականն է ՌՃԽ (1691) թուականը։ Դա այն իսկ Սիմէօնն է, որ Գանձասարի կաթողիկոսութեան հակառակ աթոռն է ստեղծել և իր մի երիկ թէ չորս հատ յաջորդների հետ այնքան չարիք է հասցրել Ղարաբաղի հայ տէրողներին, որովհետև այս հակաթոռ կաթողիկոսութեան կէտ նպատակին է եղել զոյութեան իրաւունք ստանալ դաւաճանութիւններով, թուրք խաների ձեռքին հզու գործիք դառնալով և հայերի համերաշխութեան կապերը թուլացնելով։ Այդպիսի սարսափելի թոյն է ծնուել այստեղ և յետոյ անցել Ամարասի վանքը, իսկ թշնամի և փառամոլ կաթողիկոսութեան վերջին և ամենաճանր հատոլը եղել է Իսրայէլ կաթողիկոսը։

Այստեղ չը կայ մի շատ թէ քիչ յարգելի յիշատակ, որ պատկառանք ազդէր հասկացող այցելուի սըրտում: Այստեղ, ընդհակառակն, մարդ մի ախուր ժպիտով է յիշում անցեալը և երբ շատ է սկսում քրքրել «եղած—պրծածը», գլուխը չիտ է դարձնում, նայում խլտխտա և վայրենի ձորերին:

Բայց ժողովուրդը սիրում է այդ վանքը. մեծ ուխտատեղի է, մեծ փառք ու յարգանք ունի ոչ միայն հայերի, այլ և Թուրքերի մէջ, որոնք վանքը կոչում են Դալի-Վանք, այսինքն գիժ վանք: Այդ անունը, որպէս թէ, վանքը ստացել է չափազանց զօրաւոր լինելու պատճառով. և հէնց այդ պատճառով Թափառական Թուրքերը ոչնչ ձեռս չեն հասցնում: Գուցէ շատ հնուց մի այսչափ յայտնի ուխտատեղի լինելու հաշւին է պատճառ, որ երիցմանկանց վանքի հակառոք և ընտսակար կաթողիկոսութիւնը միանգամից այնպէս հաստատ հիմք գտաւ Զրաբերդում: Ինչպէս որ լինի, սեփական հոգևոր իշխանութեան մասին այժմ ժողովուրդը բամբասանք չի անում:

Բացի այս հասարակ ու աղքատ վանքից փառամոլ կաթողիկոսութիւնը մի յիշատակ չի թողել: Կաթողիկոսների գերեզմանները անգամ անյայտ են. եթէ հաւատանք այժմեան մարդկանց խօսքերին, երկուսի գերեզմանները պիտի լինին այն սալ քա-

րերը, որոնք ընկած են հիւսիսային պատի տակ և որոնց վրայ մի հատ տառ անգամ չը կայ:

Վանքի ներսի կողմը շատ աղքատ է, տկլոր: Փոքրիկ բան է, ունի չորս սիւն, մի փոքրիկ բեմ, որի վրայ դրած է մի սուրբի աջ, իսկ նրա մօտ ջերմեռանդ ուխտաւորների նուէրներն են թափուած: Կոյտ կոյտ դարսած են մեծ քանակութեամբ զեղին գիւղական մոմեր, խնկի փոքրիկ փաթեթներ, բամբակ: Սուրբ աջին հայուհիները նուիրել են իրանց մատների զարդարանքը, ալծաթեայ հասարակ մատանիներ, որոնք հագցրած են մատների վրայ և թափուած են նրանց տակ. մենք համրեցինք մինչև երեսուն հատ մատանիները: Բացի այս ամենից բերել են և զտակական նուէրներ, գոյնզգոյն թելերով նախշած ձուաններ, որոնք կախ արած են սիւներից: Այդ ձուանների թիւում կային մի քանիսը, որոնց վրայ, ինչպէս երևում էր, երկար էին աշխատել հայ կանանց մատները. դրանք զարդարուած էին մեաքսեայ փոքրիկ ծոպերով և փնջիկներով, մեծ ու փոքր ուլունքներով: Զարդարանքը, ճաշակը պատիւ էր բերում անծանօթ արուեստագէտին: Ուր որ նայում ես այս անշուք, մերկ տաճարի մէջ, ամեն տեղ երևում է հայուհուի պաշտած սրբավայրը որքան կարելի է զարդարելու լուռ եռանդը: Բայց այս վանքի գլխաւոր

սրբութիւնը ձախ կողմի խորանում գտնուող մի սուրբի գերեզմանն է։

Վանքը տեսնելուց յետոյ մենք գնացինք սենեակը, ուր պիտի ճոպայինք։ Այդ սենեակը շինուած է վանքի առաջ, լանջի վրայ այնպէս, որ նրա կտուրը հաւասարվում է վանքի բակի հետ։ Մութ և խոնաւ մի սենեակ է, որի կտուրը քարի է, համրակապ։ Մի հատ պատուհանը մի կերպ լոյս է տալիս մի պատի կէսին, իսկ ճեղքած տեղերը դուռը փակած ժամանակ կտրած են խաւարի մէջ։ Պատուհանը նայում է դիմացի ծառազարդ սարին, որ, ինչպէս ասացի, Մասիս է կոչվում։ Մի ուրիշ, փոքրիկ սենեակ էլ շինուած է այս մեծ սենեակի հետևը, դեռևի տակ, բոլորովին կարօտ Աստուծու լոյսին։ Պատերի և առաստաղի ծեփը չափազանց կեղտոտ է, սևացած։ Այստեղ են ապրել Երիցմանկանց կաթողիկոսները։ Ես յիշում եմ Գանձասարի կաթողիկոսարանը. ինչ համեմատութիւն նրա ու սրա մէջ...

Այս սենեակներում է ապրում վանքի, այսպէս ասուած, միաբանութիւնը, որ բաղկացած է չորս հոգուց։ Չորս հոգու մէջ մի հատ հոգևորական չը կայ, բոլորն էլ աշխարհականներ են, որոնք այսպիսի հոգևոր տեղը ճոպալու համար «մուղդուսի» անունն են ընդունել։ Դրանց գլխաւորն է, որքան

կարողացայ իմանալ, մի կոյս՝ Մարթա անունով դա հազած է կապոյտ կտաւի շորեր, ինչպէս ասում են, «զիր ու կիլակոս» չը գիտէ, բայց չերմեռանդութեամբ ծառայում է վանքին ու ուխտաւորներին։ Այդտեղ նա նստած է 1854 թուականից։ Միւս երեք տղամարդ «մուղդուսները» հասարակ գրիւակներ են, այստեղ ոչինչ չեն շինում, բայց ուտում են անփոյթ։ Երեք տղամարդ ամեն օր դուրս են գալիս, կանգնում այդ բարձրութեան գլխին, անգործութիւնից աչքները ծոյլութեամբ ծանրծանր կկոցելով դէպի արեգակն են ուղղում, որ, երևի, իմանան օրուայ ժամանակը. և երբ ուխտաւոր է գալիս, աչք են տնկում բաժնին։

Բայց այդ երեք մուղդուսներից մէկը բաւական զարմանալի, նոյն իսկ խորհրդաւոր անձնաւորութիւն է։ Թոյլ տուէք դրա մասին քիչ մանրամասն խօսեմ։

Քառասուն թէ աւել տարի սրանից առաջ Շուշում բնակուող Հարուստ և պատուաւոր վաճառական Բ.-ի մի որդին, ծնողների համաձայնութեամբ, օտարութիւն է գնում և անհետանում է։ Ոչ մի տեղ չեն գտնում նրան, այնպէս որ մեռած են համարում։ Անցնում է մի երեսուն տարի, կրտած հայրն ու մայրը մեռնում են, երկու եղբայրները Շուշուց ուրիշ քաղաք են տեղափոխվում։ Եւ

մի օր այդ կոլածի հօրեղբայրը նամակ է ստանում Անգլիայի Մանչեստր քաղաքից, այդ անչափահաս պանդուխտից, իսկ մի տարուց յետոյ կոլածը մի ամբողջ ընտանիքով շոգեպատուած՝ գալիս է իր հայրենիքը, Շուշի։ Ցայտնում է իր բարեկամներին, որ ինքը այդքան ժամանակ Մանչեստր է եղել, ուր առևտուր, լաւ գործ ունի, ամուսնացել է և այդ տգան ու աղջիկը, որ իր հետ են, իր որդիներն են։ Մի քանի ժամանակ լաւ ապրում է Շուշում, յետոյ էլի ընտանիքով գնում է Անգլիա, ասելով որ գործերը այնտեղ սպասում են իրան։ Եւ այնուհետև էլի լուր ու համբաւ չի գալիս նրա մասին։ Երեք տարի սրանից առաջ Ջրաբերդ գաւառում լսւս է ընկնում մի հետևակ, ծեր մենաւոր, որ յայտնելով իր ով լինելը, խնդրում է ռեպային գործակալ քահանայից որ իրան թոյլ տուի ապրել Երիցմանկանց վանքում։ Այդ մարդը հէնց այդ կոլած, ասպա փառքով յայտնուած վաճառականն է եղել։ Այդ օրուանից նա նստած է այս վանքում։

Մենք հրաւիրեցինք նրան մեզ հետ թէյ խմելու։ Եկաւ, յարգանք յայտնելու համար, մեզանից քիչ հեռու նստեց։

—Ձեր գաղէթներում ամէն բան գրւում է, յանկարծ հարցրեց նա մեզանից։

Մեր Դալի-Մահրատան, ինչպէս յետոյ իմացայ,

նրան ասած է եղել որ ես «գազէթաչի» եմ։

—Ո՛չ, պատասխանեցի ես, գրւում է, ինչ որ կարելի է։

—Մեր երկրում գրում են ամեն բան։

«Մեր երկրում», այսինքն Անգլիայում։ Ուրիշ խօսքերի մէջ էլ յաճախ կրկնում էին «մեր երկրում» բառերը։ Ուրեմն նա իրան դեռ անգլիացի է համարում։ Բայց թէ ինչո՞ւ և ինչպէս է թողել «իր երկիրը», տունը, տեղը, կարողութիւնը, ընտանիքը և եկել, առանձնացել է այս վայրենի աշխարհում, ուր նրա հարևաններն են ալջիրը միայն, այդ նա կը յայտնէ, իհարկէ, միայն իր սրտին շատ մօտիկ մարդուն։ Իսկ այդքան մօտենալ նրա սրտին հեշտ չէ. բաւական ծածկամիտ ծերուն է։ Ամեն մարդու, ինձ էլ նրանց շարքում, ասում է թէ թողել է աշխարհի չարն ու բարին, եկել է այստեղ այն պատճառով, որ հայրենի հողն է քաշել, բերել։ Ուրիշ ոչինչ։ Բայց մարդ չի կարողանում հաշտուել այդ մտքի հետ։ Ես հասկանում եմ հողի, հայրենի հողի ձգողական մեծ ոյժը. բայց միթէ այդ հողը հէնց այս ծմակներէի մէջ կորած վանքի հողն է։ Թողել Անգլիայի պէս երկիրը, թողել անգլիական ընտանիքը, որ, ինչպէս վկայում են տեսնողները, գեղեցիկ ընտանիք է եղել, կորել աշխարհի, իր բոլոր բարեկամների հետ ունեցած կապերը

և ապրել մի այսպիսի աղքատ վանքի հաշուով— այդ բաւական անհասկանալի է։ Պէտք է ասել, որ Երիցմանկանց վանքը համարեա ոչինչ կալուած չունի։ Ուխտաւորների տուած նուէրները, գանձանակը պատկանում են կապալառուին *). այնպէս որ միաբանութեանը մնում է միայն ողորմութիւն հաւաքելով ապրել։ Կոյս Մարթան վանքի քոսոտ էշի հետ ընկնում է գիւղերը, գնում է Մուսալի արուարձանները հայ գիւղացիների մօտ, հաւաքում է ցորեն, գարի, բանջարեղէն, պանիր, իւղ։ Եւ Անգլիայում մեծացած ու մի քանի անգամ Ամերիկա գնացած պատուաւոր մարդը նստում է, հանգիստ սրտով ուտում այդ աղքատիկ ողորմութիւնները...

Ճաշից յետոյ մեր Տէր-Հայրապետը տանում է մեզ Զալադան-Իւզբաշու բերդը տեսնելու։

Վանքից քիչ ցած իջնելով, մտնում ենք մի մեծ անտառ։ Երևում են բնակութեան տեղեր, երևում է և մի հատ ու կոպիտ պարիսպ, որ երկար ընկած է ծմակի մէջ։ Տեղը հարթ է և նեղլիայացնում է մի սուր եռանկիւնի, որ ցցուած է երեք շատ խոր ձորերի մէջ։ Բերդի պարիսպն էլ ընկած է այդ ձորերի ծայրով. նա տեղ տեղ քանդուած է, տեղ տեղ կանգուն, կազմում է մի երկար ու շատ նեղ

*) Զրաբերդի ուխտատեղիների արդիւնքները կապալով են տրուած զանազան մարդկանց։ Այդ մի շատ տգեղ սովորութիւն է։

ամրութիւն։ Մէջ տեղում կան տների պատեր, ոլոնք խնամքով, պինդ են շինուած։ Այդ է կարելի ասել Զալադան-Իւզբաշու բերդի մասին. ոչինչ յիշատակարան չունի, յայտնի չէ թէ ով է եղել այդ ժիր Հարիւրապետը, որ այսպիսի անմատչելի ձորերի եզերքին է կպցրել իր պատերազմական բոյնը։ Զալադան-Իւզբաշի... Հանգուցեալ Բաֆֆին, որ նոյնպէս շատ բան չի իմացել նրա մասին, այդ մականունը թարգմանում է «յափշտակող հարիւրապետ»։ Իհարկէ, սա ասպազակ չի եղել, որ ասպազակն է այսպիսի մեծ բերդ շինում բնակութիւններով շրջապատուած, վանքից այսքան մօտիկ։ Նա, երևի, մէկն է եղել այն ասպազապետներից, որոնց խմբերը այնքան մեծ գործեր են կատարել մելիքների պատերազմների ժամանակ։

Այդտեղից մենք մի կարճ զբօսանք կատարեցինք օրը մթնացնելու համար։

Ոչինչ բան չը տեսանք, բայց միայն բաւական ժամանակ ճնշուած մնացինք անտառի ծանր մթնոլորտի տակ։ Տէր Ասատուր, ինչպէս է հոգին տանջվում այս խորին լռութիւնից, երբ ընկերից մի քանի քայլ յետ մնալով, մի լոպէ ուշադրութիւն ես դարձնում շրջապատող կեանքի վրայ։ Ծառերի թագաւորութիւնն է. ամէն մի ծառ հսկայ է ոչ թէ յայնութեամբ, այլ բարձրութեամբ։ Կարծես

ամեն մէկը ձգտում է իր գլուխը ընկերի գլխից բարձրացնել, անտես Աստուծու լոյս աշխարհը կարծես այս ձորը նրանց բոլորին է շատ վախցնում: Երևում է այդ ծանր լռութեան մէջ բոյն դրած ծառային հսկայական կեանքը իր բոլոր մանրամասնութիւններով: Ահա երիտասարդ, բարակ ծառը, որ կարծես քո աչքի առաջ էլ, ահա, ահա, ձգվում է դէպի բարձր, որ շուտ հասնէ մեծերի եռևից: Ահա մի ուրիշ հսկան, որ անինայ ձգուելուց ուժասպառ դառած՝ կոտրուել է, վայր ընկել և փտում է այնպէս ապարդիւն, ինչպէս ապարդիւն մեծացել է: Կեանքն ու մահը այստեղ էլ անխուսափելի մըրցակից են: Ոյքաներ շատ թափուած ծառեր կան. դիակը վայրենի անտարբերութեամբ փտում է, հոգ դառնում, որ կեանք, այժ ապ ուրիշներին...

Եւ միթէ այս հսկայական անտառի մէջ չը կայ ձայն հանելու ընդունակ արարած. միթէ գիշատիչներն էլ վախենում են այս տեղերից: Ո՞վ գիտէ, նրանցից որ մէկն է մի որ և է խոր խոռոչից կամ այդքան բարձր գնացած ճիւղերից անթարթ աչք տնկել քեզ վրայ: Չը կայ աշխարհ, չը կայ լայնութիւն, որ մարդու հոգին խօսացնէր. խոնաւ ու մռայլ է օդը, ծանր քրտինք է դուրս տալիս վրադ, թէև չը կայ արևի լոյս. չը կայ ամբողջ բնութիւն, վերջապէս, աղատութիւն չը կայ այս

ծմակում: Այո՛, լաւ տեղ է եղել բոյն դրած հակառակութիւնը. լաւ, հիանալի խօրշելում է թագնուել թոյնը, որ այս անտառների խորութեան մէջ ձնշուած օդից, մռայլ խոնաւութիւնից, փտող նիւթերից դժ, դառնութիւն սառցած՝ մաւ մի առողջ, ապրող մարմնի մէջ ու քայքայից, յաւիտեան ոչնչացրից նրան:

Այդ բոլոր տպաւորութիւնների ու մտքերի ծանրութիւնը վերցրած գնում էի ես ձորի միջով, մի փոքրիկ, պարզ ջրի մօտով: Հասանք մի փոքրիկ տղերքի և այդտեղ վերջապէս մի քիչ լոյս — աշխարհ բացուեցաւ. վերևում, ձորի գլխին, երևաց վանքի գմբէթը:

Մենք դարձեալ նստած ենք մեր սենեակի կտրին, վանքի առաջ. թէյ ենք խմում և անյագ նայում ենք մեծ բնութեան: Մռայլ երկնաբերձ կատարները հեռուհեռ մեծացնում են իրանց հսկայական շուաքները, պատրաստւում են մի թանձր խաւարային գիշեր գցել այս ձորի վրայ: Արեգակը ձեռք է վերցնում աշխարհից, նրա մեռնող ճառագայթների նուաղ լոյսի տակ մի անանուն մեղմ գոյնով փայլում են անտահման անտառները: Հոգին այսպիսի դէպքում է կարողանում բացուիլ, հրճուիլ Տնրա նրան բարձրութիւն, տուր նրան շրջապատի վրայ իշխող դիրք — և նա հոգի է: Բայց նա ճնշը-

վում է, խռովում, անհանգիստ բաբախում է, կրծքի վանդակին խփվում, երբ մի բան—լինի դա նոյն իսկ հասարակ ծառ—իրանից բարձր է, տիրում է իր վրան։

Արևն անցաւ, Մռաւի ձիւնապատ գագաթները ցլտացրին երեկոյեան խաղաղ օդը։ Այլ ևս նըստելու սէր չը կայ. վերարկուի մէջ փաթաթուած տուն ենք մտնում եւ այդտեղ մի կարճ, շատ կարճ երեկոյ անելուց յետոյ պառկում ենք։ Մէկը ծածկում է պառուհանը մի ինչ որ շորով։ Թրղին մեղմացնում է իր ձայնը և մենք խոշոր քնով ենք անցնում մոլթածի պէս։

Է.

Առաւօտ է, ժամի հինգի կէսը։

Ես կանգնած եմ դիշերային խոնաւ ու նեղ օթևանիս առաջ, բաց երկնքի տակ և խոր ձորի գլխին։ Երկնքի երեսին միմեանցից հեռու ցլուած են կոյտ կոյտ ամպիկներ, որոնք արևելքին մօտենալով, խառնում են, թանձր ու սև շերտեր կազմում։ Րոպէից յետոյ փոխվում է դժգոյն լոյսը, ամպկրի ջանքով նուազած ճառագայթները ահա գալիս են, խփում սարի լանջերին։ Եւ սարի յաւերժական գլեստը, հրաշալի, թանձր անտառը, աւելի

և աւելի պայծառանում է, զարդարվում քնքոյշ լոյսերով և կողմնակի բարակ ստուերներով։ Ապրիլի կանաչը, այդ փափկութիւնը, թարմութիւնը, սիրելի՝ ինչպէս ամեն մի նոր կեանք, ժպտում է Աստուծու բարի ու չքնաղ առաւօտի դիմաց։ Ժպիտ և ժպիտ է գալիս ամեն կողմից։ Անժպիտ է միայն Թրղին, որ քերում է իր խոր ձորի ապառաժները։ Ո՞ւր է նա, չի երևում, նրան կախարդել տարել են ծմակները, ծածկել են իրանց մէջ։ Այնտեղ, նրա ձորում, դեռ առաւօտուայ այն պահն է, երբ օձի խայթած մարդն էլ մոռացութեան մէջ է ընկնում, հանգստանում։

Այստեղ, վերևում, երկնքի հետ իր յատիտենական վէճը շարունակելով, շողշողում է Մռաւի շղթայի հսկայ, ձիւնապատ գագաթներից մէկը։ Այդ ձիւնն էլ, ցուրտ, սառցնող ձիւնն էլ այժմ, այս վայրկեանին, ժպտում է, ուրախացնում, այնպիսի գեղեցիկ լուսով է զարդարուած։ Նայում եմ դէպի ցած, Թրղու ձորի ուղղութեամբ։ Կանաչ ու գեղեցիկ սարերի արանքում կուտակուած է սպիտակ, խնկի ծխի պէս մաքուր մշուշը. նա թանձր է, չի բարձրանում, աւելի և աւելի սպիտականում է, մաքրվում, երբ արեգակի լոյսը աւելի բարձր սարերից սկսում է դէպի ցած հոսալ։ Այդ թարթափի ձոյն է... Այդտեղ դիշերային օդին, կարծես,

ծխում է նրա վրայ կախարդական խնկի ծուխը, որ բարձրանում է խոնաւ ձորի կրծքից, բարակ ու թանձր քուլաներով քաշում է Ջրաբերդի անասան մարմինին, կասես թէ չոյում է նրան։

Կանաչ ձորերը հեռուհեռէ լուսաւորւում են, հեռուհեռէ ծալում, դէն են դնում գիշերային մութ վարագոյրը։ Ահա արեգակի լոյսը ինձ էլ հասաւ. ամպիկների կոյտերը ցրիւ են գալիս և նա տաքացնում է իմ սառած մատները, ձեռքիս բռնած մատիտը։ Տաքացնում է գեղեցիկ գառի փոքրիկ մարմինը, որ եկել է, ինձ մօտ կանգնել և ինձ ու իմ թղթին է նայում իր սիրուն աչքերով։ Օրը բացուեց, երկնքի լուսատուն շատ և շատ լուսեղէն խուրձեր է ուղարկում։ Բազմանում, բազմապատկւում են անտառների ձայները, թռչունների ծլվլոցները։ Ահա այդ փոքրիկ ձայների վրայ աւելացաւ գետի միւս կողմից, Մասիսի թանձր անտառի միջից բարձրացած հասա ձայնը։ Դա էլ եղնիկի ձայնն է. ինքը չի երևում, ինչպէս չի երևում ոչ մի բան այդ ծառերի մէջ. բայց նրա ձայնն էլ միացած է բնութիւնը փառաբանող ձայների հետ։ Ահա այդ բոլոր ձայների վրայ աւելացաւ վանքի զանգակների սուր և բարակ դօղանջիւնը և լուսից քահանայի խռպոտ ու բարձր ձայնը, որ երգում է դասարակ շինութեան մէջ։ Ձայները միացել են,

և նոյն միտքն են քարոզում։ Իսկ ես յափշտակուած եմ և իմ մատները անշարժացել են։ Իմ մէջ միայն մի ցանկութիւն կայ,—որ իմ մատիտը մի հրաշալի վրձին դառնար գէթ մի վայրկեան, իսկ տետրակը, որի մէջ ես սև ու անմիտ գծեր եմ ոլորում, կուտակում—նկարչի կատարի կտոր. և ինձ տրուէր գոյներ տալու շնորհքը։ Բայց ոչ միայն այդ. այդքանը քիչ է։ Ես կը խնդրէի մի երկնային ոյժ, որի օգնութեամբ կարողանայի այդ պատկերին տաք ու թարմ կայծնել այս ձայները, բնութեան այս բոլոր աստուածային մեղեդիները...

Առաւօտեան այդ պահուն մենք մեր ձիանների վրայ նստած՝ շարունակեցինք մեր ճանապարհը։ Մենք յետ էինք դառնում երեկուայ եկած ճանապարհով։ Բայց մի խոր ձորում մեր առաջնորդ Տէր-Հայրապետը դուրս եկաւ այդ ճանապարհից, ձեռքերով հեռացրեց միմեանց հետ խառնուած ճիւղերը, իր սպիտակ ձիու հետ կորաւ այդ ճիւղերի մէջ։ Ամենևին չէր կարելի ենթադրել թէ այդ էլ մի ճանապարհ է։

Միշտ մի և նոյն անփոփոխ ճամբն է։ Մի բան չափ յայնութիւն ունեցող կածանով բարձրանում ենք միշտ և միշտ դէպի բարձր։ Հաւատալ չի կա-

լեռնի թէ այդ կածանը ձիու ճանապարհ է և վերջը մեզ պիտի դուրս բերէ մի գիւղ: Ձիաները սասանիկ չալչալուում էն, սարսափելի ջանք էն թափում, որքան կարելի է շուտով վերջացնելու այդ տանջող ճանապարհը: Եւ շնչասպառ դուրս էն գալիս, վերջապէս, լանջիվերի գլուխը: Մենք հասել էնք Մռաւի մի փոքր ուսին, ուր իջնում էնք, հանգիստ առնելս ձիաներին:

Լեռնային բարձրութեան գլուխ է, բայց ոչինչ չի երևում. ոչ մեզ այստեղ բերող ճանապարհն էնք տեսնում և ոչ էլ այն, որ մեզ պիտի տանէ: Ամեն տեղ անտառ է, անտառ և միայն անտառ... Ես մինչև անգամ խղճալ էի ուրտնում այն ահագին ժայռը, որի մօտով դեռ նոր էինք անցել. նա էլ չի երևում: Բայց այնքան մեծ ու բարձր ժայռ էր, որ անպայման էին դրել նրա ծերպերում և ծանր կառոյցներով պատրաստ էին տալիս անտառի գլխին:

Աչքտեսից ցած էնք գնում ոտով: Որքան մինչև այժմ կածանը չալչալուելով դէպի սարն էր գնում, այնքան էլ այժմ յանդուգն, անդիմագրելի արագութեամբ վազում է դէպի ցած, դէպի ծմակի խորքը: Վերջ ու սահման չունի անտառը, ձանձրացնում է մեզ: Հոյս աշխարհը հեռացել, կորել է, լեռնային ահեղ բարձրութիւնները հալուել, չքացել են. մենք շարունակ շարժվում էնք ստուերի

մէջ, որ շատ խոր տեղերում կիսամթութեան է փոխվում: Երբեմն, շատ սակաւ, մի երեք քայլ լայնութեամբ տեղ է բացվում մեր առաջ, տեսնում էնք ահռելի կիլիմեր, ձորեր, որոնք բացուել են մեզանից ցած և ամեն տեղ ծածկուած ծառերով և միայն ծառերով: Եւ մի րոպէ մեր աչքին երևացած լոյս աշխարհը ուրախացնում է մեզ, հրապուրում: Շո՜ւտ, շո՜ւտ դէպի այն աղատութիւնը. թէ էլ այս անտառները բոլորովին ճնշել, տափակացրել են մեզ, մեր հոգին բերել, հաւաքել են մի նեղ օղակի մէջ... Ի՞նչ է ցոյց տալիս նա, այդ անտառը:— Մի թառամած, անգոյն և մանր, շատ մանր կեանք, որ մի ինչ որ անհասկանալի զօրութեամբ պահվում է անթիւ ու անհամար արմատների մօտ, մի կեանք, որ միշտ ցած ընկած է, սողում է միշտ խոնաւ գետնին քսուելով: Մենակ այդ փոքրիկ ու ողորմելի կեանքը չէ մարդուն նեղում: Եթէ կայ աշխարհի մէջ սոսկալի ծանրութիւն, որ աներևոյթ է, որի ինչ լինելը չը գիտես, բայց որը կարող է մարդու ուսերը ցաւեցնել, այդ այս անտառների ծանրութիւնն է: Մարդու ձայն, իհարկէ, չը կայ: Մօտիկ տեղերում գիւղ չը կայ, գիւղական ոչ մի պատմութիւնք այս տեղերին չի յարմարվում: Երևում էն միայն գիւղացիների կացնի հետքերը. այդ կացինը տաշել կտրել է այն ծառերը, որոնք ընկած

են կածանի վրայ և դժուարացնում են անց ու դարձը։ Եւ այդ կածանն էլ երիցմանկանց վանքինն է, ուրիշ մի բանի պէտքական չէ, բայց միայն ուխտագնացութեան։

Երբեմն երբեմն մութ ձորերի մէջ փոքրիկ ջրեր են երևում, երկու այդպիսի տեղ տէր հայրը իմ ուշադրութիւնը գրաւեց մի քանի փոքրիկ փոսերի վրայ և ասաց, որ այստեղ գիւղեր են եղել մի ժամանակ։ Գիւղե՞ր... Մարդու հաւատը չի գալիս. այնպէս կորել են բնակութեան բոլոր հետքերը, այնպէս այդ անտառը բացատում է մարդկային բնակութեան հնարաւորութիւնը։

Բայց երկար ու անտանելի ճանապարհը մեզ վերջնականապէս չը յուսահատեցրեց. մենք իմացանք, որ նա վերջ էլ ունի։ Աւելի և աւելի իջնելով անտառապատ բարձրութիւններից, մեր առջևը յանկարծ մի արտ բացուեցաւ, մի կանաչ արտ, որ ընկած էր ծմակների մէջ և որի միւս կողմին, թըմբի գլխին, երևացին գիւղական երկու թէ երեք մարագներ։ Մի և նոյն ժամանակ երևաց Թալթալի ձորը, որ խոր ընկած է մեծ մեծ սարերի մէջ։

Այդ բաց ու լոյն տեսարանը, ազատ օդը մեզ թևեր տուին։

Ահա և գիւղը, որ կոչւում է Տօնին-շէն։ Նա շինուած է բարձր տեղ, նայում է Թալթալի ձո-

րին, փոքրիկ է, ունի 25—28 տուն, որոնք հաստատուել են այստեղ 28 տարի սրանից առաջ։ Նրանք Մաղաւուզ կամ Զարդախլու անունով հայրենական գիւղից են, որ Մեծ-Շէնից շատ չէ հեռու։

Մենք հանդիստ առանք մի գիւղացու սրահում։ Ժամի մէկն էր, իսկ մենք 6-ից սկսած գիւղում էինք։ Առաջի կուսական անտառների մէջ։ Այցելեցինք գիւղի եկեղեցին։ Դա մի հին շինութիւն է, փոքրիկ, ցածրիկ, ողորմելի, աղքատ, որ ամեն ժամ, ամեն րոպէ պատրաստ է թափուելու։ Նրա շուրջը կայ մի մեծ ու հին գերեզմանատուն։ Գերեզմանաքարերը առանց բացառութեան անտաշ են, կոպիտ և չունեն ոչ մի արձանագրութիւն։ Այդ ամենը ցոյց է տալիս մի խորին հնութիւն, մի անտաշ, անկիրթ ժողովրդի մի ժամանակուայ գոյութիւն։ Գիւղի մօտ կայ մի հին շինատեղ, որ կոչւում է Ջրամէջ. այդ տեղից բարձր, դէպի Մաւաը, էլի կան գիւղատեղեր և եկեղեցիներ։ Ջը գիտեմ թէ առաջ ինչպէս է եղել, բայց այժմեան գիւղը աղքատ է։ Գիւղացիները երկու բանի մասին էին դանգատվում. մէկ որ վարելահող չունին, միւս որ թուրքերը շատ են նրանց նեղացնում։

Վարելահողերի պակասութիւնը շատ հասկանալի է. անտառը բռնացած է ամեն տեղ, գիւղացիներին թոյլ չեն տալիս ծառեր կտրել, վար ու

ցանք անել. եթե այդ կոլդպարտութիւնը խիստ է տեղացիների համար և շատ նեղութիւն է պատճառում ուրիշ տեղերի համար մահուան և կեանքի ինդիր է. Պէտք է այդ անտառները լաւ պահպանել, որպէս զի Թարլաբլը միշտ Թարլաբլ մնայ, այսինքն ամառ ու ձմեռ առատ ջուր տանի, հատցինեն ածխատարները, ուր բնակվում է մի ահագին ժողովուրդ միայն Թարլաբլի օգնութեամբ Թարլաբլի ջուրը անվնաս և առողջարար ջուր է. և պատճառն այն է, որ նա կազմվում է լեռնային անհամար աղբիւրներից, ճմանկների պարզ ու խառակ ջրերից։

Ինչ վերաբերում է Թուրք ազգաբնակութեան, այդ ճշմարիտ որ մի կատարեալ չարիք է տեղային ազգաբնակութեան համար, մի չարիք, որի հետ շատ ժամանակից ի վեր է կռուում տեղական կառավարութիւնը։ Պէտք է ասել, որ Թարլաբլի ձորի երկարութեամբ, ահագին տարածութեան վրայ ապրում է Քոլանի կոչուած Թուրք աւազակային, վայրենի ցեղը։ Քոլանիները գիւղական հանգիստներ չեն կազմում, այլ ապրում են ցիր ու ցան. մի հինգ տուն մի տեղ են, մի ուրիշ տուն տասը վերստ այդ տեղից հեռու։ Նրանք ոչ վարում են, ոչ հնձում, այդպիսի աշխատանքի տակը չեն։ Նրանց արհեստը աւազակութիւնն է, ուրիշի կայքը

յափշտակելը։ Հասկանալի է թէ որքան շատ վնասներ կը տան Հայ ազգաբնակութեանը, որ երկրագործ է և անասնապահ։ Այսպիսի վայրենի տեղերում, ուր բնութիւնն ինքն է յարմարեցնում յանցանք գործելն ու անպատիժ մնալը, շատ դժուար է սանձահարել մի վայրենի ժողովուրդ, որ գարերից իվեր ժառանգած է յափշտակող, արիւնարբու հնամենականներ։ Բայց վերջին ժամանակներս կառավարութիւնը կարողացել է բաւական լաւ ցոյց տալ իր զօրութիւնը, ցիր ու ցան անելի վրայ խիստ հսկողութիւն անելով, յանցանքը առատիկ պատժելով կառավարչական տանուտէրի (правительственный старшина) նշանակելով այնքան յաջող քայլ է արել, որ այժմ քոլանիները նոր-նոր սկսել են վախ ու ցանք անել, այդիներ անկէք Պահասել է չարագործութիւնների թիւը, երևում են նշաններ, որ քոլանիները վերջ ի վերջոյ պիտի հասկանան թէ կարելի է ապրել սեփական ձեռքի հալալ աշխատանքով։ Եւ այն ժամանակ հայ ազգաբնակութիւնն էլ հանդիստ կապրէ։ Բայց առ այժմ այդ ժամանակը դեռ հեռու է...

Մենք չտապակցինք հեռանալ խղճուկ Ծաղինչէնից, որպէս զի երեկոյեան կարողանանք հասնել

մեր նշանակած տեղը։

Էլի անտառ, էլի հսկայական անտառ, թանձր տերևների ստուեր և կտոր կտոր պլտոր երկինք նրանց վրայ։ Ծառերն աւելի մեծ են, աւելի խիտ. ահագին արմատները դուրս են ցցուել հողից, վշացրել փոքրիկ գիւղական ճանապարհը։ Բայց մենք շուտով հասնում ենք մի ուրիշ գիւղ, որ թէև ամեն կողմից շրջապատուած է պղպիսի անտառներով, այնուամենայնիւ բաց է տրել իր համար մի լայն հրապարակ, որտեղից էլի մի բան տեսնվում է։ Այդ գիւղի անունն է Դիատիկին, որ գուցէ Դաստակերտ բառի աղաւաղումն է, թէև շատերը պալպ Դաստագիւլ էլ են ասում։ Այս մէկը Ծօնին-չէնից էլ խեղճ է, փոքրիկ, աղքատ. գետնափոր փոքրիկ խրճիթներ, մեռելային անկենդանութիւն, անհրապոյր խաշնութիւն, փոքրութիւն և մի մոռացուած, վայրենի անկիւնի տրտմութիւն. այդ գիւղը մեզ կատարեալ վհատութիւն պատճառեց. ուստի և կանգ չառնելով, շտապով անցանք, որ հեռանանք մարդկային չարքաշ կեանքի ախուր պատկերից, կուզ գնանք բնութեան վայրենի ծոցում, այն անտառների խորքում, որոնք ծնում են այդ իսկ չարքաշ կեանքը։

Եւ անտառը էլի ընդունում է մեզ իսկոյն, հէնց որ գիւղը աչքից անցնում է։ Եւ էլի կտրուած

հնք աշխարհից, կեանքից։ Միզ ընկել է միայն այդ կեանքի հետքը, խոնաւ ճանապարհը, որ յանկարծ սկսում է դէպի ցած վազել. երևի առաջներս ձոր է, երևի մենք մի սարից հնք իջնում։ Եւ ահա, վերջապես, դուրս եկանք այդ ձորի վրայ։ Մի քիչ բաց տեղ է տուել երկինքը և այդ բաց տեղից երևում է մի նոր աշխարհ, որ կարծես այս իսկ վայրկեանում ստեղծուեց և մի անյայտ թիւնից դուրս եկաւ, մեր առջևը կանգնեց. մի լայն, ահագին հովիտ է երևացածը, որի միւս կողմին ընկած է բարձր լեռնաշղթան. և բոլոր այդ տեղերը ծածկուած են էլի անտառներով։ Մայրամ էր բարակ անձրևը, մեծ ուրախութիւն պատճառելով մեր առաջնորդ տէր Հօրը։

Հեռու, հովիտի միւս ծայրում, անտառների մէջ մի տեղ են ցոյց տալիս ինձ և ասում թէ այդտեղ է եղակեր անունով հայի գիւղը։ Մինչև այժմ իմ տեսած գիւղերից ոչ մէկը այն աստիճան կոլած, մոլորուած մի տեղ չէր, ինչպէս այդ գիւղը։ Ես զարմանում եմ, չը գիտեմ թէ ինչպէս են այնտեղ մի հինգ-տաս տուն հաւաքուել և ապրում են։

Մենք իջնում հնք մի կամուրջի վրայ, որ կախ ընկած է շատ խոր ձորի վրայ և որի տակով գնում է մի փոքրիկ գետակ։ Կամուրջից բարձրացանք և ահա մեր առջևում յանկարծ երևաց մի փոքրիկ գմբէթ։

Եղիշէ առաքեալի վանքն ենք հասել։

Ը.

Պատկառելի և անուանի հնութիւն է ուխտ հատ փոքրիկ մատուռներ կան մի շարքում, միմեանցից շատ մօտիկ, ամենքն էլ հասարակ ու աղքատ շինութիւններ են. դրանց մէջ կանգնած է իններորդ շինութիւնը, որ ինքը, վանքն է։ Մի հատ գմբէթն էլ հէնց այդ մեծ շինութեանն է պատկանում։ Այդ մատուռների հաւաքածուն կոչվում է Եղիշէ առաքեալի վանք։ Բուն վանքը, այն գմբէթաւոր շինութիւնը, մեծ է միւս ուխտ մատուռներուի հետ համեմատած։ Բայց առանձին վերցրած՝ մի հասարակ, փոքրիկ բան է, շինուած է, ինչպէս և միւսները, մանր քարերից, չունի ճարտարապետական որ և է գեղեցկութիւն։ Բեմի կողմը և կարի մեծ մասը քանդուած են, թափուած։ Բեմի վրայ երևում է կարմիր ու մեծ մեծ տառերով մի արձանագրութեան կտորները, որոնք ամբողջ միաք չեն կազմում։

Այս է Եղիշէ առաքեալի վանքի նկարագրութիւնը։

Բայց անուանի և պատկառելի հնութիւն է։ Համարեա ամբողջ բակը սալայատակ է արած անե-

թիւ գերեզմանաքարերով, որոնց գրերը վկայում են, որ այստեղ ապրել են բազմաթիւ վանականներ, եպիսկոպոսներ։ Քանդուած վանքի գաւթում, զանգակատան տակ, խաւարի մէջ երևում են կոկած, յղկած գերեզմանաքարեր, որոնց տակ թաղուած են կաթողիկոսներ։ Հիւսիսային պատի տակ էլ կան կաթողիկոսների գերեզմաններ։ Հին ժամանակներում այստեղ է եղել Աղուանից կաթողիկոսութեան աթոռը և այստեղից է յետոյ փոխուել Գանձասարի վանքը։ Հիւսիսային պատի տակ կայ նոյնպէս և մի մեծ ու գեղեցիկ գերեզմանաքար։ Գիր չը կայ վրան, այլ հետևեալ մարմարիոնի տախտակը, որ հագցրած է եղել քարի վրայ և կրելիս է եղել արձանագրութիւն, անյայտ չարագործների ձեռքով գողացուած է։ Բայց ժողովուրդը շատ լաւ գիտէ, որ դա Մելիք-Յաթամի գերեզմանն է։ Մելիք-Յաթամը Ջրաբերդի մէջ թոդել է գեղեցիկ շինութիւններ և նրա գերեզմանաքարն էլ Ջրաբերդի բոլոր գերեզմանաքարերից գեղեցիկն է։

Այդ գերեզմանի կողքին մատուռների շարքում երևում է մեկը, կարծեմ ամենից աղքատը, ամենից անշուքը. մի ողորմելի շինութիւն, որ նեղսած է, կուչ եկած, հազիւ է պահում իր տգեղ ու հաստ պատերը. նեղսի կողմը բոլորովին խաւար է, մեկ, խոնաւ։ Բայց այդ մատուռը Ղարաբաղի մէջ

Ճնացած պատմական ամենայարդելի յիշատակարաններից մեկն է, եթէ ամենից մեծը չէ։ Դրան ձեռագրին կարգացվում է հետևեալ արձանագրութիւնը. «Այս է հանդիսաւոր վաչագան թագաւորին. Ամառաւած ողորմի հայրապետաց և որք ծնողացն որ շինեց զեկեղեցիս յառաջնորդութեան Ծէր Միմեոնի Թուին ՉԼԵ էլ»։ Թագաւորի գերեզմանը գտնվում է մուտքի մօտ, աջ կողմի պատի տակ, փոքրիկ, փլուած բեմի առաջ։ Քարի վրայ չը կայ մի հատ նկար և ոչ մի հատ տառ։ $2^1/_4$ արշին երկարութեամբ մի քար է, խնամքով տաշած և յղկած, որ ունի հռանկիւնի պրիզմայի ձև։ Այսպիսի ապահով տեղ է ճանկռուել Ամուանից թագաւորի տապանը, կալծեմ միակը, որ անվնաս է ճողել Աղուանից ամբողջ հալածութիւնից։ Բայց հարց է, միշտ այդպէս կը ճնայ, թէ ողորմելի մատուռը մի օր կը փլուի և իր ահագին քարակարկառի տակ կը փշրէ արքայական գերեզմանը։

Այստեղ, այս վանքում էր ապրում Աւագ վարդապետը, որ յայտնի է Դալի-Մահրասայ անունով։ Անցեալ գարու պատմութիւնը տալիս է մեզ այդ վարդապետի պէս քաջ հոգևորականների անուններ. Ջրաբերդում յայտնի է այս Դալի-Մահրասան, Միւնիքում Հալիձորի Ծէր-Աւետիքը, Աւշար Եւէցը, որ կոչվում էր և Ծէր-Գասպար։ Այս հո-

գևորականները աշխարհական իշխանների հետ միացած՝ բազմաթիւ չաղթութիւններ են կատարել այն ժամանակուայ պատերազմներում և լաւ յիշատակ են թողել ժողովրդի մէջ։

Եղիշէ առաքեալի վանքը, ինչպէս տեսնում էք, եղել է մի մեծ կեդրոն, մի հոչակաւոր սրբավայր, որի շուրջն են հաւաքուել թագաւորներ, իշխաններ, բարձրաստիճան հոգևորականներ։ Այդ մասին վկայում են նաև ուրիշ շինութիւններ։ Վանքի հնութիւններից ուշադրութեան արժանի է հին զանգակը, որ նոր է գտնուել հողի մէջ ծածկուած։

Ես ասում էի, որ մեր կրօնասէր նախնիքները լաւ են հղել ճանապարհ երկրի ամեն տեղերը, քնութեան զեղեցկութիւնները։ Մի ապացոյց էլ եղիշէ առաքեալի վանքը։ Հիանալի են նրա շրջակայքը։ Ամեն կողմից անտառապատ լեռներ են բարձրում, իսկ նրա առաջ, հարաւային կողմից, ընկած երկար լեռնային ոչ այնքան բարձր շղթան մի շատ խոր ձոր է կազմում, որի այնքան խոր գնացած յատակում փրփրում է գետակը, այն գետակը, որի վրայ դցած կամուրջով էինք անցնում։ Այդ ահռելի անդունդը մի անգամ կլանածին էլ յետ չի տալ նրա կողերի վրայ չի կարող պահուել ոչ մի մարմին, որ վերևից գէպի ցած կընկնէ։ Այդ ձորի վրայ շինուած է մի երկյարկանի հին տուն, նա ունի մի

շատ նեղ ու երկար պատուհան, որ նայում է խոր ձորին և միանգամայն տալտափ ու հիացում է պատճառում իր մեծ կանդնածին։ Ես մտաբերում էի Տաթևի առջև փռուած ձորը, այդ ձորի վրայ կախ ընկած փոքրիկ պատշգամբը և ասում էի, որ այս ձորը ասելի վայրենի է, այս պատուհանը ասելի ահռելի պատկեր է ցոյց տալիս։

Այդտեղ, այդ պատուհանի մօտ նստած մենք հայ էինք ուսում։ Նկատ մտաւ մի գիւղացի, որ եկաւ լուռ ու մունջ նստեց փռած կրակի մօտ, տաքանում էր։ Վանքի մուղրումն յայտնեց, որ գա հիւանդ է, եկել է մի երկու օր վանքում ճնալու, պրծից ապաղջութիւն ընդունելու։ Նա Եղակեր գիւղից էր, որի մասին վերևում մի երկու խօսք ասացի։

Ես խօսացրի գիւղացուն և պարմանքով լսեցի նրա բերանից Սիւնեաց աշխարհի մասին բարբառը։ Ծայանուեցաւ որ նա Տեղ գիւղից է։

— Ո՞րտեղից որտեղ ես ընկել, հարցրի ես։

— Մեր բոլոր գիւղը Տեղից է գաղթել, պատասխանեց նա։

Եւ յետոյ պատմեց որ մի քանի տարի առաջ են գաղթել, այդ գիւղը շէն արել։ Այժմ Եղակերն ունի 18 տուն բնակիչներ, բոլորն էլ Տեղից եկած։

Ես զարմանում էի թէ ինչպէս են սիւնեցիք դասել այս խոր անկիւնները, այս ծմակների ծոյը

և ինչպէս են ապրում այստեղ։ Գաղթականութեան պատճառը հողի պակասութիւնն է եղել։ Տեղ գիւղը, ճշմարիտ է, ունի շատ վարելահողեր, բայց ունի և մեծ ժողովուրդ։ Հողը պակասութիւն է անում, նեղում է երկրագործին և ահա գիւղից սրանք վեր են կացել, եկել այս կողմերը, թէև շատ ուրախ չէին, որ եկել են։ Այստեղ էլ նոյն պակասութիւնն է, այստեղ էլ անտառն է ամեն տեղ բռնել, ազատութիւն չի տալիս։ Եւ հիւանդ գիւղացին շատ դժգոհ էր իր վիճակից։ Չի՞շտ բան է. թողնել տուն ու տեղ, ագռ ու բարեկամ, թողնել հայրենի բնութիւնը, մի լեռնադաշտ, որի վրայ փայտը, մի հատ ոտքամիլի թուփն էլ հարուստ բան է, որի վրայ ահագին տեղեր է հերկում ու թռ ջուխտ հան լծած գութանը, թողնել այդպիսի երկիրը, գալ բնակուիլ այստեղ։

— Այս ծմակը աչքներիս լոյսը կտրում է, ասեց լացակից գիւղացին։

Զանգազուրցին այսքան ծմահների մէջ. իհարկէ, աչքի լոյսը կը կտրուի։

Իմ պատմածներից դուք կարողացաք նկատել Զաբելդի գիւղերի մի հետաքրքիր պատմութիւնը։ Մարզակերտը բաժանուած, գաղթած է մօտակայ Կուսապատ գիւղից. Մեծ-Շէնը փոքրացել է ուրիշ կողմեր գաղթածների պատճառով, Տօնին-Շէնը գաղ-

թաճ է Մաղաւուզ դիւղից, Դաստակերտը նոյնպէս մի նոր գաղթականութիւն է, եզակերը Սիւնիքից եկածների դիւղն է։ Այսպէս ժողովուրդը տեղափոխվում է, այսպէս Ջրաբերդի գաւառում դիւղերը փոքրանում են, ցրիւ գալիս։ Այս երևոյթը մնում այս կողմերին է յատուկ։ Ի՞նչ է պատճառը։

Անկից մեծ պատճառը, իհարկէ, հողի, վարելահողի պակասութիւնն է միացած մի ուրիշ որ և իցէ հանգամանքի հետ, որ չէ թոյլ տալիս որ դիւղը մեծանայ։ Այդ հանգամանքը կարող է լինել տեղի դիրքը, ջուրը։ Եւ ահա դիւղից դուրս են գալիս փոքր քանակութեամբ անձեր, շատ թէ քիչ հեռանում են, նոր բնակութեան տեղ որոնում։ Իսկ հին դիւղատեղերից աւել ի՞նչ լաւ տեղեր են կարող գտնել։ Այժմեան մարդիկ դիտեն, որ հինները իրանց ետևից լաւ են իմացել բնակութեան տեղ ընտրելը։ Ահա նորերը գտնում են մի տեղ մի հին, աւերակ եկեղեցի, ջուր, մի քանի կտոր վարելահող ու բնակվում են այդտեղ։ Ջրաբերդի գաւառում ձշմարիտ որ բաւական կան հին դիւղերի տեղեր. ես կարծում եմ, որ այդ դիւղերի ժողովուրդն է մեկնելի ժամանակ գաղթել Վրաստան (Բոլնիս) և Գանձակի շրջակայքը։ Բայց ինչպէս որ լինի, այդ դիւղերի տեղերը այժմ կատարում են յիշած գերը, ձգում են դէպի իրանց։ Իսկ-

կէ, երկար տարիներ անբնակ ու անխնամ ձգած դիւղատեղերը ու նրանց մի ժամանակ մշակած հողերը համարեա էլի վայրենացել են, սակայն բազմաթիւ անյարմարութիւններ, որոնց յաղթելը մեր ժամանակի պայմաններում բաւական դժուար է, եթէ չասենք անկարելի մեծ մասամբ չէնց այս պատճառով այդ նորաբոյսերը, որ կրում են հին անուններ, այնքան ապքատ են, այնքան ձրնշուած անկանոն անտեսութեան պայմաններից։ Միւս կողմից երևում է թէ ինչպէս մարդը անզօր ընկճվում է բնութեան խստութիւնների առաջ։ Իրանք, այդ դիւղերը, ինչպէս տեսանք, փոքրիկ բաներ են, հազիւ արժանի գիւղ անուան, իսկ լեռնային բնութիւնը այնքան զօրեղ է, այնքան բռնանում է իր վայրենի ոյժով, ուրեմն ի՞նչ են կարող անել այդ գիւղերը իրանց երեք ջուխտ ձեռքերով։ Լեռնային երկրի ապրուստը, առհասարակ, բոլոր ապրուստներից դժուարն է. բայց էլի տարն այնքան մեծ չէ, եթէ լեռները, օրինակ, Սիւնիքի լեռների պէս են։ Այդ երկրում լեռների մեծ մասը մերկ է, այսինքն միայն խոտով ծածկուած և այդ պատճառով այնտեղ երկրագործութիւնը, անասնապահութիւնը մի չափով կարելի են։ Բայց այնպիսի լեռնային երկիրներ, ինչպէս են Խաչենը և նրա սահմանակից Ջրաբերդը, բոլորովին ուրիշ բաներ են։ Ան-

տառը այստեղ խեղդել է ամեն ինչ ազգաբնակութիւնը սակաւ է, նօսր և միշտ ապքատ. նա միայն լոկ խօսքերով է կարող բողոքել իր բնութեան անընկճելի ոյժի դէմ:

Վանքի մուղդուսու մի օրինակելի գործը տեսանք այն ժամանակ, երբ հեռացանք վանքից: Ծմակի մէջ գնալիս մենք իսկոյն նկատեցինք, որ ճանապարհը շինուած, յարմարեցրած է նորերումս: Ես դեռ չէի տեսած, որ դէպի վանքերը տանող ճանապարհների վրայ մարդու ձեռքը աշխատած լինի. Գանձասարի, Տաթևի ճանապարհները վաղուց վառ են: Իսկ այստեղ դժուար անցքերը փորած են. դստած, ձիու յարմարութեան համար ճանապարհը տեղ տեղ լայնացրած է, թէք զառիվայրերի վրայ պատյաններ կան տարած:

Ժիլ մուղդուսու օգտակար և զօրեղ բազուկները գովելով, մենք շարունակում ենք մեր ճանապարհը և շուտով հասնում ենք մի գիւղ, որի մօտ հեռուհեռ նօսրանում է և բոլորովին վերջանում Մռաւ լեռների և առհասարակ Զրաբերդի անտառային թագաւորութիւնը: Ինքը, գիւղը, գանվում է մի ժայռոտ և մերկ բարձրութեան տակ և կոչվում է Մարալես: Նա փոքրիկ է, նոր է և ունի մեր անցած գիւղերի պատմութիւնը: Ահա կրկին տեսանք Թարթարը, որ վշշալով հոսում է գիւղի տա-

կոփ: Գիւղում մեզ հիւրասիրում է մի վաճառական հայ, որի մեծ, գեղեցիկ տան շինութիւնը դեռ չէր վերջացել. ուստի իջևանում ենք նրա հին տանը, որի մէջ տիրում է մի յուսահատ խաւար. գիւղական խրճիթներից մէկն է, խոնաւ, հողէ պատերով, դեռևի մէջ խրուած. կարի վրայ թողած մի փոքրիկ ծակը համարեա բոլորովին ասեղըդ է, որովհետև մեզ լոյս չէ տալիս: Այսպէս են մեր գիւղական հին ձևի բոլոր տները:

Մադաղիսը այլ ևս լեռնային գիւղ չէ. նա ընկած է Թարթարի նեղ կիրճում, ուր ամառը լաւ տաք է լինում: Գիւղը չունի եկեղեցի, չունի նաև աղբիւր և ջուր է առնում մի առուակից, որ անցնում է գիւղի միջով, ջրում է Թարթարի ափին տնկած այգիները: Այդ առուակն այն իսկ գետակն է, որը տեսանք եղիշէ առաքեալի վանքի խոր ձորում փրփրած: Այդ ջրի բնական ընթացքն այնպէս է, որ երբէք չը պիտի տեսնէր Մադաղիսը, որովհետև գիւղի և նրա ձորի մէջ մի մեծ սար կայ: Ջուրը այստեղ բերուած է մի ստորերկրեայ ջրանցքով, որ մի ահագին գործ է և, իհարկէ, հին ժամանակների գործ: Այժմեան ժամանակ գուցէ անխելքութիւն համարուի այդպիսի մի ջրանցք փորելու միտքն անգամ: Բայց հին աշխարհը, որքան և կոպիտ ու անկիրթ լինէր, այսպիսի մեծ գործեր

ունի թողած. մի ահագին ժայռոտ սար են ծակել, ջուրը դուրս բերել այս կողմը, դիւղ շինելը. այդ անհաւատալի գործը մի առասպելի նման է դարձել։ Ահա թէ ինչ են պատմում։

Լինում է մի չքնաղ օրիորդ Մադաղիս անունով։ Նրա վրայ սիրահարուած են եղել երկու դև եղբայրներ, որոնցից փոքրի անունն է միայն յայտնի—Շիլ-դև։ Օրիորդը երկու դևերին գործ է յանձնում, ասում թէ ով շուտ կը վերջացնէ գործը, ես նրանն եմ։ Շիլին յանձնում է մեծ սարի միջով ական փորել, ձորի ջուրը բերել այս կողմը. իսկ նրա մեծ եղբօրը յանձնում է Թարթար գետից դուրս բերել մի մեծ առու, որ ջրէ մարդկանց արտերը։ Սիրահար եղբայրները իսկոյն գործի են կենում. բայց չասէք թէ մենակ փոքրի գործն է դժուար եղել. ո՛չ. Թարթարը խոր ընկած է ժայռոտ ու նեղ ափերի մէջ, սրընթաց է. այդտեղից առու հանելն էլ հսկայական գործ է, թէև ճշմարիտ ոչ այնքան ծանր, ինչպէս է մեծ սարը ծակելը։ Գործը արագ առաջ է գնում. մինչև օրս հնում է Թարթարի ձախ ափի վրայ այն ահագին քարակոյտը, որ փոքր դևն է կազմել ականից հանած և դէն շպրտած քարերից։ Բայց նա դեռ կէսին էլ չը հասած՝ սարսափահար տեսնում է, որ իր մեծ եղբայրն արդէն գործը վերջացնելու վրայ է. շինել է ջրանցքը և բա-

ւական հեռու է տարել։ Նա սարսափած գալիս է Մադաղիսի մօտ, յայտնում իր ցաւը։ Օրիորդը նրան է եղել սէր տուած, ուստի խորհուրդ է տալիս խաբեբայութեամբ յաղթել մեծ եղբօրը։ Նրա խորհրդով Շիլ-դևը առնում է շատ կտաւ, փռում է գիւղի մօտ, այն իսկ տեղը, ուսկից պիտի դուրս գար ջուրը. կտաւի վրայ ցանում է ազ։ Առաւօտեան գիւղի տաւարը գնում է ագի վրայ, իսկ մեծ դևը հեռուից տեսնում է այդ, կարծում է թէ կտաւը ջուրն է, որ արդէն դուրս է թափվում սարից և տաւարը ջուր է խմում։ Սէրից կուրացած մեծ դևը չի կարողանում տանել այդ կարծեցեալ յաղթութիւնը, դէպի վեր է շպրտում իր ահագին մուրճը և ղլուխը պահում է այնպէս, որ մուրճը ընկնում է, ջախջախում ղլուխը։ Մադաղիսը գնում է Շիլ-դևին, որ, իհարկէ, վերջացնում է իր սկսած գործը։

Մադաղիսի հանդէպ, Թարթարի միւս ափին, ընկած է Թլբաբնակ մի ինչ որ գիւղ։ Սարսափելի ծուլութեան պատճառով միշտ ապքաստութեան մէջ լինելով, այդ թուլքերը պարապում են գողութիւններով։ Բայց գողը էլի միշտ քաղցած է մնում, ուրեմն և մեծ պատառներ գողանայ, ասում էր մեր հիւրընկալը, որ իրրև թուլքերի մէջ առևտուր անող վաճառական դիտէր նրանց «օրն ու կեանքը»

և մեզ մի քանի բաներ էլ պատմում նրանց մասին։

Հէնց այդ ժամանակ գեամի միւս ափին հայում էին Թուրքերի շները։

— Փառք Աստուծու, շները հայում են, ասաց հիւրընկալը։

— Ինչ կայ որ, հարցրի ես։

— Մինչև այժմ այդ շները քաղցածութիւնից ձայն ու ծպուտ հանել չէին կարողանում, մինչև անգամ եթէ նրանց կոխ տալով անցնէիր։ Հիմա երևում է, որ նրանց ախրերն էլ այնքան չեն քաղցած. գալուն է, կովերը կաթ են տալիս, թան է ձարվում. իսկ երբ որ Թուրքերի մէջ թան ձարելուց, իմացէք որ մնացած բանը չէ բան, շներն էլ օգտվում են։

— Եւ մի՞թէ ամեն տարի այդպէս է։

— Փորձած բան է։ Այս տարի հօ բոլորովին քաղցած կտտվում էին թէ իրանք թէ շները։ Կոտրուեն գրանք, ոչ փար են իմանում, ոչ հունձ. սրա ու նրա դռնից մի չամիս, կամ մի հաս, կամ թէ եղն գոգանալով են ապրում։ Բայց երբ թանը առատանում է, քիչ հանդարտւում են թէ իրանք, թէ ապրանքատէրերը։

Մեր հիւրընկալը պատմում էր Թուրք ազգաբնակութեան բնաւորոշ մի յատկութիւնը։

Թ.

Մադապիս գիւղում վերջանում էր մեր ձանապարհորդութիւնը։ Այսուհետև հարկաւոր էր առանց դէս ու դէն նայելու շտապել փոսաի իջևանը և այնտեղից սպասել նաւակ դէպի Շուշի։

Առաւօտեան ժամի տասին ձանապարհ ընկանք։

Թէև երկինքը բոլորովին պարզ չէր, բայց տաք օր էր. կիրճի մէջ տիրող տաքութիւնը յիշեցնում էր տափարակները։ Բնութիւնը Մադապիսին հասնելով, կտտարեալապէս սնանկանում է։ Նա, որ շինել է, երկինքին մօտեցրել Մուսաի բարձրութիւնները, որ կրճել, խորացրել է սարտափելի անդունդները, որ պլեխվեր ցցել է վիթխարի ժայռերը և այդ բոլորը ծածկել է կօշտական անտառներով, նա, այդ բնութիւնը, այստեղ յոգնածի պէս ցած ընկած է, նիհար ու գունատ թուրքեր է ղրել որոնք երբեմն շարունակութիւն գտած տիտաննների մի առժամանակ ձրգվում են Թարթարի երկու ափերով դէպի արևելք։ Իսկ գե՞տը։ Նրա համար այստեղ շինուած են փոքր ութեան դռներ, որոնց վրայ հաստատուած է մի հինաւուրց կամուրջ։ Այդ կամուրջը կոչվում է Ղառի-քիօրփի (պառաւի կամուրջ) և նրա վրայով պիտի մենք անցնենք գետի աջ ափը։ Ի՞նչ են այդ փորձութեան դռները։

Երկու ահագին ժայռեր կան բուսած գետնի մէջ միմեանց հանդէպ, երկուսն էլ գալիս են, միմեանց մօտենում: Շատ են մօտենում, մի նեղ անցք են թողում իրանց մէջ տեղը և այդտեղով պիտի անցնէ գետը: Բայց ինչպէս է անցնում: Կատաղի մրրեգնուԹեան պատկեր է երևում կամուրջի վրայից, որ մի հատ կամարով միացնում է երկու ժայռերի գլուխները: Գետը վերևից գալիս է, խփում աջ ափի ժայռին և... մէկ էլ չկա ու չկա է գնում պողպոջներով: Ցետ մղուած ալիքները հանդարտ տարածվում են լայն շրջաններ կազմելով, բայց պատահելով առջևից եկող ջրերին, գոռոզ և հանդարտ պողպոջներ են անում: Հանդարտ են երևում կամուրջից, ջրի մակերևոյԹի վրայ, բայց ինչ կը լինին կոհակների այդ ընդհարումները ջրի տակ այդ ԹեԹև կերպով իմացվում է նրանից ԹէԹ ինչպէս ջուրը մակերևոյԹի վրայ կարծես ԹէԹ եփվում է, իսկ սպիտակ, Թանձր փրփուրը հեռացհեռ քաշվում է ափերի մօտ: Ահագին ժայռը ոչինչ է համարում ջրի այդ կատաղուԹիւնը, նա խրուել է ջրերի խորուԹեան մէջ, կարել է կէս ճանապարհը և չէտ է մղում ջրերը, պոնք աւելի և աւելի հեռանալով այդ արգելքից, լայն տարածուելով, կամուրջի այդ վերին կողմում մի լճակ են կազմել:

Այժմ նայենք կամուրջի ներքին կողմից: Այդ

տեղ ժայռերի արանքից դուրս են Թափվում յորձանքները խուլ ադմուկ հանելով, ժայռերի խոռոչների մէջ վազելով, պատուելով և էլի չէտ ու չէտ դուրս Թափուելով: Ջուրը, կարծես, մազվում է այդ նեղ դռների մէջ, կարծես հատաքվում է, դիզվում և չէտոց յանկարծ դուրս Թափվում: Այդքան չարչարանքից չէտոց, ժայռերից ազատուելուց չէտոց, գետը վախեցածի պէս դէս ու դէն է ցրվում, տարածվում, լայնանում: Այո, բնուԹիւնը փորձուԹեան դռներ է կանգնեցրել ԹալԹալի վրայ: Նա պիտի անցնէ այդ նեղ դռներով, որպէս ԹէԹ պիտի մաքրուի, քաւէ իր բոլոր մեղքերը, դէն դնէ իր լեռնային խրոխտ ու ամբարիշտ բնաւորուԹիւնը: Մինչև այստեղ նա ուրիշ էր, այսուհետև պիտի ուրիշ լինի: Այսուհետև նրա դաշտը հարԹ է, նա պիտի գնայ և մարդկանց հրամանը կատարէ:

Հեռանալով այդ զարմանալի կամուրջից, մենք գնում ենք աջ ափի երկարուԹեամբ ընկած բլուրների շղԹայի մօտով: Պրծաւ, էլ ոչ միայն ծառ, այլ և հասարակ, ողորմելի Թուփ էլ չի երևում տխուր, այրուած տեղեր են: Թումբերի շղԹան երկար գօտու պէս կարում է մի հին ջրանցքի տեղը, որ կոչվում է Դև-արխ. այդ ինքն է օրիորդ Մադալենի անբախտ սիրահարի գործը: Առաւն, ինչ ասել կուզի, այժմ բոլորովին չորացած է. նա հա-

նուաճ է Թարթարից, պառաւի կամուրջից շատ բարձր մի տեղ: Մեծ, գեղեցիկ դործ է. մարդ հիանում է, տեսնելով թէ ինչպէս նա երկար ձգուում է, արձակ ու համարձակ գօտևորում է թումբերի երկար շղթան, ահագին պաղտոներ անելով նրանց ծոցերում: Ճշմարիտ, եթէ հեռանանք ժողովրդի մտքից, որ այդ աշխատասէր գործը մի ինչ որ սիրահար գևի է վերագրում, մենք կը տեսնենք մի հին, աշխատասէր ժողովրդի յիշատակը, որ նրա կուլտուրական զարգացման մասին գեղեցիկ վիպասթիւն է տալիս: Ահա գնում ենք անջրդի, մերկ տեղերով. հողը բոլորովին անօգուտ է, բայց ոլքան առատ պտուղներ էր կարող տալ, եթէ այդ ջրանցքը այժմ էլ ջուր բերէր: Ժողովրդի մեծ հարստութիւններն են այստեղ կոլչում: Շուտով մենք անցնում ենք թումբերի քամակը, հեռանում ենք գետից և մեր առջև բացվում է լայնարձակ, ահագին դաշտավայրը. նրա վրայ չի երևում մի կտոր հերկած տեղ, չի երևում բնակութեան տեղ. ջրի պակասութիւնը ամայի անապատ է դարձրել այդ կողմերը:

Մի քանի տարի սրանից առաջ Շուշու հայերի մէջ ծնուեց այն միտքը, որ վաճառականութիւն անելով, միևնոյն բերանի թիքան խլելով, կոպեկների համար հողի ու խիղճ ծախելով բան չի դառնալ. հարկաւոր է բնութեան հարստութիւնները մշակել, հարկաւոր է երկրագործութեամբ, գիւղատնտեսութեամբ պարապել: Քառասուն թէ աւել հոդի, չեմ յիշում, զլխաւորապէս վաճառականներից, խնդիրը տուին կառավարութեան, որ թոյլ տրուի իրանց հաստատել այս իսկ տեղերում գաղթականութիւն: Խնդրատուները նախապէս կազմել էին այդ միտքը իրագործելու ծրագիրը: Գաղթականութեան առաջին հոգսը պիտի լինէր ոռոգել այդ անջրդի դաշտերը. դրա համար պատրաստ էր հին Գև-արխը, պէտք էր միայն քիչ խորացնել և մի քանի տասնեակ հազարներ ծախսելով շինել գետից դուրս բերելու տեղը, որ այժմ փչացած է: Սքեռնամեծ գժուարութիւնը այս վերջին բանն էր. Թարթարը այժմ բաւական խոր է ընկել, այնպէս որ բաւական հմուտ մասնագէտն է կարող մի ճար անել: Բայց խնդրատուները չոյս ունէին, որ կարող են գլուխ բերել այդ գործը և այնուհետև նրանց նոր բնակութեան տեղը իսկ որ շատ գեղեցիկ կը լինէր և շահաւէտ: Բայց մինչև այժմ այդ խնդիրքը որ և է լուծում չի ստացել:

Թարթարը պառաւի կամուրջից ցած անխնայ յափշտակվում է. նրա մարմինը մաս մաս կտրատվում է, դուրս բերվում, դէս ու դէն ցրվում: Ասում են թէ հօթանասուն առու է դուրս բերած այդ

գեաից. գրանցից շատերը ահագին տարածութեան վրայ են գնում, ջուր մատակարարում բազմաթիւ գիւղերին: Նա, այդ գոռոզ, ամպաշատ գետը, որ սարերի մէջ կարծես գոռում է թէ ինձ մի մօտենար, գառնում է անծայր տափարակների վրայ ցրուած բազմաթիւ պղտոր ու խեղճ առուներ: Խեղճ Թարթար. ես խղճում էի նրան, տեսնելով «արխեր»-ի ցանցը, թէև գիտէի որ այդպէս խղճացած նա աւելի լաւ է, օգուտէա...

Շուտով մեր առաջն է դուրս գալիս Թարթարի բազմաթիւ պարզևներից մէկը: Անջրդի դաշտավայրից ձանձրացած, տանջուած, մենք հասնում ենք Մարտագայ անունով հայաբնակ գիւղը: Նա շրջապատուած է մեծ մեծ ու գեղեցիկ այգիներով, որոնց թարմ ու խիտ կանաչները մարդու աչքն են քաղցրացնում: Սմայի տափարակի այդ օազիսը իր բոլոր բնակութիւններով, այգիներով, մեծ մեծ արտերով այն առուի շէնքն է, որ Թարթարն է տալիս:

Մարտագան մեծ գիւղ է, որ հիմնել են գարուս քսանական թուականներին Պարսկաստանից գաղթած հայերը: Դաշտային գիւղ է, հարթ տեղ շէնած, բայց սարսափելի կեղտոտ գիւղ է. փողոցները լիքն են աղբով, որ անձրևի ժամանակ զզուելի հոտ է տարածում: Տները շինած են հասարակ աև ցեխից և եղէգնից, շրջապատուած են պարսէգ-

ներով: Սմառը այստեղ շատ տաք է լինում, բայց բնակիչները սար չեն գնում: Այդ անտանելի կեղտոտութիւնը մի այսպիսի տաք տեղ հասկանալի է թէ ինչ կը լինի ժողովրդի համար, որ ապրում է ցածրիկ աներում, բարակ, ցեխի պատերի եաևը. և հէնց այդ է պատճառը, որ գիւղը չի մեծանում: Այդքաք իրենից կարելի կը լինի սովորացնել գիւղացուն, որ աղբը փոխանակ փողոցում թափելու և իր կեանքը թունաւորելու, տանէ իր դաշտը, իր այգին աճէ, ձկասի փոխարէն աւելի և օգուտ ստանայ: Չի հասկանում...

Մարտագայից մինչև Թարթար իջևանը երկու վերստ է: Իջևանից մօտ պատահում էին մեզ խումբ խումբ գիւղացիներ, հայ թէ թուրք, որոնք տանում էին իրանց հետ բեռներ գրասանների և սայլերի վրայ: Մի արտասովոր կենդանութիւն էր տիրում այդ մշտալուռ դաշտերում: դեպի ամեն կողմ գնում էին հետևակ և ձիաւոր մարդիկ, սայլերը ճռնչում էին, խօսք ու աղաղակները մի խուլ ադմուկ էին կազմում: Ամեն չորեքշաբթի օր իջևանում լինում է բազար, այսինքն գիւղական ազնավաճառ. շրջակայ և հեռաւոր գիւղերը բերում են այստեղ իրանց բերքերը և լինում է բաւական լաւ առևտուր: Երբ մենք տեղ հասանք, իջևանի ահագին հրապարակը դեռ ծայրէ ի ծայր լիքն էր գիւ-

գացիներուն բարմութեամբ։ Գիւղացիները անոնցմէն արագութեամբ կէս ու կէն էին ընկնում, առնում, ծախում էին, շուտափուտ էին վերջացնել, գնալ։ Այդ ածնավաճառները, ինչ խօսք, շատ զեղեցիկ և անհրաժեշտ բաներ են այսպիսի տեղերի համար, ուր չը կայ առևտրական կեռրոն։ Նրանք մեծ զարկ են տալիս գիւղական անտեսութեան. ամեն մէկին ունի յարմարութիւն իր ունեցածը հրապարակ հանել և ծախել մի ընդհանուր գնով։ Զարչխութիւնը այստեղ այնքան էլ չի կարող գիւղացու մտքերը աճիլել անոդորմ կերպով։ Առնողի ու ծախողի պահասութիւն չը կայ. հետևաբար խաբելու մի մեծ պատճառը այսպիսի տեղ գոյութիւն չունի։ Շուշու և Ջուանշիրի գաւառներում շատ մեծ գիւղեր կան, որոնք շաբաթը մի անգամ ածնավաճառ ունին, ինչպէս օրինակ. Բարդայ, Աղդամ, Աղջաբադի։

Մի ժամից յետոյ սայլակը մեզ դէպի Շուշի էր տանում։ Արեգակը այրում էր, ճանապարհի թոզը անոդորմ կերպով նստում էր մեզ վրայ, խեղդում էր մեզ։ Ծխաւ, ախտաւ տեղեր։ Ես շուտ շուտ նայում էի դէպի արևմուտք, տեսնում էի այն սարերը, որոնցից նոր էինք իջել, յիշում էի զով անտառները, պաղ ջրերը։ Եւ հոգով ձգվում էի դէ-

պի այդ հսկայ անտառային աշխարհը, որը, սակայն, դեռ երէկ այնպէս ինձ նեղացնում էր։ Ես անյագ նայում էի դէպի այդ կողմերը...

«Մարդու աչքը հողից կը կշտանայ, երբ կը պառկի գերեզմանում», ասում է ժողովուրդը։

Այո՛, միայն այդ հողից...

ՇԱՀԲՈՒԼԱՂ.

(1888).

ՇԱՀԲՈՒԼԱՂ

Ա.

Շահբուլաղ... Աղբիւրների թագաւոր, թէ՞ թագաւորի աղբիւր...

—Թէ՛ մէկը և թէ՛ միւսը։

Մի ցածր սար է, մի սապատող, ժայռոտ բարձրութիւն, որ ծածկուած է կարճլիկ թփերով և նոսր խոտերով։ Ձորս կողմն անջրդի է, չորս կողմը հեռու տարածութեան վրայ տեղ տեղ մեռնում է, տապակվում առանց ջրի։ Ցեղը միանման դաշտավայր, որը այս փոքրիկ լեռնաշղթայի պատուանդանից սկսուելով ձգվում է դէպի արևելք, հօրիզոնի վրայ մի կող է կազմում և թեքվում, անցնում է դէպի հարաւ։ Եւ այսպէս, այս մէջքը ցցած սարի տակից դուրս է վազում մի մեծ ջուր, բաժանուած կրիք գետակներից, որոնք ամառ ձմեռ քչքչում են քարէքար ընկած, միանում են, գնում են դէպքից, օր մեծ զոլծոլ պիտի կազմեն, ծառեր, այգիներ ջրեն, բնակիչների խաշուած բերանը լցվացնեն։ Ո՛րտեղից է գալիս նա, այդ պարզ, բիւ-

ըեղանման հեղուկը այնպիսի առատութեամբ, այնպիսի շուքով։

Աղբիւրների թագաւոր... Ոչ ոք նրան այստեղ չէր սպասում, ոչ ոք նրանից խմելու յոյս չունէր. Կուբի տափարակներում պատող մարդը ջուր պիտի վերցնէ հեռաւոր տեղերից բերած արհեստական առուներից, որոնց մէջ լուծվում է կիզող արեգակի տակ փոշիացած հողը, կաղմելով մի պղտոր զանգուած։ Իսկ այստե՞ղ... Նայիր, տե՛ս, այսօր մայիսն է, այսօր, մի քանի ժամ առաջ, սարերում թողել ենք թարմ կանաչ, որ նոր է բացվում, նոր է զարդարվում, բայց այս կոմկերում ահա խոտը դեղնել է, մեռնում է, այրվում է, Այրվում է արագութեամբ, ինչպէս արագութեամբ գուրս է եկել, բարձրացել նրա կեանքի մէջ կար մի աննդային գործունէութեան, մի աստիճ շատպողական անհամբերութեան. և ահա, կարծես, ամբողջ ոյժը սպառած այդ գործունէութեան վրայ, չորանում է ոչինչ հետք չը թողնելով, ոչինչ օգուտ չը տալով. նրա ամբողջ ոյժը կլանուել է և մեռնելուց յետոյ էլ նրան չեն դնում անասունի առաջ, գիտեն որ նրանով փոր չի կըշտանալ։

Արևը, ինչպէս ասում են, կծում է, ոչ թէ տաքացնում։ Հողը փոշիանում է, ամեն տեսակ թունաւոր միջատներ վազվազ են անում։ Իսկ աղբիւրների թագաւորը մի չափով, միատեսակ ձայնով գուրս է թափում իր բարակ ալիքները... Ուզում ես ասել, որ ցածրիկ սարը բարձրացրել է իր ողնաշարի սպատը, որպէս զի իր փորում մի մեծ լիճ կազմէ այդ ջրի համար, մի լիճ, որ յաւիտենական խաւարի մէջ է ընկղմուած և կեանք է տալիս այն փոքրիկ ու մեծ ձկներին, որոնք երբեմն գուրս են գալիս լոյս աշխարհ։ Ասում են թէ շատ հեռուից է գալիս այդ ջուրը. ասում են թէ Գոկչա լճի մօտ, չը գիտեմ որտեղ, ջրի վրայ յարդ են ածել, յարդը Շահբուլաղ է գուրս եկել։ Ասում են, բնչ իմանաս...

Աղբիւրի վրայ բուսականութիւնը կենդանութիւն է տալիս. կանաչ թփերը, պատուտակները գեղեցիկ անկարգութեամբ գրկախառնուել են, միմեանց գրկել։ Հետաքրքրական գեղեցիկ տեղ է երկար ճանապարհից, խեղդող ջերմութիւնից հանգըստանալու։ Անհոգ ընկնես նրա մօտ, ոտ ու ձեռք լուանաս, կրծքի վրայ ընկնես, բերանդ ջրի վրայ դնես, դէթ առ ժամ մոռանաս քեզ տանջող ճանապարհի թողը, ականջ դնես սիրուն քչքչոցին, յետոյ մէջքի վրայ պառկես, աչքիդ հանգստութիւն տաս կապոյտ երկնակամարը դիտելով։ Ի՞նչ լաւ կը լինի։

Բայց զգուշութի՛ւն... Հանգիստ սրտով գնալ

մտեննալ, նստել, ձեռքդ դէպի ջուրը տանիլ չես կարող։ Վախ է, մեծ ահ կայ։

Բ.

Սարը, որ ծնում է այս ագրիւրը, օձերին է պատկանում։ Կոչվում է Իլան-դալ և մայիսի սկիզբներից մինչև աշնան ցրտերը դիւթոտած է, անմերձենալի։

Ինձ պատմում են հրաշալի բաներ այդ չար սողուններուի մասին։ Այստեղ է, ասում են, ապրում օձերի թագաւորը, որ երկու հզօրի ունի. ամեն օր, երբ արեգակը թափում է իր կրակը, թագաւորը հաւաքում է իր հպատակներին, խմբեր է կազմում ու իջնում դէպի ցած, ագրիւրի մօտ. ջուր են խմում ու էլի յետ դառնում։ Այստեղ կան «եօթն եղբայր» օձերը, որոնց եղբայրական սէրն այնքան վառ է, որ եթէ վիշին սպանես, եօթնեւորդը եռեւիգ պիտի ընկնի և որտեղ ու ինչպէս որ լինի, պիտի անպատճառ վրէժը հանէ իր մահացուցիչ Թոյնով։

Ամեն տեղ գրաւել են նրանք։ Նայում ես ագրիւրի մէջ, բիւրեղանման հեղուկը քեզ Թոյլ է տալիս յատակի վրայ ընկած ամենափոքրիկ քարն էլ տեսնել. քարի հետ, տեսնում ես, ընկած է կանաչ

օձը։ Քրի մօտ կայ փոսակ իջևան. յիշում եմ, մի անգամ ծառան ինձ Թէյ չը տուեց, ասելով Թէ վախում են ածուխ բերել, օձեր կան ածուխի մէջ։ «Անցեալ օր այս սենեակում երեք օձեր կային», պատմում է ծառան ժպտալով. «ուզեցին սպանել, տախտակամածի տակ մտան»։ Եւ այդ սենեակում պիտի նստէ ճանապարհորդը, պիտի քնէ...

Օձերի սպասարին է, որ տիրում է այստեղ։ Պատմում են միայն նրանց մասին։ Լսում եմ, և կաշուիդ վրայով, կարծես, միջատներ են վազում։ Դու շրջապատուած ես դրանցով, ամեն ժամ սպասում ես, ահա որտեղից որ է դուրս կը գան։ Մոխրագոյն փոր գոյշ բծերով. տարիք գլուխ, չար աչքեր, երկար իրան. երեկ մեկը սպանուած ընկած էր ճանապարհի փոշիների մէջ։ Օձային շունչ է ամեն տեղ։ Հեռուից մի Թռչնի ձայնն է գալիս. որքան և խելքդ գլխիդ պահես, չես կարող չը հաւատալ, որ երգողը ոչ Թէ մի սիսեր Թռչուն է, այլ նոյն ինքն օձերի Թագաւորը, որ գուցէ հաւաքում է իր հպատակներին հեռաւոր տեղեր արշաւելու։ Նրանք պատերազմում են, պատմում է ժողովուրդը նրանք ունեն ամեն մի դէպքի համար առանձին ձայներ. գնում են խմբերով, պատերազմում մի խոշոր անկիւնում. յետ են գալիս շատերը վիրաւորուած, կտրատած մալմինեներով։ Ամեն մի Թուրք սպասում

այսպէս է հաւատացնում ձեզ, իր սևացած դէմքի վրայ ամեն համոզիչ շարժում գործելով։

Այսպէս է օձերի թագաւորութիւնը, և աղբիւրների թագաւորը նրանցն է։ Սալսափահար մարդը ահ ու դողով է մօտենում ջրին։

Եւ ջուրն էլ խմելու ջուր չէ։ Կրային խառնուրդներ շատ ունի, փոր է ուռցնում։ Շատ խմես այսպիսի մի արեգակի տակ՝ կերմը պատրաստ է քեզ համար։

Գ.

Սալսափահար չէ այս կողմերի բնակիչը միայն, Թուրք գիւղացին, որ մի քանի ամիս հարևանութիւն է անում օձերի, կարիճների և այլ այս տեսակ պատիժների հետ։

Երէկ ևս տեսայ նրանց գիւղը։ Այդ ցած ընկած, տափակ, մերկաւազոյն երկնքի տակ, գետնից կպած ողորմելի խրճիթներում այլևում, տապակվում են մարդիկ, իրանք էլ չիմանալով որ տապակվում են։ Գիւղը բաւական մեծ տարածութիւն ունի. տները տեղաւորուած են մեծ մեծ այգիներում և պարտէզներում։ Քար չը կայ. եղեգնեայ պատերը և խոտի կտուրը պիտի պաշտպանեն արևից և ամեն ամեն մարդ, չար և եսասէր արքանեակներից։

Ոչ ձայն կայ, ոչ աղմուկ. տափարակը արձագանք տալու, ձայն մեծացնելու ընդունակութիւն չունի։ Գիւղի խանութի առաջ, փայտի ճանապարհի վրայ, ընկած են մի քանի սևացած, այրուած մարդիկ, որոնք տհաճին փափախների տակից ծուլութեամբ նայում են մեզ։

Ո՛չ, ինչ հաւմամասութիւն լեռնային գիւղի հետ։ Լեռնականը կպցնում է քարափի ծայրին երկու կամ երիք պատ, ծակում է դուռը, այդ տեղից բաց է անում, տանում դէպի խոր ձորի յատակը մի համալձակ, գալարուն կածան։ Նրա կեանքը հեռուից է հասնում քեզ. դեռ գիւղը հեռու, դեռ շատ պէտք է պտտուիր անես ձորերի վրայ, բայց փոքրիկ մանուկը, շունը, աքլորը հեռուից իրանց ձայնը քեզ են հասցնում։ Իսկ այնտեղ, այս դաշտավայրում, ցածրիկ ծառերը կարծես իրանց ստեղով պահում են երկինքը, որ չընկնի ամեն ինչ ճնշուած է, հոգին կպած։ Վաղ առաւօտը արեգակը ծագում է ցածրից և ոչ մի ծառ, ոչ մի տեղ այնքան չէ բարձրացնում հարթավայրը, որ ծագողի կարմիր—ոսկեգոյն շառաւիղը քիչ կանգնէ, հանգստանայ. նա սահում է, շատով անցնում դէպի հեռուն, բացում սարերի գլխին։ Մէկ էլ տեսար, ցերեկուայ լուսատուն վազից, բարձրացաւ, կանգնեց, մեխուեց, կրակ պիտի թափէ իր օձերի, կարիճների

վրայ... Մարդը պիտի փախչէ. գլուխը շշմում է, ականջներում արիւնը սաստիկ զարկում է։ Կայ և մի անշունչ պատիժ. մանր, կծու փոշին պլոտում է կաշին, քլտինքը ցեխացնում։

Էլ ծէր փախչէ մարդը. այն կողմում երկար ճանապարհ, այս կողմում մեծ և գեղեցիկ աղբիւր, որ սակայն օձերին է պատկանում։

Դ.

Բայց ինչո՞ւ է Շահբուլաղ—Թագաւորի աղբիւր։

Այս թարգմանութիւնն ինձ թեղադրում է հնութիւնը։ Աղբիւրի կողքին տեսնում եմ պարսկական ոճի մի կիսաւեր շինութիւն։ Կայ մի փոքրիկ գաւիթ, որ քարեայ սիւներով է զարդարած։ Մտնում եմ գաւիթը, մի փոքր դուռ ներս է հրաւիրում։ Մոռանալով որ օձերի թագաւորութիւնը ամենից շատ աւերակներն է յարգում, մտնում եմ ներս, կոխ եմ տալիս գաւառրկ շինութեան կոկած յատակը. քայլերս խոլ թնդիւն են հանում բարձր, կամարակապ կառոյցի տակ։ Խորհրդաւոր կիսամթութիւն է տիրում. կողքի պատի մէջ կայ մի նեղ լուսամուտ, իսկ մի ուրիշը, աւելի լայնը, շինուած է վերևից, առաստաղից։

Ի՞նչ է սա. բագանի՞ք թէ հին ձեռոց որ և է

դոռոզ պեսի։ Չես հասկանում։ Բայց երևակայութիւնը, կապուած շղթակայ աւերակների հետ, թոյլ է տալիս խոկալ դնել այդ գաւթում, կամ նրա մօտ մի ուրիշ շինութեան մէջ, արևելեան բռնաւորին։ Եւ ինչն է արգելում ինձ երևակայել մի տաք և խաղաղ երեկոյ. գաւթում նստած է մի խան կամ շահ, որ պղպջացնելով Շահբուլաղի պարզ ջուրը իր ղալեանի մէջ, մոկ է անում իր մերկ հիւրընկերին, որոնք լողանում են աղբիւրի մէջ։ Դրսից հասարակ մահկանացուի աչքը չէ կարող տեսնել մարգարէի խոստացած այս դրախտը, որովհետև աղբիւրը, բոլոր շրջապատուած են մեծ պատերով, որոնց հետքերն այժմ էլ ճիւռմ են։ Եւ հզօր բռնակալը բայց է թողնում բերանից Շիրազի անուշահոտ ծխախոտի կապոյտ ծուխը, նայում է աղբիւրի հիւրընկերին, պճնպճնում է իր մէջ արևելեան ցանկութեան բոցը, որ այնքան սաստիկ է, այնքան խանձող է, ինչպես և պատերի արեգակը... Իսկ թէ պատերը ապրել են այդպիսի հեշտասէր պետեր, վկայում է այդ մասին և հին բերդը, որ կանգնած է աղբիւրի ճօտ, թումբի գլխին. վկայում են և այդ բերդի մօտ կանգնած հին պատերի կտորները և նրանց տակ—սնոտիապաշտ բնակարաններն ու անցքերը։ Ասում են թէ պատերը է եղել Ծիլանակերտը։

Այս դեռ աչքիդ առաջ կանգնած հնութիւն-

ներն են։ Իսկ ան, որ պատկում է օձերի սալի գլուխը։

Եթէ ձանապարհի ընկերդ քիչ ծանօթ է այս տեղերին, չես կարող չը նայել սալի գագաթին. երբ կը մօտենաս փոսոի իջևանին, նա կը բռնէ ձեռքդ և ցոյց կը տայ հին շինութիւնը և կասէ. «տես, հայի եկեղեցի է»։ Իսկ ես այդ չոլոս բառից քիչ աւել տեղեկութեան տէր եմ դառնում իջևանի ծառայի շնորհիւը։ Նրան խօսեցնում եմ, տեսնում որ նա ինձանից թուղդ հնասէրն է. բարձրացել է սալի գլուխը, դանակով քերել է խաչաձևանը, որ շինութեան առջևումն է, կարդացել է նրա վրայ. «ես Շահանշահ որդի Աշոտայ կանգնեցի զնաչս հոգւոյ իմոյ»...

Գնալ, տեսնել է հարկաւոր, մէկ էլ քերել. Բայց ինձ խորհուրդ են տալիս յետ կանգնել այդ մտքից և էլի սկսում են օձերի, նրանց թագաւորի, հօրեն օձ—եղբայրների պատմութիւնը։

—Իսկ դու ինչպէս ես գնացել և ինչ է այն կածանը, որ ոլորվում է դագաթին ի վեր։

—Այն ժամանակ ձիւնը նոր էր հալվում, այն ժամանակն էլ այդ կածանով մարդ է գնում

Ցետոյ հնասէր ծառան պատմում է ինձ թէ սալի գլխից, այդ աւերակներից սկսած մինչև ագրիւրը շինուած են աստիճաններ, այնպէս որ բարձրանալիս չես յոգնում։ Ահա աւելի մեծ հանելուկ, քան այն, որ աղբիւրի մօտ եղած աւերակն է տալիս։

Բայց մութը կոխում է։ Ծանկարծ մի այնպիսի թանձր խաւար է ընկնում երկրի վրայ, որ մի ժամ առաջ աչքիդ դիմաց կանգնած սալը կանվոում է, անյայտանում։ Եւ Հարաւային դիշերուայ այդ խաւար ովկիանոսի մէջ միայն աստղերն են, որ հանդարտ ու հեզ պլպլում են, աստղերը, որոնց համար ոչ օձ կայ, ոչ աւերակ։

Գնա՛ քնիր և անպատճառ խօսք տուր քեզ, որ քնած ժամանակն այնքան ալթուն լինես, որ օձի կամ ուրիշ թունաւոր միջատի դէպի քեզ դալն իսկոյն իմանաս, անձդ ազատես... Ինչ քուն։

Ե.

Ալշալոյսը զարթեցրեց ծիծեռնակին, որ նընջած էր մեր սենեակի առաստաղից կպցրած բոյնի մէջ. անդադար կանչկռտում է, հանգիստ չունի։

Վեր եմ կենում, նայում օձերի սալին։ Ո՛չ, երևում է, որ այս ամառ ինձ չէ վիճակուած տեսնել Շահանշահի խաչը մօտիկից։

Մեր կառքը թռչում է դէպի յետ, մենք տուն ենք գնում։ Ձիանները վազում են, արեգակը վազում է. ճանապարհը հետզհետէ տաքանում է, մոխրի նման փոշին մլում է անիւնների տակից։

Իսկ մեր առաջ հեռուհեռուէ բացվում են սարեր-
ի ահասարհռելը։ Քանիան են, ոլքան կապույտ են
և մութ։ Ահա հեռու երևում է մի դագաթ. չորս
կողմից շրջապատուել է ամիսակ դոլորշիների քու-
լաներով։ Կարծում ես թէ այդ ահագին բարձրու-
թիան վրայ, մութ քարանձաւներում և կապույտ
ծմակներում յաւերժական կախարդները ղոհիր են
բերում լեռների վիթխարի ոգուն։ Զոհարաններից
մուխը բարձրանում է, բարձրանում մի մասը հա-
սել է երկինքին, որ այնպէս բարձր կախ է ընկած,
միւս մասը տոզում է սարի կողերի շուրջը։ Ո՞ր
սարն է դա։

Ես չեմ մոռանում Շահբուլաղը։ Ուրեմն լինչ-
պէս... Աղբիւրների թագաւոր թէ՞ թագաւորի
աղբիւր։

Մեծ է, աղբիւրների թագաւոր է, խօսք չը
կայ։ Բայց և ճշմարիտ շահի աղբիւր է և ոչ թէ
շահի, այլ Շահանշահի... Աշտակ որդու։ Ո՞րտեղից
որտեղ է եկել—Շիլակից Խաչէն... Հեռու է։ Եւ
ինչքա՜ն է եկել։ Այդիօք այդ աւերակը շէն ժամա-
նակ սահմանաքա՞լ էր, թշնամու վախի համար ըն-
րած ամրութի՞ւն էր, թէ ջերմեռանդ հոգու ուխ-
տի տեղ... Ինչ որ է, կայ, այժմ կանգնած է և
նրա վրայ տոզում են անթիւ օձեր... Օձեր, որոնք
բռնել են այն բռնակալների տեղը, որոնց սուրը

չնչել է այդ կողմերի կեանքը։ Կենդանի օրինակ
անմիտ բռնակալութեան. — մարդկանց ոչնչացնել,
օձեր բնակեցնել. ինչո՞ւ են այդ չարերը այնտեղ
հաւաքուել և ամեն օր թոյն են թափում մեծ ադ-
բիւրի մէջ... Թագաւոր բառը կնքած է այդ տեղին.
աղբիւրը թագաւոր, օձը թագաւոր, աւերակը թա-
գաւորի։

Չրէն, էլի մի սար երևաց, որ ծխում է առա-
ւօտեան հանդարտ օդի մէջ։ Գոլորշու քուլաները
բարձրանում են, բարձրանում, ամեն կողմից բըռ-
նում են սարի գագաթը։ Այնտեղ այրող արև չը
կայ, այնտեղ օձ չեն տեսել։ Բայց այնտեղ բռնա-
ցած է մշուշն ու խոնաւութիւնը, որոնց մէջ փը-
տում, լուծվում է կեանքը։

Այստեղ կեանքը տենդային եռանդով է գոր-
ծում և եռանդով վերջանում, փչանում չոր կլի-
մայի տակ. մեծանում է զուր արագութեամբ, մեռ-
նում է զուր եռանդով։ Իսկ այնտեղ կեանքը մե-
ծանում է շատ ծանր, շատ դանդաղ կերպով, բայց
դեռ իր նպատակը չը յայտնած, փտում է, ընկնում։
Ոչ ոքի համար ծածուկ բան է, որ Շահբուլաղի
օձերը իրանց հասմոլութեան մեծ մասը տուել են
այն սարի բնակիչներին. հասմոլութիւն, որ այստեղ
արևի տակ է աւերմունք գործում, իսկ այնտեղ
ջրի և թացութեան մէջ։ Այդ սարի մթնոլորտը

զարմանալի է։ Տարին տասն երկու ամիս նրան ձեղքում, պատռտում են սոսկալի կայծակները ահռելի գոռոց-աղաղակների հետ, բայց մշուշը իր բթացնող ու ծանր մեռելութեամբ միշտ կայ ու կայ։ Ծե՛ս, ահա գոլորշինները բարձրացան, գագաթը ծածկում են, լրանց սառցնող, խոնաւ մարմինները քաշքշում են այդ խեղճ ժայռերի վրայ։ Նայի՛ր, տես...

— Դա ինքը մեր Շուշին է։

ՀԻՆԳ ՕՐ

(1888)

ՀԻՆԳ ՕՐ

ՃԱՆԱՊԱՐՀԻ ՄՏՔԵՐ ՈՒ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՕՐ

Մոխրագոյն ամպերը բարձրանում են շատ բարձրը, շերտ-շերտ կանգնում են անշարժ, ծիում մի օր, երկու, երեք օր, շատ անգամ և ամբողջ շաբաթներով։ Մնում են անփոփոխ և անփոփոխ մոխրագոյն օրը իր ագքատ ու տակաւ լուսով կախվում է երկրի վրայ. արեգակը մի հատ շող չի կարողանում անցկացնել այդ շերտերի միջով. բայց և ամպերն էլ մի կաթիլ անձրև չեն կաթեցնում։ Հողը չոր, երկինքը ամպամած, իսկ մարդը տարակուսանքի մէջ է։ Շատ անորոշ եղանակ է. անձրևի ես սպասում թէ արևի՝ դու. ինքդ էլ չը գիտես։

Ամառն այդպիսի օրերը շատ են լինում Ղարաբաղում։

Օրացոյցի հաշուով գիշերը լուսնկայ պիտի լինի։ Լուսինը լոյս է տալիս կուտակ-կուտակ ամպերին, լուսաւորում է նրանց մանր ծալքերը, որոնք մի շատ նուագ, անկենդան, կիսատ լոյս են ուղարկում

իրերի վրայ։ Այդ լոյսը մի խօսքով անուանելու բառը կայ. ժողովրդի մարդը անուանում է «լոյս-լոյս»։ Առարկան իր անորոշ գծագրութիւնն է ցոյց տալիս։ Խաւար է, որովհետև նրան ամբողջովին չէն տեսնում և լոյս է, որովհետև նա ամբողջովին չի կոլած։ Երկնքի ծր կողմից է գալիս այդ «լոյս-լոյս»-ը. պիտի որոնես, հնարագիտես նայում ես երկնքին, ամէն մի կողմ լուսնի տեղն է ցոյց տալիս։ Ահա մի շատ լուսաւոր շերտ հետոս հիւսիսում, մի թէթ այդտեղ լուսին է լինում. կամ մի ուրիշը արևմուտքի վերին ծայրում. ինչ իմանաս, որտեղ է նա։ Ուրախացրէք և այն, որ մի այդ տեսակ օր օգոստոսի 31-ին էր, երեկոյի սկիզբը, օդը մշնացնելու չափ զով, խնկ բարակ և հանդարտ քամին իշխան ու տէր —և դուք մի ձիշտ հասկացողութիւն կը կազմէք այն բոպէի մասին, երբ մենք շուտ տուինք մեր ձիերի գլուխները և, պօստային խճուղուց, Ակարանի ափերակների մօտից, մտանք Կարկառ գետի քարքարոտ, լայն տաշարը։

Ակարանի հինաւուրց բերդը Նուշուց 25 վերստաչափ հեռու է և շինուած է Կարկառ գետի աջ և ձախ ափերին։ Կիսաւեր պատերը, գերուած և իրանց երբեմն ռազմական դառնութիւնից, խեղճացած, անզօր նայում են մեզ, երբ մեր ձիերը քարերի և ջրի միջով քայլում են զգուշութեամբ։ Գետը,

մի քանի ձիւղերի բաժանուած, ձայնը փոխն է դրել. գարնան՝ կատաղի, անհաշտ Կարկառը չէ, որ սար ու ձոր գլուխն առած, ձայնը երկինք հանած, ոչոքի չէ խնայում. այժմ նա խաղաղ հօսում է, չէ էլ վախեցնում։ Անցնում ենք միս ափը, շարժվում ենք սրընթաց։ Միմեանց հետից վազէ վազ գալիս, անցնում են անորոշ տեսարանները։ Ահա ջրապացը. նրա քարերը չեն որոտում և ջուրը, ազատ թափուելով նրա կողքից, փրփուր, կարած, գոռգոռալով պըտտյտ է գալիս մի նեղ խոռոչում։ Նա չեա ճնաց. Ակարանի պատն է մի րոպէ կանգ առնում մեր աչքի առջև և շտապով դէպի մի կողմ է փախչում, կուլ գնում։ Գալիս են այգիներ. խիտ ծառերի մէջ հանդարտ քամին մի կախարդական ազմուկ է գցել մի անընդհատ վշշոց, ջուր ու քամի միացրել են իրանց ձայնները. չը գիտես որտեղ է ջուրը և որտեղ՝ քամին։ Անցնում ենք, սպիտակ թողած ճանապարհները դէս ու դէն են վազում թող գնան՝ ուր ուզում են. մեր ճանապարհն այն է, որ լանջվայր ու լանջվիվ դաշտերն է չափում։ Անթիւ և անհամար ծլըխները ճռվոտում են ամէն կողմից, ամէն անկիւնից. մի ափ հող չկայ, որի վրայ չազատակէին նրանք։ Ուղևորի լսելիքը, որ այնքան ուշադիր, այնքան լարուած է լինում պիշերային ճանապարհորդութեան ժամանակ, միայն այդ բարակ, փոքրիկ

ձայնելն է լսում. նա ըմբռնում է վայրկեաններ, երբ այդ ձայները միանում են, կարդ ու կանոնի տակ մտնում, կարծես դուրս են գալիս հրամանով. բայց դարձեալ խառնվում են, կարծես միմեանց ջգրուռ յետ ու առաջ ընկնում, մի շփոթ, մի անկարգ աղմուկ հանում:

Մենք չորս հոգի ենք: Գնում ենք Վարագաբոյն գիւղը, ուր մեզ պիտի ընկերանայ հինգերորդ հոգին: Վարագաբոյնից պիտի գնանք Գանձասար: Մեզ ցոյց են տուել ճանապարհը. ասել են թէ այդ գիւղը գտնվում է այն անանուն լեռնաշղթայի արևելեան լանջի վրայ, որ, սկսուելով Ակարանի առաջ, ձգվում է դէպի հարաւ, անցնում Շուշու հանդէպը, Դիզակի սահմանները: Ասել են թէ ցոյց տուած ճանապարհի վրայ մենք կը տեսնենք երկու գիւղ, որոնցից յետոյ երրորդը՝ ինքը Վարագաբոյնն է, որ կայ: Բայց մենք դեռ Ակարանին չը հասած, իմացանք որ ճանապարհը չը պիտի ճանաչենք: Մենք անփորձ քալաքացիներ ենք, իսկ մի գիւղի ճանապարհ ճանաչելը այնքան հեշտ չէ, մանաւանդ գիշերը. Տեսնում ես մի քանիսը դես ու դէն գալարվում. միայն այդ ճանապարհների վրայ կտեսնք մաշած մարդն է, որ կանգնում, նայում է ճանապարհի կէրպարանքին և ճանաչում է թէ ինչպիսի ճանապարհ է, ո՞ւր է գնում գիւղը, թէ հե-

ռու՝ վատ տեղ: Այս պատճառով մեզ հետ վերցրինք մի անճանօթ թուրք ձիաւոր, որ պատահաբար մեզ հետ էր ընկել պօստի ճանապարհին և իր գիւղն էլ գնում: Սա էլ չէր տեսել Վարագաբոյնը և ճանապարհը չէր ճանաչում, բայց մենք խնդրելով մեզ ուղեկից արինք նրան: Ճանապարհը թող մի կողմը կորչէր, կար և մի մեծ պատճառ, որ ինքն ըստ ինքեան յայտնվում է այսպիսի տեղեր: Շատ կան առաջներ այս կողմերում. մեր թուրքը պատմում է թէ ինչպես են յարձակվում, կողոպտում, սպանում: Ինքն էլ հրացանը ձեռից հանել, լցրել, պատրաստել, արդէօք ո՞ւմի համար: Ջը լինի թէ սա էլ նրանցից մէկն է, մտածում էր մեզանից ամեն մէկը: Դեռ ճանապարհի սկզբին էինք մեր հայութիւնն անում: Ինչպես որ լինի, «շան առաջը պատառ ձգիր, որ մօտովն անցնես». մենք քաղցր ու մաեմատաբար ենք վարվում մեր կիսավայրենի ձիաւորի հետ, խօսում ենք, լսում ենք նրան:

Խօսակցութիւնն նիւթը մի կողմից, ոչ լրյս ոչ մութ գիշերը և ճանապարհի երկարութիւնը միւս կողմից սկսում են մեզ ձանձրացնել: Ո՞ւր է, ինչո՞ւ չենք հասնում. գնում ենք և չը գիտենք թէ ո՞ւր. անճանօթ տեղեր, անճանօթ ուղեցոյց: Լուռ ենք, շտապում ենք, ծեծում ենք ձիերի կողերը և մտածում: Ջորեր ենք անցնում, թմբերի գլուխ ենք

բարձրանում, սպասում ենք, բայց ոչ մի տեղից ձայն ու ծպուտ չի գալիս. մի գազան, մի մարդ, մի շուն ձայն չի հանում, հանգիստ ու խաղաղ շրջակայքը մեզ ողջունում են. ամեն ինչ լռել է և լռիկ կարծես այն պատճառով, որ փոքրիկ ծղրիդները ճրվռան, տրաքռտին, սրքան ուզում են: Մեր թուրքն է խօսում անհոգ, անտրտում: Նա հանաքներ է անում, զիտէ թէ մենք այդ բոպէին ովքեր ենք: Այ անխելք հայեր, ասում է, գիշերուայ այս ժամին ո՞ւր էք ընկել սար ու ձոր, այս ինչ խելք է: Իսկ թէ անխելքութիւն ենք արել, այդ ինքներս էլ խոստովանում ենք: Ի՞նչ կայ, ո՞ւր էինք վազում, առաւօտը չէր լուսանալու որ մարդավարի գնայինք: Հարցնում ենք թուրքից՝ թէ ո՞ւր ենք գնում: Նա պատասխանում է ծիծաղելով և ասում՝ ո՞վ գիտէ, ճանապարհն է, երևի մի տեղ դուրս կը բերէ մեզ: Մի տեղ... Դա անորոշ, շատ հեռու հրեւակայական, երկիւղալի խօսք է: Ցանկարծ... էլ ի՞նչ յանկարծ.— հազար ու մի յանկարծական դէպքեր են գալիս մեր միտքը. բայց այն, որի մասին չէինք էլ մտածում, իսկոյն մեր առջևը կանգնեց:

—Կանգնեցէ՛ք, ձայն է տալիս առջևից գնացողը:

—Ի՞նչ կայ:

—Ճանապարհը կորցրել ենք: Եւ այդպէս ա-

սողը բարկացած հայհոյում է իր ձիուն: Այդ էլ պակաս: Կանգնում ենք: Շրջակայքի յամառութիւնը, պղտոր երկինքն իր պղտոր լոյսի հետ և ծղրիդների ոգեմուկը մեզ զայրացնում են. գոնէ այս փոքրիկ անիծուածները մի վայրկեան չեն լռում: Վերին ատամնաձի լարուած լսելիքը զգուում է այդ ձայներից, աւելի հեռուի ձայները դժուար է լսելու: Մենք բարձրանում ենք մի թումբի գլուխ, այդտեղ հրնձաձ արտ է. նայում ենք, բայց նայելով մի բան չի դառնալ. պէտք է մի ձայն բռնել ու նրա վրայ գնալ: Քամին հեղիկ շփում է մեր մազերին, փայփայում, գգում է մեր դէմքը. ախորժելի է, բայց ձայն չի բերում: Բայց սուս... հեռուից, վերի կողմից, ահա մի խուլ, անորոշ ձայն է գալիս. կասես թէ շան ձայն է: Լսում ենք մեծ ախորժանքով. ահա ձայնը բարձրացաւ, մեզ հասաւ, ախտաւած չենք, շուն է հաչում: Իսկոյն առաջ ենք քշում ձիերը: Ոքան մեծ քաղցրութիւն ունի շան ձայնը այսպիսի դէպքերում: օգնութեան ձայն է, որ գալիս է սրտիդ տխրած կատարեալ յուսահատութեան առաջ. ուրախացնում է, բերանդ բաց անել տալիս. գնում ես այդ վայրենի, սպառնական ձայնին քաղցրութեամբ ականջ կախած, մաքուր բռնած, իբրև անխոթ աստղնորդի ձեռք: Ձիդ էլ սիրտ է առնում, քայլերը է փոխում և դու շտա-

պում ես, որ չը կոլցնես այդ հեռաւոր ձայնը, որ թանդ է քեզ համար, ինչպէս մի նշան, որ քեզ պիտի ազատէ անծանօթ ու անյայտ տեղերի յուսահատ շրջանից և տանէ մի այնպիսի տեղ, ուր մարդիկ են ապրում: Իջնում ենք մի ձոր, բարձրանում ենք, շնահաչոցը մօտիկանում է մեզ, երևում են ինչ որ ցածրիկ հողէ շինութիւններ: Խոզապածների տունն է այդ: Ձայն ենք տալիս. վերևից պատասխանում են մի տղայի և մի երիտասարդի ձայները. ցոյց են տալիս ճանապարհը:

Էլի գնում ենք. ճանապարհը անվերջ է երևում. ինչ զարմանք, եթէ մեր դրութիւնն և տրամադրութիւնը իւրաքանչիւր քայլին մեծ երկարութիւն են տալիս: Այդքան երկար գնացինք, բայց գիւղ չէ երևում. երևի էլի ճանապարհից դուրս ենք եկել: Մեր թուրքն էլ այդպէս է կարծում. մի լռակեաց մոռանում ենք այն քաղցրութիւնը, որ տուել էին մեզ խոզանոցի շունը, տղան ու երիտասարդը: Անծանօթ կեանքը, անծանօթ տեղերում դիշերային խորհրդաւոր վարագոյրի տակ ծածկուած՝ մեզ վրայ կարծես ծաղրում է, մեզ զայրացնում:

Բայց ահա վերջապէս երևում են ձրագներ, գիւղական խաղաղ ու կարճ երեկոյի ձրագներ, որ կապած են սարի լանջին և պահպանվում են շնորի միաբան հաչոցով: Գեղեցիկ են նրանք, չքնաղ են

երևում տանջուած ճանապարհորդին, որ Աստուած գիտէ թէ որտեղից է գուրս եկել նրանց հանդէպը և վերջապէս իմանում է, որ իրանից մօտիկ մարդիկ են ապրում: Փոյթ չէ, որ այդ փոքրիկ լոյսերը հեռու են և գուցէ չեն կարող օգնութիւն հասնել, եթէ սրտիդ անորոշ, բայց ախուր զգացմունքներից մէկն իրականանայ. բայց ոմն է այդ մարդին մտածողը, բաւական է որ նրանք կան և զօրութիւն են տալիս էլ առաջ գնալու:

Եւ մենք գնում ենք, որովհետև այդտեղ չը պիտի հանենք: Շուտով ձրագները մի քիչ որ բարձրութեան հաւ են հասնում, շնահաչոցը կտրվում է. դարձեալ նոյն խորհրդաւոր լռութիւնը, դարձեալ մեզ անհասկանալի է դառնում թէ ո՞ւր ենք գրնում: Իսկ մեր թուրքը շարունակ կրկնում է, թէ ախր ինչ էք կոլցրել այս տեղերում: Բայց այս անգամ կարճ է մեր անհանգստութիւնը: Մենք մի բարձրութեան գլուխ էլ ենք հասնում և տեսնում ենք, որ մեր առջև փռուած է գիւղը: Շները հաչում են, իսկ գիւղի վերևից մի ձրագի լոյս, պայծառ՝ ինչպէս առաւօտեան աստղը, խփում է ծառերի միջով և գրաւում է մեզ՝ դէպի իրան ձգում: Փառք Աստուծու, հասել ենք: Միասին մենք, չը հեռանանք որ շնորը մեզ չը մօտենան, հարցնենք մեր ընկերի աուները, իսկոյն քնենք, պատուիրում ենք միմեանց:

Մօտենում ենք գիւղի ներքին ծայրի տանը, բարձր «չափարի» եռաւ, շունը, ինչպէս ասում են, կատաղում է. նրան ձայնակցում են շատ ուրիշ ընկերները, որոնք մթութեան մէջ գանազան տեղերից դէպի մեզ են գալիս։ Տան սրահում վառուած է ճրագը, մարդու ձայն է լսւում։

— Այս ո՞ր գիւղն է, հարցնում է մեր մի ընկերը։

Շունը այդ խօսքի վրայ աւելի կատաղում է. մենք բարձրանում ենք թամբերի վրայ, ուզում ենք շուտ լսել պատասխանը։ Պատասխանում է մի կին։

— Սա... Փոջամանն է։

Մենք էլի նահեցինք յուսահատ։

— Իսկ ո՞րտեղ է Վարագաբոյնը։

— Թումբի միւս երեսին է, պատասխանում են։

Խնդրում ենք ճանապարհը ցոյց տալ։ Մի տղամարդ խոստանում է և բաւական սպասել տալուց յետոյ՝ մեր առաջն է դուրս գալիս։

— Ձեզանից ո՞րն է քիչ խելքը գլխին մարդը, հարցնում է նա, թող առաջ գայ, որ ցոյց տամ։

Ձը գիտեմ ո՞վ էր մեր մէջ քիչ խելքը. գիւղացին ճանապարհը ցոյց տուեց ու ինքը զարմացած որ այսպիսի ժամանակ մարդիկ են գնում գալիս՝ յետ դարձաւ։ Իսկ մենք մի ձոր իջանք։ Մեզ շրջապատում են ծառեր, լսւում է ջրի ձայնը։ Անտանելի տեղ էր. մեր ձիերը սայթաքվում են, քիչ

է մնում որ ընկնենք և կոտրատուինք։ Գիւղացին գոնէ չէր մեր մէջ խելքով մարդ որոնում...

Տանջուած, նեղացած, փշրուած վերջապէս ընկնում ենք մի սոսկալի շնահաւոյքի մէջ։ Հասել ենք Վարագաբոյն, որ խոր քնով է անցած. մի հատ ճրագ, մի լոյսի նշոյլ չը կայ։ Շները շրջապատել են մեզ, ուզում են կոտր կոտր անել. իսկ մենք կանգնել ենք, կուչ եկել խօսել ու լսել չենք կարողանում։ Մի ժամ սրանից առաջ, այդ հաչոցը ինչպէս էր մեզ համար. իսկ այժմ անհանելի է. եթէ կարելի լինէր այս բոլորին կոտրել... Մեր թուլքը զարթեցնում է մի քնած. մեր ընկերի տունն ենք հարցնում։ Հարիւրաւոր տեսակ տեսակ ձայների մէջ նա մի բան է պատասխանում. մենք շարժւում ենք։

Մեր ընկերն էլ քնած էր։ Նա մեր կացաւ, զարմացած դէս-դէն ընկաւ, գնա չէր խօսում. մթնում կանգնեցինք, մինչև որ փոքրիկ սենեակում մեզ համար տեղ պատրաստեցին։ Հիւրկէ խօսքն ու ծիծաղը իսկոյն մեր բերանները ընկան։ Հաց կերանք։

ԵՐԿՐՈՐԴ ՕՐ.

Առաւօտը, ժամի հինգին, բաց եմ անում աչքերս։ Փոքրիկ լուսամուտի միջով ոսկեզնում է ինձ լեռնային պուղ հրաշալի առաւօտը։ Երկինքը պարզ է, կապուտակ. գով օդը անպատար ներս է հոսում,

խփում է վերմակի տակ տաքացած դէմքիս։ Մոռացում է գիշերային ճանապարհորդութիւնը և սիրտս ու հոգին զուարթանում են Աստուծու բարի օրուայ ազդեցութեան տակ։ Դուրս եմ գալիս փոքրիկ բակը, աչք եմ ածում գիւղի վրայ։ Կապոյտ բարակ ծուխը բարձրացել է, քող կապել աների վրայ. աթեգակը տարածել է իր շողերը, լուսաւորել է խըրճիթների բակերը, փողոցում կանգնած եզան ուսը, մահակի ծայրին կրծնած ալևորի միրուքը։ Շները պատերի տակ են քաշուել և լռել. գիշերը վերջացել է, նրանք այլ ևս ծառայութիւն չունեն։

Փոքր գիւղ չէ Վարազաբոյնը։ Նա ընկած է լեռնային լանջի վրայով, տները սեղմուած են միմեանց, ներքևից նայելով՝ կարծում ես թէ միմեանց գլխի են բարձրացել։ Այդպէս են Ղարաբաղի բոլոր հայ գիւղերը. այդպէս թիկն են տալիս վիթխարի սարերին, որոնց հպարտ մարմինը կարատուած են ոլոր-մոլոր կածաններով։ Այդտեղերում են մարդիկ գնում ու գալիս. և ինչպէս լաւ են գնում, դժուարութիւն չեն զգում. իրանք լեռներն են տուել ներքանց ոտներին ու թոքերին այդպիսի ամուր կազմուածք։ Ձիուն, անձրև կը գայ, կը քանդէ այդ նեղլիկ, երկտող կածանը. քարեր կը թափուին վերևից, կը ծածկեն նրան, բայց լեռնաբնակ գիւղացիի համար իշ փոյթ, նա թի չի վերցրել չէ դրատել

այլ կը գնայ և կը գայ։ Բայց Վարազաբոյնն ունի նահապետական յարմար ճանապարհներ. սարի ստորոտից սկսած դէպի ալևեղք ընկած է լայնատարած հարթավայրը, որ ոլորուած է արեգակի ճառագայթներով. այգեստէղ են գիւղացիների այգիները. յետոյ սկսվում են թուրք գիւղերի անվերջ դաշտերը, որոնք խառնվում են հօրիզոնի հետ։

Կանգնած դէս ու դէն եմ նայում։ Ցանկարծ ականջիս են հասնում փոքրիկ զանգակի սուր հընչիւնները, որոնք գալիս են գիւղի վերևից, մի երկյարկանի տան պատշգամբից։ Դպրոցական զանգակն է այդ։ Այս պարզ և վճիռ օդի մէջ, առաւօտեան այս պահուն, ինչպէս սիրելի, գեղեցիկ է այդ ձայնը, որ ուրախ ուրախ անցնում է աղբակոյտերի վրայով, գիւղական ագքատութիւնից, ցնցոտիներից և կեղտից բարձր, հայ քրիստոնեաներին սեպհականների մուտքն է յայտնում, երեխաներին դպրոց հրաւիրում, գիր ու գրիչ բռնել է խնդրում։ Թող փոքրիկ զանգը մի քիչ եղ լիզուն շարժէ, ձայն տայ և ահա այդ գիւղն ու տեղակը դուրս կը գան կեղտոտ, խոնաւ պուճախներից, ուր առատ կերել են կծու ծուխը, փշրթամթախ կը մանեն փոքրիկների կըռնատակը։ Գրագէտը հպարտանում է, լսելով զանգակի ձայնը...

Դպրոցը վաղուց գոյութիւն և լաւ համբաւ

ունի. գիւղացիները նրա համար չունեն երկյարկանի մի տուն, որտեղից ուրախութեամբ ընդունում են կրթութեան առաջին խակ պտուղները։ Դպրոցը տեսնել չենք կարող. մեր ձիերը պատրաստ են, հեռու ճանապարհ կայ առաջներս։

Եկած ճանապարհով յետ ենք գնում Ակարան։

Գիշերն իր խորհրդաւոր վարագոյրով բանաստեղծական գեղեցկութիւն էր ընծայում մեր երևակայութեանը այդ տեղերի մասին. իսկ ցերեկուայ լոյսը, ընդհակառակն, ցոյց է տալիս մերկ շրջակայքը. ամէն տեղ հնձած գեղնած արտեր են, անօգուտ յանջիվայրեր, ապառաժ լեռներ, որոնք տեղ-տեղ ծածկուած են ադքատիկ թուփերով և մացառներով։ Փրչամայ և Նախիջևանիկ գիւղերը, որոնց ճրագները գիշերով այդքան հրապուրիչ ոյժ և գեղեցկութիւն ունէին ծառերի մէջ, այժմ նայում են իրանց առօրեայ մոխրագոյն կերպարանքով. հողի վրայ բաւթացած կոլոր կաուրները, քարէ շինութիւնները, աղբը, անմաքուր փողոցները սովորական գիւղը պատկերն են ամբողջացնում։

Անցնում ենք նրանց մօտով, կարում ենք կարկար գետը, կարում ենք և պօսթի ճանապարհը, դէպի բարձր ենք գնում։ Սկսուել է Խօջալուի լայնատարած դաշտը։ Խօջալու պօսթային առաջին իջևանն է, Շուշուց 19 վերստ հեռու։ Դաշտը հիւսիսի կողմից կրթնում է այն լեռնաշղթային, որ արևմուտքից, Խաչէն գետառից գալով՝ հասնում է Ակարանին և այդտեղ շուռ գալով գնում է դէպի հիւսիս, պօսթային ճանապարհին զուգնթաց, մինչև Շահրուլալ իջևանը։ Խօջալուի դաշտը գարնան սկզբից ծածկւում է գեղեցիկ բալթրահասակ խոտով, որ պատկանում է Խանքենդ աւանի ռուս զօրքին և այդ զօրքից ճնշուած հին գինուորներին, որոնք տուն, բնակութիւն են հաստատել Խանքենդում։ Խոտն այնքան առատ է, որ ռուսները տնտեսութեան աւելորդը ծախում են ու հալստանում։

Չարուսա դաշտի սահմանից դուրս ենք գալիս. ճանապարհը հետզհետէ բարձրանում է, աջ կողմում թողնելով երկու հայ գիւղերը—Սարդարաշէն և Նորագեղ։ Բնութիւնը շատ ալքատ է։ Սպիտակ հողը մոխրի նմանութիւն ունի, բացի թփերից ոչինչ չի բուսցնում. վարելահողերը քիչ են և հէնց այդ է պատճառը, որ յիշեալ գիւղերը ողորմելի կեցուցուածք ունին, չոր ու ցամաք լանջերին են կպել և միայն կարճահասակ թթենիներն են, որ տեղ տեղ, վերև ծառ, քիչ կենդանութիւն են տալիս ընդհանուր մեռած տեսարանին։

Բնութիւնը փոխւում է Սէյդի-չէն անունով գիւղի մօտ. միանման ալքատ տեսարաններից ձանձրացած, աչքի առաջ յանկարծ երևում են փոքրիկ

ծմակներ, գեղեցիկ պարտասեղներ և վարկահոդեր։ Ինքը գիւղը, որ նստած է այդ բնական հարստութեան մէջ, փոքր է 30 կամ 35 անիւ. նրանք կապել են մի թռչմբի կողերին և միշտ նայելով գեղեցիկ ձորին ու կանաչ սարերին, ճոխ են ծախ և ապրուստ։ Գիւղացիք պանդխտութիւն սիրող են, բազմ ձանապարհը զրանց համար ինչպես տուն են ջրաղացի ճանապարհ է։

Սկզբից-վեր սկսվում է Խաչենի անտառների թագաւորութիւնը, որ զարմանալի է հրաշալի։ Առաջին ծանօթութիւնը սկսվում է Ցխա-Ձորից։

Ցխա-Ձոր... գիւղ է պէտք, որ նրան նկարագրէ, լաւ գիւղ։

Ճանապարհը զլխիվայր է գնում. լծկում ինք ձիերից, որ աւելի ապահով գնանք. շատ հիշա է ձիու գլխի վրայով թռչիլ, դեռևս ընդհանուր։ Ճանապարհն իսկոյն խրվում է հսկայական թանձր անտառի մէջ, որ խիտ ու խիտ ծածկել է երկու լեռների կողերը ու նրանց մէջ ընկած Ցխա-Ձորը։ Մրջատական խոնաւութիւն է տիրում այդտեղ, մշատան ստուեր. ծառերը պինդ են զահում այդ տեղը ամենայն երեսից։ Զորս կողմը սիրած է խորին լռութիւն և հրացանի ձայնը առաջին վայրկեանում մաղում է միջակայ ծառերի տակ, բայց մի երկու, երեք վայրկեան անցած, հեռու անտառի խորքում,

կարծես ձիւղերը կտրատելով, դէս ու դէն վազվզում սուր արձագանքը, միրթ բարձր և միրթ ծուռ աղ որոտաձեռով։ Ծառութիւնը այնքան ահաւոր է իր վայրենի բնաւորութեամբ, այնքան մեծ, որ խելքդ մարդու հոգին միանգամայն ձնշվում է. հասկանալ, ըմբռնել անհնարին է, աւելի անհնարին է մտքի մէջ նկարել այդ թաւ կուսական անտառը. մարդ միայն զարմանում է, հիանում, տեսնելով ճանապարհի երկու կողմից այն բարակ և ուղիղ ծառերը, որոնք անխնայ ձգուել են, հասել ահագին բարձրութեան, որոնք կանաչ են և դեռ շատ ուժեղ և, ինչպէս երևում է, աշխատում են էլ աւելի բարձր գնալ. տեղ տեղ ճանապարհի երեսն են գալիս գահավէժ փոքրիկ ջրերը, որոնք անտեսանելի են անտառի ծոցում, միայն դրանք են բարակ ձայնով քչքչում և կարծես այդ ձայնովքն են միմեանց սիրա տալիս, որ չը կոչին, չանհետանան, այլ գան, միանան, չար մանուկների պէս, ճանապարհը թաց անեն և էլի փախչին, ծառերի տակ մանեն։ Տեղ տեղ ճանապարհը անցնում է ձորակներով. ծառերը աւելի ևս խտանում են գրկում միմեանց, երկինքը հեռու, շատ բարձր է ճուռմյաղ. Թանդամ ճիւղերի արանքով պատառ-պատառ երևում է երևում։ Անտառի սիրան է. խորանում ես կուլ գնում. դէմքդ քրանում է, քայլդ արագանում։ Այդ

տեղերում բոյն են դնում աւազակները։ Սարսափելի են սրանք, բնութեան բոլոր արհաւիրքներից էլ սարսափելի։ Նրանց ձեռք ընկած զոհը միանգամայն անզօր է, անլեզու։

Եթէ ուշադրութեամբ նայես, ձորի մի քանի տեղերը խճճած կը տեսնես. Բաղդասար մետրօպոլիտեան է շինել տուել այդ խճուղին, որը սակայն երկար տանել չի կարողացել։ Տեղ տեղ ճանապարհը դուրս է գալիս փոքրիկ հրապարակների մէջ. ծառերը չէտ են կանգնում և ուղևորը կարողանում է չէտ առաջ նայել։ Տեսնում է ուղևորը, որ երկու լեռները, որանց մէջն է Ցեխ-Ձորը, ոտից մինչև գլուխ խիտ ծառերով են ծածկուած և մի քանի ուսեր կազմելով՝ իջնում են մի հովիտի վրայ, ուր հոսում է Խաչենագետը։ Գետի միւս կողմից բարձրանում են սարեր, որոնք միմեանց ձէտն են ընկնում, միմեանց ուսերն են իջնում, միմեանց կարում ու այդպէս խառնիխուռն դնում են դէպի արևմուտք, բարձրանում են բարձր դէպի երկինք և կորչում։ Այդ բարձրութիւններից մէկի վրայ է Գանձասարը։ Բայց անառատը չի սկսում բարձր ու լայն տեսարաններ շատ ցոյց տալ, շուտով էլի իր մէջն է առնում ճանապարհը, ծառերը ամէն կողմից վազում են նրա վրայ, խմբվում, հուպ տալիս։

Վերջապէս հասնում ենք Խաչենագետի ափը։

Պոզացնում ենք ձիերի թամբերը, հեծնում ենք, այլ ևս չը պիտի իջնենք, միշտ դէպի բարձր պիտի դնանք։ Գետն այժմ փոքր է, բաժան-բաժան եղած վշշում է քարքարոտ լայն տաշտով։ Բայց գարնանը, երբ յորդառատ անձրևների տակ այդ ահռելի սարերը օրօրվելիքը լուանում են իրանց կողերը և աւելորդ ջրերը դէպի ցած են ուղարկում, գետը արիւն է կարում, կատաղում, փրփրած մռնչում անթիւ թշուառութիւններ է պատճառում նա ձորում ապրող ազգաբնակութեանը։

Գետի ձախ ափովն ենք գնում։ Մեզ երկար ուղեկից է Սաղաղան-ղալասին (կաչաղակաբերդը)։ Հարաւային կողմի սարերը շղթայ են կազմում, որ գետի ուղղութեամբ գնում է դէպի արևմուտք. շղթայի վրայ կայ մի բարձր սուր գագաթ, որի ծայրը ժայռից կազմուած մի բերդ է. հրէշն ցցուած է նա, բարձր, երկնքի մէջ է երեում։ Հանգուցեալ Բաֆֆին (Խամս. մելիք.) շատ լաւ է ասում թէ միայն արագաթռիչ կաչաղակներն են կարող բարձրանալ, հասնել այդ բերդին։ Եւ ումն էր հարկաւոր այս անառիկ բարձրութիւնը, որի վրայ միայն անկերն են հաւաքվում և լայնանալով տարածվում երկնքի երեսին։ Ումն... Իշարկէ — հայերն։ Կիրակոս պատմագիրը մի տեղ յիշում է, որ Թաթարները գրաւում են և այս խոկ բերդը (որ այն ժամանակ

նաև ախտից էլ կչվում), բոլոր պաշտաւոնեաներին կոտորում են, գիակներով ծածկում նրա գառիվայր կողերը և ոսկորների կոյտերը, ասում է, երկար ժամանակ ճոում էին այդ տեղերում թափուած։ Եթէ Խաչենն էլ ունենար մի Աբխազական լատիկևոցի, այժմ Կաչագակաբերդի սարն էլ մեր պատմութեան մէջ Սև-քարի պէս հռչակուած կը լինէր այդ կատարածի պատճառով։

Ճանապարհին մեզ պատահում են թափառական Թուրքեր, որոնք իրանց մեծ-մեծ հօտերի հետ կիջնում են սարերից, գնում են Կուբի Հովիտը՝ ձմերելու։ Պէտք է ասել, որ Խաչենագետի ձանապարհով է երթևեկում թափառականների ահագին մասը. ձանապարհը միշտ գետնիվեր տանում է դէպի սարերը, ուր նրանք գտնում են դեղեցիկ արօտատեղեր, որ Նոր-Բայազիդի սահմաններն են հասնում։ Վայրենի թափառականների այդ շարժական գիւղերը քիչ միտս չեն հասցնում հատատաբնակ հայ գիւղացիներին, որոնց բաժինն է Ղարաբաղի բոլոր լեռնային մասը։ Թափառականը չէ, որ գարնան առաջին քայլե հետ նրանք փոխչում են իրանց դաշտակրի մահաբեր կլիմայից, օձերի և կարիճների թոյնից, ապաստան են գտնում լեռնային օդի մէջ, այդ խառնիճաղանճ իրերը շատակեր մորեխի պէս թափվում են մշակուած և անմշակ տեղեր, փչաց-

նում են ամէն ու անպատճառ։ Կովերը, ձիերը, վէշերը միշտ անպակաս են լինում վայրենիների համար բնական պահանջ է բանուորիւն գոյծելը և եթէ հատատաբնակը նրանցից թուլամորթ է, չի կարողանում իր իրաւունքը պաշտպանել պիտի իր ձեռքի վատակը փչացած ոռնոցով եղած տեղներում սիրան ուներնայ։ Սմէն տեղ, ուր կոխում է գոնէ գինուած պահապաններով վախեցնել նրանց. վինճ մի գիմչիլը, ես էլ քիզ չեմ գիմչիլ, ասած միակ իրաւաբանական ֆօրմուլը, որ հասկանում է անպատճառ որդին։

Բայց Ղարաբաղի թափառական թուրքի կեանքը մեծ ուսուցչասիրութեան է կարօտ. մենք թողնենք այդ խեղճերին, որոնք գարուն ու ամառ ապահովի տարածութիւններ են գտնում իրանց բոլորիկ ոռնոցով, շարունակենք մեր ճանապարհը։ Ահա Սառաջամոր գիւղը, որ տեղատարուել է մեծամեծ ժայռոտ բարձրութիւնների տակ։ Իսկ որ արջերի ձորը... Այդքան վայրենի ձորեր ու լանջեր, այդքան մութ տեղեր արջերին պիտի պատկանեն։ Գիւղի հանդիպ տեսնում ենք այն լեռնային բարձրութիւնը, որ թիշտաքար է ասվում։ Միանգամայն ճիշտ է այդ անունը։ Սարի գագաթը նման է մի ճոտած ուղտի։

Անցնում ենք վանք գիւղի տակով. ահա վեր-

ջապէս այն բարձրութիւնը, որի գլխին կանգնած է Գանձասարը։ Այդ իսկ ստորոտի մօտ, Խաչենագետի ափին, մի փոքրիկ շուկայի նմանութիւն կայ. փոքրիկ, հողաշէն խանութների մէջ հայերը առևտուր են անում։ Թափառականների համար է այս առևտրական հրապարակը. երբ նրանք գնում անցնում են, խանութները փակվում են, առևտրականները ջանում գիւղացիք հաւաքուած մի խանութի առջև, երեկոյեան թէյ են վայելում։ Իսկոյն երևում է առևտրական ոգին, կարգ ու կանոնը։ Ճշմարիտ, այս վայրենի անկիւնում, որ ընկած է Խաչենի հեռաւոր ծայրում, հեշտաեռ, ապրանք, թէյի բաժակները նազով-սազով բռնած գիւղացիք՝ այնպիսի տարօրինակ, խորթ բաներ են, որ առաջին անգամ տեսնողը ակամայ ծիծաղում է։ Առևտրական հրապարակի կեղծ քաղաքավարութիւնը կամ, ինչպէս ասում են, քերականութիւնը լաւ սերտած գիւղացիք մեզ հրաւիրում են մի մի բաժակ խմել, բայց շնորհակալութիւն ենք յայտնում, որովհետև առաջներս դժուար ճանապարհ կայ։

Բարձրանում ենք։ Ի՜նչ ճանապարհ, պատի՛ժ է, պատի՛ժ։ Բարձրաւանդակի կողը, որի վրայով գնում ենք, հողից չէ բաղկացած, փափուկ չէ, այլ կարծր սև և կարմիր քարերի շերտերից։ Անձրևները փորփորել են այդ քարերը, հապճեպ տեսակ-տեսակ

խորդ ու փոս են գոյացրել։ Ձին ճանկռտելով է բարձրանում։ Խեղճ կենդանին կանգ է առնում, նայում է այդ փորձաքարերին, այդ անկարգ, անկանոն կապերին, նայում է ու դուխը յուսահատաբար գած ու բարձր շարժելով վեր է ելնում գգուշութեամբ, էլի կանգնում է, ծանր շունչ քաշում։ Խեղճ անասուն, գնում է, քրտնում, իսկ անխիղճ հեծեալի մտքակը շրպում է նրա կողերին։ Այդ տեսակ ճանապարհը, ինչ ասել կուզի, շատ երկար է երևում։ Ձին քարշ քարշ է լինում, իսկ նրա վրայ նստածը ամեն րոպէ սպասելով թէ ահա կրնկնէ քարքարոտ գառիվայրի վրայ, ձիու տակ կը փշրէ իր մարմինը՝ զայրանում է այսպիսի ճանապարհով ածող մարդկանց վրայ, անիծում է սարերը, որ այսպէս վատ են։ Այո՛, մեր երկիրն այսպէս է. ոչ ոք նրան չի չափել, օրերով գնաս՝ չես կարող իմանալ թէ որքան ես գնացել. մեր երկիրը թշուառ է նրանով, որ ճանապարհներ չունի։ Եթէ մի այսպիսի հոչակաւոր հարուստ վանք այս անտանելի ճանապարհն ունի, հապա ինչպէս են այն բազմաթիւ խուլ անկիւնները, ուր ապրում է հայ գիւղացին անտես, անծանօթ, մոռացուած ամենքից։

Մթնել էր, երբ հասանք վանքի պարիսպներին։ Փառաւոր շինութիւնը մթութեան մէջ կանգնած է, ալամարդի պէս կուռծքը դէմ է արել և իր ա-

նորոշ գծագրութիւններով վառում է ուխտաւորի սիրտը, որ մի ամբողջ օր ճանապարհ է կտրել և ահ այժմ չի կարող սրտի ուզածն խոյզն անուններ, որովհետև մի կամ կէս ժամ վաղ չի հիմի, հասել Մանում ենք Հարթ, ծառազարդ բակը։ Մարդու հոգին մի վայելչութիւն է զգում. խակդն երևում է մի հանդարտ խնամատարի առաջերը, նրա շինող ձեռքի հետքերը։ Ափսո՜ս միայն, որ այդ խնամատարը շատ վաղուց է մահել հողը և նրա հոգին այժմեան մարդկանց մէջ չի ճանաչել խակ գեղեցիկ գաղափարը գարձնել գէպի յետ, գէպի աւերածն է գիմում։

Մենք մանում ենք մի քարաշէն սենեակ, որ բոլորովին անվնաս է մնացել գա է Ագուանից կաթոլիկոսների անշուք վիճարանը, որի մէջ այժմ բնակվում է վանահայր վարդապետը։

Վատ ազատութեան տակ գուրս եմ գնում, մի քանի պատկեր եմ գործում վանքի պատերի տակ։ Ցետոյ անցնելով գրան պարսպի արևելեան գրռնով, կանգնում եմ նրա առջև։ Այդ տեղից բացվում է մի հիանալի տեսարան։ Բարձրութեան տակ փռռւած է մի լայն ձոր, որի երկու կողմում անշարժ կանգնած են բնութեան տիտաններըը, բարձրագագաթ լեռները. մինչև Ցեխ-Զորի սարերը բաց է նայողի առջև, իսկ այդ սարերի ղլխից երևում է

երկնքի անսահման տարածութիւնը. արևելքը հեռո՜ւ է, շա՜տ հեռու։ Մեր ոտների տակ, այս կողմից, լանջի վրայ ցրուած են վանք գիւղի ճրագները և հեզ ու հանդարտ ճաճատում են խորին, անանվրդով լռութիւնը կլանել է ամեն տեղ, խակ խոր ձորի յատակում վշշում է Խաչենագետը. նա քարեքար ընկած՝ կատարում է իր յաւիտեան անվերջ ճանապարհորդութիւնը։ Եւ անդուդնների ու սարերի այդ խորհրդաւոր, անհկարագրելի և անհասկանալի լռութեան վրայ ակրած է Քրիստոսի յաղթական խաչը, որ անսպառն կանդնած է գեղեցիկ հին վանքի գլխին և ուզդակի դէպի ամբողջ էնայում։

Եւ արագ ծծում ենք լեռնային օդը և նայում չորս կողմը։ Չլէն, գեղ միւս կողմին, անսահման ծայրում մնասուր կրակ է երևում։ Նա երբեմն նուազում է, յաճ ընկնում, մի փոքրիկ գեղեն բիծ գառնում և երբեմն մեծանում է, ծառանում։ Որքան արագաթռիչ են մարդու մտքերը. ձրաեզից սրտով են անցնում, ինչպես յանկարծակի թռոում են մի բուն և միւսի վրայ կանգնում։ Այդ կրակի մոտ են գիւղի տուտարածները, և ես երևակայում եմ գիւղի աղաները բոլորվել են կրակի շուրջը, իրանց հաւատարիմ շների քաջութեան վրայ յոյս դրած՝ մութ գիշերուայ ծանրութիւնը անց են կացնում խօսակցութիւնների մէջ։ Ցիշում եմ Տուրգենևի չքնաղ

պատկերը «Бѣжинъ лугъ» անունով։ Այդ խարույկի մօտ էր, երևի, գեղջուկ փիլիսոփաները խօսում, վիճում են գևերի, հրաշքների, քաջքերի մասին. անկասկած նրանք հարուստ նիւթ ունեն։ Խարույկի մօտ տարածուած է աշխարհի երեսից վաղուց սրբրած, տարած մի մեծ գիւղ. ծմեռներում, սարերի գլուխներին, երևում են անթիւ հնոցթիւններ, աներ ու եկեղեցիներ. ամեն տեղ ցրուած են քարեր ու խաչեր։ Ումմո՞ն չէ յայտնի, որ փերբնական զօրութիւնները ապրում են հին հին աւերակներում, մթին ձորերի և խոր անտառների մէջ. իսկ այդ բաներից աւելի լինչ են տեսնում խաչնեցիք իրանց օրում...

Մօտը գիշերը անցնում է, իսկ տեսարանները չեն վերանալ չի լինիլ։

ԵՐՐՈՐԴ ՕՐ

Ո՛վ մեզ պէս անհոգ ճանապարհորդ է, առանց պատրաստութեան, մեկ ինքն է, մեկ էլ իր ձին և ո՛վ միամիտ է կարծելով, թէ այսպէսի մի յայտնի վանք շատ ու քիչ յարմարութիւն ունի ուխտաւորի համար մի ուրիշ հիւրի համար պատրաստած՝ նա մեզ պէս կը քնէ հին, չոր կապերտի վրայ և հալվաղրուած կը լինի, չը մրսելու համար, շորերը չը հանել, իսկ երբ քնից զարթնէ, դէռ աչքերը չը բացած, առաջին հարցը կը լինի՝ «հիւանդ եմ, թէ առողջ»։ Երկար ճանապարհ կարես, ձիուդ վրայ փշրուես, ոտնջուես, յետոյ քնես գետնի վրայ, առաւօտը տեսնես մէջդ փայտացած, կոդերդ ցաւելիս, գլուխդ ծանրացած—այս է վիճակը, եթէ սրտիդ մէջ նստած է Հասան-Զալալեաններին փառաւոր բեկորները տեսնելու ցանկութիւնը։ Գանձատարի վանքի քայքայուած անառեսութիւնը աւելի լաւ ընդունելութիւն անել չի կարող։

Առաւօտեան ժամի չորս ու կէսն էր, երբ զարթնեցով՝ տեսայ վեհարանի նեղլիկ լուսամուտից ընկած լոյսը և վեր թռայ իմ չոր անկողնից։ Ես ուզում էի այս բացթողութեան գլխից տեսնել արեգակի ծագելը, առաւօտեան այն պահը, երբ բնութիւնը այնքան շքեղ, այնքան գեղեցիկ կերպարանք է ընդունում։ Այդ խորհրդաւոր ժամին լինչ կերպարանք կունենայ մեր տարածուած լեռնոտ, վայրենի և անտառային Թաչինը—ես ուզում էի տեսնել։ Բայց երկինքը պատած էր թանձր մոխրագոյն ամպերով. արեգակը այդ օրը ծածուկ գուրս եկաւ։

Մեր քնարանի գուռը բացի, ախուր օրը ձրնշեց իմ հոգին։ Այդպիսի օրերի մասին հասկացողութիւն կունենայ միայն լեռնաբնակ Զարաթաղցին։ Օդը խռնուած, օրը մթնած, շրջակայ սարերի գլխին կցա կցա հաւաքուել էին ամպերը, սոզում էին

նրանց՝ պատի պես ցցուած կողերի շուրջը։ Իմ սպառած զուարթ բնութեան և նոր զոբս հկող աբեզակի տեղ դիմեցի վանքի շինութիւնը դլխից։ Եւ դեռ չէի կարողացել նրա դեղեցկութեան ճառշալին առնել, ինձ վրայ ամենաճանր ապատրութիւն գործեց այն սարսափելի անհոդութիւնը, որին մատնուած է այդ հնչակաւոր, դեղեցիկ շինութիւնը։ Ոչ ոք նրա համար չի մտածում, ոչ ոքի դործը չէ, որ գանգագ կերպով աւերվում, փշանում է հնութիւնը։ Նա իր կամքին է թողուած. ապրի՛ր, ինչպես ուզում ես, հաշտուիր, ինչպես կամենում ես, այս բնութեան, այս երկնքի հետ։ Թաչէնի երկնքի տակ տեղ չը կայ, ուր բոյսը չը մեծանայ, չը զարդանայ գարմանալի շուժով։ Օրէնքը ամեն տեղ օրէնք է. կարմրախայտ և սրբատաշ քարերից շինած պատերի մէջ արմատ են դրել անհամար բոյսեր, որոնք ամենով, մեծանալով, ճեղքում են քարերի արանքը նրանց հետացնում են միմեանցից։ Անձրևի և ձիւնի ջուրը պահվում է այդ բոյսերի վրայ, մնում է քարերի վրայով, այդպիսով ապատիկ խոնաւութիւնը, որ հանրածանօթ անհաշտ թշնամի է իւրաքանչիւր շինութեան, ամենայն սիրով և խանդով պահպանվում է ամեն օր, ամեն ժամ և շինութեանը դրել է մի շատ ախուր, անհրաժեշտ և մռայլ կերպարանքի տակ։ Վանքի կատարը, որ շինած է սալ

քարերից և միանգամայն անխախտ է ճնացել և դեղեցիկ, բարձր գմբեթը, որ հեռու տեղերից այնքան փառաւոր է երևում կանաչով են ծածկուած, կարծես մի դիւզական թեղջ խրճիթի կատար լինի, այն էլ անբնակ, աւերակ խրճիթի կատար, որովհետև յիսուն տպքատար չի թողնիլ որ իր գլխից վերև բազմանան խոտերը և իր վրայ ջուր թափեն։ Չրաշալէ է, սրտիս, վանքի ամրութիւնը, շինութիւնը այսպիսի հանգամանքների մէջ էլ ամրողջ է ճնացել բայց մի քանի քարեր արդէն դուրս են եկել իրենց տեղերից և թափուելու վրայ են. իսկ արևելեան պատի ճակատին նկատելի է մի ճեղք։

Վանքը կրկու շինութիւնից է բաղկացած՝ սաձարը և զանգակատունը կամ գաւիթը։ Երկու շինութիւններըը պինդ կպած են միմեանց և մի ամբողջութիւն են կազմում։ Որովհետև նրանով միայն, որ սաձարի շինութեան վրայ ճարտարապետը թափել է իր բոլոր հմտութիւնը, զազգարել է նրան, նաշխել, սարքել, իսկ գաւիթը դրանից գարգ շինութիւն է, թէև տեղ տեղ զարդարուած է։ Արևմտեան մեծ դռնիրը շրջապատած են հիանալի քանդակներով. երկու անդրս սրծիւներ կանդնած են մուտքի երկու կողմից գռան ճակատին նկարուած է լուսինը իր բոլոր փոփոխութիւններով, տեսակ տեսակ դեղեցիկ հիւսուածքներըը տարածուած

են ջրա կողմը։ Սչք չես կարողանում հեռացնել այդ գեղեցիկ քանդակներից։ Բայց մօտենում ես շէնքին, ձեռքդ ուր դնում ես, նկատում ես խոնաւութիւն և ջուր. կարծես անձրևն այս րոպէին է դադարել, կաթիլները ծլծլում են, թափվում գեղեցիկ պատի ճակատն ի վեր։ Հիւսիսային կողմից կայ մի փոքրիկ դուռ, որի ճակատին կան երկու արձիւներ։ Քանդակագործ պատկերներով զարդարուած է և գմբէթը։ Դրսի կողմից վանքի պատերը ծածկուած են բազմաթիւ երկար ու կարճ արձանագրութիւններով, որոնց կարդալը հեշտ չէ և երկար ժամանակ է պահանջում. պատերի երեսով հոսող ջուրը եղծել, փչացրել է շատ և շատ բան։

Դրսի հետ վրդովուած սրտով ծանօթանալուց յետոյ, վարդապետի հետ մտնում ենք վանքի գաւիթը, որ և զանգակատուն է։ Այս շինուածքի առաստաղը կամարապատ է, սրբատաշ քարերից կազմած և պահվում է ջրս հատ կորդ և գեղեցիկ սիւների վրայ։ Մի ջուխտ նեղ և փոքրիկ լուսամուտներ հազիւ հազ կարողանում են լուսաւորել գաւթի նեղսը և նայողը զօրով է նկատում այն աքանչելի քանդակագործութիւնները, որոնք ցրուած են առաստաղի վրայ։ Ցատակը բոլորովին մերկ է, սոլ քարերից շինած. մի դուռ տանում է տաճարի մէջ և այդ դրան առջև ընկած է մի հսկայաձիգ

գերեզմանաքար, որ սպիտակ է և մի քանի տեղ ճաքճաքուած։ Սրատաճ[illegible] ատպան. նրա վրայ կարդում եմ. «Այս է հանգիստ մեծին Ջալալէ յաղաւթս յիշեցէք»։ Դա ինքն է Հասան-Ջալալ-Դօլա իշխանը, Խաչենի, Հաթերքի և Հանդաբերդի տէրը, որ շինել է այս վանքը և յայտնի է մեր պատմութեան մէջ ոչ այնքան իր քաջութիւններով, որքան բարեպաշտութեամբ և կրօնասիրութեամբ։ Իշխանը, ինչպէս երևում է, պարթև Հասակի տէր է եղել. նրա գերեզմանաքարը մի սաժէն և մի քառորդ արշին երկարութիւն ունի։ Թաթարների արշաւանքը դէպի Խաչենի այս կողմերը, բազմաթիւ արիւնհեղութիւնները, մի խօսքով ժողովրդի կրած բազմատեսակ տառապանքները զանազան պատմութիւնների անկիւններից հալածվում են այս գերեզմանի շուրջը, այս իշխանի կրծքի վրայ։ Երևակայում եմ թէ որքան պէտք պիտի լինէր մի իշխանին կառավարել այդպիսի ժամանակ մի ժողովուրդ, որքան միաք և հոգացողութիւն կը լինէին տանջած այդ մեծ սիրտը, ժողովուրդը յուսահատ, պատրաստ է ամեն զէպքում լաց ու աղաղակ հանել մի վայրենի ազգ, անծանօթ և սատանան գիտէ ո՛րտեղից եկած՝ ասրել է երկրի ամեն կողմին, հոգի է հանում ինչպէս կառավարես։ Ջալալը կառավարել է, լաւ անուն և

յիշատակ է թողել, ուրեմն յարգելի է նրա գերեզ-

մանը. նա ինքն էլ նահատակուել է երկրի բարօրութեան համար, խաղաղասէր է եղել: Կիրակոս պատմագիրը պատմում է, որ նրան գերի են տարել հեռաւոր երկիր, սպանել են, կտոր կտոր արել բայց նրա Ռուզաքան դուստրը, որ թաթարների մի խանի կինն էր, գնում, հաւաքում է հօր կտորները, որոնք յատիտենական հանդիստ են գտնում այս գերեզիկ կամարների տակ: Հարիւրաւոր այս տեսակ մոքեր և յիշողութիւններ են գալիս մարդու դէմքը՝ այս լուռ տապանի առջև: Եւ մարդի զլուխը խորին յարգանքով խոնարհվում է դէպի նրա քարը:

Իշխանի աջ ու ձախ կողմում կան մինչև տասն կաթողիկոսների և եպիսկոպոսների շիրիմներ, որոնց մէջ ուշադրութիւն է դրաւում Բաղդասար մեծապօլաի գերեզմանը. թէև այդ մի անշուք տափակ քար է, որի զարդն է մի հատ հովուական ցուպ, բայց երբ յիշում ես թէ ո՞վ է նրա տակ հանգչողը, լիաբերան «ողորմի» ես ասում: Այդ եռանդուռ հոգեւորականի յիշատակը չի մոռացուիլ, քանի կանգուն է այս վանքը. յիշատակը անջնջելի է ճնացել տեղական ժողովուրդի սրտում, իսկ ապագայ սերունդը կը գնահատէ, կը պատուէ մեծապօլաին նրա գործերով, որ նկարագրել է Հանդուցեալ Բաֆֆին «Խամս. Մելիք.» մէջ:

Անշուշտով այս տեսակ յիշողութիւններից,

մանում եմ տաճարը, կանգնում եմ բեմի առջև: Ես չը գիտեմ թէ ինչ տեսակ զգացմունք կար իմ մէջ այդ րոպէին: Գեղեցիկ շինութիւն, գեղեցիկ ճարտարապետութիւն, այո՛, շա՛տ գեղեցիկ, բայց խոնաւութիւնից մարդ է խեղդվում: Ջրի կաթիլները այստեղ էլ թափվում են անդադար և ապականել են գեղեցիկ առաստաղը, մեայլ կերպարանք են տուել անշուք, գարդ ու զարդարանքից զրկուած պատերին և բոլորովին մերկ յատակին: Ամբողջ տարին կաթկաթելով յատակի վրայ ջրհներ են կազմել. արդէն լափել, վերջացրել են սիւների քանդակների մի քանի նրբութիւնները: Ութսուն անգօր ենք, ծէր Աստուած: Կաթիլները, ջրի այդ փոքրիկ մասնիկները, որոնք այնքան անմեղ, անվնաս բաներ են, լուռ ու մունջ կրծում, լափում են հոյակապ շինութեան մարմինը. լափում են, շուտով կուտեն, կը վերջացնեն: Եւ այն ժամանակ... Ո՞ւր կը գնայ այն յաղթական խաչը, որ պիրում է ահռելի ձորերի և սարերի վրայ. ո՞ւր կերթայ այն ջլուտ և հզօր պատուարը, որից կպած է մարմնացած գարերի չորացած, բարակ փոշի գարձած և միայն հոգով շօշափելի կմախքը... Այս տխուր, թաց և մեայլ կամարների տակ հաւաքուած է այնքան շատ բան անցեալից, որ այսկերի հոգին լուռ խօսակցութիւն է սկսում այս տեղերի, այս պատերի ու նրանց ան-

կիւննելում բարձրացած խաւարի հետ։

Տաճարի մէջ առանձնակի կանգնած սիւներ չը կան. սիւները կպած են պատերին և կոլորակ չեն, այլ կազմուած են հօթ մի մեանց յաջորդող ասաիձաններից, որոնք թուով երկու են. առաջին ասաիձանները, աւելի հասարը բաղկացած են հօթ համահաւասար քարերից. հօթ թիւը ցոյց է տալիս հինգ հօթ խորհուրդները։ Սիւների հաւասար շինուած են երկյարկանի խորաններ՝ հիւսիսային և հարաւային պատերին կպած. դէպի վերին յարկի խորաններըը տանում են դեղեցիկ քարեայ սանդուղքներ, որոնք շինուած են պատից դուրս բերած քարերից, կախ ընկած օդի մէջ. ոչ մի բան չը կայ ներքևից, որի վրայ յենուէին։

Հիւսիսային պատի վրայ կայ մի երկար արձանագրութիւն խոշոր տառերով. դա ցոյց է տալիս, որ այս վանքը շինել է Զալալ-Դօլա-Հասան իշխանը, «Որդի Վախթանգայ և Թոռն մեծին Հասանայ, բնաւակաւոր ինքնակալ և մեծ Սրբազնական աշխարհին Թագաւոր»*)։ Վախթանգն է կտակով յանձնել, որ շինեն վանքն այստեղ, իրանց հայրերի գերեզմանատանը։ Շինութեանը մասնակցել է և Զալալի մայր Խորիշահը, որ մեծ իշխանաց իշխան Սարգսի դուստրն էր (Զաքարէ և Իւանէ քաջածանօթ սպասալարների քոյրը, ասում է Կիրակոսը)։ Շինութիւնը սկսուել է Քրիստոսի 1216 թուականին և երբ հասել է արևելեան լուսամուտին, Խորիշահ տիկինը թողել է, գնացել Երուսաղէմ, ուր կրօնաւոր դառնալով, հագել է կոշտ շորեր և ձգնել է Յարութեան տաճարի դրանը։ Քանի երեք տարի է տևել շինութիւնը և վերջացել է 1239 թուին։ Կիրակոս պատմագիրը նկարագրում է վանքի օծման մեծ հանդէսը, որին ներկայ են եղել, ինչպէս լսել է պատմիչը, զանազան տեղերից ժողովուած մինչև 700 քահանաներ։ Զալալ իշխանը մեծ ճաշ է տուել, ինքը սպասաւորել է սեղանին և յետոյ դրամ է բաժանել հաւաքուած ժողովրդին։ Գաւիթը շինել է նոյն Զալալ իշխանը իր Մամքան կնոջ հետ։ Այնուհետև բազմաթիւ արձանագրութիւններ վկայում են, որ զանազան իշխանները, պետերը Զալալեանների տոհմից, նուիրել են վանքին գիւղեր և հողեր։ Ամբողջ հարստութեան մի մասը այժմ էլ վանքի սեպհականութիւնն է։

Տաճարի բեմը, ինչպէս և առ հասարակ վանքի շինութիւնը, այնքան մեծ չէ. փայտէ հին խաչկալը ծռում է մինչև այժմ։ Վանքում պահւում են մատենքներ, հին սրբութիւններ, բայց նրանց երկպատկերը քիչ ուշադրութիւն են գրաւում։

*) Արձանագրութիւնն ամբողջովին չենք դնում. ցանկացողները կարող են տեսնել Զալալեանի «Ճանապարհորդութեան» առաջին մասում։

Վանքի մէջ երկար ճեռալ չէր կարելի. խոնա-
ւութիւնը ամէն կողմից բռնում է և ոսկորների
ցաւ պատճառում: Մենք հարկադրուած էինք շուտ
դուրս գալ:

Մի քանի խօսք էլ ասենք վանքի բակի մասին:
Նա շրջապատուած է հաստ և ամուր պարիսպնե-
րով, որոնց մէջ երևում են ահագին մեծութեան
քարեր, ճիշտ ասած, ժայռի բեկորներ. զանազան
ժամանակ կարկատուած են այդ պատերը և այժմ
առաջուայ պէս պինդ չեն: Հիւսիսային կողմից,
վեհարանին կից, շինուած են ութ հատ նեղ և մը-
թին խուցեր, որոնց մէջ այժմ ոչ ոք չի բնակվում:
Եթէ մեր մէջ կամքի հաստատութիւն լինէր, կարե-
լի էր յարմարեցնել այդ խուցերը մի դպրոցի շի-
նութեան համար: Ամբողջ բակը, ինչպէս ասել եմ,
հարթ է և բաւական դեղեցիկ, բայց շատ կեղտոտ
է պահվում: Վանքի հիւսիսային պատի տակ կան
եպիսկոպոսների և վարդապետների դերեզմաններ,
որոնցից մի քանիսը բաւական հին են և ունին դե-
ղեցիկ քանդակներով զարդարած տապանաքարեր:

Ես համարեա վերջացրի վանքի նկարագրու-
թիւնը:

Նստած ենք թթի ծառի տակ, թէյ ենք խը-
մում և խօսում: Խօսում ենք, ի հարկէ, միայն վան-
քի մասին: Այո՛, այս մոռացուած շինութիւնը, որի

մէջ այժմ հազարից մի անգամ է ժամերգութիւն
կատարվում, մի ժամանակ մեծ համբաւ և մեծ հըր-
չակ ունէր: Թողնում եմ այն հեռաւոր ժամանակ-
ները, երբ այստեղ կաթողիկոսներ և մեծ միաբա-
նութիւններ էին ապրում, երբ երկրի իշխողները
զանազան ծայրերից հաւաքվում էին այստեղ, խոր-
հուրդներ կազմում: Այդ թողնում եմ: Միեղանից մի
քառասուն կամ յիսուն տարի առաջ ի՞նչպէս էր
այս վանքը, հարիւրաւոր կենդանի վկաներ կան՝
հարցնենք: Այն ժամանակ կային մարդիկ, կային
գործիչներ: Բաղդասար մետրօպոլիտը ջանք չէր խը-
նայում շէն ու պայծառ պահելու իր պատենական
ժառանգութիւնը. երկար տարիներ նա այստեղ
անձամբ էր գործել և յետոյ Շուշու առաջնորդ
դառնալով, այնտեղից էլ չէր հեռացնում իր աչքը
Գանձասարից: Մեզ հետ նստած է վանքի զիւղացի
ծերունի վանի-ապիրը: Հարցնում ենք մետրօպոլ-
տի մասին, թէ նա ի՞նչպիսի մարդ էր:

— Պա՛, պա՛, պա՛, պատասխանում է ծերունին հիա-
ցած.—հայր ու մայր մարդ էր: Լինում են հայր մար-
դիկ, բայց թէ լինում է հայր ու մայր մարդ էլ—մենք
առաջին անգամն ենք լսում: Բաղդասարի ժամանակ
այստեղ ապրում էր մեծ անուն ստացած գիտնական
Յովսէփ վարդապետը, որ այստեղ դպրոց ունէր, ուր
ուսում էին ստանում նաև Շուշու յայտնի հարուստ-

նեղրի արդիքը, որոնցից մի քանիսը այժմ յայտնի պաշտօններ են վարում։ Այդ ժամանակ կար և միւս ցոփակեաց վարդապետը, Աֆքաթիւն մականունն առայած։ Դա էլ Պղտօսի պէս հակում էր վանքական կալուածներուն վրայ։ Իսկ այժմ... Ես արդէն նկարագրել եմ և նկարագրածիս վրայ պիտի աւելացնեմ, որ Գանձասարը Խաչենի ժողովուրդին կոպէկի օգնութիւն չի անում, կրթութեան կողմից։ Ամբողջ Խաչենում մի հատ ուսումնարան կայ — Մէյդի-չէնինը։ Երկիրը խաւար է, ժողովուրդը տգէտ, կոպիտ, ներած է «համմատած մուխ ու խաւար»։ Երկրի անտեսական դրութեան մասին ես քիչ յետոյ կը խօսեմ, ցոյց կը տամ թէ այսահզերի աղքատութիւնը որքան մեծ է։ Այս տեսակ հանգամանքների մէջ ո՞վ է կարող ժողովրդի կրթութեան գործը սկսել և տանել, մի գործ, որ նեղկայ հանգամանքների մէջ հացի և ջրի պէս անհրաժեշտ բան է։ Հարցնում եմ՝ ո՞վ է կարող, եթէ ոչ Գանձասարի վանքը։ Ջալալեան իշխանները ժողովրդի այժմեայ գործ են դրել այս վանքի վրայ, նեռամբով պահել, պահպանել են և մի՞թէ այժմ այդ վանքը ոչինչ չունի, որով կարողանար հին իշխանների յիշատակը յաւերժացնել և ժողովրդի մէջ վառել երախտապարտութեան ջերմ զգացմունքը։ Նա կարող է և պիտի անէ. բարեյական պարտք է մի կանոնաւոր և ապահով դպրոց պահելը։

Բայց գուցէ ընթերցողը կարմանայ, որ ես այս տեսակ պահանջներ եմ յայտնում—բաւական չէ որ մի հին վանքը լաւ պահուի, դեռ դպրոց էլ պէտք է պահուի, ապահո՛վ դպրոց։ Ո՞ւր են միջոցները։ Ես չեմ ասիլ՝ թէ ո՞ւր են, բայց կը պատմեմ թէ ինչ հարստութեան տէր է վանքը։ Տեղեկութիւնները ինձ հաղորդել է վանահայրը, որ «Հայր մեր»-ի պէս անգիր գիտէ վանքի ունեցածն ու չունեցածը։ Հայր-սուրբը տարաւ ինձ արևմտեան կրան տանջ գանուած բլրակի գլուխը, որի մօտ մեծ աւազանի մէջ է թափվում քաղցրահամ ջրբղխան ադբիւրը, որ երկու տարի սրանից առաջ Հեռու տեղից բերուած է մի ոմն պ. Մայկանցի ծախքով։ Բլրակի գլխից երևում են Հեռու՝ սարեր և լեռնային տեսարաններ։ Վարդապետը ձեռքը բարձրացրեց և սկսեց ցոյց տալ ինձ և պատմել։

Գանձասարի վանքն ունի 12000 դեսեատին անվէճ կալուածք, սահմաններով մի մասը երևում է մեր բլրակի գլխից։ Դեսեատին ստուած չափը բոլորովին պարզ հասկացողութիւն չի տալիս։ Ո՞վ է չափել մեր երկիրը։ Հարթավայրերը չեն չափում, ուր մեզ պէսպէս լեռնային երկիրը, որ փորփորուած է սակաւ անդունդներով, պատած է կուսական անանցանելի ծմակներով։ Վերցրել են, մօտաւորապէս 12 հազար դեսեատին են ասել։ Այդ տարածութեան

կէտն էլ չի երեւում Գանձասարից, բայց երեւացածը ահագին տարածութիւն է, շատ մեծ։ Երեւում են հեռու սարեր. գրանք ու գրանց հետն ընկած մեծ տարածութիւնները վանքի անվիճ սեպհականութիւնն են։ Հեշտ բան է, իհարկէ, կանգնել մի սարի գլխին և ցոյց տալ սահմանները։—Այս սարի գլխից մինչև այն սարի գլուխը, նրա գլխով պատկէս եկած, հասած այս սարի գագաթը։—Այսպէս է ցոյց տալիս վարդապետը, բայց պէտք է երեւակայել թէ ինչպիսի լայնատարած լանջեր ունեն սարերը, ո՛րքան մեծամեծ ձորեր են կազմում։ Վարելահողեր շատ քիչ կան այդ ցոյց տուած տեղերում. ամեն կողմ, ուր որ աչքը, սիրում է անտառը։ Վանքին են պատկանում և երեք գիւղ. Կաճոգիա, Վանքի գիւղ և Կեչան, որոնք միասին ունեն 167 ձուխ։ Գիւղացիք վանքի համար որ և է ձրի աշխատութիւն չեն անում, ինչպէս անում են բէգերին պատկանած գիւղացիք Հոզատէրևի համար. նրանք տալիս են Շուշու Կոնսիստորիային հողային բերքերի տասանորդը, որ շատ աննշան բան է և մօտաւորապէս 200 րուբլի տարեկան ծախսարկ։ Պէտք է ասել, որ անտառները հարուստ են ընկուզենիներով, իսկ Վանք գիւղի մօտ կայ վանքապատկան ջրաղացքարերի հոչակաւոր հանքը. սա տալիս է այնպիսի գեղեցիկ քարեր, որոնց նմանը, ինչպէս

հաւատացնում են, չը կայ ամբողջ Անդրկովկասում։ Եւ այսքան հարստութիւններից ինչ օգուտ է ըստացվում, պղպիւնքը շատ չնչին է, միանգամայն ծիծաղելի։

Այս է Գանձասարի դրութիւնը։

Թթենիների տակ ճաշելուց յետոյ՝ վերջին անգամ մտնում ենք վանքը։ Վարդապետը «հոգոց» է ասում, մենք գլուխ ենք տալիս փառաւոր շէրմենների, Աղուանից կաթողիկոսներին, եկեղեցուն, եւ բեռներս խաչակնքում ենք ու դուրս գալիս։

Ժամի մէկն է։ Երկինքը պղտոր է, ամպամած. արեգակը երբեմն նայում է, մի թոյլ, աշնանային լոյս է տարածում, որ ուժգի վատացնում է մեր հոգեկան տրամադրութիւնը։ Մեր հրաժեշտն ենք տալիս վանահայր վարդապետին, բռնում ենք ձիերի սանձերից և ոտով իջնում ենք վանքի քարէ ճանապարհով։ Հասնելով մեզ ծանօթ առւտրական հրապարակին, դուրս ենք գալիս ճանապարհից, անցնում ենք Խաչենագետը։ Գնում ենք այգեվերը. գետի միւս կողմին գտնուող աւերակները։ Բաւական բարձրանալով, հասնում ենք այն տեղին, ուր երեւում էր դիշերային կրակը. ես սխալուած չէի, այստեղ տաւարածները փոքր տպաներ էին, իսկ

նրանց շինելը՝ շատ կատաղի։ Նրանք ցոյց են տալիս այն Թումբը, որի վրայ կայ մի հին եկեղեցի։ Բաւական ժամանակ մինչև Թումբի կէսը պղտոր մի գիւղացի է պատահում։ Նա շատ լաւ մարդ էր, այնպէս քաղցր և համեստ, որ առաջնորդից մեզ դէպի աւերակները։ Այդ աւերակները յայտնի են «Դարպասներ» անունով։ Թումբը, որի վրայ կանգնած ենք, ունի լայնանիստ լանջեր, որոնք երեք կողմից աստիճանաբար իջնում են Խաչենագետի վրայ. լանջերի երեսին երևում են բազմաթիւ տների տեղեր. իսկոյն երևում է, որ մենք գտնում ենք մի վաղուց անյայտացած և միայն իր գոյութեան ոլորմելի հետքերը թողած գիւղի կամ գիւղաքաղաքի մէջ։ Եկեղեցին մի հատակ շինութիւն է. նրա կորին բուսած է մի ահագին ծառ, որ, երևի, շատով կը քանդէ հնացածը։ Գիր ու յիշատակ չը կայ։

Այդ տեղից բարձրանում ենք մի ցածրիկ ու երկար պատի մնացով, որ շինած է քարերի մեծ մեծ սալերից և կիսով չափ ծածկուած է ծառերի տակ։ Պատի վերին կողմում տեսնում ենք մի քարաշէն տուն, որի կէսը փլուած է։ Ծառերն ու մացառները ամեն կողմից հալաքուել են շինութեան գլխին և խեղդում են։ Մտնում եմ մի դռնով, բայց շեմքից դէն անցնել չեմ կարողանում. կտուրը փլուել է, ինչպէս ասաց գիւղացին, երկու թէ երեք տա-

րի սրանից առաջ. սենեակը լցուած է քարով, հողով և ծառերով։ Պատերը տաշած քարերից են և վերևում կամար են կազմում։ Երեք այդպիսի սենեակներ տեսանք։ Արձանագրութիւն էլի չը կայ, բայց ժողովուրդը շատ լաւ գիտէ թէ ումինն է այդ տունը։ Ջալալ իշխանի պալատն է այդ, ասում է քեզ ամեն մի գիւղացի։ Երևի հէնց այդ պալատից են այս կողմի աւերակները «Դարպասներ» անունը ստացել։ Մի քիչ հեռու մի ուրիշ քառակուսի փոքրիկ շինութիւն էլ կայ, որ բանտ և գիւտանատուն է ասւում, այս՝ Ջալալի գիւտանատունն է իհարկէ։ Ժողովուրդն է ասում, այն ժողովուրդը, որ իր սիրած մարդուն չի մոռանում. վեց հարիւր տարիներ են անցել այստեղ գլխով և դեռ նա գիտէ իր բարեպաշտ իշխանի թողած յիշատակների տեղերը։ Այստեղից յետ ենք դառնում։

Այստեղից սկսում է և բարձր ու բարձր գնալով ցցւում է մի անտառապատ սար, որի գագաթն այստեղից չի երևում, բայց հեռուից զարմացնում է պատի պէս ուղղաձիգ լանջերով։ Այդտեղ, այդ անմատչելի բարձրութեան գլխին է Ջալալի բերդը, որ կոչւում Թարխանաբերդ։ Մի նեղ, ոլորուն, սըրտաճաք ճանապարհ է տանում ներքևից մինչև այդ բերդը. ինչպէս պատմում են, դժուար, չափազանց դժուար է այդտեղ գնալը. պէտք է շատ տեղ փոր-

սող տար, ձանկռտել գետինը, որ կարելի լինի տեսնել մի քանի հին շինութիւններ և ամրութիւններ՝ ծածկուած անտառի խորքում։ Թարխանաբերդը, բնութեան ահեղ ամրութիւնների սրտում դրած պատերազմական թակարդը, յայտնի է մեր պատմութեան մէջ Խոխանաբերդ անունով։ Ես կարծում եմ, որ Դարպասների աւերակ գիւղաքաղաքը գադաթի ամրութեան հետ մօտիկ կապ է ունեցել և վերջինս նրա միջնաբերդն է եղած։ Կիրակոս պատմագիրը պատմում է Թաթարների արշաւանքի ժամանակ այստեղ տեղի ունեցած ահագին կոտորածի մասին։—Ջալալ էշխանը հաւաքում է իր ժողովուրդը և ամրացնում Խոխանաբերդի մէջ. թշնամին տեսնում է, որ չի կարող գրաւել այդ ամրութիւնը, հաշտութեան դաշինք է կապում։ Յետոյ գալիս է Թաթար Բուղա զօրավարը հարկ հաւաքելու։ Մի քանի մարդիկ նրա ձեռքն են մատնում Ջալալին, որ կալանաւորվում է։ Բուղան, ասում է պատմիչը, քանդեց իշխանի բերդը — Խոխանաբերդը, Դեառը և Միրանաքարը և «այնպէս յոտակեց, որ հետք անգամ չէին երևում՝ թէ բնաւ շէն եղած են»։ Մեր տեսած տեղն էլ լաւ յոտակուած է. միայն մնացել են միայն անտաշելները, եկեղեցին և մի հրաշալի աղբիւր, որ թափվում է ձորակի մէջ։ Իմում ենք այդ անշուք աղբիւրից. ջուրը զարմանալի պարզ է,

միանգամայն կարծես բիւրեղ է և այնքան սառն, որ միանգամից չես կարող վրան ընկնել, խմել մինչև կշտանալը։

Մեզ առաջնորդող բարի գիւղացին, տեսնելով որ մենք ամեն տեղ արձանագրութիւն ենք որոնում, տանում է մեզ մի տեղ, ասաելի վայրենի բոյսերի մէջ նա ցոյց է տալիս մի խաչքարի կտոր, որի վրայ մի երկու տող գրութիւն կայ։ Կարդում եմ դժուարութեամբ։

—Քանի՞ տարեւոյ է, հարցնում է գիւղացին։

—Վէց հարիւր։

—Վէց հարիւր... կոչում է նա ապշած.—վե՛ց հարիւր... Փառք քո, Աստուած, նրանք այսպէս բաներ են թողել, մե՞նք ինչ պիտի թողենք։

Աստմ է ու վերցնում քարը, դնում մի բաց և լաւ տեղ։

Բարի առաջնորդին մեր հրաժարան բարևն ենք տալիս, շնորհակալութիւն յայտնում և դիմում ենք բարձր։ Մեր առջևը մի մեծ բարձրութիւն կայ, որ Հաւապատակ է կոչվում։ Գնում ենք նրա գագաթի հին եկեղեցին տեսնելու. ճանապարհը բարձրանում է անտառի միջով և մենք գոհ ենք, որ առիթ կունենանք վանքի անտառը մօտիկից տեսնելու։ Մտնում ենք անտառը և տեսնում։ Ո՛րքան երևակայէք, չէք կարող իսկական գեղեցկութեան վա-

սին քիչ մծախկ հասկացողութիւն կտայիք։ Մենք ապշած նայում էինք դէս ու դէն։ Գերեզմանական լռութեան մէջ, որ սիրած է անտառում, մեր ձիերը գօռով դէպի բարձր են գնում նեղ և վտանգաւոր կածաններով։ Իսկ մենք մոռացել ենք վտանգը, նայում ենք և չենք կշտանում։ Հսկայ ծառերը կանգնած են միմեանց մօտ, ուղիղ ձգուած են դէպի վեր, կոճղաւոր ճիւղեր չունին, նաւի կայմերի պէս են և միայն պրւեններն են զարդարել գեղեցիկ տերևախիտ պսակներով։ Հատակի բարձրութիւնը զարմանալի է. Ձեխ-Ձորի ծառերը սրանց չեն հասնիլ։ Երբեմն բարձրանում ենք խորխորատների պռւեը. ձին կարծես, ձգուած լարի վրայով է գնում, եթէ մի անզգոյշ քայլ անէ, մոռաձում ես, մինչև խորխորատի վերջը հասնելը կտղ միս կը դառնաս. և այդ խորխորատի յատակից սկսած բարձրանում է հսկայ ծառը, գալիս է քեզ հետ-ատրվում և քեզանից էլ մի սովորական ծառի չափ բարձրանում։ Մանաւանդ գեղեցիկ է հաձարկի ծառը, սպիտակ մինչև տերևները, շատ բարձրահասակ և ուղիղ ու կոկ՝ ինչպէս մոմ։

Այս ի՞նչ տեսակ բնութիւն է... Երբ հետապնդուածի գլուխն ենք գնում, մեր առջևը բացվում են նոր նոր լեռնային տեսարաններ և ամեն տեղ նոյն թանձր ու մեծ անտառը։ Հետապնդուին էլ

անտառապատ է։ Ա.հա և եկեղեցին, ծառերի մէջ մռած, մոգաառնելով շրջապատուած. մոշի թփերը միմեանց են փաթաթուել, չեն թողնում անցնել։ Ա.հ ու դողով մանում եմ եկեղեցին, տեսնում եմ մի լուռ, մոռալ աւերակ։ Այս թանձր անտառում, ուր արջերն ու գայլերն են թափառում, սարի գլխին, հեռու մարդկային բնակութիւնից, աւերակ ու լքուած եկեղեցին տարտափելի տպաւորութիւն է գործում. ընկերներից մէկը գալիս է հետևից, խօսում ենք ցած ձայնով։ Շինութիւնը հետաքրքիր է, ունի բարձր կամարակապ ձաքձաքած կտուր, որի ծեփը ներսից թափուած է, ամեն րոպէ փլչելու ես սպասում։ Դրսի պատերի վրայ երեք արձանագրութիւն ենք կարդում։ Մէկից իմանում ենք, որ եկեղեցին շինուած է 1203 թուին, ուրիշն Գանձասարից էլ վաղ «յիշխանութեան Հասանայ որդւոյ Վախտանգայ և ամուսնոյ նորա Մամքանայ»։ Շինողն է մի ոմն «Յովհան աստ(ծ)ուր»։ Ինչպես պարզ երևում է, այս վանքին վից շինութիւններ են եղած, տեղերն այժմ էլ երևում են։ Հարաւային կողմից գլխաւոր շինութիւնը կցուած է մի կիսաքանդ սենեակ, որի պատերը ծածկուած են գեղեցիկ վարպետ ծեփով. նրա վրայ կան այս տեղերը այցելողների անունները։

Մենք շտապով էինք տեսնում այս բոլորը։ Օրը

թեքուել էր, պէտք էր շուտ դուրս գալ այս վայրենի և անհիւրասէր տեղերից։ Մենք սկսում ենք իջնել Հաւապտկի հարաւային լանջով, որ տանում է դէպի մեծ ձորը։ Ճանապարհը... բայց ինչ ճանապարհ, աւելի ձիշտն ասած, հետևակ մարդկանց և գաղանների հետքերի տեղը հարիւրաւոր պտոյտներ է գործում, կոլչում է ծմակի խոլքում, վազում է մեծ մեծ ծառերի ճիւղերի տակով, գլխիվայր գլորվում է թեք-թեք տեղերով։ Մենք գնում ենք, քաշքաշվում ենք, իսկ մեր ետևից քաշ են գալիս մեր ձիերը։ Ոտնամանի, շորի, դէմքի մասին մտածելը ծիծաղելի կը լինի։ Կոխ ենք տալիս քար ու ժայռ, թուփ ու մացառ։ Վերջապէս մտնում ենք ձորը, որի յատակով մի փոքր ջուր է գնում։ Այդտեղ, չը գիտեմ որ կողմից, անսպասելի կերպով գալիս է մեր առջևը մի համեմատաբար լայն ուղի։ Հեծնում ենք ձիերը, գնում ենք, դուրս գալիս մի լայն և ուղիղ ճանապարհ և քիչ ժամանակից յետոյ՝ հասնում ենք Գառնաքար անունով գիւղը։ Փոքրիկ գիւղ է այդ, քսան տանից ոչ աւել և զետեղուած է ծմակի ծայրում, ձորի գլխին։ Տաւարածը իր տաւարը հանդից տուն է բերում, ուրեմն շուտով կը մթնի. գիւղացիներից հարցնում ենք ճակոբայ վանքի ճանապարհը, մի կերպ հասկանում ենք, էլի քշում ձիերը։ Մութը հետզհետէ կոխում

է, մենք գնում ենք մի շատ նեղ կածանով։ Մեղանից քիչ հեռու մի գիւղացի կայ։ Հարցրինք ճանապարհի մասին, նա յայտնեց որ մենք շեղուել ենք և եթէ այդ ուղղութեամբ գնանք՝ կը կորչենք ծմակի մէջ և ոչ գիտէ ո՛ր ժայռից ցած կը գլորուենք։—Եւ նա աւելացնում է.

—Օրս գիշեր է դառել, ինչպէս պիտի գնաք, ճանապարհը ծմակի միջով է և շատ երկիւղալի է. այդ տեղերից մարդն անպակաս է։

Մարդ՝ այսինքն աւազակ...

Մտանք անտառը։ Բոլորովին մթնել էր, երկինքը վարագուրուած էր մութ գորշ ամպերով, լուսինն այլ ևս չէր կարողանում հասցնել մեզ իր ազօտ, անորոշ լոյսը՝ ինչպէս Վարազաբոյնի ճանապարհին։ Գնում ենք անտառի միջով, մի անտառային փոքրիկ կածանով, որ միայն մեր ձիերն են տեսնում։ Այդ անտառը Գանձասարի անտառի ընկերը չէ. այնտեղ ամեն ինչ աշխատում է բարձրանալ, մեծ հասակ ձգել, իսկ այստեղ մենք մի սովրական անտառում ենք, ուր ծառերն այնքան բարձրը չեն և դեռ գետնից չը բարձրացած՝ ճիւղերը տարածում դէս ու դէն. ծառը փաթաթվում է թուփերին, թուփը կուչ է գալիս, ընկնում ճանապարհի վրայ կամ տափականում է, սողում, ինչպէս իր վայրենի կամքին է յանկալի։ Վայրենի կամք

ունի և մեր կածանը։ Նա տանում է մեզ, ուր որ ուզում է, ցածրանում, բարձրանում է, այստեղ ու այնտեղ է գլորվում, դուրս է գալիս, նեղ ժապաւէնի պէս ձգւում մի խորխորատի եղերքով, բոլորովին անփոյթ է, որ մենք մեր ձիերով յանկարծ խցկվում ենք այնպիսի խիտ ճիւղերի տակ, ուր կարող ենք աչք ու յօնք պատռել, ոտ ու ձեռք կոտրել։ Այդ նրա բանը չէ, նա չի խոստացել որ ձիեր էլ տանէ. լեռնային ուղի է, կացին չի դիպել կողքերին, մարդու ոտը մի, հինգ, տասն անգամ կոխել է գետինը և նա գոյութիւն է ստացել։ Մենք գնում ենք միմեանց ետևից շատ ընկած. առաջնորդ չունինք, մեզ յանձնել ենք ձիերի և կածանի կամքին, մնկ էլ բաղդի բերմունքին։

— Բարձր մի՛ խօսէք, ասում են մեզանից երկուսը։ Լռում ենք. ամենքիս սրտումն է «մարդ»-ի երկիւղը։ Անցնենք անձայն, գուցէ չիմանան որ որսեր են գնում։ Եւ որքան առաջ ենք գնում, այնքան թանձրանում է անտառը։

Անտառը գիշերով... բնութեան ամենախորհրդաւոր և ծանր տեսարաններից մնկն է։ Սարասափելի խաւար է տիրում ծառերի տակ, խաւար, որ կարծես կաշկանդել է, անշարժացրել ամբողջ անտառը. ոչ մի տերև չի շարժվում, մի ամբողջ աշխարհ իր բոլոր բնակիչներով կանուխել է, անհե-

տացել։ Ոչ առաջն է երևում, ոչ ետքն և ոչ կողքը. չը գիտես ո՞ւր նայես, ի՞նչ տեսնես։ Մարդու սիրտը կուչ է գալիս, կծկվում է, մի անկիւն քաշվում. զգացմունք չը կայ, ամեն ինչ կատալվում է մեքենայաբար. գիտակցական շարժողութիւն, կամք, ամեն ինչ կուլ է գնացած խաւարի, ահ ու երկիւղի մէջ։ Միայն խելօք ձին է իմանում թէ ուր է գընում. նա գնում է իրան յատուկ զգուշութեամբ, ճանապարհից չի շեղվում։ Երբեմն պատահում են ձորեր. մենք դրանց չենք տեսնում, այլ հասկանում ենք։ Լսուած լռութիւնը գետ հետուից է բերում բարակ ջրի հանդարտ, ախորալի ձայնը. ո՞րտեղից է գալիս և ո՞ւր է գնում—այդ իմանալ անկարելի է. մնկ էլ լսում ես ինչպէս ձիերը չոմփչոմփում են ջրի և ցեխի մէջ. անցնում է այդ ձայնը և ձին գալաճալ նոյն սոսկալի լռութեան, նոյն խաւարի մէջ փոխում է քայլերը։ Աջ ու ձախ կողմից միմեանց յաջորդում են մեծ մեծ սև բծեր, քաշում ես դրանց և իմանում, որ ծառեր են, ոտքով ամեն տեղ տարածել են իրանց ճիւղերը։ Պաշտպանուի՛ր նրանցից, ինչպէս իմանում ես, թէև դժուար է պաշտպանուիլ այնպիսի բանից, որը ոտքով չես տեսնում։

Զը գիտեմ, անտառն էր շատ մեծ, թէ այդ խաւարը, լռութիւնն ու վախն էր պատճառը, բայց

մեր քահանայ կածանը անվերջ էր երևում։ Ծեղե դիրքը չէր փոխվում, իմանում էինք միայն, որ երբեմն իջնում ենք և բարձրանում։ Անորոշ դրութիւնը մեզ հասցրեց այն ժամին, երբ ամենքս համարեա համոզուեցինք, որ այս չէ ճանապարհը, որ սատանան գիտէ թէ որ կողմն ենք գնում։ Մեր ձիերի ոտների տակն է կածանը, թէ փախել է կորել և մենք անտառի մէջն ենք ընկել՝ այդ էլ չը գիտէինք։ Բայց մենք չենք կանգնում, գնում ենք անդադար, բնազդմամբ շարժվում ենք։ Մխիթը երկար լարուած ճնալուց յետոյ՝ յոգնում է, բթանում, ճնում է մի ինչ որ հասկացողութիւն, որ մի բան է թելադրում. այդ բանը վերջին միջոցն է, որ ամեն մէկը պահում է իր սրտում, չի համարձակվում յայտնել։ Ցետոյ իմացայ, որ մենք՝ հինգ հոգիներս, մի և նոյն վճիռն ենք կայացրել զատ զատ, այն է՝ գնալ, մինչև որ բաղդը դուրս կը բերէ մի շատ թէ քիչ յարմար, տափարակ տեղ, իջնել ձիերից, կրակ վառել և նրա շուրջը բոլորած, աչք գնել առաւօտին։ Ուրիշ ի՞նչ անել, մտածել է ամեն մէկը. վանքը կորել է, անտառը միշտ մի և նոյնն է, ճանապարհը մեզանից աւելի է մոլորված։ Լինում են տեղեր, ուր ծառերը նօսրանում են, խաւարն այնքան թանձր չէ. և այդպիսի տեղերում տեսնում էինք, որ մի ինչ որ սև բան է դուրս եկած ձիու ոտների տակից,

ընկած է դէպի ուրիշ կողմ—դա էլ կածան է. ձին կանգնում է, չը գիտէ ո՛րտեղով գնայ։

Այսպէս խարխափելով մեքենայաբար առաջ ենք մղվում։ Բայց մեր ձիերը ուժասպառ են եղել։ Իմ ձին, նկատում եմ, սաստիկ նեղացել է, քրտնել, նա յետ է ճնում և միանգամայն անուշադիր է իմ մտրակի հարուածներին։ Ես ձիուց իջնում եմ, յետ չը ճնալու համար, ոտով եմ գնում. ընկերներից մէկն էլ իջնում է, որ ինձ հետ գնայ։ Այս ծամակը, իր գիշերային ալհաւիրներով, բաւական չէ որ հարկադրում է մեզ հալածականի պէս փախչել, խոյս տալ իրանից, դեռ այժ և կարողութիւն էլ է տալիս այդպէս անելու. քրտինք ու յոգնածութիւն մոռացվում են, եթէ վայր էլ ընկնես, գարձեալ կը կանգնես ու անտրտունջ կը գնաս։

Յանկարծ առջևից գնացողը ձայն է տալիս.

—Այլ ևս ճանապարհ չը կայ։

Մենք մօտեցել ենք մի փոքրիկ ջրի, որ վշշում է ծառերի մէջ։ Ձրագ ենք վառում. մեզանից մէկը ձրագը ձեռին առաջ է գնում ճանապարհ գտնելու. մենք կանգնած՝ անհամբեր նայում ենք, սպասում նրա վճռին։ Տեսնում ենք ինչպէս թոյլ լոյսը երբեմն դուրս է գալիս ծառերի հաւից, լուսաւորում է մեր ձիերի վհատութեամբ կախ արած գլուխն ու ականջները և նրանց վրայ իջած ճիւղերը։ Ան-

տաճարի մի փոքր անկիւնն է լուսաւորուած և այդ անկիւնում տասերիներ են, որ արագ արագ ոգոտատում են, միմեանց վրայ վազում, միմեանց հետ խաղախմում, հսկայական պարաններ են գործում ու փախչում, ընկնում են խաւարի մէջ։ Ճրագի փոքրիկ բոցը լոյսի խուրձեր է ուղարկում ճիւղերի և բունների միջով, լուսաւորում է ճահճոտ տեղի վայրի բոյսերն ու բանջարները։ Մեր ընկերը գլուխը կախ արած դէս ու դէն է տանում ճրագը և աղնուրդում է։

— Գտե՛լ եմ, խօսում է նա վերջապէս։ Ազատ շունչ ենք քաշում, թեթեւանում ենք, ուրախանում, որ այդ անսակ թանկագին գիւտ ենք արել։ Տեսնո՞մ էք, թէ մարդու սիրտն ինչով է ուրախանում. կարծես մենք լաւ էինք ճանաչում այդ ճանապարհը, կարծես մենք շատ դիտէինք, թէ ուր ենք գնում։ Այդպէս չէ՞ սրտիկօք և մեր չարքաշ կեանքը. խաղխաղում ենք, դէս ու դէն ընկնում և մի պատահական որս-մորս կածանի յոյս դրած՝ գնում ենք։ Գնում ենք, յուսալով որ կածանը վերջ ունի, մի տեղ կը տանի և ուրախանում ենք, կազդուրւում այդ խաբուսիկ յուսով, առանց որի մեր ընդջնապատը կարող էր մեր սիրտը ճաքացնել։

Ճրագի լուսով շարունակում ենք ճանապարհը ցեխի և ջրի միջով. այժմ տեսնում ենք, որ մի քիչ

դեպի բարձր ենք գնում։ Բայց ճրագն այնքան փոքր է և անզօր այս խաւարի մէջ, որ միայն անորոշ տասերիներ է դոյացնում. ձիերը շփոթւում են, չեն կարողանում գնալ։ Ճրագը հանգցնում ենք։

Բայց մեզ համար ուրիշ ճրագ է վառւում. ահա կսում ենք շնահաչոց և բղրղոցին անսպասելի կերպով մեր առաջն է գալիս մի պալատապատ շինութիւն։

— Վանքն է, հասել ենք։

— Փառք Աստուծոյ։

Ծեծում ենք պինդ փակած դռները, ներսից ձայներ ենք լսում. չեն ուզում բանալ, ասում են՝ այս ժամանակ դուռ բաց անել չի կարելի։ Էլի «անդրդ»-ի երկիւղն է, որ այստեղ տիրում է. առաջնորդում ասազահները սպանել են վանահայր վարդապետին և այնուհետև դռները միշտ պէս պնդացնում են։ Երկար ու բարակ բանակցութիւնից յետոյ, դուռը բացւում է, երբ պարզւում է, որ մենք հասարակ ուխտաւորներ ենք։ Երկու ժիր շուն սարսափելի ալաբաշներով մեզ վրայ են յարձակւում, բայց մենք ուրախ ու հանգիստ անցնում ենք, մտնում վանաշէն սենեակը։ Ժամացոյցը որոշում է, որ ժամ ու կէս ճանապարհորդել ենք ծմակի միջով։

Մեզ ընդունում են քաղցրութեամբ։ Վանա-

հայրը, մի բարձրահասակ և յաղթանդամ վարդապետ, դէս ու դէն է վազում. մեզ գերիլ է հանգիստը, իսկ վարդապետը ծառայ չունի և հարկադրուած է անձամբ հոգալ մեր բոլոր պէտքերը. նրան օգնում է օտքից ու ձեռքից ընկած մի ծեր քահանայ, որ այստեղ աքսոր է ուղարկուած մի չհաս պատկի համար։ Մէջքից ծալուած տէր հայրը կատարում է հայր սուրբի պատուէրները, մի և նոյն ժամանակ քթի տակ իր աղօթքներն է կարդում։ Մեզ համար թէյ են պատրաստում, և տաք կազդուրիչ հեղուկին աչք դրած, մենք բոլորվում ենք, մի մտերմական շրջան կազմում, կամաց կամաց հաղորդում ենք միմեանց մեր տպաւորութիւնները։ Ամենքը մի տեսակ խօսքեր են ասում. անտառը բոլորի վրայ մի և նոյն ազդեցութիւնն էր արել։

Թէյից յետոյ դուրս ենք գալիս պատշգամբը և տեսնում ենք երկնքի մի գործը.—թխպերը պատռուել են և լուսինը տարածել է իր լոյսը։ Այսպէս էր մեր բաղդը...

Անցաւ մի ժամ։ Մենք մոռացել էինք մեր կրած տանջանքները, այժմ էլի խօսում էինք, ծիծաղում։ Մեր շրջանի մէջն առած վարդապետին ու քահանային՝ ընթրիքի նստեցինք։ Պարզ և հա-

մեստ էր մեր ընթրիքը. ուտում էինք մեծ ախորժակով, մի մի էլ խմում էինք վարդապետի «հօթեն կոզպէքի տակ պահած, պաշտած, թթու և դեղին-պղտոր գինին։ Այսպիսի մտերմական շրջանում շուտ է սկսվում և տաքանում ախորժելի խօսակցութիւնը։ Խօսում էինք գլխաւորապէս վանքի և այդ երկու մենաւոր կրօնաւորների ապրուստի մասին։ Վանահայրը պատմում է, որ վանքը շատ աղքատ է, համարեա ոչինչ արդիւնք չի տանում և ոչ էլ մի տեղից օժանդակութիւն։ Ո՞րտեղից տանեն։ Վանքն ունի կալուածներ, բայց շրջակայ գիւղացիները այն աստիճան աղքատ են, որ չեն կարողանում հողը մշակել, անտառներից օգուտ քաղել, էլ վանքն ի՞նչ տանայ։ Գիւղացիների դրութեան վրայ է կանգ առնում մեր խօսքը։ Վարդապետն ու քահանան, որ ամեն օր շրջում են գիւղերում, մեզ պատմում են շատ բաներ։ Եզներ չունին որ վարեն, ասում են մեզ. երկու-երեք տունը հազիւ մի եզն ունի, այդ պատճառով էլ հողերի մեծ մասն անմշակ է մնում։ Ինչ եզն. կան գիւղեր, որտնց բնակիչների մեծ մասն անկողին չունի. քնում են շորերը հագած, ծածկուելով որ և է գոզանի մնթոց տակ։ Աղքատութիւնը դառն է, մշտական։

Ծանր խօսքեր էին։

Մենք գնում ենք մեծ ճանապարհով, տեսնում ենք գիւղեր, կարծում ենք թէ այդտեղ ապրում են մարդիկ այնպէս, ինչպէս գիւղացին պիտի ապրէ։ Նայում ենք, բայց ոչինչ չենք տեսնում։ «Արտաքինս ուրիշին է պատմում, ներքինս ինձ», ասում է հասարակաց առածը։ Ինչ գիւղացու պատասխանն է, ուղղած դէպի այն մարդիկ, որ գիւղացի անունը լսելուն պէս, հասկանում են մի մարդ, որի հոգը գեղին ցորենով է լեցը, կարասը՝ իւղով, տաշտը՝ հացով, կթան կովերը կարագ ու սեր են տալիս ամեն օր և այդ մարդը առատօրէն ապրում է, նահապետական պարզ և լի կեանք է վարում։ Այսպէս են հասկանում, բայց այսպէս չէ։ Գիւղացի ժողովուրդը—թող մի անգամ էլ կրկնուի այս հնացած ու մաշուած միտքը—մեզ բոլորովին մի անյայտ ժողովուրդ է, ապրում է իր համար, ապրում է և իր վիշտն ու ցաւը իր շեմքից դուրս չի թողնում։ Կը գնաս, կը մտնես—կը տեսնես, չես գնալ՝ երևակայիր կամքի ու իւրաքանչիւր տան մէջ ապրող մի մարդ։ Խոսում եմ, ես էլ շատերի պէս էի. իմ ճանապարհորդութեան ժամանակ այնքան գիւղեր տեսայ և ոչ մէկի մէջ մի քիչ չը մնացի, աչքով չը տեսայ, չը հասկացայ նրանց կեանքը։ Բայց կարելի է մեղադրել ինձ. հինգ օր ճանապարհին գես ու դէն ձի քշել, աշխատել գոնէ

հարևանցօրէն տեսնել շատ տեղեր,—ես այդ էի միայն կարող անել ուրիշ միջոց չը կար, հանգամանքների ձեռքին էի, բայց գոնէ հասկանում էի, որ այն չեմ անում, ինչ որ իսկապէս հարկաւոր էր։ Այնուամենայնիւ, որքան և արագընթաց էր իմ ուղևորութիւնը, Խաչենի իմ տեսած մասը միանգամայն ինձ անծանօթ չը մնաց։ Պատահական մանր դէպքերը, ճանապարհի վրայ մարդկանց հետ հանդիպումները, կարճ խօսակցութիւնները հասկացողութիւն տուին ինձ ժողովրդի կացութեան մասին։ Եւ ես մի քանի խօսք կ'ասեմ, չը վախենալով որ մի գուցէ ասածներս իրողութիւնից հեռու լինին։

Խաչենի փոքրիկ գաւառում ես ինն թէ տասն գիւղ տեսայ։ Առաջին հաստատութիւնը, որ այդ գիւղերը շատ ազգատ են, ինքը բնութիւնն է։ Մի երկիր, որ գաշտեր քիչ ունի, մի երկիր, որի փառքն ու պարծանքը լայնատարած թանձր անտառներն են, մի այդ տեսակ երկիր ինչ է կարող տալ բնակիչներին։ Սարերի լանջերին են կպած այդ գիւղերը, ոչ լաւ ճանապարհներ ունին, ոչ այնպիսի հողեր, որոնց վրայ երկար կարողանային աշխատել։ Անտառը գեռ նրանց համար աշխատանքի դուռ չէ բացել և շուտով էլ չէ կարող բանալ։ Ծմեռից, մենք բոլորս այսպէս ենք հասկանում, կարելի է չոր վառելափայտ հանել, իսկ երբ մօտիկում քարաք չը

կայ, աւելորդ է այդ մասին մտածել անգամ: Մրնում է տախտակ շինելը: Այս արհեստն էլ այնպիսի դրութեան մէջ է, որ ոչինչ է համարվում, ամենքը տախտակ շինել չը գիտեն: Մարդը վերցնում է ութը-տասն ու ոտոցը, վերցնում է շատ օրերի համար հաց, ճամփա բարեաւ է ասում իր ընտանիքին, գրնում է ծմակի խորքը. այնտեղ շինում է մի որջ, որի մէջ ապրում է, հարևանութիւն է անում արջերի հետ. ցերեկը բանեցնում է իր ջրհեղեղեան խեղճ ուրագը. վայրենի ծմակի լռութեան մէջ նրան սիրտ է տալիս միայն ուրագի թխթխկոցը: Շինում է մանր տախտակ, ծմակից դուրս է տանում մի քանի շաբաթից յետոյ, ծախում է այնպիսի դնով, որ մի օրուայ աշխատանքը 40—50 կոպէկ է ներս-տում: Այդ է այն օգուտը, որ տալիս են նրան ահագին անտառները: Նրանց խորքում երբեմն պատահում ես այդպիսի տեղերի, ուր դիւղացին տարշիլ է փայտը և զարմանում ես, թէ ինչպէս է խեղճն այստեղ ապրել, ինչ զրկանքներ է կրել:

Ուրեմն ծմակը գիւղացուն շատ հարկաւոր չէ, մինչև անգամ նեղում է նրան, որովհետև բռնել է այն տեղերը, ուր կարելի էր վարուցանք անել: Առանց վարուցանքի նա ոչինչ է, երբէք չի կարող այնքան փող աշխատել, որ մի տարուայ հացը ուրիշից առնէ, իր տունը դնէ: Հողը, վարելահողն է

նրան կերակրողը. հողը չը կայ, նա ապրուստ չունի, հաղ չունի, քնում է առանց անկողնի, չոր գետնի վրայ, աղքատ է, այնպէս սաստիկ աղքատ, որ նրա կինն ու երեխան տեսած ժամանակ, լացդ է գալիս: Մի գիւղի ճանապարհին իմ առաջը դուրս եկաւ մի գիւղական աղջիկ: Մեծացած էր նա, նշանուելու աղջիկ էր: Ինձ լաւ յայտնի է հայի մի յատկութիւնը: Երբ աղջիկը մեծացաւ, «տանից դուրս ձգելու» դառաւ, ընտանիքը նրա վրայ է հագաքում իր բոլոր հոգսերն ու մտածմունքները. աշխատում են, որ մեծացած աղջիկը լաւ հագնուի, լաւ երևայ մարդկանց մէջ. աշխատում են մոռանալ տնային շատ պէտքեր, բերաններից կտրում՝ նրա վրայ են դնում: Բայց իմ տեսած աղջիկն ինչ ունէր հագած: Ես երկար մտիկ էի անում նրա հագուստից, երբ նա քշում էր էշը, մտիկ էի անում, բայց չէի կարողանում որոշել թէ ինչից է շորը կարած: Այսքանը միայն լաւ իմացայ, որ արխալուղի միայն մի թևքն էր հագած ուսի վրայ. ճեղքած արխալուղը գզգզուած, կախ ընկած կտորների մի հաւաքածու էր, որ երևում էր նրա մէջքի վրայ և նրա ոտների շարժողութիւնից ծանր կերպով օրօրվում էր մի կողմից դէպի միւսը: Նա քարշ էր տալիս այդ կտորտանքները միայն նրա համար, որ տեսնողը չասէ թէ նա հալաւ հագած է մանգալիս: Մեր

մօտովն անդնելիս՝ նա մեզ վրայ մի հայեացք ձգեց, որ անտարբերութիւն և մի տեսակ արհամարհանք էր արտայայտում։ Բնութեան հարստատ զաւակը հպարտ էր իր ցնցոտիների մէջ. նա, կարծես, չը զիտէր էլ որ ինքը շորեր չէ հագած և նրա համար բոլորովին միևնոյն է, թէ ինչ կը մտածենք նրա համար մենք՝ աւելի յաւ հագնուած քաղաքացիներս։ Ուրիշ տեղեր էլ տեսայ նմանօրինակ պատկեր։ Գիւղերի մօտ տեսայ մեծ ու փոքր երեխաներ, որոնց վրայ միայն մի կտոր հալաւ կայ, որ ամառ-ձմեռ նրանց հագուստն է. Ծնացած տեղերը բաց են, երևում են չոր, բարակ ոտներ, տափակ ու ոսկրացած կուրծք, վախ, հոդի դոյն ունեցող դէմքեր, և կ՚ըզա, կ՚ըզա՝ որքան կարող է լինել։ Ես, իհարկէ, չեմ կարող ասել թէ բոլորն էլ այդպէս են. բայց թէ տեսածներս հաստատում են մեծամասնութեան գառն աղքատութիւնը՝ դա իմ համոզմունքն է։ Աղքատութիւնն է պատճառը, որ մեծ մեծ գիւղեր չը կան. իւրաքանչիւր գիւղ բաղկացած է 7, 15, 35 տնից։

Ես մտածողից տրի Հոդի պակասութիւնը։ Բայց պէտք է մտածողից անեմ և այն, որ այդ պակասութիւնը կապ ունի չը գիտեմ ծուլութեան թէ ագքատութեան հետ։ Կան հոդեր, որ կարող էին արտ դառնալ, բայց արտ չեն. կան տեղեր, որ պատրաստ

վարելահող դառնալու համար աշխատութեան են կարօտ. հարկաւոր է մաքրել թփերն ու մացառները, հարկաւոր է ագրով պարարտացնել կամ ջրել։ Բայց մեր գիւղացին շատ վախկոտ է. նա չի անում, չի հասկանում որ կարող է աննել. նախ պէտք է ապահով լինի, որ մի բան կը ստանայ, որ ապա աշխատէ։ Նրան շրջապատող վայրենի բնութիւնը իր անհամար գժուարութիւններով չի դրել նրա մէջ փոլձասէր հոգի, տոկուն, յամառ մրցութեան պահանջ։ Նա գուցէ չի էլ հաւատայ, որ աշխարհում ապրում են մարդիկ, որոնք ահագին ճահիճներ են վարուցանքի տեղ շինում և հնձում։ Անփոլձութիւնը, զարերի աւանդական խրատը որ և է բանի մասին—այս ամենը հարկաւորում է նրան ընդունել խոժոռապէմ և անհիւրասէր բնութեան մօտ մի դրութիւն—ագքատ լինել։ Ուրիշ ճար որ չը կայ, ագքատ ճնացի՛ր. ագքատ ես և քեզ շատ լաւ են հասկանում Ցեխ-Ջորի, Չաւապակի, Արջաձորի, Կրատափի և այլ տեղերի անտառները. այսպէս պէտք է հասկանալ գրութիւնը։ Իսկ երբ միանգամից ագքատութիւնը կոխում է, ճնաս բարեաւ ամեն տեսակ բարօրութիւն. հոդ էլ լինի, չի մշակուիլ. նա անտրտունջ կը քնէ աւանդ վերմակի և մեն կը դայ այնպիսի արխալուղ հագած, որի մի թևիքը միայն կարելի է կուռը դնել։ Նախապաշարուած է

գիւղացին, կաշկանդուած հոգեպէս. իր այդ դրութիւնը ճակատագրական է համարում և երբ տեսնում է, որ հողագործութիւնը մի հատ եղնով գլուխ չի գալիս, ինքն իրան համոզում է, որ վարելը նրան չէ տուած, գնում է հեռու տեղեր, ուր արտերը շատ կան, մշակ է գառնում, հնձում ուրիշի արտերը, որ գոնէ իր ստացած հնձավարձով ապրէ կէս կուշտ և կէս քաղցած։ Ինձ պատմում են Քոլատակ գիւղի մասին, որ գտնվում է Յակոբայ վանքի մօտ։ Գիւղացիները համարեա թուրք թափառականների օգնութեամբ և ատրքով են ապրում, երբ նրանք Խաչենագետի ափերով սալն են գնում կամ սարից գալիս են։ Ձանապարհի վրայ առևտուր են սկսում, թուրքերին ընկերդ, շինած մահակներ են ծախում։ Թուրք թափառականների շնորհիւ ապրէ... երբ այդ թուրքերն իրանք ողորմելի թշուառներ են՝ սար ու ձոր ընկած...

Այս ամենից յետոյ ես մտաբերում եմ նեղկայ տարին, որ այնքան վատ է, այնքան դառն։ Ձափից դուրս անձրևներն այս տարի գիւղացու շատ յոյսերն են փչացրել, դաշտը մի ընչին բան է տուել, այս պատճառով հէնց այժմ, գեռ աշունը չը սկսուած, հացի պակասութիւն է. ես չը տեսայ մի տեղ, ուր գանգատ չը լինէր. խոշակահալ արտեր տեսայ, որ թողել են իմանալով որ արդիւնք չը կայ։

Եղած ցորենը սև է, անհիւթ, հայց չի գառնում, մինչև որ կորեկ չեն խառնում։ Ունևորների համար էլ զգալի է պակասութիւնը, ինչպէս պէտք է միւսներն ասին։ Պէտք է երևակայել, թէ ինչ օրի մէջ կը լինին գիւղացիները, երբ երկիրը ծածկուած կը լինի խոր ձիւնի տակ։ Սարսափելի բաներ։ Մի քանի ամսից յետոյ ձիւնը կը գայ, այս լեռները, անմատչելի անտառները բոլորով են կը կորչին ամեն հաղորդակցութիւնից։ Ո՞րտեղից օգնութիւն սպասեն, և ո՛վ կը տայ։ Սովը, ինչպէս և տարափոխիկ հիւանդութիւնը, ամեն անգամ անարգել կարող է գիւղը մտնել, գիւղացու բկից կախուել։ Գիւղացին ամեն դէպքում է անպատրաստ և անփորձ։ Պաշար պահել չը գիտէ, հասարակական ամբարի գաղափարը երկնքի աստղն պէս հեռու է նրա հասկացողութիւնից։ Սպասե տարիների թողած աւելորդը վաղուց ծախել, կերել է, այժմ, ինչպէս ասում են, մատը բերանում է ծծացել։ Կար մի ժամանակ, այդ գիւղացին ցորենի առևտուր էր անում։ Փողը չափազանց քաղցր բան է, ունևորն ու չունևորը ծախել են այն, ինչ կարողացել են բերանից կտրել։ Եւ այժմ ահա պակասութիւն է, թանկութիւն է.—ո՛ւր գնայ։ Նա ծախել է, որովհետև չը գիտէ որ իրան միշտ պաշար է հարկաւոր, չը գիտէ որովհետև գիւղացի է, որը բացի գրանից շատ ու-

ըիշ բաներ էլ չը գիտէ։ Իսկ նրանք, որոնց ձեռքում կային Թուանշաններ և որոնց առաջ գիտութեան թէօրիան շատ և շատ հետաքրքիր հետևողութիւններ, հաշիւներ էր բացել, ծափ էին զարկում ուրախացած, որ մեր երկիրն էլ արտահանում է հում ապրանք։ Միայն այս փաստը, ցորենով լիքը վագոնների երկար շարքը, ուրախացնում էր և չը գիտէին որ այդ արդիւնահանութիւնը քամում, սպառում է երկրի նեղքին ոյժերը։ Մոռանում էին այդ պարտները, որ մեր երկիրը չունի հաղորդակցութեան յարմար ճանապարհներ, որ մեր գիւղացիները ապրում են սարերի և ժայռերի գագաթներին, այնպիսի տեղերում, ուր միայն ամառն է հնարաւոր երկար գնալ ու գալը, պակասութեան, սովի ժամանակ ալեւտալի դրութեան մէջ կը լինին, առանձնացած լինելով միւս տեղերից։ Չիմա հրամայեցէք տեսէք։ Այն սարին մենք էժան հաց տուինք Ֆրանսիացուն և գերմանացուն, նրանք լաւ ապրեցին։ Չիմա մենք ենք դժուարութեան մէջ, հիմա էլ թող իրանք ցորեն բերեն մեր Խաչենցուն կամ Վարանդեցուն տան, յետ տանեն իրանց տուած Ֆրանկները։ Թող տանեն, գիւղացին ուրախութեամբ կը տայ, միայն թէ հարկադրուած չը լինի իր սոված երեխայի բուռը, հացի փոխարէն, երկու-երեք եփած բակլա կամ սիսեռ դնել։

Մենք սխալում էինք, ուրիշն մեր ուրախութիւնը անհիմն էր։ Եւ դեռ շատ կը սխալուենք, շատ բաների վրայ կուրախանանք, փոխանակ ախրելու, որովհետև մեր երկիրը, մեր տունն ու տեղը չենք ուսումնասիրել։ Վանահայր վարդապետի պատմածները իմ մէջ զանազան մտքեր են յարուցանում։ Ես յանկարծ յիշում եմ ռուսաց զրականութիւնը, մտաբերում եմ թէ վերջին տարիներս ռուս ինտելիգենցիան ինչ տեսակ դիրք է բռնել դէպի գիւղացին։ Ուսպենսկի, կոմս Տօլստոյ, Զլատօվրատսկի իրանց գրուածքներով, լրագրութեան մի քանի յայտնի մասն իր քարոզներով անցնում են իմ յիշողութեան միջով։ Գեղարուեստը, հրապարակախօսութիւնը, մասնագիտութիւնը միացած, ձեռք ձեռքի տուած՝ մտել են գիւղական աշխարհը, փորում, ուսումնասիրում են, զարմանալի փաստեր են դուրս հանում։ Գիւղացու կեանքը, պատկերը պարզվում է, բարձրանում մտածողների աչքի առջև։ Ես հասատացած եմ, որ մեզանից ամեն մէկը, որ գոնէ մի տարի շարունակ ռուսական նոր գրականութեանն է հետևել, շատ լաւ հասկացողութիւն կը լինի կազմած ռուս գիւղացիների նիստ ու կացի, հոգեկան ընդունակութիւնների, բարի ու չար գործերի մասին։ Գրում են և չեն բաւականանում միայն մտքեր առաջարկելով, գրելով «Գի՛ւղ համեցէք,

պարոննե՛ր, գի՛ւղ համեցէք», կոչում են նրանք առանց հանաքի, լրջութեամբ, զինուորուած բազմաթիւ առողջ մաքերով և փաստերով։ Չլսուիլում են ինտելիգենտներին, որոնք մայրաքաղաքներում հալվում են, մաշվում, չիմանալով թէ ինչ անեն։ Ռուսաց յարգելի թերթերից մէկը «Недѣля»-ն, ահա քանի տարի է արծարծում է այն միտքը, որ ինտելիգենցիան իր կոչումը կարող է պարզել այն ժամանակ միայն, երբ պատասա ու փափուկ պաշտօններն եաևից վազելը կը թողնէ և յետ կը դառնայ գաւառները. այդ հարցը այժմ էլ ուսս պարբերական պրականութեան օրուայ հարցերից մէկն է։ Հազուագիւտ բան չեն այս տեսակ նկարագիրները. «թէ ինչպէս ես սովորեցայ վարն ու հունձը»։ Տպագրւում էին Գլեբ Ուսպենսկու յօդուածները «Живыя цифры» վերնագրի տակ, որոնք հիացնում են ընթերցողին. հասարակ ժողովրդի կեանքը, նրա կրած աշխատանքը, ապրուստը այնպես գեղեցիկ ուսումնասիրուած և մի տաղանդաւոր գրչի տակ նուրբ գծագրութիւններով պատկերացած էր, որ ընթերցողը չէր կարող բաժանուել գրքից, չէր կարող չը յափշտակուել, չը հիանալ։ Եւ ո՛ր մէկը յիշես։

Այդ ամենը յիշելուց յետոյ, երբ յետ եմ դառնում մէզ մօտ, տեսնում եմ Խաչենցու գրութիւնը իր լեռների և ձմեռների մէջ, ես հարցնում եմ.

«ո՞րթէ մեր մէջ չէին կարող գտնուել մարդիկ, որոնք եթէ ոչ վարուցանք անէին, գոնէ ուսումնասիրէին, նկարագրէին այդ կեանքը»։ Այդ հարցը տալիս եմ ինձ և ծիծաղում։ Ի՞նչպէս կարելի է մինչև անգամ այդ տեսակ հարց դնել բաւն չունենս, խելքդ գլո՞ւխդ չէ։ Այդ տեսակ սառն, արհամարհական հարցեր կարելի է լսել մեր մէջ։ Ո՞վ է գնացողը, անողը։ Երիտասարդը համալսարանում ուսում է ստանում և վերջացնելուց յետոյ, քանի որ թարմ է, ջահել է, հարցնում է՝ ի՞նչ անեմ, ո՞ւր գնամ։ Իսկ երբ մի քիչ մտն է գալիս, աշխարհի հաճն ու հոտն առնում է տեսնում ես լռեց, այդ հարցն էլ չի կրկնում. նա շտապում է պակուել և մի լաւ իւղալի պաշտօն ձեռք բերել. այնուհետև համալսարանական ուսումը նրա ձեռքում մի զէնք է, որով հասարակ մահկանացուներին կարելի է կռացնել նրա առջև, հեղինակութեան փառքը վայելել։ Բայց ի՞նչու խօսենք միայն համալսարանականների մասին. ահա ուրիշ դասակարգի երիտասարդներ, որոնք ըստ երևոյթին իրաւունք չը պիտի ունենային պատրաստ պաշտօն ու փափուկ ռոճիկ որոնելու.—դրանք նոյն այդ գիւղացիների որդիներն են, որոնք մի կերպ միջին ուսման աէր են դարձել։ Չէնց որ Սպենսերի, Բոկլի, Կանտի անուննները լսում են և հասկանում նրանց ինչ լինելը, իսկոյն

մեծ կենտրոններ են վազում. քանի քանիսը այս րոպեին քաղցած նստած են նոյն իսկ Թիֆլիսում, երևակայում են իրանց մի կերպ նահատակներ, մի կերպ չը գնահատուած մեծութիւններ և թշուառ, աննպատակ կեանք են փչացնում: Ոչ միայն գիւղը, այլ և գաւառական քաղաքը—երևակայում են նրանք—չի կարող տեղաւորել իր մէջ նրանց պէս մեծութիւնը: Ուսաի և փախչում են: Փորձի՛ր հենց այսպէս խօսել դրանցից մէկի հետ.

—Սպասի՛ր, պարոն, ի՞նչու այդքան շուտ փախչում ես այստեղից:

Պարոնս քիթը վեր է քաշում, արհամարհանքով ասում է.

—կ-է-ա՞նք չը կայ:

Կեանք չը կայ... Բայց տեսնել մեծ քաղաքի առօրեայ իրարանցումը, խլանալ նրա ադմուկի մէջ, ամեն անդամ երես առ երես շփուել անառակութեան, մարդակերութեան, կեղտի և ապականութեան հետ, տեսնել քաղաքակրթութեան արատքին շուքը, լպստած, զարդարած պատկերը և միևնոյն ժամանակ հոգեկան դատարկութիւն, ամեն ղրկանք կրել—սա կեանք է... Զը կան մշակներ, իսկական մշակներ, որոնց համար գործը հոգեկան պահանջ լինէր, որոնց համար աշխատութիւնը պարծանք և երախտապարտութիւն չը լինէր: Մենք ա-

նում ենք մի բան և դեռ կէսին չը հասած, պահանջում ենք, որ մեզ ճանաչեն, պատուեն. և երբ այդպէս չի լինում, վհատում ենք, ընկնում:

—Այս կոմսերի դիւզացիների մեծ մասը վերմակ չունի, որ մանէ նրա տակը ու քնէ, ասում է մի պատահական վարդապետ:

Մենք պլշում ենք, զարմանում... Մի թէ այդպէս է:

ՉՈՐՐՈՐԴ ՕՐ.

Ֆիզիքական և հոգեկան տանջանքներից յետոյ հանգիստ քնել, արեգակը ծագելուն պէս վեր կենալ, նայել փոքրիկ և անշուք պատուհանով, տեսնել մի պարզ և չքնաղ առաւօտ, որի մի մասը առնային է, միւսը աշնանային—կը լինի՛ արդեօք մի ուրիշ բաւականութիւն՝ ես մինչև օրս չը գիտեմ:

Յակոբայ վանքը այսպիսի մի առաւօտ պարզևեց: Գլուխս բարձրացնում եմ, Խաչենի խորխոտ լեռների առաւօտը իր հսկայական շուաքներով հալածում է ինձ մեր քնարանից: Հագնվում եմ շտապով, շորերս կէսը թողնում եմ թափուած և դուրս գնում: Սենեակը, որ մեզ այնպէս լաւ հիւրասիրել է գիշերային մռայլ և տանջանքներով լեցը անտառի ծայրում, մի շատ ողբալի, աւերակ շինութիւն է:

Իմ առջևն ընկած է մի երկայն նեղ հովիտ, որի միւս կողմից ընկած է մի ուրիշ լեռնաշղթայ։ Այդ շղթայի ստորոտով հոսում է Քղատաակի գետակը, որ յայտնի է իր քաղցրահամ ձկներով։ Իսկ ամենաբարձր գագաթներից մէկի վրայ, առաւօտեան երկնքի կապուտակութեան մէջ, բազմած է Կաչաղակաբերդը։ Նա իմ հանդէպն է և իմ ու նրա մէջ ուրիշ սար չը կայ, այլ միայն օդի ովկիանոս, որ թոյլ է տալիս ինձ բաւական հեռաւորութեան վրայ տեսնել բերդի մարմինը, որ լուսաւորուած է արեգակի լուսով և բարձրացած խոր ձորերի վրայ, որոնք գեռ ևս ընկղմուած են գիշերուանից մնացած կիսաթափանց կապուտակութեան մէջ։ Կաչաղակների բերդը երկար դէպի լրան է ձգում նայողին, բայց անորոշ և անհասկանալի է մնում նրա առջև։ Նկատելի են մոխրագոյն սեպացած ժայռեր, որոնք երեք կողմից վերթխարի պարիսպներ են կազմում։ Նայում ես և կարծում թէ այդ բերդը շինուած պատահաւորած է մի ուրիշ տեղ և բոլորովին պատահաբար դրուած է այս սարի գլխին իբրև մի գլխարկ։ Դէպի արևելք երևում են լեռներ և լեռներ, որոնք մի տեղ մօտենում են միմեանց և նեղում Խաչենագետը։ Այդտեղ երևում է Ցեխ-Ձորի անտառը, իսկ նրա ետևում բարձր է տարել իր գլուխը Պակի ս. Գէորգի սարը. նրա գագաթին

կանգնած է մի վանք, որ սպիտակին է տալիս։ Իսկ արևմտեան կողմից ընկած է այս գիշերը մեր անցած անտառը, որի շարունակութիւնը գալիս է վանքի շուրջը պատում և իջնում դէպի հովիտը։

Ս. Յակոբայ վանքը հասարակ և անշուք շինութիւն է։ Փոքրիկ տաճարը. շրջապատած է բազմաթիւ նեղ ու մթին խուցերով, ծակ ու ծուկերով։ Թէև վանքը հին է, գանձասարից էլ հին, բայց, ինչպէս երևում է, շատ անգամ է վերանորոգուած։ Նախկին շինութեան քարերը վերանորոգիչները առանց որ և է յարմարութեան և ճաշակի դրել են պատերում, այնպէս որ գերեզմանաքարը սիւնի վրայ է երևում, խաչքարը առաստաղի և պատի մի մեռթ անկիւնում։ Ամբողջ շինութիւնը մի անշնորհք կարկատանի ապատորութիւնն է թողնում։ Ինչ ասել կուզի, այս վանքը Գանձասարից էլ վատ է պահվում. փայտի մասերը փտել են՝ կախ ընկել, աւերակը կատարեալ աւերակ է։ Բայց սա էլ հին ժամանակները հռչակաւոր վանք է եղել և, կարծեմ, աթոռանիստ։ Նրա վիճակը կոչուելիս է եղել Մեծարանց վիճակ։ Պատերի մէջ դրած հին քարերն ունեն արձանագրութիւններ։ Ժամատանը կայ Յակոբոս արքեպիսկոպոսի և «Մեծարանց հայրապետի» գերեզմանը, որի արձանագրութիւնը կրում է 1223 թուականը։ Գաւթում թաղուած է

Աղուանից Յովհաննէս կաթուղիկոսը, մի տեղ գրած է մեծ իշխան Զալալէ որդի Յովհաննէս կաթուղիկոսի խաչքարը. իսկ մի ուրիշ արձանագրութիւն, որի գլխին գրած է «Զալալին հրաման», վկայում է որ Ծովասեղ անունով հողը վանքին է նուիրուած 1251 թուականին. այժմ էլ այդ հողը վանքի սեփականութիւնն է: Զալալ և Զալալ իշխան ամեն տեղ... Ամեն քարի վրայ, ամեն մի մամռապատ արձանագրութեան մէջ, ծմակների խորքերում, սարերի ձորատին և ձորերի յատակում միշտ այս անունն է յիշվում...

Վանքի նշանաւոր սրբութիւնն է Մծբնայ Յակոբ Հայրապետի աղբը, որ մեծ յարգանք ունի Զաբարապում: Աղբը գրած է մի փոքրիկ խուցի մէջ, փայտի փոքրիկ գմբէթի տակ: Հիւանդութիւններից, երաշտի և վնասակար անձրևների ժամանակ աղբը տանում են գիւղերը, Շուշի, Թաւրէզ են տանում: Այս վանքն էլ ունի կալուածներ՝ մօտ երեք հազար դեսեատին տարածութեամբ, բայց, ինչպէս ասացի, արդիւնք շատ քիչ է տացվում:

Ս. Յակոբի աղբը համբուրելով, ձի ենք նստում և շարունակում մեր ճանապարհը: Իջնում ենք հովիտը, անցնում ենք մի քանի թումբերով և հասնում ենք Խաչենագետ՝ Առաջաձոր գիւղի դիմացը, գնում ենք գետի մերկ ափով: Մերկ եմ ասում, ո-

րովհետև այդ հարթ ու ջրառատ տեղերում այգիներ չը կան. զարմանալի ծուլութիւն և գիւղական անհամակացողութիւն: Խաչենագետի ձորի իմ տեսած մասում մինչև Գանձասար այգիներ չը կան, եթէ չը հաշուենք մէկը կամ երկուսը: Բնակիչները ուտում են, ինչ տալիս է անտառը—գիհու, ընկոյզ և այլ վայրենի պտուղներ:

Անցնում ենք Ցեխ-ձորի մօտով և շուտով սկսում ենք բարձրանալ մի ճանապարհով, որ թանձր անտառի միջով տանում է դէպի Պակի սուրբ Գէորգ: Ծմակը Ցեխ-Ձորի ծմակին նման չէ, թէև նրա հարևանն է, ծառերն այնքան բարձր չեն:

Կէսօրից անց հասնում ենք Ուլուբաբ անուով փոքրիկ գիւղը, որ մի շատ գեղեցիկ տեղ է ընկած: Տները (մենք համրեցինք՝ տասնեմեկ հատ էին) միմեանց կողքի են շինուած և նայում են մի լայն փողոցի վրայ: Տեղը բլրի գագաթ է, ծածկուած կանաչ խոտով. կանաչ լանջով երը վերջանում է մի անտառապատ ձորի մօտ, իսկ նրանից դէնը երևում են նոյն տեսակ կանաչ տեղեր ծմակների մէջ: Մի քանի տասնեակ տաբիներ սրանից առաջ է գիւղն այստեղ շինուել. առաջներում Ուլուբաբը եղել է Խաչենագետի ափին, բայց, պատմում են, մի ինչ որ հիւանդութիւն մի քանի տարի շարունակ բոյն է դրել գիւղի մէջ և շատ մարդ է կոտորել, գիւղը

ցրուել է, մի մասը ուրիշ դիւղեր է գնացել, ձնացողդը բարձրացել է այս բարձրութեան գլուխը։ Բայց, երևի, հեշտ չէ Խաչենի գեղեցիկ տեղերը դրաւելը. ուշադրութիւններ պիտի կրեն ջրի պակասութեան պատճառով. մի բեռն ցորեն ազատու համար նրանք պիտի իջնեն այդ բարձրութեան գլխից, Խաչենագետի վրայ շինած ջրաղացների օգնութեան դիմեն։

Ուշադաբի մօտից երևում է բարձրութեան գլխին նստած վանքը, դէպի ուր տանում է մի քարքարոտ և դժուար կածան։ Գնում ենք այդտեղով և քարինքի մէջ կորած, միանգամայն փշրուած հասնում ենք վանքը։ Մենք այստեղ պիտի դիշերենք և մեր ձիերին հանգիստ տանք։ Մինակ մենք չէինք. օրը շաբաթ էր և կային ուրիշ ուխտաւորներ էլ։

Սուրբ Գէորգի սարը շատ բարձր է. վանքի տեղը այդ սարի ամենաբարձր կէտն է և շրջակայ ուրիշ սարերը—Կաչաղակաբերդ, Գանձասար բաւական ցած են երևում։ Մարդու առջև լայն ու մեծ տեսարան է բացվում, հորիզոնը շատ հեռու է դրնում և այս բարձրութեան գլխին կանգնած՝ կարելի է տեսնել բիւրաւոր զանազան տեսարաններ և տեղեր։ Նայում ես դէպի արևելք.—անասհման տափարակ տարածութիւններ, այժմ դեղնած, անկենդան փռուած են այս հսկայի ոտների տակ։

Հսկան այնպէս ակրաբար բարձրացրել է իր գլուխը, որ ամեն տեղից ցոյց է տալիս իր սիտանական հատակը։ Ասում են, որ այստեղից երևում է Կուրը, երկաթուղու Եւլախ կայարանը. իսկ այս կողմերի մի բնակիչ հաւատացնում էր, որ Բաղուից շատ հեռու չը գտնուող Հաջի-Կաբուլ կայարանից էլ տեսնվում է Սուրբ-Գէորգը։ Հիւսիսային, արևմտեան և հարաւային կողմերում երևում են անթիւ սարեր, հովիտներ, երևում է Շուշին, կարծես ձեռքի ափի վրայ դրած, երևում են և Շուշուց դէնը գտնուող սարերը։

Վանքի տեղը, ինչ ասել կուզի, գեղեցիկ է, բանաստեղծական։ Սեպտեմբերի սկիզբն է արդէն, բայց խոտը դեռ կանաչ է և թարմ։ Թանձր անտառը սարի բոլոր կողմերից բարձրանալով, գալիս է՝ վանքի շուրջը մի բոլորակ կազմում։ Վանքը մօտաւորապէս երկու հարիւր տասուհոց շինութիւն է, հասարակ, զուրկ հին վանքերի գեղեցիկ քանդակներից. մինչև անգամ վանքի հիմնադիր Յովսէփ վարդապետի արձանագրութիւնը քարի վրայ չէ, այլ աջակողմեան խորանի կամարակապ առաստաղի ճակատի վրայ։ Այդ խորանում գտնվում է հիմնադրի դէմքի վրայ։ Այդ խորանում գտնվում է հիմնադրի դէմքի պատկերը, որի վրայ մոմ են վառում. իսկ բեմի առջև մի ուրիշ դերեզմանի ճակատած է բազմաթիւ մոմերով—այդ է ս. Գէորգի մասունքների պահա-

րանը, որ մեծ քանակութեամբ ուխտաւորներ է բերում Ղարաբաղի ամէն կողմերից: Ներսից էլ շինութիւնը անպաճոյճ է, բայց լաւ ոճ ունի. կտուրը գաւձեալ խախտուած է և ջրի կաթիլները այստեղ էլ աւերմունք են գործում:

Թէև ամառուայ տօներին այստեղ թափվում է ուխտաւորների ահագին բազմութիւնը, բայց ոչինչ յարմարութիւն չը կայ նրանց համար. երկու հատ սենեակներ կան, որ կարող են ապաստանարան դառնալ: Իսկ մենք քնելու շոր, մինչև անգամ հատ վերարկու էլ չունինք, ուրեմն ի՛նչ կը լինի մեր դրութիւնը: Շատ ախտը հալց է, մանաւանդ մի այսպիսի տեղ, ուր բնութիւնը հաստատակամութիւն չունի և ուզած ժամանակը ցոյց է տալիս իր այլանդակ քմահաճութիւններից մէկը. ահա Գանձասարի գլխին հաւաքուել են ամպերը, որոտոցի թոյլ ձայնը մեր ականջին է հասնում: Մենք տեսնում ենք թէ ինչպէս թափվում է անձրևը Գանձասարի գլխին. երկնքի մի ծայրում հաւաքուել են ամպերը, կախ ընկել երկրի վրայ, իսկ մայր մանող արեգակը մի կողմից իր ծուռ ճառագայթներով լուսաւորում է այդ ամպերն ու անձրևը, որոնք հետզհետէ դէպի մեզ են գալիս: Դրանց ենք սպասում ճնշուած, վհատուած սրտերով: Բայց անձրևաբեր ամպը անցնում է մեզանից բաւական հեռու և անշարժանում է երկնքի մի ուրիշ կողմում:

Հետզհետէ գալիս են ուխտաւորներ, բերում են ոչխարներ. նրանք իջնում են բաց երկնքի տակ, կրակ են վառում, փռում են կապերտներ և իսկոյն իրանց բանին ու գործին են գնում, ոմը գնում է ջուր բերելու Ուլուբաբ գիւղի մօտից, ոմը փայտի պատրաստութիւն է տեսնում. մարդ ու կնիկ, հարս, աղջիկ, երեխայ միմեանց են խառնվում. մեռածի, սուգ գագաթը կենդանութիւն է տանում: Բոլոր ուխտաւորները գիւղացիներ են:

Այդ էլարանցումը, հանաքն ու ծիծաղը, բարձր ու հանդարտ խօսակցութիւնները ինձ վրայ շատ ախորժելի ապաւորութիւն են գործում, և ես կանգնած տէրտէրի սենեակի կտրին՝ խորին ուշադրութեամբ դիտում եմ դրանց, տեսնում եմ հայ գիւղացու կեանքի նշանաւոր երևոյթներից մէկը. տեսնում եմ և յիշում իմ մանկութիւնը, այն երջանիկ և միշտ քաղցր ժամանակները, երբ այնքան ոգևորուած, ուրախ և զուարթ մենք էլ ուխտ էինք գնում, տեսնում էինք շատ տեղեր, շատ մարդիկ. կարելի՛ է մոռանալ այն հոգեկան երջանիկ ապրումները, այնքան մեծ ուրախութիւնը...

Ուխտագնացութիւնը, այո՛, հայ կեանքի մի հատ երակն է կազմել և այժմ էլ կազմում է: Անհիշելի ժամանակների սրբազործած այդ սովորու-

թիւնը իր մէջ ճածկած ունի շատ խորհրդաւոր, շատ հետաքրքրական գծեր։ Մեր ժամանակը իր վայր ու վեր անող, դէմք ու կերպարանք փոփոխող ձեռքիով դեռ չի մօտեցել այս սովորութեան, չի խախտել նրա հիմքերը. էականը, հնութեան կտակած կարգն ու կանոնը, ծէսն ու արարողութիւնը ձեացել են և դեռ շատ կը ձեան։ Էականն ասացի, որովհետև մի քանի երկրորդական կողմերը փոխում են իրանց կերպարանքը, կապ ունին ժողովրդի արտաքին կենցաղավարութեան հետ, ոչ, ինչպես յայտնի է, ժամանակի փոփոխութիւններին է ենթարկուած։ Քաղաքն ու նրա քաղաքակրթութիւնը դիւղերի վրայ մեծ ազդեցութիւն են գործում. հին, նահապետական օջախը երկաթի վառարաններին է իր տեղը տալիս, մեծ փափախը՝ մահուդի թեթև գլխարկին, և գիւղացին, որ օտարութեան մէջ քիչ «լուսաւորութիւն» և փող է ձեռք բերում, փոխում է իր կնոջ հագուստն անգամ. այս է պատճառը, որ ուխտատեղերում տեսնում ես գիւղական կարմիր հագուստների մէջ եւրոպական ճաշակով կտրած հագուստներ, որոնց պակասում է միայն տուբնիւրը, այն էլ երևի հեռու չէ։ Պանդխտութիւնը, որ գժուարութիւն չունի նաև մեր անչափահասների համար, հաստատել է մեր մէջ մի զբօսասէր հոգի։ Սուաջուայ ժամանակները, կամ խո-

սելով պատանիների լեզուով, մեր ժամանակները նմ է տեսել, որ փոքր ուրն այնպիսի երեսպաշտութեամբ փոլոջում երդէ թրքական գանազան կեղտոտ երգեր, ինչպես այժմ երդում է կօշիկարի աշակերտը, երբ իր վարպետի ծանր շունչից ապուռուկով, երեկոյեան դուրս է վազում խանութից։ Նա դեռ չը մեծացած՝ մեծ է, գլուխում պտտում է աորձանահ, և քաջ ձեանալով զօռ է տալիս կոիոլդին, բղաւում է իրան անծանօթ լեզուով, որպէս թէ երդում է, լողը գայրանում է, ուզում է բռնել նրան, ականջից ձգել, բայց ա՛լ թէ դրանով կարող կը լինի կորել այն բարակ ձայնը, որ երդում է ծծիրի գեղեցկութիւնը, երդում է սիրեկանի հետ անցկացրած գիշերները։ Երգիչները շատացել են, պէտք է որ երաժիշտներն էլ շատանան. և ահա պատրաստ է գարմօնեան, ինչպես մի երաժշտական գործիք, որի վրայ հեշտ կարելի է սովորել։ Պատանիների ձեռքին գարմօնեան, պէտք է ասել, շատ է տանջվում, որովհետև նրան հարկադրում են հիւսիսային եղանակների տեղ հնչեցնել մեր տեղական ծանր, ուռաձգական եղանակները, որոնց կսխատրիչ այժը երկար ու ձիգ, բարակ ու ոլորուն ելևէջների մէջն է. իսկ գարմօնեան երբէք չը պիտի կարողանայ այդ տեսակ ձայներ հանել, դրանց համար լեզու չունի. այս պատճառով էլ նա իր կէս եւրոպական և կէս

ասիական սրտով ու մտքով միայն ծիծաղ է պատճառում մինչև որ չի ձանձրացնում։ Բայց ուխտագնացութեան համար սրանք մանր հանգամանքներ են. նայենք, ուրիշ բաներ տեսնենք։

Ուխտագնացութիւնը պարզում է, հրապարակ հանում ժողովրդի հոգին, նրա մտաւոր կեանքի այնպիսի կողմերը, որ ուրիշ անգամ դիտողութեան տակ չի մտնում։ Հեթանոսականը խառնվում է քրիստոնէականի հետ, հաստատելով որ այդ ամեն կարգ ու կանոնը սահմանել է ինքը, ժողովուրդը, իր խելքի և մտքի ոյժով, որ այնքան պինդ և տաք է պահում մի անգամ հաստատուածը, մի ժամանակ հաստատածը։ Տեսնում ես մի ժողովուրդ, որ սիրով և անպատուհաս կրում է իր խաչը, որովհետև հասկանում է իր ցաւը և այդ ցաւի դարմանն էլ գիտէ։ Ահա բերել են մի ծանր հիւանդ, վերմակների մէջ փաթաթած։ Նկատեցէք, վերջին յոյսը սուրբն է, դեղ ու բժիշկ հեռացած են հիւանդից։ Փորձեցէք մտածել այս դէպքի վրայ. չէք տեսնում արդեօք թէ ոչքան առանձնացած, կղզեացած է ժողովրդի միտքը։ Աչխարհում կայ և գոյութիւն ունի բժշկականութիւնը, որ վատ թէ լաւ՝ գոյ ունի մարդու հիւանդութիւնների հետ, բայց նրա հետ գոյ չունի գիւղացին, նրա ձայնին ականջ չի դնում թէ այն պատճառով, որ այդ ձայնը նրան շատ տկար

կերպով է հասնում և հեղինակութիւն չունի և թէ իմանալով, որ եօթն բժիշկ մի տեղ էլ հաւաքուին, ս. Գէորգի զօրութեան չեն հասնիլ։ «Կը բաներ սուրբի փչելը», ասում են։ Եւ բռնում են, պինդ են բռնում, աղաչում են, պաղատում։ Աղաչանք, պաղատանք—ահա այն միակ զօրաւոր պէնքը, որ ունի գիւղացին իր կեանքի դժուար լուծելու։ Նրան կանչում են դատարան, նա չի գնում։ և երբ նրան մեղադրում են, դատապարտում, երբ բոլոր դռները փակվում են նրա առջև, նա սկսում է աղաչել, պաղատիլ։ «Ծնաչէն, ասում են, եթէ այսքան մի սուրբի աղաչէի, հիմա սրտիս ուզածը կատարուեր էր»։ Բայց աղաչանքը կեղծ գէնք չէ, արհեստ չէ, որ գործ են ածում անզգայաբար։ Պէտք է իմանանք, որ աղաչանքը, «փէշ բռնելը» հաւատով և յոյսով ապրող սրտի խորքերից է գալիս։ Անհասկացող է այդ մարդը, տգէտ է. նայում է իր երկնքին, տեսնում է իրան ծանօթ աստղերը և հաւատացած է, որ ուրիշ տեղ, ուրիշ երկրում չը կան այսպիսի երկինք և աստղեր։ Նրան փող է հարկաւոր և նա գնում է վաշխառուի մօտ «Հոգին պրաւ գնում», փող վերցնում, իր տունը քանդում, այդպէս է անում, որովհետև ուրիշ ճանապարհ չի ճանաչում։ Միտքն ու հասկացողութիւնը սահմանափակուած են, մի նեղ շրջանի մէջ մնած. և երբ

նրա հասկացողութիւնից դուրս բան է պատահում, նա իրանն անել գիտէ։ Երբ ծմակում ծառ է կըտրւում, չհամնալավ որ իր տոմսակի ժամանակին անցել է և բռնվում է ակսում է աղաչել. և երբ նրա որդին սասաիկ մրսում է և Թոքերի բորբոքումն ստանում՝ նա էլի ակսում է աղաչել պաղատանք։ Նրա բոլոր հասկացողութիւնները հաւատի վրայ են հիմնուած, ջերմ հաւատի վրայ. և ինչպես հաւատում է որ օտար երկինքը աստղեր չունի, այնպես էլ հաւատում է որ անտառապահը իր ապաշանքին կը լսէ։ Ի՞նչ գժտալութիւն կարող է լինել, երբ անկեղծ աղաչանքը, պաղատանքը կայ։ Ամենքն էլ սիրտ ունին, ամենքն էլ յարգում են սրտի սրբութիւնը։ Եւ ահաւ՛ք։ Ամբողջ ընտանիքը մի երկար շարք կազմած, մատաղացու ձեռները առաջ գցած, ոտաբոբիկ պատյտ է գալիս վանքի շուրջը. հօրն անդամ պատյտ է գալիս, յայտնում է որ ինքը, այդ ընտանիքը սուրբի տակ տակ մատաղ է գնում։ Ամենքն այսպէս են համոզուած. մինչև անդամ վեց տարեկան երեխան էլ ունի դէմքի վրայ մի ախորժ, աղաչալուր արտայայտութիւն։ Վերջանում է այդ արարողութիւնը, արի՛, նայի՛ր վանքի մէջ. նոյն ընտանիքը սիմենրի մօտ ծունկ է չոքում և այդտեղից չոքչոք գնում է դէպի գերեզմանը, մամ է վառում, ոտից է անում։ բերանը լուռ է և միայն

երեսին ձեռքը բարձրանում է կրծքի վրայ և զարնվում այդ տեղին, երեսը քավում է քարերին, մինչև անդամ աչքերը թաղանում են։ Այնուհետև ընտանիքի մեծը ահով և դողով վերցնում է գերեզմանի ծոցից քիչ հող, փաթաթում է և գնում հիւանդի մօտ։ Նրան նստացնում են, հողը ջրի մէջ խառնում, տալիս են նրան։ Ամենքը երեսները խաչակնքում են, մաշուած հիւանդը խորին յարգանքով և հաւատով լմնում է։ Ծնողական մոլմռքուած սիրտը դէթ առժամ հանգստանում է, և ամենքը խօսում են, սովորական անհոգութիւնը մտնում է նրանց մէջ. և հարկէ, չեն էլ կարծում թէ գուցէ հիւանդի այստեղ բերելը աւելի մօտեցնում է օրհասական րոպէն։ Ահա սրտեր, որ ապրում են այսպիսի հաւատով։ Մենակ հիւանդները չեն ուխտ գնում. ամեն մարդ ունի իր սրտի խորհուրդը, իր մուրացը։ Վանքի գրանը գրած է մի փոքրիկ քառակուսի քար, որ ունի քառակուսի լայն ծակ. այդ ծակով անցնում են չքեր կանոյք ամուլութեան կապանքներից ազատուելու համար *)։ Ամուսնացած կանայք, որ զաւակ չեն ունենում, գնում են ուխտի, և ամենքն էլ ասում են, որ ինչ ուխտ են արել, ինչ խոստում են տուել, ամենքն էլ կատարում են։ Ամենքն էլ ասում են, որ ինչ ուխտ են արել, ինչ խոստում են տուել, ամենքն էլ կատարում են։

*) Նոյն այդ տեսակ մի քար եւս տեսայ եւ Հաւսպոտկի ա-
ւերակ եկեղեցու առաջ. ուրեմն այնտեղ էլ մի ժամանակ փորող
են տուել չքեր կանայք։ Հաւսպոտուկն էլ, ուրեմն, մի ժամանակ
ս. Գէորգի պէս հռչակաւոր ուխտատեղի է եղել։

նուն ուզում էք՝ տուէք. բայց կարևոր է ոչ թէ այն, որ մարդիկ անտիապաշտ են, այլ այն թէ՝ ինչով են զեկավարվում և առաւարվում այդ մարդիկ: Ունենալով կեանքի բոլոր հանգամանքների համար մի այնպիսի կարողութիւն, ինչպես է աղաչանքը, իր բոլոր գործողութիւնների ժամանակ ունենալով այդպիսի վառ հաւատ, որ երեխայական պարզամտութիւն է առաջացնում, հէշտ կարելի է ապրել:

Աւաճներից յետոյ թոյլ տուէք ծանօթացնել ձեզ հետ մի անձնաւորութիւն, որ բաւական հետաքրքրելի է, որովհետև աւանդական է ժէր մէջ, ունի մի տիպի բոլոր յատկութիւնները: Դա սուլթի «մուղդուսին» է, այսինքն լուսարարը և մի և նոյն ժամանակ հլու ծառան: Դա մի կարճահասակ, սև միլուքաւոր մարդ է, ունի տափակ շրթունքներ, մեծ, սրածայր քիթ և խոյհրդաւոր աչքեր. գլուխը ծածկած է էթի թաւ ակով, որ այս տեսակ մարդկանց պաշտօնական գլխարկն է: Արագաշարժ է, ամեն ծակուծուկ մտնող, դուրս եկող և շատախօս: Նա գիտէ պատմել, գիտէ իր պատմութիւնները ազով անել, քաղցրացնել և այդպէս հաղար ու մի բան է պատմում, գլխաւորապէս սուլթի հրաշքները, որոնց ինքն էլ ականատես է եղել: Եթէ ուն է, որ նա ծառայում է սուլթին. անպագէտ է, բայց այնքան սուր են ականջները ու յիշողութիւնը, որ իր մաքի մէջ շատ բան է մարել և, ինչպէս ասում են, մի աէրտէրից էլ շատ բան գիտէ: Նա մեզ պատմում է, թէ ինչպէս մի օր նրան երևացել է այս վանքի վանահայրերից մէկը, Ղուկաս վարդապետը, որ հարիւր յիսուն և աւել տարիներից առաջ է մեռել: Գարնան մի արև օր էլ, ասում է. ես նստած էի այտեղ, մանիշակները շատ կային փուռած, բացուած, ես նրանց մոիկ էի տալիս. մէկ էլ տեսայ մի սպիտակամորուք ծեր վարդապետ, որ ոչջոյն տուել և յայտնեց ինձ, որ իր գերեզմանը հողի տակ թաղուած է: Վանահայրը բացակայ էր վանքից. ես գնացի ցոյց տուած տեղը, քանդեցի, գերեզմանաքարը գտայ. վարդապետը եկաւ, տեսաւ և զարմացաւ: «Մուղդուսին» ցոյց է տալիս այդ քարը, որ ցից է դրուած մի քանի ուրիշ գերեզմանների մօտ: Հրաշքով բացուած գերեզմանը ուխտաւորի է դառել. քարը սևացած է գիւղական պատրոյկների ծխից, տապանագրի միայն մի քանի բառերն են զօռով կարդացվում: Ձեռքը ծոցում դրած, «մուղդուսին» կանգնում է նրա մօտ և պատմում է ամեն մէկին այդ հրաշքը, աւելացնում է և այն, որ Ղուկաս վարդապետը մի անգամ էլ երևացել է նրան վանքի մէջ, հրամայել է յիշեցնել չը տալ բերանը մաքուր պահել. Այդ ամենից

յետոյ, ինչ կալծիք, որ «մուղդուսին» սուրբի ընտրեալն է, ուստի և պատիւ շատ պիտի առանձ ուխտաւոր ժողովրդից։ Եւ առանում է, ինքն է ասում, ապրում է լաւ, նրա դէմքը բաւականութիւն է յայտնում։ «Բոլորը մերոնք են», ասում է ցոյց տալով ուխտաւորներին։ Ճշմարիտ է, նա ինքն է որ այդ գիւղացիներին հրաշքներ է պատմում և աւելի ևս պինդ կապում նրանց ս. Գէորգի հետ։

Ես, ի հարկէ, «մուղդուսու» պատմութեան կմախքն եմ գնում. պէտք է տեսնել թէ ինչ տեսակ շարժուածքներով, ինչ լռօսկերով է պատմում նա։ Այս տեսակ առասպելները ասպրած է կարճահասակ «մուղդուսին»։ Նրան լսում են և հաւատում։ Զրիակերութեան համար հարկաւոր էր գիւղացու հաւատացող սրտի մի անկիւնում մի փոքրիկ տեղ բռնել. «մուղդուսին» կարողացել է այդ անել, վայելում է իր գիտութեան և իր ընտրեալ հոգու փառքն ու պատիւը։ «Բոլորը մերոնք են», ասում է։

Օրն անցաւ, երեկոյ է։ Լուսինը լողում է բարձր և պարզ երկնքի երեսին, իսկ նրա տակ անտառների դաշտավայրերն ու ժեծաժեծ ասրերը ընկղմուած են մի կախարդական լոյսի մէջ։ Անընդհատ փչում է լեռնային զուարթ քամին, մենք մրսում ենք, կուչ ենք գալիս ահագին խարոյկի ծուռացած բոցի շուրջը, ուտքացնում ենք մեզ։ Բոլոր ուխտաւորները քաշուել են իրանց տեղերը, ընթրիք են պատրաստում։ Խօսք, ապազակ ու երգ խառնուած են միմեանց։ Մանաւանդ շատ ազմուկ է հանում մի խումբ, որ մեզանից քիչ հեռու է. այդտեղ կան գիւղական ինքնուս երաժիշտներ. մէկը փչում է իր փողը, միւսը երգում է։ Ուրախութիւն է տիրում այդ շրջանում. մերթ ծանր և մերթ արագ ձայնում է փողը, միանման խառպա ձայներ է հանում նուագողի հասատ ու կոշտ մատների տակից։ Տխուր են մեր եղանակները, մելամազձոտ, ձ՛նշուած. նրանք պիտի ազդեն իրանց ծանր, տխրագին հնչիւնների, պիտի ուռնեցան այնպիսի ձայներ, որոնք միանգամայն պիտի սրտից բռնեն։ Մենք ուրախանում ենք, զուարճանում տաղտուկ և վհատեցուցիչ եղանակները լսելով. մեր սիրտն այնպէս է, որ գեղեցկութիւնը ըմբռնում ենք նրա ամուր կողմերով միայն. սիրում ենք լսել սիրոյ մասին և լսում ենք ոչ թէ նրա ձայները, այլ մեր բերանով տխրամած դէմք ենք տալիս նրան, մտայղ, վհատեցուցիչ զոյներով ենք նկարում թէ ինչ է նա և լալով, ողբալով կանգ ենք առնում նրա առաջ։

Մենք մի փոքրիկ պտոյտ ենք գործում ուխտաւորների շուրջը։ Տեսնում ենք ուրախացող խումբը, փոշահարին ու երգչին. ճոպանները ծափ

են տալիս, խրախուսական ձայներ են հանում և գովում են երաժիշտներին. իսկ մեկը, որ երևի ուզում է բոլորի ուշադրութիւնը գրաւել, դուրս մի նոր փեսայ, տափակ տափակ հանաքներ է անում և ամենքի փոխարէն ինքը կուշտ կուշտ ծիծաղում։ Բայսուած է պարզ և անպաճոյճ սուփրան, որի շուրջը նստած են նաև կանայք ու աղջկերք, նըստած են և լուռ։ Անցնում ենք. ահա մի ընտանիք, որ ինչպէս երևում է, շատ ազքատ է և նստած է լուռ ու մունջ, ցամաք հաց է ուտում, շոր էլ չեն բերել իրանց հետ, երևի կը քնեն գետնի վրայ։ Վանահայրը քահանայի սենեակի առջևով անցնելիս՝ նայում եմ դէպի ներս։ Խորին լուսթիւն է տիրում. անկողնի մէջ պառկած է հիւանդը, իսկ նրա գլխի կողմի պատին կպցրած է մի գրգ մոմ. տխուր լոյս է տարածում մի անկիւնում գրած գիւղական կաւէ նաւթամաքրատը. մի կին աթոռնայած է հիւանդի մօտ, գլուխը դէպի նրան է կռացրել։ Այստեղ ու այնտեղ թափուած են մարդիկ, որն արդէն քնել է, որը քորում է իր գլուսաը և որը կոտորում է մոլթած ոչխարը։

Մենք էլ վերջացնում ենք մեր ընթերցիքը լսողների տակ։ Քահանան մեզ մի վերմակ է տալիս և մենք պառկում ենք յար կապերտի վրայ մի կերպ ծածկուում ենք քամու յարձակմունքներից։ Բայց մեր

տեղը բոլորովին բաց է և դիտենք որ անպատճառ պիտի մրսենք. կրակի բոցը երբեմն ցած է ընկնում, բաժան բաժան է դառնում և սկսում է սողալ փայտերի վրայ, երբեմն էլի սաստկանում է, բարձր խփում երբ դիւցազի երիտասարդը կանձողնիները միմեանց վրայ է հաւաքում։ Ես պառկած եմ մէջքիս վրայ, ուշադրութեամբ նայում եմ երկինքին։ Այդտեղ, այդ բարձրութեան վրայ, մի բան պէտք է լինի. այդ գիտէ և կրակի մօտ նստած դիւցազին, որ կէս ժամ առաջ գուշակում էր թէ քամին շուտով կանցնի միւս կողմը և մենք նրանից պաշտպանուած կը լինինք վանքի պատով։ Երկինքը մի բան է պատրաստում. Գանձասարը հանաք չի առնում այն կողմից շարունակ ամպեր են գալիս, դիզուում վեր կողմում։ Ահա ամպերի միջից լսվում է մի թոյլ թնդիւն. անցնում է մի քանի րոպէ, կայծակը սկսում է կայծեր հանել։ Տեսարանը գեղեցիկ է։ Այստեղ, մեզանից բարձր, երկինքը պարզ է և լուսինը իր քաղցր լոյսն է թափում. տխրում է մի խաղաղութիւն. բարակ քամին թեև քսում է մեր դէմքերին, բայց այնքան երկիւղալի չէ, որ մենք հեռանանք լուսնի լուսից և պատերի մէջ ապաստան գտնենք։ Բոլոր ուխտաւորներն էլ վճռել են քնել այդ ազատաթափայլ ջրերի տակ։ Եւ յանկարծ հիւսիսից վրայ է հասնում այդ բանաստեղծական

անպղպջութեան դէմ մի խոժոռադէմ հրիւղալի և կոպիտ փոթորիկ. ամպերը հանդով դէպի հարաւ, դէպի լուսինն են արշաւում և կարծես ուզում են մինչև տեղ հասնելը վախեցնել, հալածել լուսինը շանթ ու որոտով, որոնք դուրս են թափվում նրանց գոլշ—կապտագոյն ծալքերից և աջ ու ձախ վազում: Կայծակի դեղին բոցը փայլում է լուսնի սպիտակ լոյսի մէջ, բայց դեռ անզօր է նրան ոչնչացնելու, կարծես հալվում է, սևանում, կարձանում: Ամպերը գալիս են ու գալիս: Ո՛չ, պէտք է փախչել այդ հրեղէն օձերի երեսից, որոնք գալարվում են սարսափելի արագութեամբ, ճեղքում են, պատռում իրանց դոյութիւն տուող ամպերի կուրծքը: Բայց ծուր գնանք, ծուր դանենք մի աղատ անկիւն: Երկու սենեակները լցուած են. մարդ ու անասուն մի յարկի տակ պաշտպանվում են երկնքի պատուհասից: Մնում է միայն վանքը, նա կը լինի մեր պաշտպանն ու հովանաւորը. քահանան թոյլատրում է և մենք վերցնում ենք մեր վերմակը, մտնում ենք լուռ ու մռայլ կամարների տակ, պառկում ենք մի անկիւնում: Այդտեղից էլ լսում ենք, թէ ինչպէս մեզ ծանօթ խումբը շարունակում է իր ուրախութիւնը: Փողը հանդարտ բռնացնում է, ոտով ու ձեռքով ոգևորութեան կրակի մէջ ընկած երգիչը անընդհատ իր թուլքերէնն է երգում,

հանաքչու ձայնը անհոգ որոտում է գլխում:

Մենք քնում ենք: Այդ խռնատութեան մէջ, այդ ջոր գիանի վրայ քնելը գուցէ մի ուրիշ ժամանակ անխնդրութիւն կը համարէինք, բայց այժմ կատարեալ երջանկութիւն է. և այնպէս քաղցր քնում ենք, որ որսակի փոթորիկն ու անձրևը եւրազ ենք կարծում: Դրսում ինչ ուզում է, թող լինի, մերը՝ քունն է:

ՉՈՐՆԳԵՐՈՐԴ ՕՐ.

Գիշերուայ անձրևը որսակի է եղել. փափուկ ցեխ ենք կոխ տալիս, երբ առաւօտը շատ վաղ դուրս ենք գալիս մեզ հովանաւոր կամարների տակից: Մռայլ և վհատեցուցիչ է բնութիւնը. երկնքի երեսին դեռ կուտակուած են մնչրագոյն ծանր ամպերը. հողը, բոյսը, օդը խռնատ են, ցուրտը մարդու ոսկորներին է հասնում: Մեզ ասում են, որ անձրևի հետ հաս հաս ձիւն էլ է եկել:

Սարից իջնում ենք ուրիշ ճանապարհով, որ համեմատաբար յարմար է այնքան, որ սայլեր են գնում մինչև վանքը: Բայց սայլի ճանապարհ ասելով՝ մեծ բան չը կարծէք. նոյն լեռնային ճանապարհն է, այն գանազանութեամբ, որ քիչ լայն է և այնքան մեծ լանջիվայրեր չունի: Միայն Ղարա-

բաղի գոմիշներն են, որ այս տեսակ ձանապարհներով սպրդ են քաշում։

Օրը հեռվհեռ բացվում է, արեգակի նուագ լոյսը անցնում է ամպերի միջով, ախուր և թոյլ լոյս է սփռում թրջած երկրի վրայ։ Պատահում են ուխտաւորներ, որոնք մօրիկ գիւղերից վանքն են գնում։ Ահա ձանապարհի կողքով մենակ գնում է գեղջկուհին, երեսը ծածկած է, թեև տակ տանում է մի աքաղաղ։ Ահա գնում են և երեք երեխաներ, մի էշ և մի ոչխար։ Մեր ձիերը տեսնելուն պէս՝ փոքրիկները քաշվում են մի կողմ, կանգնում են, նայում են մեզ զարմացած, բերաններըը բացնրանց մօտ կանգնած է մատաղացու ոչխարը նոյն չափ զարմացած, դունչը վեր ցցած։ Եւ երբ մենք անցնում ենք, լսում ենք նրանց կարծիքը, որ շատ պում են հաղորդել միմեանց մեր մասին։

—Ռուսներ են, է՜...

Ինձ հետ է Ղշլաղցի գիւղացին։ Չարչնում եմ նրանց ապրուստի մասին։ Ապրուստը դժուարացել է, պատմում էր նա։—Ի միջի այլոց նա պատմում է, թէ ի՛նչպիսի «օյիններ» են գնում նրանց գլուխը խելքի, վիզը ճկած «միրզաները», որ քաղաքում այնպէս խոնարհ և անշուշան բան են երեւում, բայց հէնց որ գիւղերն են գնում, առիւծ են դառնում։ Տզրուկներ են դառնում, աներես, անկուշտ

տզրուկներ, որոնք գոյութիւն են ստանում հէնց այս գիւղերից։ Մի որ և է տեղ գրպրութիւն ստվորելով, գիւղացին վազում է մանում որ և է դիւանատուն, քիթը կապած հարսի պէս ծառայում է, շատ անգամ ոտձիկ չի ստանում, տանում է ամեն տեսակ ստորութիւն, մոռանում է իր գիւղը, քաղաքացի է դառնում և մինչև մազերը սպիտակելը ճաշով միւնոյն պաշտօնում, տպրում է գիւղացու հաշուով, միշտ ի չարն է գործ գնում նրա հաւատը, աղաչանքը։ Ամեն կեղտոտութիւն դուրս է գալիս նրանից, այն գիւղացուց, որ ուսում հետ առացել է սաստիկ ընչասիրութեան քաղց։

Հասնում ենք սալի ստորոտը, անցնում Ռէվ գիւղի միջով։ Դա մի փոքրիկ գիւղ է, ունի մի քանի դուռ եկեղեցի։ Գիւղացիները այնքան աղքատ են, որ չեն կարողանում եկեղեցու քանդուած կտուրը շինել, թեև քահանայ ունին։ Տները գետնափոր են, ցածրիկ և ողորմելի, մի ողորմելի լանջվայրից կըպած, որի կողքով հոսում է մի ողորմելի բարակ ջուր։ Այդ աղքատ առուակն է, որ ջրում է երկու երեք հատ բանջարանոցներ։

Ռէվից շատ մօրիկ է Ղշլաղ գիւղը, որ թեև նրանից մեծ է, բայց էլի աղքատ։ Ղշլաղում մենք իջնում ենք մի տան բակում, նստում ենք հատ ու կոպիտ տախտակներով պատած մի ինչ որ ծած-

կի տակ։ Տանտիկինը մեզ համար մի շքեղ ձուաձեզ է պատրաստում, հիւրասիրում է գոհշի համեղ մածնով։ Թողնելով Ղշլաղ գիւղում մեր կարաւանորդների ընկերին, ձի ենք նստում և բռնում ենք դէպի Ճուշի տանող ճանապարհը։ Կէսօրից մօտ անցնում ենք Դաշքուլաղ գիւղի մօտով, որ, երևի, այդ անունն ստացել է մեծ աղբիւրից, որ բղխում է քարի միջից։ Այդ գիւղում կան քաղաքի տների ձևով շինած տներ, ինչպէս նկատելի է, ուռևորները շատ են։ Անցնում ենք Խոջալլուի գետը թմբի այգիների միջով, գնում ենք բաւական ուղիղ ճանապարհներով։ Բայց ամպերը, երևում է, որ չը պիտի թոյլ տան մեզ հանգիստ կերպով մեր ճանապարհը. անձրևը մեզ բռնում է Դահլաւ գիւղի մօտ և նրանից ազատուելու համար մենք մտնում ենք տեղացի քահանայի երկյարկանի նորաշէն տունը։ Անձրևը մեկ էլ վրայ է հասնում Բալլուջայ գիւղից վերև. Թլջուած մտնում ենք գիւղը, որ բաւական մեծ է և ունի մի նոր ու գեղեցիկ եկեղեցի։ Չի կարելի ասել, որ այս գիւղն էլ աղքատ է. արդէն երբ բազմամարդ է, նշանակում է որ ապրուստի միջոց կայ, իսկ ապրուստը վատ չէ, քաղաքային ձևի տներ կան։ Առհասարակ պէտք է ասել, որ մեր գիւղերը հետզհետէ կերպարանափոխվում են. հնադարեան գեռնափոր խրճիթները («գարագամ — սև տուն)

իրանց կոլոր կտուրներով և ահագին էրդիկներով հետզհետէ անհետանում են և նրանց տեղը երևան են գալիս փոքրիկ տներ՝ փոքրիկ լուսամուտներով և տափակ կտուրներով։ Նորաձևութիւնը, անկասկած, մենակ շինութիւններին չի դիպչում, այլ նորաձև գոներով նկատ է մտնում ընտանիքի ծոցը. թէ ինչ տեսակ յեղափոխութիւն է դործում նահապետական կարգերի, նկատ ու կացի և վարք ու բարքի մէջ—մեզ բոլորովին յայտնի չէ, այդ տեսակ բաներով հետաքրքրուողներից չենք։ Բալլուջայի մօտ, գետի ափին, կայ մետաքսի գործարան. սա էլ, ի հարկէ, իր ազդեցութիւնն է մտցնում գիւղացիների մէջ, որ էլի անյայտ է. ընդհանրապէս գիտենք, որ այսպիսի տեղերում են տարածվում վնասակար ախտերը։

Բալլուջայից մօտ է Խնածախ գիւղը։ Խնածախը Բալլուջայից փոքր է, բայց աւելի լաւ արտաքին տեսք ունի, որովհետև գիւղի մէջ ծառեր շատ կան։ Ղարաբաղի հայ գիւղերը ընդհանրապէս մեծ կերպարանք ունին, չոր ու ցամաք տեղերի վրայ են. ծառեր չեն անկում գիւղի մէջ, փողոցներ համարեա չունին, կտուր կոչի վրայ է բարձրանում։

Խնածախը վերջին գիւղն էր, որ տեսնում էինք։ Մութը հասած անցնում ենք նրա միջով և

անդադար ձիերը քշելով հասնում ենք Խանքենդի աւանը, ուր և զօրքերի բանակատեղին է։

Հրաշալի երեկոյ էր. երկինքը պարզ, բոլորակ լուսինը առատ լոյս էր թափում ծառերի մէջ կոտած Խանքենդի վրայ։ Նրա լոյն և ուղիղ փողոցներում, ինչպէս և միշտ, տիրած էր մեռելային լռութիւն։ Զբնաղ անկիւն է այս Խանքենդին. փոքրիկ սպիտակ տները ծոյլ ու անհոգ կանգնած են ծառերի մէջ և նրանց փոքրիկ պատուհանների մաքուր ապակիների վրայ խաղում է լուսնի արծաթեայ ճառագայթը։ Գարուն ու ամառ այդտեղ բուսում են ծաղիկները, անպակաս է մաքուր, առողջարար օդը։ Մի տեղ շինած է շատրուան, որի պարզ ջուրը լուսնի լոյսի տակ պսպղալով հանդարտ մրմնջում է և թափվում գլխիվայր։ Երբեմն լսվում է փողոցով գնացողի ոտի ձայնը, կանաչազարդ բակի մի անկիւնից բառաչում է եղը, կամ փողոցի դրան պահապան շունը մի երկու երեք անգամ հաչում է։ Անցնում են այդ ձայները, և կրկին մեռելային անվրդով լռութիւնը մտնում է ծառերի տակ, շրջապատում է ու իր զօրեղ գրկի մէջն է առնում այդ բանաստեղծական անկիւնը։ Մնում է բարձր կամարի պայծառ լուսատուն, որ ծանր գնում է՝ հաւատարիմ իր գիշերային ճանապարհին։

Մենք նստած խօսում էինք, պատմում էինք

մեր ծանօթներին մեր այս հինգ օրուայ տպաւորութիւնները։ Հեռու տեղեր չէինք գնացել, բնութեան աշխարհահռչակ հրաշալիքները չէինք տեսել, մարդկային հանճարի դիւթող կերտուածներով չէինք զմայլուել. Ցեսել էինք մեր երկիրը, խմել էինք բազմաթիւ քաղցրահամ ազբիւրների ցուրտ ջրերը, լեռների և ծմակների խոնաւ, բայց մաքուր օդը ծծել էինք, կշտացել, կազդուրուել. հայրենի հովը մրսացրել էր մեզ, արեգակը տաքացրել էր, լուսինը գգուել մեզ

Եւ բաղդաւոր էինք...

Дозволено Цензурою Тифлисъ, 18-го Февраля 1891 г.

Типографія Армянскаго Духовнаго Вѣдомства.

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ.

ԵՐ.	ՏՈՂ	ՏՊՈՒԱԾ Է.	ՊԻՏԻ Է ԿԱՐԴԱԼ.
338	13	Ն. մթնացնելու չափ	մրսացնելու չափ
339	8	« վազում թող գնան՝	վազում. թող գնան՝
351	1	վ. լեռնաչղթայն	լեռնաչղթան
«	4	« զուգնթաց	զուգընթաց
«	1	Ն. ձանձրացած. աչքի	ձանձրացած աչքի
352	3	վ. փոքր է 30	փոքր է, բաղկացած 30
353	1	« դէս ու դէն վազվզում	դէս ու դէն է վազվզում
«	15	« ծոցում,	ծոցում.
354	10	Ն. ճէտն	ճիտն
355	11	վ. երկար ուղեկից	երկար տեղ ուղեկից
356	1	« նաւախաղաց	Հաւախաղաց
«	6	Ն. Թափառականը չէ	Բաւական չէ
357	5	վ. պաչտպանել.	պաչտպանել,
«	7	« Ամեն տեղ, ուր կոխում է գոնէ...	Ամեն տեղ, ուր կոխում է այդ անկոչ հիւրերի ոտը, հայ գիւղացին պարտաւորուած է գոնէ
«	4	Ն. թեչտաքար	Ուղտաքար
359	2	« սթուլթեան	մթուլթեան
361	6	« բուն	բան
364	2	վ. սպառած	սպասած
«	3	Ն. չինուլթեանը	չինուլթիւնը
365	3	« կողմից դուան	կողմից, դրան

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՀԵՂԻՆԱԿԻ

ԱՌԱՆՁԻՆ ԳՐՔՈՑԿՆԵՐՈՎ ԼՈՑՍ ՏԵՍԱԾ

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

		Ր.	կ.
1.	Ուխտաւորի յիշատակարանը (սպառուած) . .	—	30
2.	Վէպ թէ պատմութիւն (քննադատ.)	—	40
3.	Ծայրեր (սպառուած)	—	20
4.	Պանդուխտը (սպառուած)	—	15
5.	Կոյրի աղջիկը	—	5
6.	Վահան Մամիկոնեան (սպառուած)	—	25
7.	Կորածներ	—	50
8.	Արնապին (սպառուած)	—	7
9.	Դաւթի և Մհերի (քննադատ.)	—	15
10.	Սպանուած հայրը	—	5
11.	Վերջին վէպեր I մասն.	—	30
12.	Իմ յիշատակարանը	1	—

Ծախվում են Անդրէաս Աբրահամեանցի պրաւաճառանոցում։

Продаётъ: Шуша, книжный магазинъ А. Абраамянца.

21 MAY 2013

i9908

ՀՀ Ազգային գրադարան
NL0570770